

Ալեն Ղևոնդյան

**ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԱՌԱՋՆԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ 2011

ՀՏԳ- 351.746.1 (479.25):327 (479.25)
ԳՄԴ- 67.99 (27) 116.2 + 66.4 (27)
Ղ 610

Մենագրությունը հրատարակվում է ԵՊՀ Միաջազգային հարաբերությունների
խորհրդի երաշխավորությամբ

Ք.գ.թ., դրոցենտ Ալեն Ղևոնդյան

**Ազգային շահերի հիմնահարցը
Հայաստանի Հանրապետության անվտանգային
ապահովման առաջնային միջավայրում**

Խմբագիր Ա.Ճաղարյան
Խորհրդատու Ս.Եղիազարյան

Ալեն Ղևոնդյան

Ղ 610 Ազգային շահերի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության անվտանգու-
թյան ապահովման առաջնային միջավայրում./ք.գ.թ., դրոցենտ Ալ.Ղևոնդյան. - Եր.:
Հեղ. հրատ., 2011. - 216 էջ.:

Ներկայացվող հետազոտության մեջ փորձ է արվում ազգային շահի տեսահայեցա-
կարգային վերլուծության ներքո դիտարկել ՀՀ կողմից հռչակված փոխլրացման արտա-
քին քաղաքական ուղեգծի իրականացման առանձնահատկությունները և օրինաչափու-
թյունները:

Ուսումնասիրությունը նախատեսված է վերլուծաբանների, փորձագետների, պետ-
ծառայողների, քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների ոլորտի հետա-
զոտողների համար:

*Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ԵՊՀ Ռեկտոր պրոֆ. Ա Մինոնյանին և
ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան պրոֆ. Գ. Պեպրոսյանին
գրքի հրատարակմանն աջակցելու համար:*

ՀՏԳ 351.746.1 (479.25):327 (479.25)
ԳՄԴ- 67.99 (27) 116.2 + 66.4 (27)

ISBN 978-9939-0-0189-0

© Ալեն Ղևոնդյան, 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	5
ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԸ՝ ՈՐՊԵՍ	
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԵՎՈՐ ՀԻՄՆԱՀԱՐՑ	12
1.1 Ազգային շահի ռեալիստական և լիբերալ մեկնաբանությունները	13
1.2 Ազգային շահի մեկնաբանման արդի մոտեցումներն ու կառուցվածքային բնութագիրը.....	30
ԳԼՈՒԽ 2. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԻ	
ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ	52
2.1. Պետության դերն ազգային շահի ապահովման գործընթացում	52
2.2. Պետության ռազմավարական ներուժի դերակատարումն ազգային շահերի իրացման քաղաքականության համատեքստում	63
2.2.1. Նյութական հզորության բնութագրող ցուցանիշներ	67
2.2.2. Բարոյահոգեբանական պատրաստվածության բնութագրող ցուցանիշներ	77
2.2.3. Ռազմաքաղաքական իրավիճակը բնութագրող ցուցանիշներ	83
2.3. Պետության ռազմավարական ներուժի գնահատման մեթոդաբանական հիմքերը	89
ԳԼՈՒԽ 3. ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀՀ	
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ	
ԱՌԱՋՆԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ	
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	99
3.1. ՀՀ ազգային շահերն ու ազգային շահերի հայեցակարգերը	99

3.2. ՀՀ ազգային շահերի ու անվտանգության արտաքին քաղաքականությունը հարավկովկասյան նոր իրողությունների ներքո	113
3.2.1. Ռուսաստանի Դաշնություն և հայ-ռուսական հարաբերություններ	118
3.2.2. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն և ՀՀ - ՀԱՊԿ հարաբերություններ	125
3.2.3. Միացյալ Նահանգներ և հայ-ամերիկյան հարաբերություններ	130
3.2.4. Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն և ՀՀ-ՆԱՏՕ հարբերություններ	136
3.2.5. Վրաստան և Հայ-վրացական հարաբերություններ.....	145
3.2.6. Թուրքիա և հայ-թուրքական հարաբերություններ	152
3.2.7. Իրան և հայ-իրանական հարաբերություններ.....	160
3.2.8. Եվրոպական Միություն և ՀՀ - ԵՄ հարաբերություններ.....	168
3.2.9. Լեռնային Ղարաբաղի հիմնահարց	174
3.3. Հարավկովկասյան անվտանգության և կայունության ատյանի ստեղծման նախաձեռնությունները՝ որպես տարածաշրջանային համագործակցության հիմք	184
ՎԵՐՋԱԲԱՆ	201
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	203

ՆԱԽԱԲԱՆ

Միջպետական փոխհարաբերությունների ինչպես նախորդ, այնպես էլ ժամանակակից փուլերում լայն կիրառում է ստացել պետական քաղաքականության նպատակամղվածությունն ու բովանդակային խտությունը բնութագրող ազգային շահ երևույթը, որն իր մեջ հանրագումարում է ազգի՝ որպես միացյալ սոցիալական օրգանիզմի գործառնման և պետության՝ որպես ազգի ինքնիշխանության բարձրագույն դրսևորման կենսական շահերը:

Ազգային շահի ուսումնասիրման ժամանակ քաղաքագիտության և հումանիտար այլ գիտությունների՝ սոցիալական փիլիսոփայության, միջազգային հարաբերությունների տեսության, քաղաքական սոցիոլոգիայի ներկայիս միտումները պարտավորեցնում են, որ այն՝ որպես պետական քաղաքականության հիմք, հետազոտվի նորովի, քաղաքակրթական և գիտամեթոդական արդի մոտեցումներին և հրամայականներին համապատասխան: Ներկայացվի ոչ միայն նրա մեկնաբանման և որոշակիացման տարաբնույթ հանրագումարը, այլ նաև մանրամասն դիտարկվի, հետազոտվի, գնահատվի և արժևորվի նրա բովանդակության կառուցվածքային հարթությունը, ձևավորման ուղեգիծը և, ինչն առավել արդիական է աշխարհառագնավարական մեթոդա իրողությունների պայմաններում՝ նրա գործնական կիրառելիությունը:

Ազգային շահը, լինելով պետական քաղաքականության կերտման, հանրության ու պետության գոյատևման և զարգացման կարևորագույն հիմք, իր առանձնակի դերն ու նշանակությունն ունի հատկապես անցումային շարժընթաց ապրող, պետականակայացման շրջափուլում գտնվող և իրենց առջև ազգային շահերի հիմքով պետական քաղաքականության կերտման գերխնդիր ունեցող այնպիսի պետությունների համար, ինչպիսին, օրինակ, Հայաստանն է: Անկախության ձեռքբերմամբ Հայաստանը մուտք գործեց միջազգային հարաբերությունների բարդ և բազմամակարդակ համակարգ, որտեղ սեփական ազգային շահերը և անվտանգության հրամայականները պետք է ապահովվի բացառապես իր՝ ճկուն և հավասարակշիռ քաղաքականություն վարելու ունակությամբ: Ուստի սեփական ազգային շահերի գիտակցման և դրա հիմքով անվտանգության ապահովման անհրաժեշտությունը, մեր կարծիքով, կենսախնդիր է Հայաստանի երրորդ հանրապետության համար: Այս տեսանկյունից խիստ կարևոր է

որոշակիացնել ազգային շահի բովանդակության ու գործնական նշանակության մեկնաբանման արդի մոտեցումները, քանզի ՀՀ պետական քաղաքականության արդյունավետությունը, կարևոր այլ գործոնների թվում, մասնավորապես, պետք է ածանցվի սեփական ազգային շահերի որոշակիացման և արժևորման հիմքերից: Ազգային շահերի բովանդակության արժևորումը, մեր կարծիքով, կարևոր է նաև տարածաշրջանային այլ պետությունների քաղաքականության վերլուծման, նրանց հետ ՀՀ-ի հարաբերությունների հաստատման և զարգացման տեսանկյունից:

Ներկայումս ՀՀ պետական քաղաքականության կերտման համադրույթը ներառվել է աշխարհաքաղաքական և ներքին մարտահրավերներին համարժեք պատասխանելու, պետության ու հանրության անվտանգության և զարգացման կարիքներն ապահովելու կարևորագույն մի շրջափուլ, որտեղ ազգային շահերի՝ որպես քաղաքագիտության տեսական և քաղաքականության գործնական հիմնահարցի կառուցվածքի, ձևավորման յուրահատկությունների հստակեցման, պետական քաղաքականության մեջ նրա արժևորման հրամայականներն իրենցով են պայմանավորում պետական քաղաքականության արդյունավետությունը:

Հայաստանի համար ազգային շահերի կարևորման մերօրյա պայմաններում տեղին և հիմնավոր ենք համարում ազգային շահերի և նրանց իրացման պետական քաղաքականությանը վերաբերող հիմնախնդիրների գիտական և տեսավերլուծական հետազոտության կարևորությունը և այդ հիմնահարցի քաղաքագիտական ուսումնասիրության արդիականությունն ու հրատապությունը:

Միջազգային հարաբերությունների հիմնական սուբյեկտների, նրանց շահերի, քաղաքականության, փոխհարաբերություններին վերաբերող տարաբնույթ հարցեր տարբեր ժամանակներում քաղաքագիտական, միջազգային հարաբերություններին առնչվող, փիլիսոփայական ուղղվածություն ունեցող մի շարք հետազոտությունների առարկա են դարձել: Այս տեսանկյունից աշխատանքում կիրառված մոտեցումները, գաղափարները բավական արժեքավոր են՝ իրենց մեջ հանրագումարելով ինչպես անտիկ, միջնադարյան, այնպես էլ նոր և նորագույն շրջանների մի շարք մտածողների առանցքային մոտեցումները:

Ազգային շահերի հիմնահարցը պատմափիլիսոփայական հետազոտությունների ներկայմակ է ներմուծվել դեռ վաղնջական ժամանակներից: Հիմնահարցի ուսումնասիրությանն անդրադարձել է անտիկ հույն փիլիսոփա և պատմագիր Թուկիդիդեսը իր՝ միջպետական փոխհարաբե-

րությունների խորը վերլուծություն պարունակող «Պելեպոնեսյան պատերազմների պատմություն» աշխատությունում:

Վերածննդի և ռեֆորմացիայի դարաշրջանում ազգային շահի և նրա հիմքով պետական քաղաքականության կերտման կարևորության մասին են խոսել այնպիսի ականավոր մտածողներ, ինչպիսիք են Ն. Մաքիավելլին, Թ. Հոբսը, Ջ. Բոտերոն և այլք: Ավելին՝ ուշ միջնադարում, ազգային շահերի պետական քաղաքականության դաշտին պատկանող «բանական կառավարման (Rasion d'Etat)» և «իրական քաղաքականության (Realpolitik)» սկզբունք-հայեցակարգերի մշակումը փաստում է, որ ազգային շահի հիմնահարցը դարաշրջանի չափանիշներին համապատասխան որոշակիացվել և հստակեցվել է: Հետագայում ազգային շահերի տեսական մտահանգումներն ամանցվել են եվրոպական մտածողներ Ա. Սորելի, Ֆ. Մեյնեկեի, Հ. Տրեյկեի մոտեցումներից, սակայն իրենց՝ տեսականորեն հիմնավոր և գործնականում կիրառելի ձևակերպումը ստացել են միայն 20-րդ դարում՝ ամերիկյան քաղաքական ռեալիզմի դպրոցի ներկայացուցիչներ Չ. Բիրդի, Է. Բարի, Հ. Մորգենթաուի, Ա. Ուոլֆերսի, Կ. Թոմսոնի, Ս. Հոֆմանի, Ջ. Բենամի, Ռ. Շտրաուս-Հյուպեի, ինչպես նաև Հ. Բիսինջերի, Ջ. Բժեզինսկու և Զ. Ուոլթսի աշխատություններում¹:

Քաղաքական ռեալիստներն ազգային շահին ոչ միայն «գիտական փաթեթավորում» տվեցին, այլ նաև փորձեցին մշակել «ազգային շահ - պետական քաղաքականություն» պատճառական կապերի օրինաչափությունները: Իր աշխատություններում վերոնշյալի հանգամանալից ուսումնասիրմանն է անդրադարձել քաղաքական ռեալիզմի դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ Հ. Մորգենթաուն իր՝ բազմիցս վերահրատարակված «Ազգերի քաղաքականության շուրջ. խաղաղության և հզորության համար պայքարը» և «Պաշտպանելով ազգային շահը» աշխատություններում: Հ. Մորգենթաուն փորձ արեց «ազգային շահ – պետական քաղաքականություն» կապին աքսիոմատիկ բնույթ հաղորդել՝ ձևակերպելով այն հետևյալ կերպ. «Արտաքին քաղաքականության նպատակները պետք է որոշվեն բացառապես ազգային շահի համատեքստում և աջակցություն ստանան համապատասխան ուժով²»:

Ի տարբերություն ռեալիստական մոտեցման, ազգային շահերի հիմնա-

¹ Ավելի մանրամասն տե՛ս, Morgenthau H.J., *Politics Among Nations: The Struggle for Power and Peace*. N.Y. Second Edition, 1955; *In Defense of The National Interest*, N.Y., 1951; *The Purpose of American Politics*, N.Y., 1950; *Politics in the 20th Century*. Chicago., 1962. Vol.1. The decline of democratic politics. 1962 Vol. 2. The impasse of american foreign policy. 1962 Vol. 3. The restoration of american politics. 1962; *A New Foreign Policy for the United State*, Chicago, 1969; Carr E., *The Twenty Year's Crisis 1919-39*. An Introduction to the Study of International Realation, NY, 1939; Donnelly J., *Realism and International Relations*, C.U., 2000; Waltz K.N., *Man, the State and War: A Theoretical Analisis.*, N.Y., 1975; Smith J.M., *Realist Thought front Weber to Kissinger*, Baton Rouge; London, 1986; Z. Brzezinski, *The Grand Failure: The Birth and Decay of Communism in the Twentieth Century*, (1989):

² Տե՛ս Morgenthau H.J., *Politics Among Nations*, N.Y. Second Edition, 1955, էջ 36:

հարցն առավել մակերեսային կերպով ուսումնասիրվել է լիբերալ-ազատական և նեոլիբերալ գիտական ուղղությունների կողմից, որոնք իրենց տեսական եզրահանգումներում փորձում էին ոչ այնքան բացահայտել քաղաքականության պատճառական հիմքերը, որքան սահմանել միջազգային քաղաքական համակարգի օրինաչափություններն ու կապերը:

Նշված հետազոտողներից զատ, սույն աշխատության պատրաստման ժամանակ հաշվի են առնվել ազգային շահի, նրա կառուցվածքային վերլուծության, կրողների, պետական քաղաքականության կերտման հիմնահարցեր ուսումնասիրող ինչպես ռուս (Յու.Վ. Բրունլեյ³, Լ. Մ. Մամուտ⁴, Յու. Մ. Բորոդայ⁵, Լ.Մ. Դրոբիժևա⁶), այնպես էլ այլ ազգերի, ազգային պետության, էթնիկական հոգեբանության հիմնահարցերով զբաղվող հայազգի մի շարք հեղինակների (Հ. Գևորգյան⁷, Է. Հարությունյան⁸, Հ. Մանուչարյան⁹, Ա. Նալչաջյան¹⁰) մոտեցումներ, կարծիքներ և տեսակետներ: Աշխատության մեջ ազգային շահերի պետական քաղաքականության ներուժային բնութագրի հետազոտման ժամանակ բավական արժեքավոր ներդրում են ունեցել Ս.Ռ. Քլայնի¹¹ և Կ. Կորի¹² աշխատությունները: Հիշատակման են արժանի նաև միջազգային հարաբերությունների համակարգում պետությունների ազգային շահերի քաղաքականության հետազոտմանն անդրադարձող Հ. Քիսինջերի¹³, Ֆ. Չաքարիայի¹⁴, Մ. Կապլանի¹⁵, Բ. Բուզանի¹⁶ աշխատությունները:

Հարավկովկասյան աշխարհաքաղաքական զարգացումների, ներտարածաշրջանային փոխհարաբերությունների, տարածաշրջանային հակամարտությունների, հարավկովկասյան երկրների ազգային շահերի և

³ Տե՛ս Бромлей Ю.В., К вопросу о выделений этносов среди других общностей // Этнос и политика: Хрестоматия, М., 2000:

⁴ Տե՛ս Мамут Л.С., Народ в правовом государстве., НОРМА, М., 1999:

⁵ Տե՛ս Бородай Ю.М. Этнос, нация, государство. Выступление на «круглом столе»: «Национальное государство» теория, история, политическая практика», ж-л «Полис», 1992, С. 5-6:

⁶ Տե՛ս Дробижева Л.М. и т.д., Этносоциология, Уч. Пособие, М., 1999., Глава 2:

⁷ Տե՛ս Գևորգյան Հ.Ա., Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ: Հայկական հարցը ժամանակակից քաղաքագիտական տեսությունների լույսի տակ, Եր., 1997:

⁸ Տե՛ս Հարությունյան Է., Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Մակմիլան-Արմենիա, Եր., 2004:

⁹ Տե՛ս Մանուչարյան Հ.Գ., Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները, Եր., 1988:

¹⁰ Տե՛ս Նալչաջյան Ա.Ա., էթնիկական հոգեբանություն, Եր., 2001:

¹¹ Տե՛ս Cline S. Ray. «World Power Trends and U.S. Foreign Policy for the 1980's», Western Press, 1980:

¹² Տե՛ս Core C.. The Military Power of the States: Boston-Press, 1960:

¹³ Տե՛ս Киссинджер Г.. Нужна ли Америке внешняя политика ? К дипломатии для XXI века. М. 2002., Дипломатия. М., 1997. Kissinger H., The White House Years., Boston: Little Bown, 1979; Kissinger H., A New National Partnership., Washington, 1975:

¹⁴ Տե՛ս Zakarya Farid, The Future of Freedom: Nonliberal Democracy in and out of the United State, N.Y., 2003:

¹⁵ Տե՛ս Kaplan Morton., The System Approach to International Politics., Ed. by N.Y., 1968:

¹⁶ Տե՛ս Buzan B., From International System to International Society: Structural realism sand Regime Theory., IO 43, 1993:

արտաքին քաղաքականության, ՀՀ անվտանգության և արտաքին ռազմավարության դիտարկման ժամանակ հաշվի են առնվել ինչպես արևմտյան (Ռ. Էլիսոն, Բ. Կոպիտերս), այնպես էլ հետխորհրդային (Ռ.Մ. Ավակով, Ա.Լ. Լիսով, Խ.Ս. Ժիլցով, Ի.Ս. Ջոնն) և, մասնավորապես, հայազգի (Հ. Քոթանջյան, Ա. Մանասյան, Մ. Շահգեղյան, Ռ. Շուգարյան, Ա. Այվազյան, Մ. Սարգսյան, Ի. Մուրադյան) հեղինակների աշխատանքները:

Այսպիսով սույն աշխատությունն ուղղված է ազգային շահերի տեսական հիմնադրությունների և պետության՝ որպես նրա հիմնական սուբյեկտի ներուժի, ինչպես նաև միջավայրային գործոնների ազդեցության որոշման, պատճառական կապերի, օրինաչափությունների վերհանմանն ու մեկնաբանությանը, ՀՀ ազգային շահերի հիմքերի և այդ շահերի կրողների որոշակիացմանը, հարավկովկասյան իրողությունների պայմաններում դրանց իրացման հնարավորությունների հստակեցմանն ու վերլուծությանը: Հարկ է նշել նաև, որ մեկ հետազոտության շրջանակում հնարավոր չէ անդրադառնալ հարցերի և խնդիրների դիտարկման և վերլուծման այն ողջ ներկայանակին, որն առկա է «ՀՀ ազգային շահեր – պետական քաղաքականություն – արտաքին միջավայր» եռաչափ հարաբերությունների բարդ համակարգում, ուստի առանձին հարցեր, որ չեն հետազոտվել ներկայացված աշխատանքի մեջ կարող են հետագա հետազոտությունների խնդիր հանդիսանալ:

Ներկայացվող հետազոտությունում նպատակ է դրված ոչ միայն վերհանել, վերլուծել և արժևորել ազգային շահը, նրա կառուցվածքը, առանձնահատկությունները և ձևավորման միտումները, այլ նաև որոշակիացնել նրա դերակատարումը պետության մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքականության կերտման տեսանկյունից: Այս համատեքստում շեշտը դրվում է ազգային շահերի իրացման պետության ներուժի և հզորությունների համակարգ կազմող կոնկրետ բաղադրատարրերի բնույթի և հարաբերակցության բացահայտման վրա, որն իր մասով պայմանավորում է ազգային շահերի հիմքով պետական քաղաքականության արդյունավետությունը: Վերոնշյալ նպատակների իրականացման համար առաջադրվում են հետևյալ խնդիրները.

1. բացահայտել քաղաքականության և մասնավորապես պետական քաղաքականության հիմք կազմող ազգային շահերի էությունը, բնորոշ գծերը, ձևավորման բնույթն ու կառուցվածքային բաղադրամասերը,
2. ներկայացնել ազգային շահերի հիմնական սուբյեկտների բնույթը,

նրանց գործողությունների ուղղվածությունը, մասնավորապես պետության՝ որպես ազգային շահերի հիմնական կրողի ներուժից ածանցվող գործողությունները,

3. մասնավորվել ազգային շահերի հայ ընկալման շարժընթացի հստակեցման, նրա կրողների որոշակիացման, նրանց փոխհարաբերությունների բնութագրման վրա,

4. վերլուծել հարավկովկասյան միջավայրում ազգային շահերի հիմքով ՀՀ պետական քաղաքականությունը՝ ներկայացնելով հնարավոր այն մոտեցումները, որոնք ՀՀ ազգային շահերի իրացման արդյունավետ միջավայր կստեղծեն:

Հայ քաղաքագիտական մտքի մեջ ազգային շահերի հիմնահարցն այսօրինակ ընդգրկումությամբ և կտրվածքով հետազոտության առարկա դարձնելով և լուծելով առաջադրված խնդիրները՝ կարող ենք ընդգծել, որ աշխատանքում առաջարկում ենք մի շարք դիտարկումներ, որոնք, կարծում ենք, իրենցից որոշակի գիտական արժեք են ներկայացնում: Դիտարկումները հետևյալն են.

1. ազգային շահերը, իրենց մեջ ամբողջացնելով պետական և հանրային շահերի բազմամակարդակ փոխգործակցության հանրագումարը, դիտվում են որպես պետական քաղաքականության առանցքային դրոպապատճառ: Ազգային շահերի մեկնաբանման ռեալիստական և լիբերալ-ազատական մոտեցումների համադրման և ազգային շահի կառուցվածքային վերլուծության մեթոդի օգնությամբ վերհանվում և ներկայացվում են ազգային շահի մեկնաբանման նոր մոտեցումներ.

- մի կողմից՝ ազգային շահը ազգի, այն կազմող էթնոմշակութային և սոցիալական շերտերի, հանրության, նրա քաղաքական կամքն արտահայտող պետության հիմնական արժեքներից ածանցվող շահերի հանրագումարն է, որն արժևորվում է նպատակային գործունեության միջոցով:

- մյուս կողմից՝ ազգային շահը պետության՝ որպես ազգի քաղաքական ինքնիշխանության և ինքնորոշման էությունից բխող, գոյության և զարգացման հրամայականներով պայմանավորված շահերի ամբողջությունն է:

2. Ազգային շահերի ներքին կառուցվածքի բնութագրման ժամանակային և ընդգրկման չափումները կոմպլեմենտար և կոնֆլիկտային տեսակի շահերի հետ հարաբերակցման պայմաններում ամբողջացնում են ազգային շահերի բարդ համակարգը:

3. «Ազգային շահի» կատեգորիալ բնութագրիչներ «ազգ» և «շահ» եզրերը՝ իրենց բովանդակային ուղղվածությամբ պայմանավորում են «ազգային շահ» եզրույթի բնույթը: Ազգային շահերի ներկայանակի բաղադրատարրեր պետական և հանրային շահերը, նրանց բնույթ, հարաբերման ձևը ու միջակայքի նոր մեկնաբանությունները որոշակիացնում են ազգային շահերի ձևավորման ուղեգիծը: Ազգային շահը հավաքական առումով որոշակիորեն տարբերվում է պետական և տարաբնույթ ու տարակերպ հանրային շահերից՝ իր բովանդակային հիմքում նրանց հետ ունենալով էական ընդհանրություններ:

4. Հայաստանի երրորդ հանրապետությունը, չունենալով ազգային շահերի հիմքով պետական քաղաքականության փորձ, իր պետական քաղաքականության մեջ համադրում է ազգային շահի՝ որպես ազգի և պետության ընդհանուր և միացյալ շահերի սկզբունքները:

5. Ազգային շահերի հիմքով պետական քաղաքականության մշակման ելակետը, մասնավորապես ՀՀ-ի պարագայում, հանգում է, պետության հզորությունների առանցքային՝ աշխարհագրական, տնտեսական, ռազմաքաղաքական և մի շարք այլ տարրերի կիրառման խիստ որոշակի հարաբերակցությանը:

6. Իր ռազմավարական ներուժի աշխարհագրական բաղադրամասով Հայաստանը հիմնավոր կերպով հավակնում է հանդիսանալ «սև», «կասպից» և «միջերկրածովյան» քաղաքական տարածությունները միմյանց կամրջող հանգուցակետ: Նշյալ հանգամանքն իր մասով պայմանավորում է ՀՀ ազգային շահերի և արտաքին քաղաքականության հիմքերը:

ԳԼՈՒԽ 1.**ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԸ՝ ՈՐՊԵՍ
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԵՎՈՐ ՀԻՄՆԱՀԱՐՑ****1.1 Ազգային շահի ռեալիստական և
ազատական մեկնաբանությունները**

Աշխարհաքաղաքական արդի գործընթացները փոխել են Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորված ռազմավարական հավասարակշռությունը, որը տևական ժամանակ ապահովում էր միջազգային հանրության՝ հարաբերականորեն կայուն համագոյակցությունը: Սառըպատերազմյան իրողություններին փոխարինելու եկած մի կողմից՝ «միաբևեռ» աշխարհակարգի հաստատման և Եվրասիան համաաշխարհային ռազմավարական մրցակցության նոր դաշտ դիտարկելու¹⁷ ԱՄՆ-ի ռազմավարությունը, մյուս կողմից՝ Ռուսաստանի Դաշնության, Չինաստանի, Եվրոպական Միության՝ «Ֆրանսիա-Գերմանիա» տանդեմի «ջանքերն»՝ ուղղված բազմաբևեռ աշխարհի գաղափարի գործնական իրացմանը, միջազգային հարաբերությունների հետագա շարժընթացը դարձրել են անկանխատեսելի:

Աշխարհաքաղաքական նմանօրինակ վերաճումները զուգահեռվեցին համակարգային բնույթ և յուրօրինակ միտում ունեցող պատմական այնպիսի երևույթի հետ, ինչպիսին գլոբալացումն է, որն արդի ժամանակաշրջանում, իր վրա կրելով մարդկության պատմական ողջ փորձն ու կենսագրությունը, պայմանավորեց միջազգային համակեցության հետագա ուղեգիծը:

Այն հայտ է, որ գլոբալացումը նոր երևույթ չէ: Այն իր մեջ է ներառում մարդկային հանրության քաղաքակրթական վերափոխման գրեթե ողջ շարժընթացը՝ իրենով պայմանավորելով գլոբալ զարգացման համաչափ կամ անհամաչափ միտումները: Գլոբալացման ժամանակակից փուլում այն մի շարք այնպիսի նոր գործընթացների հետևանք դարձավ, ինչպիսիք են համաաշխարհային տնտեսության շարժընթացի կտրուկ աճը, որն իր մեջ ներառում է ֆինանսների, ներդրումների, ապրանքաշրջանառության, ծա-

17 «ԱՄՆ-ի համար աշխարհաքաղաքական հիմնական նպատակը Եվրասիան է: Այսօր Եվրասիայում ղեկավար դիրքեր զբաղեցնում են ոչ Եվրասիական գերտերությունները և ԱՄՆ-ի համաաշխարհային առաջնորդությունն անմիջականորեն կախված է նրանից, թե որքան երկար և արդյունավետ կպահպանվի նրա գերիշխանությունը Եվրասիական մայրցամաքում» (Տե՛ս *Бжезинский З., Великая шахматная доска. Господство Америки и его геостратегические императивы, М., Меж. Отнош., 1999 г, էջ 43*):

ռալությունների և «նոու-հաու» տեխնոլոգիաների առավել ազատ և դինամիկ տեղաշարժը, մրցակցության մեծացումը և շուկաների աշխարհագրության ընդլայնումը, նորագույն տեխնոլոգիաների հիմքի վրա արտադրողականության ավելացումը, տնտեսական զարգացման անհամաչափ աճն ու համաշխարհային տնտեսական փոխկախվածության և անկայունության մեծացումը, տնտեսության և քաղաքականության սուբյեկտների դերակատարման փոփոխությունն ու «մշակութային, վարքային արևմտյան տիպոլիաների(մոդելների) գերակայությունը»¹⁸:

Այսօրինակ փոփոխություններն օբյեկտիվ ազդեցություն ունեցան ինչպես միջազգային քաղաքական համակարգում շփումների բնույթի, պետության դերակատարման վերարժևորման ընթացքի, քաղաքական գործընթացների ձևի ու ընդհանուր միտումների, այնպես էլ քաղաքականության կերտման, նրա հայեցակարգային հիմքերի մեկնաբանման մոտեցումների, քաղաքական փիլիսոփայության հիմնարար սկզբունքների վերլուծության, քաղաքական գործընթացների առանցքային դրդապատճառների վերագնահատման վրա: Որպես քաղաքականության առանցքային հիմք՝ փոփոխություն կրեցին նաև «ազգային շահի» դիտարկման և մեկնաբանման՝ նախկինում գերակա հայեցակարգային այնպիսի մոտեցումները, ինչպիսին քաղաքական ռեալիզմն է:

Քաղաքական «ռեալիզմը» (ուշ լատիներեն. Realis - առարկայական) միջազգային հարաբերությունների ուսումնասիրման ուղղություններից է, որ ձևավորվել է 20-րդ դարի 30-ական թթ-ին: Նշյալ մոտեցումը քաղաքական երևույթների մեկնաբանությունը պայմանավորում է մարդկային բնույթի՝ օբյեկտիվ օրինաչափություններից ածանցվող դրդապատճառներով:

Ազգային շահը՝ որպես քաղաքագիտության հիմնահարց, դարեր շարունակ գտնվել է մտածողների ուշադրության կենտրոնում: Սակայն իր՝ տեսական հիմնավոր ձևակերպումն այն ստացել է միայն ամերիկյան քաղաքական ռեալիզմի դպրոցի ներկայացուցիչներ Չ. Բիրդի, Է. Քառի, Հ. Մորգենթաուի, Ա. Ուոլֆերսի, Կ. Թոմսոնի, Ս. Հոֆմանի, Ջ. Քենանի, Ռ. Շտրաուս-Հյուպեի, իսկ հետագայում՝ Հ. Քիսինջերի, Ջ. Բժեզինսկու և Ժամանակակից նեոռեալիզմի «հիմնադիր» Բ. Ուոլթսի աշխատություններում, որոնց տեսական եզրահանգումներն իրենց մեջ ներառում էին անտիկ, միջնադարյան և նոր շրջանի մի շարք մտածողների գաղափարական մոտեցումները:

¹⁸ St'u Robert A.-C. Naissance d'une mythologie juridique // Le Monde diplomatique. Janvier, 2001, tթ 21:

Պատմագրությունը փաստում է, որ միջազգային հարաբերությունների ռեալիստական տեսության գաղափարական հիմքերն ածանցվում են միջպետական փոխհարաբերությունների խորը վերլուծություն պարունակող հեղինակավոր առաջին աղբյուրներից մեկի՝ անտիկ հույն մտածող և փիլիսոփա Թուկիդիդեսի (Ք.ա. մոտ 460-396) «Պելեպոնեսյան պատերազմների պատմություն»¹⁹ ութհատորյա աշխատությունից, որի հիմնական եզրահանգումը հետևյալն է. միջպետական փոխհարաբերություններում պետությունների քաղաքական ճակատագիրը որոշվում է նրանց ռազմական և տնտեսական հզորությամբ, իսկ պետական քաղաքականության նպատակները՝ արտաքին սպառնալիքներին համապատասխան²⁰, հետևաբար «հզոր պետությունները գործում են այնպես, ինչպես կարող են, թույլերը՝ այնպես, ինչպես «թույլ են տալիս» հզորները²¹»: Թուկիդիդեսյան դատողություններն, իրենց մեջ ամբողջացնելով հայեցակարգային առումով վաղ ռեալիստական մոտեցումներ դավանող անտիկ հույն մի շարք մտածողների, մասնավորապես՝ Պլատոնի, տեսական ժառանգությունը, հետագայում՝ հատկապես միջնադարում, եվրոպական և մասնավորապես իտալական մտածողների (Ջ.Բոտերոյի և այլոց) կողմից, լուրջ լրանշակման ենթարկվեցին՝ քաղաքագիտական գրականության մեջ հիմք հանդիսանալով ավանդական կամ դասական քաղաքական Ռեալիզմի գաղափարական մոտեցումների ձևորոշման համար:

Միջնադարում, ռեալիստական տեսությունն իր վրա զգաց այնպիսի մտածողների հասարակագիտական և փիլիսոփայական հայացքների ազդեցությունը, ինչպիսիք էին Նիկոլո Մաքիավելին, որը մարդու «անշնորհակալ և անկայուն, նենգության և խաբեության հակված, վախկոտ և շահամոլ»²² բնույթով էր պայմանավորում տիրակալի կողմից ուժ կիրառելու անհրաժեշտությունը, և Թոմաս Հոբսը, որը նշում էր, թե մարդկանց բնական վիճակը «բոլորի պատերազմ բոլորի դեմ (լատ. *bellum omnia contra omnes*)» վիճակն է, որից հնարավոր է դուս գալ միայն հանրային դաշինքի կնքման արդյունքում: Ռեալիստական տեսության կայացման հետագա գործընթացում իրենց մեծ ներդրումն ունեցան «քաղաքական հավասարակշռության» տեսության հեղինակ՝ շվեյցարացի իրավաբան Էմեր դ՛Վատելլը²³ և գերմանացի գեներալ Կ.Ֆ.Գ.Կլաուզիցը, որը պատերազմը

¹⁹ Տե՛ս Фукидид. «История Пелопонесской войны в восьми книгах», М,1987:

²⁰ Տե՛ս Столкновение глобализаций, ж-л, 26,02,2003, <http://www.globalaffairs.ru/numbers/2/1958.html>:

²¹ Տե՛ս Электронная библиотека Социологического факультет Московского Государственного Университета имени М.В.Ломоносова <http://lib.socio.msu.ru/1/library?e=d-000-00---01omon-00-0-0-0prompt-10---4---0-11---1-ru-50---20-help---00031-001-1-0windowsZz-12510&cl=CL1&d=HASH011ab150a75e73 ae9b004d21. 29&gc=0>:

²² Այս մասին առավել մանրամասն տե՛ս, The Prince, by Nicolo Machiavelli, Translated by W. K. Marriott, <http://historymedren.about.com/library/text/blttxprincemain.htm>:

դիտում էր որպես «քաղաքականության շարունակություն, սակայն այլ միջոցներով»²⁴:

Ակնհայտ է, որ ժամանակակից ռեալիստական դպրոցի գաղափարական արմատները քննարկելիս հղումն անտիկ, միջնադարյան և նոր շրջանի հեղինակավոր և առավել հայտնի մտածողների աշխատանքներին ճշմարիտ է, սակայն կարևոր է հաշվի առնել նաև 19-րդ դարի մտածողներ Ալբերտ Սորելի²⁵, Ֆրիդրիխ Մեյնեկեի²⁶ և Հենրիխ Տրեյկեի²⁷ հայացքները, որոնք, անկասկած, մեծ դերակատարում են ունեցել ռեալիստական տեսության ձևակերպման գործընթացում: Ի դեպ, հենց Հ. Տրեյկեին է վերագրվում «քաղաքական ռեալիզմ» հասկացությունը գիտական շրջանառություն դաշտ ներմուծելու առաջնայնությունը:

Գաղափարական արմատների ձևորոշումից զատ հարկ է նշել, որ քաղաքական ռեալիզմի տեսության կայացման վրա մեծ ազդեցություն ունեցան մի քանի հարյուրամյակ եվրոպական քաղաքական զարգացումների ողջ շարժընթացը պայմանավորող «Բանական կառավարման (Raison d'Etat)» և «Իրական քաղաքականության(realpolitik)» սկզբունք-հայեցակարգերը:

«Բանական կառավարման» սկզբունք-հայեցակարգը²⁸, որը քաղաքական բառապաշար է ներմուծվել 16-րդ դարի իտալացի քաղաքական տեսաբան Ջիովանի Բոտտերոյի կողմից, լայն առումով դիտվում էր որպես «պետություն ղեկավարելու հմտություն, մասնավորապես պետական քաղաքականության բանական (ողջամիտ) հաշվարկ ու կազմակերպում, պետության ինստիտուտների ու վարչարարության սթափ կանոնակարգում»²⁹, նեղ իմաստով՝ «մեթոդների, միջոցների ու որոշումների այնպիսի ամբողջություն, որոնք ընդունվում և իրականացվում են պետության անվտանգության և/կամ բարեկեցության ապահովման նպատակով՝ անկախ գերակա արժեքներից, բարոյական նորմերից կամ օրենքներից»³⁰:

²³ Այս մասին առավել մանրամասն տե՛ս, The Prince, by Nicolo Machiavelli, Translated by W. K. Marriott, <http://historymedren.about.com/library/text/blttxprincemain.htm>:

²⁴ Տե՛ս Эмер де Ватель, **Право народов или принципы естественного права, применяемые к поведению и делам наций и суверенов, М, 1960:**

²⁵ Տե՛ս Rosenau N. James, *The Scientific Study of Foreign Policy*, London: Frances Printer; N. Y., Nichols, 1980, էջ 286, 289-292:

²⁶ Տե՛ս Lipmann Walter, *The Phantom Public: A Sequel to «Public Option»*, N.Y., 1922, էջ 104 -106:

²⁷ Ջ.Ն.Ռոզենաունը նշում է. «Ազգային շահի սահմանում/որոշումը երբեք չի կարող լինել ոչ այլ ինչ, եթե ոչ մտահանգումներ, որոնք բխում են քաղաքականության վերլուծական և արժեքային հիմքից» (Տե՛ս Rosenau N. James, *The Scintific Study of Foreign Policy* (London: Frances Printer; N.Y. Nichols, 1980, էջ 284):

²⁸ Բ.Գ.Կապուստինը «ավելի հեռու է գնում»՝ նշելով. «Ազգային շահի հայեցակարգը հնարավորություն է տալիս այն նույն ացնել «պետական շահ» հասկացության հետ, որն էլ պետական իշխանության մի շարք ներկայացուցիչներին պարբերաբար հնարավորություն է ընձեռում, սեփական քաղաքական նպատակներից ելնելով, շահարկել «ազգային շահ» հասկացությունը» (Տե՛ս Капустин Б.Г. «Национальный интерес», как консервативная утопия, ж-л «Свободная мысль», 1996, № 3, էջ 14-15):

²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 12:

³⁰ Տե՛ս Krasner D. Stephan, *Defending the National Interest: Raw Materials Investments and U.S. Foreign Policy*, Prinseton, 1970, էջ 10, 43, 54:

«Իրական քաղաքականության» սկզբունք-հայեցակարգը, որը գիտական գործածության դաշտ է ներմուծել 1853թ-ին գերմանացի հրապարակախոս Լյուդվիգ ֆոն Ռոշաուն³¹, հաճախ դիտվում է որպես դասական ռեալիզմի ուղղություններից մեկը: Ըստ նրա պետությունը հանուն խաղաղության պետք է պատրաստ լինի նույնիսկ պատերազմի: Մինչդեռ առավել մեղմ կերպով նշված սկզբունքը քաղաքական գործունեության այնպիսի ձև է, որը քաղաքական ոլորտում հաշվի առնելով հակառակորդի շահերը, պատրաստ է ուժ կիրառել, եթե գործունեության մյուս մեխանիզմներն իրենց սպառել են³²:

Հայեցակարգային իր հիմքում ամբողջացնելով դարերի մմանօրինակ տեսական ժառանգությունը՝ քաղաքական ռեալիզմի տեսությունն, այնուամենայնիվ իր՝ գաղափարապես հիմնավոր և կառուցվածքայնորեն կուռ ձևակերպումը ստացավ միայն 20-րդ դարում՝ մասնավորապես երկրորդ աշխարհամարտից հետո, երբ միջազգային հանրությունը «համտեսեց» երկբևեռ աշխարհի՝ սառըպատերազմյան քաղաքականության պտուղները:

Գիտական գրականության մեջ ընդունված է, որ ռեալիստական տեսությունը քաղաքական գործողությունների էության և դրդապատճառների առավել հետևողական մեկնաբանությունն է, որի հիմնադիր համարվում է Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Հանս Մորգենթաուն (1904-1980): Նա, խոսելով քաղաքական ռեալիզմի տեսության մասին, նշում է, որ քաղաքական մտքի պատմությունը պայքար է մարդու, հասարակության և քաղաքականության մեկնաբանման 2 հիմնական մոտեցումների միջև, որոնցից առաջինի կողմնակիցները (բնագրում – սուրյեկտիվիստները (հեղ.)) գտնում են, որ հնարավոր է միաժամանակ և՛ բանական, և՛ բարոյական սկզբունքների վրա հիմնված միջազգային քաղաքական պայմանակարգ (ռեժիմ) հաստատել, մյուսները՝ ռեալիզմի կողմնակիցները, այն կարծիքին են, թե աշխարհն անկատար է, հետևաբար, որպեսզի ստեղծվի ողջամիտ քաղաքական պայմանակարգ, անհրաժեշտ է հաշվի առնել մարդու անկատար բնույթը, նրա հասարակական-քաղաքական էությունից բխող օբյեկտիվ օրենքները: Ելակետային համարելով մարդու անկատար բնության սկզբունքը, որ իր արմատներով սերում է Ն.Մաքիավելու և Թ. Հոբսի գաղափարական մոտեցումներից, ռեալիստները, ի դեմս Հ. Մորգենթաունի, փաստում են, որ հանրային փոխհարաբերությունները բարեփոխելու և կատարելագործելու համար նախ անհրաժեշտ է ընկալել մարդու գործունեության հիմքում ընկած հիմնարար շահերն ու օրինաչափությունները:

³¹ St' u Aron Raymond, Peace and War: A Theory of International Relations, Garden City, N.Y., 1973, էջ 83

³² St' u Morgenthau H.J., Politics Among Nation, էջ 5, 8, 553:

Պատմականորեն սոցիալական և պատմաքաղաքական տարաբնույթ երևույթների մեկնաբանման ժամանակ շահերի կարևորումը բավական մեծ է եղել: Այդ մասին են փաստում մի շարք խոշոր մտածողների եզրահանգումները. օրինակ՝ Կ.Ա.Հելվեցիուսը գտնում էր, որ «շահը մեր բոլոր մտքերի և բոլոր գործողությունների սկիզբն է»³³, Պ.Հոլբախն այն կարծիքին էր, թե շահերը մարդկային գործունեության միակ դրդապատճառներն են և այդ հիմքով փորձում էր մեկնաբանել հանրային կյանքը³⁴, Գ. Հեգելը պնդում էր, որ ոչինչ չի իրականացվում առանց շահերը հաշվի առնելու³⁵, համաձայն Կ.Մարքսի՝ հենց շահն է «միացնում քաղաքացիական հասարակության անդամներին»³⁶: Շահերի նշանակության նմանօրինակ ընդունումը, մեր կարծիքով, վերահաստատում է այն կարծիքը, որ մարդկային և սոցիալական ցանկացած գործողություն պայմանավորված է շահի իրացման գերակա անհրաժեշտության գիտակցմամբ: Շահերի հիմքով ծավալվող գործունեությանն է անդրադառնում նաև ԱՄՆ առաջին նախագահ Ջ. Վաշինգտոնը, ով գտնում էր. «Իրական կյանքը փաստում է՝ մարդկանց մեծամասնությունն առաջնորդվում է միմիայն սեփական շահերով: Շատ քչերը կարող են երկար ժամանակ զոհաբերել սեփական շահերը հանրային բարիքի համար: Այս առումով չի կարելի մեղադրել մարդու բնույթը, քանզի բոլոր ժամանակներում մարդիկ առաջնորդվել են առաջին հերթին սեփական շահերով, և եթե ցանկանում ենք փոփոխել դա, ապա սկզբում անհրաժեշտ է փոխել մարդու բնույթը: Ոչ մի հասարակություն չի կարող լինել ամուր և բարգավաճ, եթե հաշվի չառնվի այդ փաստը»³⁷:

Այս համատեքստում քաղաքական ռեալիզմի կողմնակիցները կարևորում են այնպիսի տեսության ստեղծման անհրաժեշտությունը, որը, թեկուզ և ոչ ամբողջությամբ, սակայն ունակ է վերհանել և մեկնաբանել քաղաքական գործունեության օրենքներն ու դրանց հիմքում ընկած օբյեկտիվ դրդապատճառները: Այդ տեսությունը պետք է հիմնվի իրական փաստերի, քաղաքական օրինաչափությունների և գործողությունների դրդապատճառների ուսումնասիրման վրա: Ռեալիստական տեսությունը նպատակ չունի «բացարձակ ճշմարիտ» հայեցակարգ մշակել, այլ խնդիր ունի միայն ձևակերպել հայեցակարգային այնպիսի մեխանիզմներ, որոնք ի

³³ Стѹ Гельвѹций К.А., О человеке, его умственных способностях и его воспитании, М, 1938, тѹ 346:

³⁴ Стѹ Гольбах П., Избранные философские произведения, Т.І, М, 1963, із 311:

³⁵ Стѹ Гегель Г., Сочинения, Т. III., М, 1956, тѹ 288:

³⁶ Стѹ Маркс К., Энгелс Ф., Сочинения, Т. II., М, 1955, тѹ 134:

³⁷ Стѹ Национальная безопасность и национальные интересы РФ, 09.08.06.

<http://www.auditorium.ru/aud/p/index.php?a=presdir&c=getForm&r=resDesc&id res=155>:

վիճակի կլինեն մեկնաբանել քաղաքական գործընթացների պատճառական կապերը: Դա է պատճառը, որ «բացարձակ ճշմարիտ» տեսություն կառուցելու հավակնություն չունենալով՝ հետազոտության նշյալ մոտեցման կողմնակից տեսաբաններն, իրենց տեսությունը կոչում են «ռեալիստական», քանզի խնդիր ունեն ուսումնասիրել առարկաների «իրական» վիճակը, homo politicus-ի օբյեկտիվ բնույթը՝ այլ ոչ թե հիմնվել հայեցակարգային սուբյեկտիվ դատողությունների և վերացական սկզբունքների վրա: Այս պարագայում ռեալիստները նշում են, որ միայն առկա քաղաքական միջավայրի վերլուծությունը բավարար չէ ըմբռնելու քաղաքականության (և հատկապես արտաքին քաղաքականության) բնույթը մեկնաբանելու և կանխորոշելու նրա հետևանքները, ուստի անհրաժեշտ է ձևակերպել տեսական մի այնպիսի տիպօրինակ-հայեցակարգ, որը կկարողանա մեկնաբանել հատկապես պետական քաղաքականության հիմքերը՝ բացահայտելով նրա պատճառականությունը: Նրանք գտնում են, որ քաղաքականության տեսությունը, լինի դա ներքին, թե արտաքին, հենքային հայեցակարգի անհրաժեշտություն ունի, որը կպայմանավորի նրա բնույթը, դրսևորման ձևերն ու քաղաքական հետազոտությունը: Հենց նմանատիպ դեր ու նշանակություն են ռեալիզմի տեսաբանները տալիս ազգային շահերին:

Ռեալիստական տեսության համաձայն, ազգային շահը բացահայտում է պետական քաղաքականության էությունը և կախված չէ ժամանակի և տարածության կոնկրետ պայմաններից: Այն առկա է միայն նրա սուբյեկտ հանդիսացող պետության քաղաքական գործունեության պարագայում: Ըստ ռեալիստ տեսաբանների, պետությունը միջազգային հարաբերությունների հիմնական սուբյեկտն է, իսկ համակարգի «շարժիչ ուժը»՝ ազգային շահի հիմքով միջպետական մրցակցությունը: Այս համատեքստում տեղին է հիշել մ.թ.ա. 5-րդ դարի հույն մտածող Թուկիդիդեսի այն միտքը, թե «շահերի ընդհանրությունը միակ ամուր կապող օղակն է, ինչպես անհատների, այնպես էլ պետությունների միջև»³⁸:

Ազգային շահը դիտարկելով որպես քաղաքականության մեկնաբանման կարևորագույն հիմք՝ ռեալիստներն այն սահմանում էին «ուժ» և «իշխանություն» հասկացություններով: Սա ենթադրում է, որ ազգ-պետությունների շահերի իրականացման և սպասարկման աստիճանը որոշվում է այդ շահերի սուբյեկտ հանդիսացող պետությունների հավաքական «ուժով» և ռեսուրսային հզորությամբ:

Մեր կարծիքով, այս պարագայում ռեալիստական մոտեցումը թերաճում է՝ ազգային շահերի իրացումը բացառապես ածանցելով պետության

³⁸ St'iu Morgenthau H.J., Politics Among Nations., N.Y., 1955, էջ 92-93:

ներուժից: Ժամանակակից աշխարհում պետության հզորության ներուժն անկասկած մեծ դեր է խաղում, սակայն ազգային շահերի իրացման գործում նշանակալի դերակատարում ունեն կարևոր մի շարք գործոններ ևս՝ միջազգային հանրության դիրքորոշումը և շահերը, պետության ժողովրդավարացման աստիճանը, պետության և ազգի քաղաքակրթական զարգացվածության մակարդակը և այլն:

Ըստ ռեալիստ տեսաբանների, «ուժ» և «իշխանություն»³⁹ հասկացություններով սահմանվող շահն օբյեկտիվ կատեգորիա է, որն ուժերի հարաբերակցության փոփոխման պայմաններում, կարող է վերարժևորվել: Այս մասին է փաստում նաև Հ.Մորգենթաուն՝ նշելով. «Իշխանության հասկացություններով սահմանված շահի հայեցակարգն ընդմիջտ, կայուն, անփոփոխ չէ: Այն կախված է իրավիճակային կոնկրետ պայմաններից»⁴⁰:

Ազգային շահի մեկնաբանման ժամանակ քաղաքական ռեալիստները շեշտադրում են հատկապես նրա արտաքին քաղաքական բովանդակությունը՝ նշելով, որ քաղաքական գործողությունները կանխորոշող ազգային շահը երկարաժամկետ չափանիշ է, որ ձևավորվում է պատմական կոնկրետ փուլում և քաղաքական ու մշակութային կոնկրետ համատեքստում, հետևաբար՝ ենթակա է փոփոխման: Սա է պատճառը, որ ազգային շահն անհրաժեշտ է դիտարկել պատմական համատեքստում, քանզի պատմաքաղաքական իրական զարգացումներից նրա կտրվածությունը ձախողման է դատապարտում շահի իրականացումը: Քաղաքական ռեալիզմի խոշորագույն տեսաբան Հ. Մորգենթաուն այս առթիվ նշում էր. «Արտաքին քաղաքականության նպատակները պետք է որոշվեն բացառապես ազգային շահի համատեքստում և աջակցություն ստանան համապատասխան ուժով»⁴¹:

Պատմագրության մեջ որպես ազգ-պետության գործառնման առաջնային դաշտ ավանդաբար դիտվել է արտաքին միջավայրը: Մեր կարծիքով, այդ է պատճառը, որ ազգ-պետության միջնադարյան ընկալումից ածանցվող ռեալիստական մոտեցումը շեշտում է պետական քաղաքականության հիմք ազգային շահերի հատկապես արտաքին ընդգծվածությունը: Ժամանակակից աշխարհում պատկերն այլ է: Արտաքին հարթությունից զատ, ազգային շահերի ոլորտ են ներմուծվել նաև բացառապես պետության ներքին կյանքի հետ առնչվող ոլորտներ, որոնք պետական անվտա-

³⁹ «Իշխանություն» հասկացության տակ Հ.Մորգենթաուն դիտում է «իշխանության սուբյեկտի կողմից օբյեկտի նկատմամբ տարաբնույթ վերահսկողությունը», որի մեջ առանձնացնում է «քաղաքական իշխանությունը, որպես մի կողմից՝ հանրային հեղինակություն վայելող, մյուս կողմից՝ հանրության մնացյալ հատվածի միջև փոխադարձ վերահսկողության ու ենթակայության հարաբերություններ» (Տե՛ս Morgenthau H.J. Politics Among Nations. N.Y., 1955, էջ 26):

⁴⁰ Տե՛ս Morgenthau H.J., նշված աշխ., էջ 8:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 36:

նգության տեսանկյունից չունեն նվազ կարևորություն: Ուստի վստահորեն կարելի է պնդել, որ ազգային շահերի հիմքով ժամանակակից պետական քաղաքականության մեջ փորձ է արվում պահպանել այդ շահերի արտաքին և ներքին ոլորտների հավասարակշռված համամասնությունը:

Բովանդակային բաղադրամասերի տեսանկյունից ռեալիստներն «ազգային շահի», կամ, ինչպես Հ.Մորգենթաուն է նշում, «ամբողջական ազգային շահերի» հայեցակարգի մեջ տարբերակում են «կենսական կարևոր» և «կարևոր» մակարդակի շահերը: Կարևոր շահերն իրենց հերթին ունեն ներքին աստիճանակարգային կառուցվածք՝ կազմված «բարձր», «միջին» և «ցածր» կարևորության շահերից:

Կենսական շահերն ազգային անվտանգության շահերն են, որոնց ապահովման հարցում պետությունը չպետք է զիջումների գնա:

Բովանդակային կառուցակազմի հաջորդ բաղադրատարրը կարևոր շահերն են: Դրանք բավական բարդ է սահմանել, քանզի «կենսական կարևոր» և «կարևոր» շահերի տարբերակիչ գիծը խիստ փոփոխական է՝ կապված պատմաքաղաքական, ժամանակային, ներուժային գործոններից, և շահը որոշակիացնող քաղաքական ղեկավարության մոտեցումներից: Կարևոր շահերի ներկայմակ հիմնականում ներառվում են պետական զարգացման քաղաքականության տարբեր ոլորտներին վերաբերող շահերը: Այս շահերի ապահովման դաշտն իր մեջ անմիջականորեն չի ներառում պետական անվտանգությանն առնչվող հիմնախնդիրներ, հետևապես նրանց շուրջ պետական իշխանության մարմինները կարող են որոշակի սակարկությունների և փոխզիջումների գնալ: Սակայն տևական ժամանակ կարևոր շահերի անտեսումը կամ զիջումը կարող է սպառնալ ազգային անվտանգությանը:

Շեշտելով ազգային շահի արտաքին քաղաքական բովանդակությունն ու ուղղվածությունը՝ ռեալիստներն ազգային շահի բովանդակային կառուցակազմում տարանջատում են արտաքին կամ միջազգային շահերի 3 հիմնական ձև՝ նույնական, համադրելի և հակասող: Նույնական շահերի տակ նրանք դիտարկում են երկրների և/կամ նրանց միավորումների միջև ընդհանուր շահերը, համադրելի շահերի տակ՝ այն շահերը, որոնք, չնայած նույնական չեն, սակայն ընդունակ են յուրահատուկ շահերի հիմքով հիմնարար համաձայնություն ձևավորել, իսկ հակասող համարվում են իրար բացասող շահերը, որոնց իրականացումը կարող է հանգեցնել պատերազմի⁴²: Նմանօրինակ պայմաններում, ըստ ռեալիստների, պետությունն իր շահերը պետք է որոշակիացնի՝ հաշվի առնելով նաև սեփական

⁴² St' u Morgenthau H.J., In Defense of The National Interest, N.Y., 1951, էջ 66:

ազգային շահերի արտաքին հնարավոր արձագանքները, քանի որ ազգային շահի ոչ հաշվենկատ արժևորումը կարող է ոչ միայն վտանգել շահի սպասարկումը, այլ նաև անգամ պետության գոյությունը, ուստի ոչ միշտ են քաղաքական ղեկավարության ցանկալի նպատակներն արդարացվում միջազգային քաղաքականության իրատեսական դաշտում: Պատմական փորձը փաստում է, որ արտաքին քաղաքական գործունեության իրականացման դրդապատճառներն այդ գործունեության արդյունավետության անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են, հետևաբար արտաքին քաղաքականություն կերտող «քաղաքական գործիչների բարի ցանկությունները արտաքին քաղաքականության ո'չ բարոյականության, ո'չ էլ արդյունավետության երաշխիք չեն»⁴³:

Ըստ ռեալիստների, ամբողջական ազգային շահերը օբյեկտիվ բնույթ ունենալով հանդերձ, կարող են ոչ ճիշտ ընկալվել քաղաքական գործիչների և պետության քաղաքական ղեկավարության կողմից, հետևաբար առաջնահերթ կարելի է համարել շահերի հայեցակարգի աստիճանականության կառուցակազմի ձևորոշման, այնտեղ ազգային անվտանգության շահերի ապահովման գերակայության սահմանման և նոր միայն այդ շահերի իրականացումից բխող ներուժի կուտակման անհրաժեշտությունը: Ազգային անվտանգության շահերի իրացման տեսանկյունից վստահորեն կարելի է նշել, որ պետության արտաքին քաղաքական ռազմավարությունն ուղղված պետք է լինի սեփական ազգային շահերի հիմքով քաղաքականության կերտման ու պետության անվտանգության ապահովման, ազգաբնակչության մեջ՝ հանրային կարծիքի ձևավորման տեսանկյունից քաղաքականապես կարևոր շերտերի տնտեսական պահանջումների բավարարման, և միջազգային ոլորտում՝ պետության վարկանիշի բարձրացման նպատակների իրականացմանը:

Միջպետական փոխհարաբերությունների մրցակցային պայմաններում, համաձայն քաղաքական ռեալիզմի տեսաբանների, պետության հզորությունն այլ պետությունների ազգային շահերը վիճարկելու հնարավորության մեջ է, ընդ որում շահերի վիճարկման արդյունքում հավակնությունների ենթարկվող պետությունը կարող է անգամ զրկվել պետության կենսագործունեության համար անհրաժեշտ նվազագույն պայմաններից՝ դադարելով գոյություն ունենալ: Սա փաստում է, որ ազգային շահերը վեր են կանգնում համակեցության կարգավորման ցանկացած նորմից, սկզբունքից, իսկ ուժը (հզորությունը) վերածվում է արտաքին քաղաքական գործունեության

⁴³ St'u Morgenthau H.J., *Politics Among Nations*, 1955, էջ 6:

արդյունավետության հիմնական ցուցանիշի: Ուժի գործոնի առանցքային դերին ու նշանակությանն է անդրադառնում նաև կանադացի քաղաքագետ Ա.Բետլերը, որը գտնում է. «Միջազգային անվտանգության հիմնաքարը ձևորոշում են տնտեսապես հզոր և քաղաքականապես ազդեցիկ պետությունները, ինչը նրանց թույլ է տալիս մնացյալ աշխարհին պարտադրել սեփական ազգային շահերը՝ դրանք դարձնելով միջազգային շահեր: Դրան կարելի է հասնել 2 հիմնական մեխանիզմի գործարկման միջոցով. կամ սեփական ռեսուրսներով դառնալ առավել հզոր, կամ միանալ հզոր տերություններին»⁴⁴: Սակայն հարկավոր է նշել նաև, որ ազգ-պետության կողմից սեփական ազգային շահերի սպասարկման նպատակից բխող հզորությունների կուտակումը կարող է հանգեցնել նաև միջպետական փոխհարաբերություններում լարվածության ձևավորմանն ու հավակնոտ քաղաքականության իրականացմանը՝ որպես հետևանք հարևան երկրների համապատասխան քաղաքական արձագանքին: Հետևապես ցանկացած պետության՝ տարածաշրջանային կամ համաշխարհային գերիշխանության հասնելու հավակնությունները անխուսափելիորեն հանդիպում են նման ծրագրերի գործարկմանը խոչընդոտող կամ հակակշռող մի շարք գործոնների: Առաջին հերթին խոսքն այլ պետությունների շահերի ու անվտանգության ապահովման հիմնախնդիրների մասին է, որոնք անվերջանալի մրցակցության և մրցավազքի պատճառ են դառնում:

Քաղաքական ռեալիզմի փիլիսոփայության ընդգծված ողջամտությունը և հաշվենկատությունը քաղաքական գործողությունների և նրանց դրդապատճառների բարոյական հիմնավորման օբյեկտիվ անհրաժեշտություն են ստեղծում: Ռեալիստական տեսությունն այս համատեքստում հատկապես կարևորում է քաղաքականություն-բարոյականություն կապը: Քաղաքական ռեալիզմն ընդունում է քաղաքական գործողության բարոյական բաղադրիչի կարևորությունը՝ միաժամանակ արձանագրելով բարոյական առաջնայնությունների և արդյունավետ քաղաքականության կերտման պահանջների անխուսափելի անհամապատասխանությունը: Ըստ ռեալիստների, պետական քաղաքականությունը պետք է ողջամիտ և արդյունավետ լինի իր բարոյական սկզբունքների և գործնական՝ նպատակների տեսանկյունից, հետևաբար «քաղաքականությունը պետք է մեկնաբանվի քաղաքական հասկացություններով, և քաղաքականության գնահատման բարոյական նորմերի փնտրտուքը քաղաքական մի-

⁴⁴ См. Бетлер А., Национальный интерес, ж-л «Полис», 2003, С.1, їз 28:

ջակայքից դուրս ողջամիտ չէ»⁴⁵: Պետությունն իրավունք չունի բարոյականությունը վեր դասել արդյունավետ քաղաքականության կերտման պահանջներից, որոնք ինքնին հիմնված են ազգի գոյատևման բարոյական սկզբունքի վրա: Մեր կարծիքով պետական քաղաքականության կերտման համատեքստում հարկավոր է առանձնակի կարևորել ողջամիտ քաղաքականության իրականացման դերն ու նշանակությունը: Այն պետք է ածանցվի «քաղաքական բարոյականության»՝ քաղաքական գործողությունների հետևանքների սթափ հաշվառման առաջնահերթ հրամայականից, քանզի բարոյականությունը գործողությունների մասին դատում է համաձայն նրանց՝ բարոյական օրենքների համապատասխանելիությանը, մինչդեռ քաղաքական բարոյականությունը գործողությունները գնահատում է համաձայն նրանց հետևանքների, շահերի իրացման աստիճանի և դրանց հնարավոր անդրադարձի:

Պետության՝ որպես քաղաքական հիմնարար ինստիտուտի զարգացման նախորդ փուլերում (մինչև 17-րդ դար) պետական քաղաքականությունն առավելապես ածանցվում էր «խաղ զրոյական արդյունքով» բանաձևումից, որի պայմաններում կողմերից մեկի շահերը բավարարվում են հակառակորդ կողմի շահերի հաշվին: Նշյալ մոտեցումը միջպետական հարաբերություններում, հակընդդեմ շահերի առկայության պարագայում, պարտվող կողմին հնարավորություն էր ընձեռում, համապատասխան ռեսուրսների առկայության դեպքում գնալ ռևանշի՝ վիճարկել շահի բավարարման նախորդ արդյունքները, որը միջազգային հարաբերություններում պարբերական անկայունության պատճառ էր դառնում:

20-րդ դարում մնանօրինակ մոտեցումը համեմատաբար զիջեց իր դիրքերն առավել համաձայնողական մեխանիզմների գործարկմանը, որտեղ շեշտադրումը, ինչպես նախկինում, չէր արվում միայն «հաղթող» կողմի պահանջումների լիակատար բավարարման վրա, հաշվի առնելով, որ դա հետագայում կրերի շահերի սուր և շարունակական մրցակցության ու բախման: Այս առթիվ քաղաքական ռեալիզմի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Ջ.Շվարցենբերգերը, գտնում էր, որ «միջազգային հարաբերություններում գործում է ոչ միայն ուժի օրենքը, այլ նաև փոխգործակցության և նույնիսկ կոորդինացման ու համաձայնեցման մոտեցումները»⁴⁶: Եթե դա այդպես է, ապա տրամաբանական է Հ. Քիսինջերի, Մ. Թեթչերի և արևմտյան մի շարք այլ տեսաբանների կանխատեսում-

⁴⁵ St' u Car E., The Twenty Year's Crisis 1919-39. An Intrudaction to the Study of International Realations, N.Y.,1939, էջ 123:

⁴⁶ St' u Schwarzenberger G., Power Politics. A Study of World Society, Third Edition, London, 1964, էջ 223:

ներն առ այն, որ ոչ հեռու ապագայում իրատեսական է 19-րդ դարի եվրոպական քաղաքականության հիմնական սկզբունքները հիշեցնող՝ ուժերի հավասարակշռության համակարգի վերականգնումը: Նման համակարգն արդիական է հատկապես գլոբալացման գործընթացների ներկայիս դարաշրջանում, երբ պետությունների միջև փոխկախվածությունը և փոխազդեցությունը երկրաչափական պրոգրեսիայով մեծանում են՝ փոփոխելով նաև ազգ-պետության և նրա գործունեության քաղաքական հիմքերի՝ ազգային շահերի ընկալման նախկին կոշտ մոտեցումները: Այս պարագայում բնական վիճակ է համարվում պայքարը «միաբնեռության» դեմ՝ նպատակ ունենալով՝ որպես կայունության հիմնական պայման պահպանել «բազմաբնեռ» ուժային հավասարակշռությունը, որը սակայն տարբերվում է ռեալիստների կողմից դիտարկվող «անարխիկ»⁴⁷ համակարգում ինքնիշխան պետությունների մրցակցությունից:

20-րդ դարի 60-70-ականներին մասնագիտական գրականության մեջ «մեծ վեճ» ծավալվեց նոր թափ ստացած լիբերալ (ազատական) կողմնորոշման տարբեր տեսությունների ներկայացուցիչների և ռեալիստական (կամ նեոռեալիստական) ուղղությունների միջև: Վեճի հիմքում ընկած էին պետության՝ որպես միջազգային հարաբերությունների կարևոր դերակատարի, միջազգային ասպարեզում ազգային շահի և ուժի գործոնի նշանակության գնահատման հիմնախնդիրները:

Արդի դարաշրջանում կապի և հեռահաղորդակցության միջոցների արմատական փոփոխության, միջազգային շուկաներում իրավիճակի վերափոխման, անդրազգային ընկերությունների քանակի և դերի մեծացման արդյունքում միջազգային ասպարեզում էական փոփոխություններ տեղի ունեցան: Դեռ 1975թ. Հ. Քիսինջերը պնդում էր, որ «աշխարհը մուտք է գործում նոր դարաշրջան, որտեղ նախկին միջազգային գծապատկերները կոտրվում են, այն դառնում է փոխկապակցված՝ տնտեսության, հաղորդակցության և հատկապես մարդկային ձգտումների տեսանկյունից»⁴⁸: Նոր իրողությունների պայմաններում գերակշռող դարձան համաշխարհային առևտրի գերակայությունն արտադրության նկատմամբ, ուրբանի-

⁴⁷ Միջազգային հարաբերությունների համակարգը՝ որպես անարխիկ համակարգ, դիտարկվում է ժամանակակից քաղաքական նորառեալիզմի կողմից: «Անարխիայի» տակ դիտվում է ոչ թե քաոսը, որպես այդպիսին, այլ այնպիսի վիճակ, երբ պետությունների գործողությունները լիակատար վերահսկման ենթակա չեն «միջազգային արբիտրի»՝ միջպետական փոխհարաբերությունների վրա «բացարձակ» իշխանություն և ազդեցություն ունեցող որևէ կառույցի կամ ինստիտուտների կողմից: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս, Waltz K., A Theoretical Analysis, 1979, Reading; The Man, the State and War: Theory International Politics, NY, 1975; Theory of International Realations, 1975 -

Greenteyn F., Polsky N (ds), International Politics. Handbook of Political Science. vol 8. Reading:
⁴⁸ Sten'u Kissinger H., A New National Partnership., Washington, 1975, էջ 1:

զացիան և հաղորդակցության միջոցների կատարելագործումը զարգացող երկրներում, մասնավոր սուբյեկտների և փոքր պետությունների միջազգային դերի և նշանակության մեծացումը, գերտերությունների կողմից միջազգային ոլորտի նկատմամբ վերահսկողության նվազումը, որոնց ընդհանրացնող հետևանք դարձավ աշխարհում փոխկախվածության մեծացումը և միջազգային հարաբերությունների համակարգում ուժի դերի հարաբերական նվազումը⁴⁹: Հենց նշյալ գործոնները կարևորվեցին քաղաքական երևույթների մեկնաբանման լիբերալ-ազատական դպրոցի կողմից, որը բովանդակային իր ներկայակույմ հանրագումարեց Ջ. Լոկի, Ի. Կանտի, Ա. Սմիթի, Ջ.Ս. Միլի և ազատական դպրոցի մյուս դասականների եզրահանգումները: 20-րդ դարին բնորոշ նոր իրողությունների և հրամայականների պայմաններում այն 80-ականներին փոխակերպվեց նորազատական մոտեցման՝ իր մեջ ամբողջացնելով ազատական կողմնորոշման տարաբնույթ ու տարակերպ տեսություններ և ուղղություններ, որոնց մեծամասնությունը և խաչաձևվում, և՛ իրարից բավական տարբերվում է: Նմանօրինակ տեսությունների թվին է պատկանում «համակարգային փոխկապվածության» տեսությունը, որի խոշորագույն ներկայացուցիչներից են Ռ. Կեռեյնը, Ջ. Նայը, Մ.Կ. Սմուտը: Ազատական կողմնորոշման հեղինակավոր հաջորդ տեսություններից էին «միջազգային վարչակարգերի» տեսությունը (Մ.Կրասներ), որը հետազոտում էր միջազգային ինստիտուտներն ու կողողինացման մեխանիզմները, միջազգային առևտրային և ֆինանսական պայմանագրերի ազդեցությունը քաղաքական զարգացումների վրա, «ինտեգրման և փոխկախվածության» տեսությունը (Դ. Միտրանի, Շ. Հասս, Դ. Մոուս), որ շեշտադրում էր ինտեգրման ժամանակակից դարաշրջանում փոխկախվածության դերն ու նշանակությունը, «դեմոկրատական աշխարհի» տեսությունը (Մ. Դոել, Բ. Ռասսետ), որ հիմնված էր այն եզրահանգման վրա, թե ժամանակակից լիբերալ-դեմոկրատական երկրները, քաղաքական ընդհանուր սկզբունքների և մոտեցումների շնորհիվ, հակված չեն ներքաշվել հակամարտությունների (հատկապես ռազմական) մեջ, հետևաբար ընտրում են խնդիրների լուծման խաղաղ ճանապարհներ:

Ընդհանուր առմամբ, նորազատական մոտեցման մեջ շեշտադրվում էին այնպիսի դրույթներ, ինչպիսիք են միջազգային հարաբերությունների համակարգում քաղաքականության և տնտեսության փոխկապակցվածության աստիճանի մեծացման արդյունքում «անարխիայի» ազդեցության

⁴⁹ Стен Най Дж.С.(мл), *Взаимозависимость и изменяющаяся международная политика / Мировая экономика и международные отношения, 1989, С.12:*

թուլացումը և համագործակցության հնարավորությունների մեծացման նպատակով միջազգային հարաբերությունների սուբյեկտների փոխգործակցության համատեքստի փոփոխությունը: Ազատական կողմնորոշման կողմնակիցները գտնում են, որ փոխկախվածությունը, որն ընկած է գլոբալացման գործընթացների հիմքում, առավել վառ արտահայտվում է միջազգային հարաբերությունների համակարգում պետության ինստիտուտի մենիշխան դերի և նշանակության թուլացման, նրա էական բնորոշիչների ազդեցության նվազեցման տեսքով:

Առավել ընդհանուր տեսքով ազատական դիրքորոշումները կարելի է ներկայացնել հետևյալ մոտեցումներով. նախ՝ ներքին և արտաքին քաղաքականության միջև «սահմանների ջնջման» որոշակի միտում, ֆեդերատիվ պետությունների մաս կազմող հատվածների (ռեգիոնների) միջազգային ակտիվություն, ներքաղաքական գործընթացների վրա միջազգային անմիջական ազդեցություն, երկրորդ՝ միջազգային հարաբերությունների և ներքաղաքական գործընթացների դեմոկրատացում, որը հիմնվում է հետինդուստրիալ հեղափոխությունների և ինֆորմացիայի տարածման վրա, երրորդ՝ քաղաքական սուբյեկտների բազմազանության աճ և կազմի մեծացում (համաշխարհային քաղաքականությանը պետություններին զուգահեռ մասնակցություն են ունենում նաև տարաբնույթ անջատողական, կրոնական ուժեր, էկոլոգիական շարժումներ, հասարակական, անդրազգային կազմակերպություններ), չորրորդ՝ միջազգային խաղաղությանը սպառնացող վտանգների և «անվտանգություն» հասկացության բովանդակության փոփոխություն:

Այս պայմաններում պետությունների քաղաքական վարքը փաստորեն անհնար է մեկնաբանել բացառապես ազգային շահերին հետևելու նրանց գործունեության տրամաբանության շրջանակներով, քանի որ վերլուծության մեջ անհրաժեշտ է ներառել նաև միջազգային ինստիտուտների համակարգում միջպետական համագործակցության գործոնը, որն ազդելով պետությունների քաղաքական վարքի վրա՝ ունակ է հավասարակշռել միջազգային հարաբերությունների «անարխիկ» համակարգը: Փաստորեն ազգային շահը, ըստ նոր մոտեցման, լիովին նոր բովանդակություն է ստանում, համաձայն որի՝ որպես նրա կրող հանդես է գալիս քաղաքացիական հասարակությունը, իսկ ավելի կոնկրետ՝ պետությունից «անկախ» մասնավոր սեփականատերերի խավը: Այս պարագայում ազգային շահը հանգում է քաղաքացիական հասարակության մաս կազմող օղակների միջև բարդ փոխհարաբերակցման արդյունքում ձևավորված շահերի փոփոխական հանրագումարին: Ըստ նշյալ մոտեցման, հենց քաղաքացիա-

կան հասարակությանը պետք է պատկանի ազգային շահերի որոշակիացման և արժևորման առաջնահերթ իրավունքը, քանի որ պետական բյուրոկրատիայի շահերը, քաղաքական նպատակադրման ոլորտ ներմուծելիս, անխուսափելիորեն գաղափարականացվում կամ խմբայնացվում են:

Ազատական մոտեցումն ազգային շահերի գիտակցման և արժևորման գործում անկասկած բացարձականացնում է մասնավոր շահերի և քաղաքացիական հասարակության կառուցվածքային բաղադրատարրերի դերը: Իր բնույթով լինելով բազմակենտրոն՝ քաղաքացիական հասարակությունն ազգային շահերի որոշակիացման գործընթացում ակնհայտորեն ունակ չէ ապահովել հանրային տարբեր շերտերի տարաբնույթ շահերի բարդ հանրագումարը, քանզի դրանք ձևորոշելը բավականին բարդ է: Մասնավոր շահերը խիստ փոփոխական և անկայուն են: Այս պարագայում հատկապես կարևոր է պետության՝ որպես քաղաքական կարևորագույն ինստիտուտի մասնակցությունը, նրա միջնորդավորման և ներկայացուցչական գործառնությունների գործարկումը: Միջնորդավորման պետական և հանրային մեխանիզմների համադրման կիրառումը, մեր կարծիքով, առավել արդյունավետ կդարձնի քաղաքացիական հասարակության շահերի վերարժևորման գործընթացը:

Ազատական մոտեցումը շեշտադրում է միջազգային համագործակցության և հավաքական շահերի հայեցակարգը՝ նշելով, որ մրցակցությունը պետությունների միջև չի կրում բացարձակ բնույթ, և ընդհանուր շահերի առկայությունը միջազգային ասպարեզում նրանց միջև իրական համագործակցություն ծավալելու հնարավորություն է ընձեռում: Այս պարագայում, սակայն, «անցումային» հասարակությունները և պետականության ամրապնդման փուլում գտնվող պետությունները սովորաբար ի վիճակի չեն ապահովել քաղաքացիական հասարակության ձևավորման նվազագույն պայմանները, դեռ ավելին՝ երբեմն խոչընդոտում են այդ պայմանների ապահովմանը: Հետևաբար քաղաքացիական հասարակության՝ ազգային շահի սուբյեկտ լինելը նշյալ ժամանակահատվածում հիմնավոր չէ:

Ազգային շահի մեկնաբանման նոր մոտեցումների գործարկումն օբյեկտիվորեն անդրադարձավ նաև ուժի՝ որպես շահերի իրացման հիմնական մեխանիզմի մեկնաբանման վրա: Գլոբալացման պայմաններում ուժը (հատկապես ռազմական ուժը) դադարել է դիտվել որպես ազգային շահի իրացման և արտաքին քաղաքական ազդեցության ապահովման միակ միջոց, քանզի նրա կիրառումը տնտեսապես այլևս շահեկան չէ: Արդի դարաշրջանում առավել արդյունավետ են դարձել ազդեցության հաղորդակցային, տնտեսական, կազմակերպչական, ինստիտուցիոնալ մեխանիզմ-

ները, անհամաչափ փոխկախվածության ուղղորդման և կառավարման ունակությունները: Փոխկապվածության պայմաններում առավել քիչ կապված կամ խոցելի կողմն իր ազդեցությունը հաճախ ապահովում է սպառնալիքների կամ փոխկապվածության ուղղորդման միջոցով: Այնտեղ, ուր փոխկապվածությունն անհամաչափ է, հավասարակշռման կարևոր մեխանիզմ է դառնում տարբեր խնդիրների միջև կապը, որի թուլացման կամ ամրապնդման միջոց կարող են լինել միջազգային ինստիտուտները: Ուժի ավանդական դերակատարման թուլացմանը զուգընթաց փոփոխվում են նաև ազգային անվտանգության ընկալումները: Ռազմական սպառնալիքն աստիճանաբար իր տեղը զիջում է տնտեսական, էներգետիկ, էկոլոգիական և այլ ոլորտներից բխող վտանգներին: Այս համատեքստում պետության անվտանգության և ազգային շահի խոցելիության ձևերը, ոլորտները, մեխանիզմները, ինչպես նաև նրանց հաղթահարման ուղիները, փոխլրացնելով միմյանց, դարձան առավել տարաբնույթ ու բազմամակարդակ: Ազգային անվտանգության քաղաքականության վերափոխման վրա լուրջ ազդեցություն ունեցան միջազգային ասպարեզ ոչ պետական սուբյեկտների, մասնավորապես՝ հսկայածավալ տնտեսական ներուժի տիրապետող անդրազգային ընկերությունների մուտքը: Ազգային շահի իրա-կանացման տեսանկյունից անդրազգային սուբյեկտները հանդես են գալիս ոչ միայն արտաքին սահմանափակիչների դերում, այլ նաև ազդեցություն են գործում ազգային շահի որոշակիացման վրա՝ միջազգային քաղաքական մրցակցությունը դարձնելով առավել բարդ: Անդրազգային փոխկախվածությունը, փաստորեն, հանգեցնում է ինչպես ազգային շահի նոր մեկնաբանությունների, այնպես էլ պետության ներսում ազգային շահի արժևորման նոր որակի քաղաքական գործընթացների:

Մեր կարծիքով, վերոնշյալի վառ օրինակ է Հարավային Կովկասի (հետայսու Հվ.Կովկաս) երկրների, այդ թվում նաև Հայաստանի եվրոպականացման քաղաքականությունը, որը փաստականորեն ոչ այլ ինչ է, եթե ոչ պետությունների ինստիտուցիոնալ բնութագրի և շարժընթացի ուղեգծի համապատասխանեցում Եվրամիության չափորոշիչներին: ԵՄ-ն՝ որպես վերազգային մարմին, համագործակցային հարաբերություններ հաստատելով Հվ.Կովկասի հանրապետությունների հետ՝ փորձում է փոխակերպել ոչ միայն տարածաշրջանային երկրների քաղաքական վարքը, այլ գործնականում նաև սեփական ազգային շահերի վերաբերյալ այդ երկրների պատկերացումները:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ քաղաքական վերլուծության ժամանակ կարևոր է հաշվի առնել ազգային շահի և ռազմաքաղաքական հավասա-

րակշռության մոտեցումներից ածանցվող գերակա՝ ինչպես ռեալիստական դատողությունները, որոնք առավել հիմնավոր և համակարգային են դիտարկում հիմնախնդիրները, այնպես էլ՝ ընդհանուր շահերի և միջպետական համագործակցության սկզբունքների վրա հիմնված ազատական մոտեցումները:

Մեր կարծիքով, ազգային շահի վերլուծության ժամանակ ռեալիստական և ազատական մոտեցումները դիտարկում են նրա երկու՝ հաճախ իրար հակադրվող կողմերը, մինչդեռ ազգային շահը բովանդակային իր խտության մեջ ամբողջացնում է մեկնաբանման թե՛ ռեալիստական, թե՛ ազատական դիտանկյունները՝ հանդիսանալով նրանց յուրահատուկ համադրություն:

Ինտեգրման արդի գործընթացների համատեքստում ազգային շահի ռեալիստական մոտեցումը, մեր կարծիքով, առավել բնորոշ է ազգապահպանման, ազգային ինքնության պաշտպանման գերխնդիր և սակավ ներուժ ունեցող ազգ-պետություններին, որոնք իրենց վրա են կրում ժամանակակից աշխարհի քաղաքակրթական զարգացման՝ երբեմն ոչ կառուցողական միտումները: Հետևաբար, եթե ազգ-պետությունը գոյապահպանման խնդիր ունի, ապա պետական քաղաքականության մեջ ազգային շահերի՝ առավել ազատական դիտարկումը կարող է վտանգել ազգի և պետության հետագա կենսագործունեությունը, մինչդեռ հզոր ներուժ և կշիռ ունեցող ազգ-պետություններն ազգային շահի ձևակերպման ժամանակ կարող են իրենց «թույլ տալ» մեկնաբանման առավել ազատական մոտեցումներ:

Այսպիսով հանգում ենք այն եզրակացության, որ պետականության կայացման արդի փուլում գտնվող Հայաստանի Հանրապետությունն ազգային շահերի հիմքով իր քաղաքականությունն առավելապես պետք է կերտի դասական ռեալիստական ընկալումներին համապատասխան, քանզի գտնվելով «բարդ» տարածաշրջանում և ունենալով չլուծված բազմաթիվ ներքին խնդիրներ՝ նա իրեն չի կարող թույլ տալ ազգային շահերի հիմքով պետական քաղաքականության իրացման առավել «փափուկ» մոտեցումներ:

1.2 Ազգային շահի մեկնաբանման արդի մոտեցումներն ու կառուցվածքային բնութագիրը

Անհերքելի է, որ ազգային շահի մեկնաբանման ռեալիստական և ազատական մոտեցումները հիմնահարցի ուսումնասիրման մեջ արժեքավոր ներդրում ունեն։ Սակայն հարկ է նշել, որ թե՛ առաջին, թե՛ երկրորդ ուղղությունները թերացել են ինչպես ազգային շահի սահմանման, բնութագրման, կառուցվածքի դիտարկման, այնպես էլ նրա սուբյեկտների ուղեկցման, կառուցվածքային տարրերի բնորոշման, այդ տարրերի ձևավորման ու կայացման, հարաբերման միջակայքի ձևակերպման և վերլուծության հարցում։ Թերևս դրանով է պայմանավորված ազգային շահի բնորոշման ընդհանուր մոտեցումների դիտարկման անհրաժեշտությունը, որը հնարավորություն է տալիս ոչ միայն այն ենթարկել կառուցվածքային վերլուծության, այլ նաև ներկայացնել ազգային շահի ձևավորման ընդհանուր միտումները։

Ժամանակակից աշխարհում ազգային շահերի առանձնակի կարևորությունն ակնհայտ է։ Սակայն մինչ օրս գիտական գրականության մեջ համաձայնություն չկա ոչ միայն ազգային շահի՝ որպես երևույթի, հասկացության մեկնաբանման մոտեցումների, այլ նաև ընդհանրապես նրա գոյության փաստի վերաբերյալ։ Ազգային շահի որոշակիացումը բավական բարդ գործընթաց է՝ մասնավորապես կապված «ազգային շահի» սահմանման, ձևորոշման, բովանդակային հստակեցման և արժևորման հետ։

Ազգային շահի մեկնաբանման շուրջ հիմնական տարակարծությունները վերաբերում են նրա բովանդակային անորոշությանը՝ «ազգ» և «շահ» եզրերի էության հստակեցմանը և «պետական քաղաքականության մեջ ազգային շահի սուբյեկտների բազմազան բնույթի արտացոլմանը»⁵⁰։

Հասկացության կառուցվածքային բաղադրիչների տեսանկյունից անորոշ է ազգային շահի սուբյեկտային բնութագրիչների հարցը։ Նման իրավիճակում հարց է ծագում՝ ազգային շահերը ազգի^o, թե^o պետության շահերն են, կամ բազմազգ պետական կազմավորման մեջ ո՞ր ազգի շահերը կարող են համարվել ազգային շահեր։ Նման երկիմաստությունն առաջ է գալիս «ազգ» և «շահ» բաղադրատարրերի բովանդակային ոչ հստակության պատճառով, ինչն ակնհայտ է, հատկապես, երբ ազգը տարածվում է իր պետության սահմաններից դուրս՝ համայնքներ կազմելով այլ երկրներում⁵¹։

⁵⁰ St'iu Clinton W. David, *The Two Faces of National Interest*, Louisiana State University Press, 1994, էջ 3-7:

⁵¹ St'iu Frankel Joseph, *Nation Interest*, Praeger Publishers, 1970, էջ 21:

Նշյալ համատեքստում ազգային շահի հստակեցման նպատակով անհրաժեշտ է այն հասկացությանը տեսանկյունից ենթարկել կառուցվածքային վերլուծության, քանզի, հանդիսանալով պետական քաղաքականության սուբյեկտների հավաքական շահերն ամբողջացնող ընդհանրական հասկացություն, ազգային շահն օբյեկտիվորեն իր վրա է կրում իր հիմնարար բաղադրատարրերի՝ «ազգ» և «շահ» հասկացությունների բովանդակային որոշակիությունը, էական բնութագրիչներն ու գործառնական յուրահատկությունները:

Ազգը որպես ազգային շահի սուբյեկտային բաղադրատարր

«Ազգային շահ» հասկացության կառուցատարր ազգի սահմանումը տարիներ շարունակ եղել է գիտական հետազոտությունների ուշադրության կենտրոնում, սակայն մինչ օրս համաշխարհային գիտական շրջանակներում չկա նրա փոխընդունելի ձևակերպում: Իրենց հետազոտություններում նշյալ հարցի հանգամանալից ուսումնասիրություններ են իրականացրել ազգերի ու ազգայնականության հեղինակավոր հետազոտողներ Բ.Անդերսոնը, Է.Գելները, Կ.Դեյչը, Է.Հոբսբաումը: Ազգերի տեսության մեջ մեծ ներդրում են ունեցել ինչպես ռուս (Կ.Վ.Բրոմլեյ, Լ.Մ.Դրոբիժևա, Վ.Ա.Տիշկով), այնպես էլ հայազգի (Հ.Գևորգյան, Է.Հարությունյան, Ս.Ա.Արությունով, Հ.Մանուչարյան) հեղինակներ:

Ներկայացվող հետազոտության մեջ ազգի սահմանման կարևորությունը պայմանավորված է նրանով, որ «ազգային շահ»-ի կառուցվածքային վերլուծության մեջ այն առանցքային դերակատարում ունի: Ստուգաբանորեն «national interest» (թարգմանաբար ազգային (ազգի) շահ)՝ «ազգային շահ» հասկացությունն արևմտյան գիտական գրականության մեջ առաջին հերթին դիտվում է որպես «պետական շահ»: Արևմտյան հետազոտողները գտնում են, որ հասարակությունը համախմբվում և առավել որոշակիությամբ է պատկերացնում իրեն՝ որպես մեկ ամբողջություն, միայն միջազգային ասպարեզում, քանի որ զարգացման հնարավորությունների բաշխման ոլորտում ստիպված է մրցակցել այլ պետությունների, ազգերի հետ: Ուստի միջազգային հարաբերություններում հասարակությունը գործնականում իրեն չի հակադրում պետությանը, այլ հակառակը՝ հանրային շահն այս դեպքում առավելապես ուղղորդվում է դեպի ներս, իսկ հասարակությունը միայն առանձին դեպքերում է իր դիրքորոշումը սահմանազատում պետականից: Ըստ արևմտյան տեսաբանների, հանրության ներքին խնդիրների միջակայքն իր մեջ ներառում է «public interest»՝ «հանրային շահ» հասկացությունը:

Լեզվաստուգաբանորեն «ազգը» նախ՝ մարդկանց պատմականորեն ձևավորված կայուն հանրույթ է, որը կայացել է լեզվի, տարածքի, մշակութային, տնտեսվարման և հոգեկերտվածքի ընդհանրության վրա, ապա՝ պետության հոմանիշ⁵²: Ազգի մեկնաբանման մոտեցումների ներկայակույնում առանձնակի կարևոր է մասնավորվել նրա որոշակիացման և տարբերանշման մի քանի հիմնական տեսանկյունների վրա, որոնք իրենց եզրահանգումների մի մասով խաչվում, մյուսով՝ զուգահեռվում են:

Ժամանակակից արևմտյան գիտական գրականության մեջ ազգի սահմանման ժամանակ սոցիալ-մշակութային և պատմական գործոններից զատ կարևորվում է նաև քաղաքական բաղադրիչի դիտարկման անհրաժեշտությունը: Այդ մասին է նշում Վ.Պ.Տորուկալոն, որն ազգի սահմանման բնութագրիչների շարքում մասնավորապես կարևորում է քաղաքականացված էթնիկության կամ էթնոսի քաղաքական ու տարածական կազմավորման հարցը⁵³: Սոցիոմշակութային հանրույթին բնորոշ հատկանիշների մասով նշյալ մոտեցումն ազգի մեկնաբանությունը գրեթե նույնացնում է էթնոսի հետ, ուստի խառնաշփոթից խուսափելու նպատակով էթնոսը հարկ է դիտել որպես ազգի մի մաս, որը սակայն չի լրացնում նրա բովանդակային ողջ խորությունը: Էթնոսն այս պարագայում բնութագրվում է որպես «տվյալ տարածքում պատմականորեն ձևավորված մարդկանց միջսերնդային կայուն ամբողջություն, որն ունի ոչ միայն ընդհանուր գծեր, այլ նաև մշակույթի՝ հարաբերականորեն կայուն յուրահատկություններ (ներառյալ լեզուն), ինչպես նաև սեփական միասնության ու մարդկային նմանատիպ այլ համագոյակցություններից տարբերակման գիտակցում (ինքնագիտակցում), էթնանուն»⁵⁴: Ըստ նշյալ մոտեցման՝ ազգն էթնոսից տարբերվում է իր կազմավորման քաղաքական բաղադրամասով, որը պատմության ժամանակակից փուլում հանրության սոցիալ-մշակութային և քաղաքական վերէթնիկ ինտեգրման յուրօրինակ ձև է: Նշյալի շրջանակներում, ի տարբերություն էթնոսի, որն օժտված է միայն «քաղաքական սուբյեկտության» որոշակի բնութագրիչներով, ազգը քաղաքականության լիարժեք սուբյեկտ է⁵⁵:

Ազգի մեկնաբանման տեսանկյունների դիտարկման պարագայում անհրաժեշտ և առանձնակի կարևոր է հիշատակել նաև մեկնաբանման այն մոտեցումները, որոնք կառուցվում են սոցիալական հանրույթի ամ-

52 Տե՛ս **Современный словарь иностранных слов 2-ое изд., М., 1999**, էջ 320:

53 Տե՛ս **Торукало В.П., Нация история и современность, М., 1996**, էջ 51:

54 Տե՛ս **Бромлей Ю.В.**, նշվ. աշխ., էջ 20:

55 Տե՛ս **Современный словарь по политологии, Мельник В.А., Минск., 2004**, էջ 630:

բողջականությունը բնութագրող ժողովուրդ և ազգ երևույթների հարաբերման միջակայքի վրա: Մեր կարծիքով պետականակերտման ժամանակակից գործընթացներում ժողովուրդը էլեկտորալ և իրավական տեսանկյունից բավականին լուրջ դերակատարում ունի: Նշված մոտեցման հետ համակարծիք է նաև Լ.Ս.Մամուտը, որը, հիմք ընդունելով «ժողովրդական ինքնիշխանության» գաղափարը, շեշտադրում է ժողովրդի մեկնաբանման իրավական կողմը՝ վերջինիս տալով պետականաստեղծ կարգավիճակ⁵⁶: Նրա դիտարկումն, ըստ էության, արտահայտվում է «ազգ = ժողովուրդ + պետականություն» բանաձևման տեսքով: Ազգի և ժողովրդի հարաբերման տեսանկյունից նշյալ մոտեցման կողմնակիցները փաստում են, որ ազգը չի հանգում ժողովրդին, քանզի «ազգը սոցիալական մոբիլիզացիայի հետևանքով ժողովրդի էթնիկական որոշակի տարրերի վերափոխման արդյունք է⁵⁷: Այս պարագայում ազգը ներկայանում է որպես «ժողովուրդ, որը հասել է սոցիալական ենթակայության որոշ ինստիտուտների նկատմամբ վերահսկողության և հեռանկարում կարող է ձևավորվել որպես լիարժեք ազգ-պետություն»⁵⁸:

Ինչպես արևմտյան (Է. Գելներ⁵⁹, Կ. Դեյչ⁶⁰), այնպես էլ մի շարք ռուս հեղինակներ (Յ.Մ. Բորոդայ⁶¹, Է.Ա. Պոզդնյակով⁶²) գտնում են, որ ազգակերտման գործընթացում այլ գործոնների շարքում վճռորոշ դերակատարում ունի հատկապես պետությունը, որից դուրս կարելի է խոսել էթնոսի, ժողովրդի, ազգության, սակայն ոչ ազգի մասին:

Նրանց մի մասը գտնում է, որ ազգն այս պարագայում ունի առաջին հերթին համաքաղաքացիության բովանդակություն⁶³, այսինքն՝ ազգը դիտվում է որպես պետության քաղաքացիների յուրահատուկ ամբողջություն, պետության տարածքում բնակվող միատարր կամ բազմատարր էթնիկ կազմ ունեցող ազգաբնակչություն, որն ամբողջացել է միացյալ կառավարման ներքո: Մեր կարծիքով, նշյալի տիպական օրինակ է ԱՄՆ-ն, որտեղ ազգն ավելի շուտ ունի համաքաղաքացիության բովանդակություն և բնութագիր:

⁵⁶ Տե՛ս Мамут Л.С., նշվ. աշխ., էջ 7:

⁵⁷ Տե՛ս Дейч К., Рост наций // Этнос и политика: Хрестоматия, М., 2000, էջ 63:

⁵⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 63:

⁵⁹ Տե՛ս Miscevic Nenad, Nationalism and Beyond. Introduction Moral Debate about Values. <http://www.nationalism.org/library/science/nationalism/miscevic/miscevic.pdf>

⁶⁰ Տե՛ս Дейч К., նշվ. աշխ.:

⁶¹ Տե՛ս Бородай Ю.М., նշվ. աշխ.:

⁶² Տե՛ս Поздняков Э.А. Нация, национализм, национальные интересы. М.1994:

⁶³ Տե՛ս Арутюнян Ю.В., Дробичева Л.М., Сусков А.А., Этносоциология, Уч. Пособие, М., 1999., Глава 2:

Ազգի կազմավորման հարցում պետության դերակատարման կարևորությունն արձանագրող մոտեցման կողմնակիցները փաստում են, որ «ազգն այնպիսի երևույթ է, որ ենթադրում է պետաիրավական հարաբերման փորձ»⁶⁴: Այս մոտեցումն ազգի ձևավորումը կապում է պետության հետ, սակայն այստեղ խոսքը ոչ թե մեկ պետության սահմաններում նույն ժողովրդի տեղային հատվածների բարբառային-ազգագրական խմբերի պատմական ինտեգրման մասին է միայն, այլ նաև այդ պետության տարածքում հայտնված միմյանցից տարբերվող ուրիշ էթնիկ և լեզվական խմբերի մասին⁶⁵: Այս կապակցությամբ պրոֆեսոր Հ.Ա. Գևորգյանը նշում է. «Մեկ պետության տարածքում հայտնված էթնիկ-լեզվական խմբերի համար աստիճանաբար ձևավորվում է ընդհանուր ազգային լեզու և ազգային մշակույթ, այսինքն՝ տվյալ պետության սահմաններում անցում է տեղի ունենում լեզվական-բարբառային բազմազանությունից դեպի ազգային լեզու և բազմազան էթնիկ մշակույթներից դեպի ազգային մշակույթ»⁶⁶:

Այսպիսով, կարելի է փաստել, որ էթնոսի և ժողովրդի՝ ազգի վերակազմավորվելը տեղի է ունենում բավականին բարդ և բազմամակարդակ գործընթացի արդյունքում, սոցիալ-մշակութային, իրավական և քաղաքական վերափոխումների հետևանքով:

Դիտարկված մոտեցումներից գատ առանձնակի կարևոր ենք համարում ներկայացնել ազգի մեկնաբանման այլ տեսակետներ ևս, որոնք ազգի՝ որպես սոցիալական հանրույթի էթնոտարբերակիչ հատկանիշներ են դիտում տարածքի ընդհանրականությունը, որը յուրաքանչյուր ժողովրդի՝ պատմականորեն նրան պատկանող բնատարածքն է, ծագման ընդհանրականությունը, որն արտահայտվում է մարդկանց՝ որոշակի էթնոսին պատկանելու զգացումի մեջ և որին հետագայում խարսխվում է էթնիկ-ազգային պատկանելության ընդհանրության (և դրա քաղաքական (ընդգծումը՝ իմր. - Ա.Ղ.)) գիտակցումը, լեզվի ընդհանրականությունը, որն իր ավանդական հաղորդակցային և մշակութաստեղծ գործառույթից գատ ունի նաև լեզվամտածողության ձևավորման կարևոր առաքելություն, հոգեկերտվածքի ընդհանրականությունը, որն արտահայտվում է ազգային սովորույթների, ավանդույթների, կենցաղի առանձնահատկությունների, տվյալ ազգային ընդհանրության անդամներին հատուկ մտածողության և գործողությունների եղանակի յուրահատկության մեջ⁶⁷: Շեշտադրելով ազ-

⁶⁴ Տե՛ս «Полис» ж-л, 1992, Կ. 5-6, էջ 5-6:

⁶⁵ Տե՛ս Գևորգյան Հ.Ա., նշվ. աշխ., էջ 18:

⁶⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 19:

⁶⁷ Առավել մանրամասն տե՛ս Մանուչարյան Հ.Գ., նշվ. աշխ., էջ 11-15:

զի որոշակիացման նման էական բնութագրիչները՝ կարող ենք պնդել, որ պետությունից զատ ազգային շահի կրող կարող են լինել նաև այն ժողովուրդներն ու էթնոսները, որոնք թեև դեռևս չեն ինքնակազմակերպվել որպես պետություն, սակայն կայացել են որպես ազգ: «Իսկ ժողովրդին ազգ է դարձնում այն հանգամանքը, որ նրա կյանքի կազմակերպման և կարգավորման բարոյական և սովորութային նորմերին փոխարինելու են գալիս հարաբերությունների կարգավորման իրավական և քաղաքական մեխանիզմները»⁶⁸:

Ազգի մեկնաբանման ներկայացված գրեթե բոլոր մոտեցումներն իրենց մի զգալի մասով հանգամանալից բնութագրում են ազգ երևույթը, սակայն, մեր կարծիքով, ազգի կազմավորմանը բնորոշ հատկանիշների տարբերակման ու սահմանման առավել հանգամանալից մոտեցումն իր մեջ ամբողջացնում է «որոշակի տարածքի սահմաններում էթնիկ-լեզվական խմբերի միավորումը, էթնիկ և ազգագրական խմբերի մշակութային, լեզվական ու բարբառային բազմազանության հիման վրա ազգային մշակույթի և ազգային լեզվի կազմավորումը, ավանդական՝ սովորութային և բարոյական մասնավոր-խմբային նորմերից անցումը հասարակական կյանքի կազմակերպման ու կարգավորման համընդհանրական՝ իրավաքաղաքական ձևերին»⁶⁹:

Շարադրանքից հանգում ենք այն եզրակացության, որ ազգային շահի քաղադրիչ ազգը բովանդակում է էթնոս և ժողովուրդ երևույթների հիմնական բնութագրիչները՝ ներկայանալով ինքնիշխանության քաղաքական կամքի և դրա դրսևորում՝ հանրության սոցիալ-քաղաքական կազմավորման՝ ազգ-պետության տեսքով: Ազգային շահերի կառուցվածքային վերլուծության տեսանկյունից ազգի բովանդակության տակ առաջին հերթին հարկավոր է հասկանալ պետության տարածքում կենսագործող ազգային միատարր կամ բազմատարր կառուցվածք, էթնոմշակութային բնութագրիչներ ունեցող որոշակի միասնություն, որն օժտված է իր տարածքին բնորոշ ինքնիշխան կառավարչական ինտեգրատիվ և մենաշնորհային գործառույթով: Այս պարագայում ազգային շահի հայեցակարգից կարող են ածանցվել ինչպես պետությանը բնորոշ բոլոր բնութագրիչներով օժտված վարչակարգի ռազմավարությունը, այնպես էլ դեռևս պետություն չունեցող, սակայն որպես ազգ լիովին ինքնակազմակերպված և էթնոտարբերիչ քաղաքական գիտակցությամբ օժտված սոցիալական հանրությունները:

⁶⁸ Տե՛ս Գևորգյան Յ.Ա., նշվ. աշխ., էջ 21:

⁶⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 21- 22:

Հարկ է նշել նաև, որ կախված քաղաքական վարչակարգի բնույթից՝ ազգային շահը ստանում է տարաբնույթ ներքին ձևակերպումներ: Առավել ավտորիտար կամ պահպանողական վարչակարգերում ազգային շահի արժևորման մեջ շեշտվում է արտաքին բաղադրատարրը, մինչդեռ ժողովրդավարական և ազատական ուղղվածություն ունեցող վարչակարգերը կարևորում են ազգային շահի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ուղղվածությունը: Սփյուռք ունեցող երկրներում ազգային շահի դաշտ ներմուծվում են նաև տիտղոսակիր էթնոսի այն ազգակիցների շահերը, որոնք բնակվում են այլ երկրներում՝ փաստորեն անուղղակիորեն և երբեմն էլ ուղղակիորեն դառնալով հայրենի պետության ազգային շահերի կրող:

Շահի գործառնական դերակատարումը ազգային շահի համապերսպրում

«Շահ»-ը (լատիներեն interest - նշանակություն ունեցող, կարևոր) քաղաքական հասկացություն է և արտացոլում է շահի սուբյեկտների օբյեկտիվ պահանջումները: Պահանջումները սուբյեկտի գոյության և զարգացման օբյեկտիվ անհրաժեշտությունից բխող պայմանների ու գործոնների ամբողջությունն են, որ ընդհանուր առմամբ ունեն կենսաբանական և սոցիալական բնույթ: Պահանջումներն ու շահերը մույնական հասկացություններ չեն և միմյանց հետ հարաբերվում են պատճառական կապերով: Որպես օբյեկտիվ դրսևորում՝ շահերը գոյապահպանման և կենսագործունեության ապահովման նվազագույն պահանջումների սպասարկման օբյեկտիվ անհրաժեշտություն են, որպես սուբյեկտիվ դրսևորում՝ զարգացման այս կամ այն տիպի յուրահատուկ պահանջումների կամ դրանց ամբողջության ապահովում: Այս առթիվ Ե.Ք. Քլարկը նշում է. «Պահանջումներն արտահայտում են կենսագործունեության ցանկացած սուբյեկտի հարաբերություններն իր կեցության համար անհրաժեշտ պայմանների նկատմամբ, քանի որ առանց հիմնարար պահանջումների բավարարման անհնար է ապահովել ինչպես կենսաբանական, այնպես էլ սոցիալական օրգանիզմի գոյությունը»⁷⁰: Պահանջումներն, արտահայտելով սուբյեկտի և նրա կենսագործունեության պայմանների փոխադարձ կապը, իրենց մեջ ամբողջացնում են նրա՝ ինչպես չգիտակցված հակումները, այնպես էլ գործողությունների գիտակցված դրդապատճառները, որոնք ներկայանում են շահերի տեսքով⁷¹: Փաստորեն սոցիալական

⁷⁰ Տե՛ս Прохожев А.А., *Человек и общество* / законы социального развития и безопасность, М., 2002, էջ 134:

⁷¹ Տե՛ս Clarke E.Cochran, «The Politics of Interest: Philosophy and the Limitation of the Science of Politics», *American Journal of Political Science*, XVII (November, 1973), էջ 751:

զարգացման իրական դրդապատճառն ու շարժիչ ուժը շահերն են, որոնք անհատի, սոցիալական խմբի, հանրության կողմից գիտակցաբար ձևավորված պահանջմունքներ են: Հենց գիտակցված լինելու հանգամանքն է, մեր կարծիքով հանդիսանում շահերի հիմնական բնութագրիչը:

Շահերը՝ որպես մարդկային գործունեության դրդապատճառ և ելակետ, մեր կարծիքով ծնունդ են փոխկապակցվածություն պահանջմունքների ու շահերի բավարարման օբյեկտիվ անհրաժեշտության և դրանց բավարարման հնարավորությունների միջև: Որպես մարդկային գործունեության հիմնական դրդապատճառ՝ շահերը նյութականանում են նպատակաուղղված գործողությունների որոշակի հաջորդականության միջոցով: Դա, մասնավորապես, վերաբերում է սոցիալական շահերին. այն շահերին, որոնք այս կամ այն կերպ առնչվում են հասարակության կեցության ապահովման բարդ համակարգի հետ: Գործառնական տեսանկյունից շահերի և հասարակական հարաբերությունների կապը պայմանավորված է այն ահնգամանքով, որ վերջինս որոշակիանում է սուբյեկտի՝ սեփական պահանջմունքների գիտակցման, նպատակադրման, գործնական քայլերի տեսքով: Հանրային կենսագործունեությանն առնչվող մյուս շահերից ազգային շահը տարբերվում է նրանով, որ նրա ներըմբռնողական (ինտուիտիվ) բովանդակային տարրը քաղաքականության ձևակերպման և իրականացման ալգորիթմում դրսևորվում է հետևյալ կերպ. պահանջմունքներ - պահանջմունքների գիտակցում և շահի ձևակերպում - նպատակադրում - նպատակների իրականացման մեթոդների որոշում - պետության ռեսուրսային ներուժի վերլուծություն - այլ ակտորների կողմից հակազդեցության և (կամ) աջակցության հնարավոր տարբերակների կոնկրետացում - առաջադրված նպատակների իրականացում - սուբյեկտների գնահատում և նոր խնդիրների առաջադրում: Հանրային տարբեր մակարդակներում շահերի գործարկման գործողությունների շղթան հանգեցնում է հանրային հարաբերությունների ամրապնդմանը, որի արդյունքում շահերը դառնում են օբյեկտիվ իրականության կարևորագույն քաղաքատարրեր:

Հասարակության բարդ կառուցվածքը, այդ կառուցվածքում սոցիալական տարբեր կարգավիճակները, նրանց տարակերպ գիտակցությունն ու զարգացման վերաբերյալ պատկերացումները հանգեցնում են անհամապատասխան մեծաքանակ շահերի ձևավորմանը, որոնք չեն կազմում որոշակի ենթակայությամբ կանոնավոր աստիճանակարգ, որն արտացոլում է նրանց միջև առկա սերտ կապերն ու փոխպայմանավորվածությունը, այլ իրենցից ներկայացնում են շահերի բարդ ամբողջություն: Այս համատեքստում անհատի սոցիալական շահերն արտահայտում են նրա և

այլ անհատների փոխադարձ կապը, այսինքն արտացոլում են կենսագործունեության պայմաններով ընդհանրացված անհատների, խմբերի և հանրության միջև սոցիալական փոխկապակցվածության որոշակի սահմանը: Այդ հարաբերությունների արդյունքում ձևավորվող բազմաքանակ շահերն ինքնազարգացող բարդ համակարգ դիտարկելը հնարավորություն է ընձեռում առավել լիարժեք ներկայացնել դրանց ամբողջականությունն ու վերհանել ընդհանրական տիպաբանությունը: Շահերն օժտված են յուրահատուկ բնութագրիչներով, որոնք արտացոլում են սոցիալական տարբերմակարգակի համակարգերում հանրային հարաբերությունների զարգացման յուրահատկությունները: Այդ մակարդակներից յուրաքանչյուրում ձևավորվում են շահերի սեփական համակարգեր, որոնք կայուն փոխգործակցության մեջ են միմյանց հետ: Շահերի աստիճանակարգային մնան օբյեկտիվ համակարգի ձևավորումը առաջին հերթին կենսագործունեության տարբեր ոլորտներում աշխատանքի բաժանման արդյունք է: Նշյալ ոլորտներից յուրաքանչյուրին բնորոշ յուրահատուկ շահերը սեփականության բազմազանության հետևանքով ծնված սոցիալական տարբեր խմբերի գործունեության արդյունք են, ուստի տարբեր են ինչպես շահերի ձևերը, այնպես էլ նրանց բնույթն ու ձևավորման գործընթացը: Այս պարագայում շահերի գիտական դասակարգումը հնարավորություն է ընձեռում հաստատագրել տարբեր շահերի միջև օրինաչափ կապերն ու որոշել դրանց տեղը շահերի ընդհանուր համակարգում: Շահերը դասակարգվում են տարբեր հիմքերով. օրինակ՝ ըստ ընդհանրականության մակարդակի, ըստ սուբյեկտների (շահերը կրողների), ըստ սոցիալական կարևորության աստիճանի, ըստ կենսագործունեության ոլորտների և այլն:

Շահերի դասակարգման մնանօրինակ հիմքերն իրենց ընդհանրական տրամաբանությամբ պայմանավորում են ազգային շահի համակարգում շահերի կոնկրետ տեսակների ներմուծումը, որոնք իրենց բնույթով համապատասխանում են ազգային շահի կայացմանը՝ առնչվելով ազգի և պետության համար առանձնակի կարևոր հիմնախնդիրներին:

Այսպիսով, ազգային շահի համակարգում շահը նրա կրողների գիտակցված էական պահանջմունքների ամբողջությունն է, որը անցնելով ազգի և պետության զարգացման շարժընթացով, իր վրա է կրում շահերի սուբյեկտների կեցության յուրահատկություններից բխող, անվտանգության և զարգացման հրամայականներով պայմանավորված գործոնների ընդհանուր բնութագիրը, որն էլ իր մի մասով կանխորոշում է այդ շահերի սպասարկման աստիճանը:

Ազգային շահի մեկնաբանման շուրջ տարակարծությունների հաջորդ պատճառը կապված է ազգային շահի հիմքով պետական քաղաքականության մեջ նրա սուբյեկտների բազմազանության արտացոլման հետ: Մի շարք հետազոտողներ ազգային շահը կիրառում են որպես հանրային շահի հոմանիշ՝ այն դիտարկելով որպես ներհասարակական մասնավոր շահերի հանրագումար: Չ.Բիրդը 1930թ. հրատարակված իր «Ազգային շահի գաղափարը» աշխատության մեջ, մեկնաբանելով ազգային շահը, տարբերակում է այն հանրային շահից: Վերջինս, ըստ նրա, վերաբերում է «ազգերի ներքին քաղաքականությանը»⁷²: Այս առթիվ Չ.Բիրդը նշում է. «Հանրային շահերը կազմում են ազգային ընդհանուր շահերի մի մասը միայն, հետևաբար՝ ազգային շահը չի կարող լինել մասնավոր շահերի մեխանիկական միագումար, քանզի մասնավոր շահերը միմյանցից բավականին տարբեր ու մեծաքանակ են, և չեն կարող վերածվել ընդհանրական շահերի միասեռ համակարգի»⁷³:

Ազգային շահի հայեցակարգում բավականին բարդ է որոշել հանրային - մասնավոր շահերի արտացոլման չափաբաժինը, քանզի դրա չափման ընդունված միավոր գոյություն չունի: Մեր կարծիքով, որպես մասնավոր շահերի ներգրավման ցուցանիշ կարող է դիտվել սեփական շահերի և նախասիրությունների իրացման նպատակով մասնավոր անձանց՝ քաղաքական գործընթացներին մասնակցության աստիճանն ու ձևը: Նման իրավիճակում ազգային շահերն ավելի շուտ կարելի է հանգեցնել տարբեր ուժերի շահերի փոխհարաբերակցության համադրությանը, որի անբաժան մասն են անհատական շահերը: Սա հնարավոր է միայն ժողովրդավարական երկրներում, ուր հանրության քաղաքական մասնակցությունն իրողություն է: Այս առումով, քաղաքական գործընթացներից առավել կարևոր են քաղաքական որոշումների մասով քաղաքական սակարկությունների և առևտրի գործողությունները, որոնք ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական երկրներում ունեն տարբեր բնույթ: Գործնականում ազգային շահի մի հատվածը որոշակիանում է քաղաքական սուբյեկտների միջև մրցակցության արդյունքում և հստակեցվում՝ համապատասխան ազգի ու պետության պահանջումներին ու շահերին⁷⁴: Ազատ քաղաքական մրցակցության պայմաններում առանձնակի կարևոր է շահերի խմբերի միջև

⁷² St'u Beard C., The Idea of National interest., N.Y., (1930., red. 1963), chapter II:

⁷³ St'u նույն տեղում, էջ 346:

⁷⁴ St'u Rosenau N. James, The Scientific Study of Foreign Policy, London: Frances Printer; N. Y., Nichols, 1980, էջ 286, 289-292:

գործողությունները կանոնակարգող նորմերի և «խաղի կանոնների» ձևակերպումը: Այդ կարծիքին է նաև Վ. Լիպմանը, որը գտնում է, որ «մասնավոր շահերի գործարկման կարևորագույն նախապայմանը կանոնակարգման համապատասխան նորմերի համակարգի առկայությունն է»⁷⁵, որը կախված է պետության ներսում քաղաքական ուժերի հավասարակշռությունից և քաղաքական համակարգի կառավարման սկզբունքներից:

Շարունակելով ազգային շահի շուրջ տարակարծությունների պատճառների դիտարկումը, հարկ է նշել, որ, ի մասնավորի, Ջ.Ն. Ռոզենաուն⁷⁶, Բ.Գ. Կապուստինը⁷⁷ ընդհանրապես մերժում են ազգային շահի առանցքային նշանակությունը՝ հիմնավորելով դա ազգային շահի անորոշ բովանդակությամբ, որը, ըստ նրանց, պայմաններ է ստեղծում հանրային կարծիքի ձևախեղման համար: Բ.Գ.Կապուստինն, օրինակ, այս առթիվ նշում է. «Ազգային շահն օգտակար չէ ժողովրդավարական զարգացման համար: Ժողովրդավարությունը հիմնված է այն մոտեցման վրա, որ ժամանակակից հասարակությունը բազմակենտրոն բնույթ ունի, և միայն մասնավոր շահերի փոխգործակցության միջոցով է հնարավոր ընդհանուր շահի վերաբերյալ պատկերացումներ ձևավորել: Ազգային շահի վերաբերյալ պատկերացումները պայմանական են, քանի որ փոփոխական են հենց իրենք՝ շահերը, ինչպիսի ավանդույթներ էլ ազդեն նրանց ձևավորման վրա»⁷⁸:

Ակնհայտ է, որ վերոհիշյալ մոտեցումն ազգային շահի գնահատման հարցում սահմանափակվում է միայն նեղ և մասնավոր եզրահանգումների կառուցմամբ: Այն հնարավորություն չի ընձեռում լիովին և ամբողջությամբ պատկերացում կազմել ազգային շահ բարդ երևույթի վերաբերյալ: Մինչդեռ հանգամանալից վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ ազգային շահի բաղադրամասերը համակարգային բարդ և բազմամակարդակ փոխհարաբերման մեջ են միմյանց հետ: Հարաբերման նշյալ որակն ու ձևը պայմանավորում են ազգային շահի բովանդակային խորությունն ու ձևային դրսևորումները:

⁷⁵ St u Lipmann Walter, The Phantom Public: A Sequel to «Public Option», N.Y., 1922, էջ 104 -106:

⁷⁶ Ջ.Ն.Ռոզենաուն նշում է. «Ազգային շահի սահմանումը/որոշումը երբեք չի կարող լինել ոչ այլ ինչ, եթե ոչ մտահանգումներ, որոնք բխում են քաղաքականության վերլուծական և արժեքային հիմքից» (St u Rosenau N. James, The Scintific Study of Foreign Policy (London: Frances Printer; N.Y. Nichols, 1980, էջ 284):

⁷⁷ Բ.Գ.Կապուստինը «ավելի հեռու է գնում»՝ նշելով. «Ազգային շահի հայեցակարգը հնարավորություն է տալիս այն նույնացնել «պետական շահ» հասկացության հետ, որն էլ պետական իշխանության մի շարք ներկայացուցիչներին պարբերաբար հնարավորություն է ընձեռում, սեփական քաղաքական նպատակներից ելնելով, շահարկել «ազգային շահ» հասկացությունը» (St u Капустин Б.Г. «Национальный интерес», как консервативная утопия, ж-л «Свободная мысль», 1996, № 3, էջ 14-15):

⁷⁸ St u նույն տեղում, էջ 12:

Ազգային շահերի շուրջ տարակարծությունների՝ հանրային շահ - ազգային շահ հարաբերակցության ձևորոշումից զատ, հարկ է անդրադառնալ ազգային շահի՝ գիտական գրականության մեջ առկա մեկնաբանման հիմնական մոտեցումներին, որոնք ազգային շահի որոշակիացման ելակետ են համարում այս կամ այն սկզբունքը:

Մի շարք հետազոտողներ ազգային շահի բովանդակությունը պայմանավորում են քաղաքական վարչակարգի բնույթով: Այս մասին է մասնավորապես խոսում Դ.Կրասները՝ նշելով, որ «ազգային շահը քաղաքական որոշումներ ընդունողների շահերի և նախասիրությունների ամբողջությունն է»⁷⁹. այն առավելապես իշխող էլիտայի՝ պետական քաղաքականության վերաբերյալ սուբյեկտիվ և փոփոխական պատկերացումների համագումարն է⁷⁹: Ռ.Արոնն այս առթիվ նշում է. «Ակնհայտ է, որ տարբեր քաղաքական վարչակարգեր ունեն տարբեր քաղաքական նպատակներ ու շահեր, հետևաբար դրանց իրացումը պահանջում է ազգային շահի իրականացման պետական ուրույն քաղաքականություն»⁸⁰:

Վարչակարգի բնույթից ածանցվող ազգային շահերը, մեր կարծիքով, բնորոշ էին որհրդային Միությանը (ինչպես նաև հիմնականում ամբողջատիրական վարչակարգեր ունեցող այլ երկրների), որտեղ ազգային շահը բացառապես հանգում էր պետական, վերջինս էլ՝ քաղաքական ռեժիմի շահերին և շահերի վերաբերյալ իշխող քաղաքական էլիտայի պատկերացումներին: ԽՍՀՄ վարչակազմի բնույթից ածանցվող ազգային շահի բովանդակության նեղացման բացասական անդրադարձերն ի հայտ եկան երկրորդ աշխարհամարտի առաջին տարիներին, երբ ԽՍՀՄ ղեկավարության՝ ազգային շահերի վերաբերյալ ոչ հաշվենկատ պատկերացումները հանգեցրին մարդկային, նյութական և տարածքային ահռելի կորուստներին:

Դիրքորոշումը, թե ազգային շահերի մեկնաբանությունը պայմանավորվում է վարչակարգի բնույթով, փաստորեն շեշտադրում է ազգային շահի մեկնաբանման առավելապես սուբյեկտիվ մոտեցումը:

Ազգային շահը վարչակարգի բնույթով պայմանավորող մոտեցման հետ համակարծիք չէ քաղաքագիտական գրականության մեջ ազգային շահի՝ մեծ տարածում ստացած մեկնաբանության հեղինակ Հ.Մորգենթաուն, որը ազգային շահը դիտարկում է բացառապես որպես պետության օբյեկտիվ պահանջումներ (տարածքի, ազգաբնակչության ֆիզիկական

⁷⁹ St'u Krasner D. Stephan, *Defending the National Interest: Raw Materials Investments and U.S. Foreign Policy*, Prinseton, 1970, էջ 10, 43, 54:

⁸⁰ St'u Aron Raymond, *Peace and War: A Theory of International Relations*, Garden City, N.Y., 1973, էջ 83:

անվտանգության, տնտեսության զարգացման նվազագույն պայմանների ապահովում), որոնք, անկախ պետության բնույթից և քաղաքական վարչակարգի տիպից, ընդհանուր են բոլոր պետությունների համար: Մորգենթաուն, ըստ էության, պետության ազգային շահերը նույնացնում է յուրաքանչյուր պետության գոյատևման կենսական շահերի հետ, որը, մեր կարծիքով, նվազեցնում է առաջարկվող մեկնաբանության արժեքը՝ այն հանգեցնելով բացառապես ազգային շահերի բովանդակության մի մասի ներկայացմանը: Հ.Մորգենթաուն նշում է, որ ազգային շահի հայեցակարգը՝ սահմանված ուժի հասկացություններով, այն օբյեկտիվ չափանիշն է, որ նշանակում է, թե պետության նպատակները չեն կարող դուրս լինել նրա ռեսուրսային հնարավորություններից, քանի որ «ազգային նպատակների» իրականացման ռեսուրսները սահմանափակ են: Հետևաբար, «լավ պետական գործիչը» պետք է այնպիսի որոշումներ կայացնի, որոնք, պահպանելով և զարգացնելով պետության հզորությունը, չվտանգեն վերջինիս անվտանգությունը⁸¹:

Հ. Մորգենթաունի մոտեցումն ակնհայտորեն զերծ չէ թերություններից, քանզի նա փաստորեն նույնացնում է ազգային շահերն ու պետական շահերը: Մեր կարծիքով սա սառըպատերազմյան դարաշրջանի իրողությունների ազդեցության և Արևմուտքում «ազգ» և «պետություն» հասկացությունների նույնականացման մոտեցումների արդյունք է: Անկասկած ազգային շահերն ու պետական շահերը մի զգալի մասով համընկնում են, սակայն չեն նույնանում, քանզի ազգային շահն առավել լայն և ընդգրկուն երևույթ է:

Օրինակ, մեր կարծիքով, Հայոց ցեղասպանության համաշխարհային ճանաչման և Թուրքիայի կողմից կատարված ոճիրի փոխհատուցման հիմնադրույթն, անկասկած, կարող է Հայաստանի Հանրապետության ազգային շահերի մաս կազմել, սակայն պետական շահերի տեսանկյունից այն ներկայումս նպատակահարմար չէ դիտել որպես հայ-թուրքական հարաբերությունների վերահաստատման հնարավոր նախապայման:

Ազգային շահ - պետական շահ տարբերակումը հատկապես տեսանելի է այն պետությունների պարագայում, որոնք արտերկրում ունեն մեծ սփյուռք, քանի որ ոչ միշտ են պետական շահերն ու ազգային շահերն այս պարագայում համընկնում: Սեփական սփյուռքի անվտանգության, տնտեսական զարգացման, էթնիկ-մշակութային ինքնության պահպանման խնդիրներն, անկասկած, պատկանում են տվյալ պետության ազգային շահերի հավաքական հանրագումարին, որի մաս է կազմում նաև պետա-

⁸¹ St' u Morgenthau H.J., Politics Among Nation, էջ 5, 8, 553:

կան շահերի՝ առավել նեղ և կոնկրետ համակարգը: Միջուռքի համայնքների ներկայացված հիմնախնդիրների լուծումն, ըստ էության, չի կարող նույնացվել «մայր» պետության պետական շահերին, քանի որ սիջուռք կազմող և տվյալ ազգին պատկանող ազգաբնակչության նշյալ հատվածն ունի այլ երկրների քաղաքացիություն՝ դրանից բխող օբյեկտիվ և սուբյեկտիվ բոլոր անդրադարձերով: Այն պարագայում, երբ այլ երկրում սեփական համայնքը լուրջ խնդիրներ ունի, դրանց լուծմանը «մայր» պետության մասնակցությունը կարող է առավելապես իրացվել բանակցային սեղանի շուրջ՝ ստանալով սեփական համայնքի խնդիրներով մտահոգության տեսք: Վերոնշյալի տիպիկ օրինակ է ջավախահայության հիմնախնդիրների վերաբերյալ ՀՀ պետական դիրքորոշումը, որը փորձում է մեկտեղել հայ-վրացական ռազմավարական կարևորության հարաբերությունները ջավախահայության կենսապահանջների լուծման հետ: Այս պարագայում վտանգ կա, որ հարցի ոչ հանգամանալից և նրբանկատ ձևակերպումը Վրաստանի կողմից կարող է դիտվել որպես ներքին ինքնիշխանության անբեկանելի սկզբունքի խախտում, որը, բացի միջպետական հարաբերությունների հնարավոր սառեցումից կարող է անդրադառնալ նաև տվյալ պետությունում բնակվող էթնիկ-ազգային համայնքի հետագա կենսագործունեության վրա:

Այսպիսով, կարելի է նշել, որ ազգային շահի ներկայացված մեկնաբանությունները մի մասնաբաժնով համընկնում, մյուսով խաչվում են: Չնայած ներկայացված մոտեցումներն իրենց մեջ կրում են ազգային շահի հստակեցման բավական էական բնութագրիչներ, սակայն, այնուամենայնիվ, լիարժեքորեն և ամբողջականությամբ չեն ներկայացնում նրա բովանդակային որոշակիությունը: Ներկայացվող աշխատանքում փորձ է արվում դիտարկել ազգային շահի մի այնպիսի մեկնաբանություն, որը կհանրագումարի նմանօրինակ ընդգրկում երևույթի բնորոշիչների ողջ համակարգը:

Մի կողմից՝ ազգային շահն ազգը կազմող անհատների, սոցիալական տարբեր շերտերի, օտարերկրյա համայնքների և գաղթօջախների, հանրության, պետության, բազմազգ պետություններում նաև այլ ազգերի՝ ներքին բնութից և կեցության հիմնարար արժեքներից ածանցվող շահերի այն հանրագումարն է, որն իր վրա կրելով պատմաքաղաքական և ներուժային գործոնների ազդեցությունը, որոշակիանում և արժևորվում է նպատակային գործունեության միջոցով:

Մյուս կողմից՝ ազգային շահը ներկայանում է պետության կենսական շահերի այնպիսի հավաքանիով, որը պայմանավորում է պետության՝ որպես տարածքի, ազգաբնակչության և պետական իշխանության մարմին-

ների հանրագումարի, գոյատևման հիմքերն ու զարգացման կարևորագույն հնարավորությունները:

Փաստորեն ազգային շահերն իրենց մեջ որոշակիացնում են ազգային շահի մեկնաբանման վերոնշյալ մոտեցումների համակցումը՝ գործնական ձևակերպում ստանալով ազգային շահի հայեցակարգի տեսքով: Այս պարագայում կարևոր է ազգային շահի կառուցվածքային վերլուծության և ձևավորման միտումների դիտարկումը, որը հնարավորություն է ընձեռում պարզաբանել ազգային շահերի հիմքով պետական քաղաքականության մեջ առաջնահերթությունների հարաբերման բնույթն ու կայացման ուղին:

Կառուցվածքային վերլուծության տեսանկյունից հարկ ենք համարում ընդգծել, որ ազգային շահերն օժտված են ներքին կառուցակազմով, որն իր առանցքում ամբողջացնում է «հանրային շահ - պետական շահ» երկմիասնության հիմնարար բաղադրատարրերը, պետության և հանրության շահերի փոխազդեցության դինամիկ և փոփոխական մասնաբաժինը, իսկ սփյուռք ունեցող պետությունների պարագայում՝ նաև նրա գոյապահպանման և զարգացման շահերը: Արդյունքում ազգային շահն ընդգրկում է առավել կայուն ու անփոփոխ շահերի առանցք և հաստատուն առանցքի հիմքից ձևավորվող դինամիկ ու շարժուն նպատակների աստիճանակարգային ամբողջություն:

Ազգային շահի կառուցվածքային առանցքը կենսական շահերի հարթությունն է, որը կազմում են շահի սուբյեկտների գոյապահպանման և գործառնման հիմնարար պայմանների և կենսագործունեության անվտանգության ապահովման շահերը: Առանցքի հիմնական տարրերն են՝ պետության տարածքային ամբողջության ապահովման, սահմանների անխախտելիության երաշխավորման, քաղաքական անկախության ու ինքնիշխանության, հասարակության հիմնարար տնտեսական պահանջմունքների բավարարման, հայրենաբնակ և տարասփյուռ ազգաբնակչության անվտանգության ապահովման, մշակութային հիմնարար արժեքների, ազգային յուրօրինակ և ազգապահպան ավանդույթների պաշտպանության շահերը: *Կարևոր շահերի* դինամիկ և շարժուն հարթության մեջ ամբողջանում են պետական իշխանության և հանրային կառույցների գործառնական ողջ դաշտը, որը վերաբերում է կենսագործունեության ներքին և արտաքին հիմնախնդիրներին: Կարևոր շահերն իրենց հերթին ունեն աստիճանակարգային ներքին կառուցվածք և կազմված են բարձր,

միջին և ցածր կարևորության շահերից, որոնց որոշումը ժամանակային կոնկրետ պայմաններում կախված է իրավիճակային գործոններից:

Ազգային շահի կառուցվածքում շահերի տարբեր հարթությունների առկայությունը փաստում է, որ նրա կառուցվածքային տարրերի միջև առկա են աստիճանակարգային հարաբերություններ, որոնք կանոնակարգում են շահերի ու պահանջմունքների հարաբերակցությունը: Քանի որ կենսական շահերը որոշակիացնում են ազգի գոյության ապահովման հիմնարար պահանջմունքները, մեր կարծիքով, նրանք ժամանակի ընթացքում գործնականում փոփոխություն չեն կրում՝ կազմելով ազգային շահի կայուն «առանցքը»: Ակնհայտ է, որ ինչքան բարձր է շահի աստիճանակարգային մակարդակը, այնքան ցածր է նրա շուրջ զիջման կամ իրացման ժամանակ զիջումների հիմքով համաձայնության հասնելու հնարավորությունը: Փաստորեն կենսական շահերը զիջման ենթակա չեն: Մինչդեռ կարևոր շահերի որոշ բաղադրատարրեր, կախված այդ իրավիճակում պետության ռազմավարական ու մարտավարական առաջնություններից և առաջնային շփումների արտաքին դաշտում տիրող աշխարհաքաղաքական կլիմայից, կարող են լինել, սակարկությունների և փոխհամաձայնության առարկա:

Կենսական և կարևոր շահերի հարթությունից զատ, մեր կողմից առաջարկվում է ազգային շահի համակարգ ներմուծել երևույթի բնութագրման *ժամանակային (երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ) և ընդգրկման (ընդհանուր և մասնավոր) չափումներ*, որոնք հստակեցնում են նրա բովանդակային խորությունը:

Որպես նշյալի լրացում՝ ազգային շահերի կառուցակազմն ամբողջական են դարձնում արտաքին ոլորտում պետության շահերի կոմպլեքսնտար ու կոնֆլիկտային տարատեսակները, որոնք ազգային շահի աստիճանակարգային համակարգում պայմանավորում են այս կամ այն շահի տեղն ու դերը: Վերոհիշյալ չափորոշիչները բնութագրում են ազգային շահը, որն իր մեջ կարող է ամբողջացնել ինչպես կենսական, մշտական և մասնավոր շահերը, օրինակ՝ պետության ռազմական անվտանգության արդյունավետության բարձրացման միջոցառումների իրականացումը, այնպես էլ կարևոր մշտական և ընդհանուր շահեր, օրինակ՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և այլն:

Առավել հստակ ազգային շահի բովանդակային կառուցվածքն իր ներքին չափումներով կարելի է դիտարկել ազգային շահի մատրիցային համակարգի տեսքով (Տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Չափումներ		Ժամանակայնություն		Ընդգրկում	
		երկարաժամկետ	Ժամանակավոր (միջնաժամկետ և կարճաժամկետ)	ընդհանուր	մասնավոր
Կարևորություն	կենսական	Պետության ազգային անվտանգության քաղաքականության իրականացում	ՀՀ համար 1990-ականներին Իրանի հետ սահմանային ապրանքաշրջանառությունը	ՀՀ ազգաբնակչության ժողովրդագրական անվտանգության ապահովում, մահացության կրճատում, ծնելիության աճի նպաստում	Հայաստան-Իրան գազամուղի կառուցման հարց
	կարևոր	Ազգաբնակչության սոցիալ-տնտեսական բարեկեցության ապահովում	« Հայաստան-Սփյուռք համաժողովների անցկացում ՀՀ-ում	Մանր և միջին գործարարության զարգացման համար նպաստավոր միջավայրի ապահովում	Հանրության սոցիալապես խոցելի խմբերի պաշտպանության պետական քաղաքականության իրականացում
Փամատեղեցիություն	կոմպլեքսնախորհրդային	ՌԴ և Չինաստանի շահերը միջազգային բազմաբևեռ աշխարհակարգի վերաբերյալ	ՌԴ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի շահերն Իրանի միջուկային քաղաքականության համատեքստում	ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Չինաստանի և ԵՄ-ի դիրքորոշումը կազմակերպված հանցավորության և քննադատության անօրինական շրջանառության դեմ պայքարում	ՌԴ և Գերմանիայի շահերը գազամատակարարման հարցերի վերաբերյալ
		Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ	Անգլիայի շահերը ԵՄ բյուջեի կազմման որոշ կետերի առնչությամբ (գյուղատնտեսությանը տրվող սուբսիդիաներ)	Թուրքիայի, Իրանի, Սիրիայի, Պաղեստինի, Իսրայելի, Լիբանանի, Չորդանանի, Եգիպտոսի, ԱՄՆ, ԵՄ և ՌԴ դիրքորոշումները պաղեստինյան խնդրի վերաբերյալ	Հայ-ադրբեջանական շահերը դարաբաղյան հիմնահարցի համատեքստում

Դիտարկված աղյուսակում ներկայացվում են երկու չափումների համապատասխանող օրինակներ: Գործնականում ազգային շահի համակարգում ներառված շահի տեսակը կարող է բնութագրվել նաև երեք և ավելի չափումային բնութագրիչներով. օրինակ՝ Աֆղանստանում հակահաբեկչական միջոցառումներին ՀՀ-ի աջակցությունն ԱՄՆ-ի համար կարելի է դիտել որպես կարևոր, ժամանակավոր և մասնավոր շահ: Մակայն հարկ է նշել, որ պետք չէ պետությունների շահերը խառնել, քանզի շահի կոնկրետ տեսակը մեկ պետության համար կարող է համարվել կենսական, երկարաժամկետ, մասնավոր, մինչդեռ նրա գործընկերոջ համար շահի նշյալ տիպը կարող է լինել կարևոր, ժամանակավոր և մասնավոր. օրինակ՝ 1960-ականներից ԱՄՆ-ն և Թուրքիան ռազմավարական դաշնակից-գործընկերներ են, սակայն իրաքյան վերջին «կոմպանիայի» ժամանակ Թուրքիայի Օրենսդիր մարմինը մերժեց Իրաքի հյուսիսում ճակատ բացելու մասին ամերիկյան առաջարկը, քանզի նման քայլի նշանակությունը և

դրա հետագա հետևանքները Թուրքիայի ու ԱՄՆ-ի համար խիստ տարբեր անդրադարձեր կարող էին ունենալ⁸²:

Անդրադառնալով ազգային շահի կառուցվածքի դիտարկմանը՝ կարևոր է հաշվի առնել, որ «հանրային շահ - պետական շահ» երկմիասնության աստիճանակարգային բաղադրամասերի համամասնությունը վերջնատեսք է ստանում ազգային շահի ձևավորման քաղաքական գործընթացում: Քաղաքականությունը «սկսվում» է այն ժամանակ, երբ շահը վերածվում է նպատակի: Շահերի կարևորությունն ընդգծված կերպով մեծանում է, երբ նրանց իրացմանն ուղղված գործունեությունը քաղաքական բնույթ է ստանում: Դա իրողություն է դառնում քաղաքացիական հասարակության և պետության՝ որպես ազգային շահի ձևակերպման ու սահմանման առաջնային սուբյեկտների միջև փոխգործակցության արդյունքում՝ ապահովելով «հանրային կյանք» - «քաղաքական գործունեություն» - «պետական իշխանություն» կապը: Այս պարագայում պետությունը և քաղաքացիական հասարակությունը՝ որպես ազգային շահի կրող կարևորագույն ինստիտուտներ, ներկայացնում են իրենց ուրույն շահերը, որոնք մի համատեքստում խաչվում, մեկ այլում համընկնում են: Պետության և քաղաքացիական հասարակության շահերն իրենց բնույթով արտահայտում են մի կողմից՝ կանոնակարգման, կայունության և ինստիտուցիոնալացման, մյուս կողմից՝ դինամիզմի և մրցակցության միտումներ: Հարկ է նշել, որ ազգային շահը որոշակիանում է ոչ թե պետության և քաղաքացիական հասարակության տարաբնույթ շահերի քանակական պարզ միասնությունից, այլ նրանց միջև բարդ փոխգործակցության արդյունքում, որն իրականացվում է քաղաքական միջնորդավորման պետական և(կամ) հանրային բնույթ ունեցող յուրօրինակ կառույցների՝ կուսակցությունների, ինստիտուցիոնալացված հասարակական շարժումների, կորպորացիաների, արդյունաբերական և առևտրային միությունների, լոբբիստական խմբերի, տարաբնույթ ռեզիոնալ էլիտաների և շահերի այլ խմբերի միջոցով: Այսպիսով, ազգային շահերի հիմքերը պետական և հանրային մակարդակում ձևավորվում են միմյանց հետ հաճախ չհամընկնող քաղաքական միջավայրում հանրային և պետական շահերի ակտիվ փոխազդեցության պայմաններում:

Ազգային շահի արժևորման ներհասարակական մակարդակում գործ ունենք խմբային և անհատական բնույթի, տարբեր կարգի և ուղղվածության շահերի միջև առկա փոխադարձ բարդ կապի հետ: Այդ շահերի հա-

⁸² St'u Mark Parris, Starting Over: U.S. - Turkish Relation in the Post-Iraq War Era. Turkish Policy Quarterly / April 2003/. [Http://www.washingtoninstitute.org/media/parris0403.htm/July](http://www.washingtoninstitute.org/media/parris0403.htm/July)

րաբերակցությունը, նրանց մրցակցությունը և ամբողջացումը հասարակության մեջ ստեղծում է ինչպես կայուն հավասարակշռություն, այնպես էլ որոշակի պայմանավորվածություն կամ «խաղի կանոններ», որ հնարավորություն են ընձեռում հասարակությանն իրացնել իր նպատակները՝ միաժամանակ չխախտելով ներքին հավասարակշռությունն ու արտաքին աշխարհում պետության զբաղեցրած դիրքերը: *Հանրային շահերը ներառում են սոցիալական փարբեր շերտերի, խմբերի, անհատների գործունեության փարաբնույթ ոլորտներին վերաբերող հիմնարար ու փոփոխական շահերի դինամիկ ամբողջություն, որը ժամանակային փարբեր միջակայքերում ձևային և բովանդակային փարբերական փոփոխություններ է կրում:* Այսպիսով, հանրային շահերի միավորման գործընթացը պետք է կայուն հավասարակշռություն ապահովի քաղաքացիների՝ միմյանցից տարբերվող շահերի միջև՝ հնարավորություն ստեղծելով հանրագումարը հավասարեցնել ազգային շահի կառուցակազմի հանրային բաղադրատարրին:

Ի տարբերություն հանրային շահի, ազգային շահի հաջորդ բաղադրիչ պետական շահը որոշակիանում է մի կողմից՝ իշխող քաղաքական էլիտայի մեջ, մյուս կողմից պետական իշխանության և հասարակության՝ քաղաքականապես ակտիվ շերտերի միջև տարաբնույթ կարծիքների մրցակցության և բախման արդյունքում: Այն իր մեջ ամբողջացնում է ինչպես պետության ռազմավարական ընդհանուր ուղեգծից ածանցվող, այնպես էլ՝ քաղաքացիական հասարակության գործարկման նվազագույն պայմանների ապահովման հավաքական շահերը: Ըստ էության, պետական շահերը ձևորոշվում են այն պարագայում, երբ «քաղաքացիների հավաքական շահերը» բյուրոկրատիայի միջոցով տեղափոխվում են պետական կառավարման մասնագիտական ոլորտ: Նշյալ գործընթացի պայմաններում իրողություն է դառնում հանրային շահեր - պետական շահեր փոխազդեցությունը, որի արդյունքում հանրային շահերը, իհարկե ոչ ամբողջությամբ, ներմուծվում են պետական քաղաքականության իրացման ոլորտ: Այս կերպ, պետական շահերն իրենց մեջ ներառում են հանրային շահերի մի շարք առանցքային բաղադրատարրեր՝ դարձնելով դրանք պետական շահերի համակարգի անքակտելի մաս: Դա փաստում է, որ նշյալ երևույթների միջև առկա են ստորադասային հարաբերություններ, որոնց պայմաններում ընդհանուր պետական շահերը գերակայում են հանրային բնույթի մասնավոր շահերի նկատմամբ: Այսպիսով, *պետական շահերի համակարգը բարդ և բազմամակարդակ կառուցվածք է, որն իր ծավալներով ընդգրկում է պետության, նրա կառուցվածքային փարբերի միասնա-*

կան, ամբողջական կազմավորման և զարգացման շահերի և դրանցից ածանցվող նպատակների առավել լայն հարթությունը:

Մովորաբար պետական շահի բովանդակային առավել կարևոր և հիմնարար սկզբունքների շուրջ, որոնց մասին ընդունված չէ խոսել հանրային քաղաքականության մեջ, իշխող քաղաքական էլիտայի և երբեմն նաև ընդդիմության որոշ ներկայացուցիչների միջև քաղաքական համաձայնություն է կայանում, որի մշակումը գուցահեռվում է պետական շահերի փոխակերպման արժեքաբանական և իմացաբանական ասպեկտների խաչաձևման հետ: Պետական շահի արժևորման և իրականացման վերաբերյալ տարակարծությունները պայմանավորված են նրանով, որ ազգային շահի՝ գիտական օբյեկտիվ վերլուծությունից ածանցվող ողջամիտ հիմնավորումը գրեթե ցանկացած իրավիճակում կարող է ենթադրել միաժամանակյա այլընտրանքային մի քանի ռազմավարությունների մշակում: Նրանց միջև վերջնական ընտրությունը կատարում է իշխող քաղաքական էլիտան (երբեմն իր վրա զգալով կայացած քաղաքացիական հասարակության ինստիտուտների ազդեցությունը), որն ընտրության ռացիոնալ կառուցողատարրից զատ, ուղղորդվում է նաև քաղաքական օբյեկտիվ իրավիճակին համապատասխան ներքմբռնողական ընտրության, հաճախ նաև սեփական պատկերացումների և նախասիրությունների գործոններով:

Հանրային և պետական մակարդակում շահերի սահմանման մոտեցումների տարբերությունը փոխլրացման, երբեմն էլ խիստ հակասական ու անհամատեղելի բնույթ է ձեռք բերում՝ դրսևորվելով որպես մեկ ամբողջի տարբեր բաղադրամասերի՝ հեգելյան «միասնության և պայքար»-ի տեսքով: Այս պարագայում ազգային շահը տարբեր սուբյեկտների միջև շահերի հիմքով առաջացած կոնֆլիկտի սառեցման միջոցով ապահովում է անցումն անհամատեղելի շահերի բախումից հակամարտող կողմերի համար ավելի բարձր մակարդակի շահերի հարաբերակցման՝ ներկայանալով որպես ընդհանրացնող շահ: Վերջինս որակական խտացման միջոցով նվազեցնում է պետական և քաղաքացիական հասարակության շահերի միջև էական հակասությունները: Ազգային շահերի ձևավորման նշյալ բարդ և բազմամակարդակ գործընթացը, շահերի ընդհանրությունից զատ, իր վրա կրում է պետական և հանրային զարգացման քաղաքականության վերաբերյալ առավել ընդհանրացված սկզբունքների, պատկերացումների, արժեքային կողմնորոշիչների, միջավայրային, քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ գործոնների, ընկալման և կեցության յուրահատկությունների, իշխող քաղաքական գաղափարախոսության ազդեցությու-

նը՝ պայմանավորելով ազգային շահի համակարգում առաջնայնությունների և զարգացման հրամայականների որոշակի դասավորվածությունը:

Մեր կարծիքով, չնայած իրենց էությանը վերը դիտարկված գործոնները հավասարապես կարևոր են, սակայն գործնականում նրանց կշիռը բավական տարբեր է և պայմանավորված է յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում ուժերի դասավորման հրամայականներով: Նշյալ գործոնների դերակատարումն ազգային շահի ձևավորման գործընթացում ունի համակարգային ազդեցության բնույթ, ուստի ազգային շահը չի կարող արժևորվել *a priori*, մեկ անգամ և ընդմիջտ: Ժամանակի ընթացքում, իր վրա կրելով նշյալ գործոնների ազդեցությունը, ազգային շահի հայեցակարգը ենթարկվում է վերաձևումների, որոնք էլ պայմանավորում են նրա ձևակերպման ոճն ու պետական քաղաքականության հետ հարաբերակցության բնույթը:

Որոշակիորեն ամփոփելով՝ հարկ է նշել, որ ձևավորման և կայացման բարդ գործընթացի արդյունքում ձևորոշված *ազգային շահերը հավաքական առումով փարբերվում են պետական և հանրային շահերից՝ միաժամանակ իրենց հիմքում նրանց հետ ունենալով էական ընդհանրություններ*: Այս պայմաններում հնարավորություն է ստեղծվում, որ շահերի այդ հանրագումարը հավասարեցվի ազգային շահերի համակարգին, որը մինչև հայեցակարգային ձևակերպում ստանալն, անցնում է ձևավորման և կայացման մի յուրօրինակ գործընթաց՝ ազգային շահերի հայեցակարգին տալով պետական քաղաքականության ուղենիշային «փաթեթավորում»:

Փաստորեն ազգային շահը որոշակիանում և կայանում է հանրության և պետության շահերի փոխգործակցության և միասնության արդյունքում: *Բարչրագույն և վերջնական ազգային-պետական շահը քաղաքացիների մասնավոր և պետության՝ իր ազգաբնակչության յուրօրինակ բնույթի և «ոգու» հիմքից բխող ընդհանուր նպատակների միջև ներդաշնակ միասնության շեղումն է*: Նման ամբողջության ամբողջական մակարդակից է կախված հասարակության և պետության ներքին կայունությունն ու անվտանգությունը: Այս առումով ազգային շահն ինքնիշխան պետության և քաղաքացիական հասարակության երկմիասնության շահն է, ուստի պատկերացում ունենալով, թե ինչպիսին են պետության ազգային շահերը, կարելի է մշակել պետական զարգացման ռազմավարական ընդհանուր ուղեգիծ, իսկ հետագայում՝ նաև որոշել, թե ինչ՞ գործոններ են խոչընդոտում դրա իրացմանը:

Այսպիսով, ազգային շահն առանձին պահանջումների կամ որոշակի առաջնահերթ նպատակների ամբողջություն կամ դրանց մեխանիկական

գումար չէ, այլ շահերի ամբողջական և սահմանափակ փոխկապակցված ամբողջություն, որն իր մեջ հանրագումարում է ազգի՝ որպես միացյալ սոցիալական օրգանիզմի գործառնման և պետության՝ որպես ազգի ինքնիշխանության բարձրագույն դրսևորման շահերը: Նշյալ ամբողջականությունից և համընդհանրականությունից, որն, ի դեպ, ենթադրում է պետության ներսում շահի գիտակցման ու ձևակերպման ժամանակ հակասությունների և բախումների առկայություն, բխում է ազգի պահանջմունքների և շահերի համակարգային բնույթը:

Ներկայացված մոտեցումների հետազոտման գործնական կարևորությունն այն է, որ քաղաքակրթական նոր պայմաններում, երբ երկրներն աշխարհն փոխարինել է աշխարհառազմավարական հարաբերությունների տարաչափ ու տարածն համակարգը, և որոշակի փոփոխության է ենթարկվել ինքնիշխանության կարգավիճակը, երբ ինտեգրման և ռեգիոնալացման գործընթացները զուգամիտվում են, անկախության և անկախ պետական քաղաքականության կերտման փորձի պակաս ունեցող պետությունները հայտնվում են ազգային շահերի հիմքով և պատմաքաղաքական ու էթնիկ-ազգային յուրահատկություններից բխող գործոնների ետնապատկերում ինքնուրույն քաղաքականություն կերտելու անհրաժեշտության առջև:

Հենց նմանօրինակ պայմաններում է, որ Հայաստանի Հանրապետությունը ստիպված է անվտանգության ապահովման և ազգային շահերի սպասարկման գերակայություններից ածանցվող պետական քաղաքականություն կերտել, որի շրջանակներում պետք է հաշվի առնվեն ոչ միայն տեղաբնակ հայության ազգային և պետական շահերը, այլ նաև սփյուռքահայ համայնքների կենսական պահանջմունքների բավարարման մասով որոշակի գործողություններ իրականացվեն: Այս պայմաններում ՀՀ պետական քաղաքականության ելակետային դրույթ դիտվելուց զատ՝ ազգային շահերը պետք է հիմնավորվեն նաև պետության գոյապահպանման հրամայականները երաշխավորող ներուժային հնարավորություններով:

ԳԼՈՒԽ 2.**ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԻ
ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՈՒՔՅԵԿՏ****2.1. Պետության դերն ազգային շահի ապահովման
գործընթացում**

Հասարակության համար առանձնակի կարևորության շահերի ու կենսական պահանջունքների բավարարումը կարող է ապահովել միայն գործառնական բազմակերպ բնութագիր ու կազմակերպչական բարձր մակարդակ ունեցող ինստիտուտը: Սոցիալական համակեցության ներկայնակում այլ ինստիտուտների շարքում նման դերակատարում կարող է ստանձնել պետությունը՝ որպես հանրության քաղաքական ինքնորոշման բարձրագույն ձև, որպես իրավական կազմակերպման տեսակ, որպես հանրության կենսաապահովման և զարգացման նվազագույն պայմանների գլխավոր երաշխավոր: Ներկայանալով որպես հանրության քաղաքական կազմակերպման գերակա ձև՝ ազգային պետությունն իր վրա է կրում էթնոսի քաղաքակրթական և կեցութային հիմքերով պայմանավորված գործոնների յուրահատուկ համակարգի ազդեցությունը՝ անցնելով ձևավորման, կայացման և զարգացման ուրույն ուղի, որի վերջնահանգույցում ստանում է ազգ-պետության ձևակերպում: Սակայն ժամանակակից քաղաքակրթական փոփոխությունները որոշակիորեն փոխել են պետության ընկալումը: Ըստ էության, փոփոխություն չեն կրել միայն պետության կառուցվածքային բնութագրի հիմնական հատկանիշները՝ տարածքային ամբողջականություն, պետական ինքնիշխանության բովանդակային առավել կարևոր բաղադրամասերը և այլ ցուցանիշներ: Ավանդական դերի հիմնական բնութագրիչների անփոփոխ վիճակը ենթադրում է, որ պետության՝ որպես միջազգային հարաբերությունների հիմնական սուբյեկտի քաղաքականությունը շարունակելու է համապատասխանել ազգային շահի՝ որպես անհատի, հասարակության և պետության գոյատևման ու զարգացման համար անհրաժեշտ կենսական շահերի հավաքական համակարգի գործառնական միջակայքին: Հենց սրանով էլ պայմանավորված է ազգային շահի մյուս կրողների շարքում պետության առանցքային և գերակա դերակատարումը: Քաղաքագիտական գրականության մեջ ազգ-պետությունը (անգլ. nation-state, ֆր. l'état-nation) ավանդաբար դիտ-

վում է որպես տարածքային ինքնիշխանության քաղաքական ձևի, հանրության մշակութային (լեզվական, կրոնական, մշակութային) որոշակիության և համատեղ տնտեսվարման զուգակցում⁸³: Պետությունը հանրության ձևավորման և կայացման գործընթացում, քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային, էթնիկական գործոնների փոխազդեցության արդյունքն է, որն իր հաստատագրումն է ստանում ինքնիշխանության իրավական նորմերի ու ինստիտուտների տեսքով: Պետության՝ որպես ազգային շահի հիմնական կրողի ինքնիշխանության բնութագրիչն ածանցվում է հանրության քաղաքական ինքնորոշման կամքից և դրա իրացման վճռականությունից: Նշյալ հանգամանքն առանձնակի կարևոր է հատկապես այն ազգերի և ժողովուրդների համար, ովքեր դարեր շարունակ ազգային շահի իրենց ընկալման անկյունաքար դիտել են պետության կառուցումը: Ինքնորոշման միջոցով ինքնիշխանության ձգտող ազգերի թվին է պատկանել նաև հայ ազգը, որն իր պատմության զգալի մի ժամանակահատվածում փորձել է վերականգնել իր անկախ պետականությունը: Այս պարագայում հարկ է մասնավորվել արևելյան իրողությունների պայմաններում ազգ-պետություն կառուցելու հայ ազգի պատմական փորձի մի դրվագի վրա՝ ներկայացնելով այն միջավայրը, որն իրենով պայմանավորեց պետականակերտման գործընթացների ելքն ու ազգային շահերի հայ ընկալման ուղեգիծը:

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի իրողությունները և անկախության դարավոր ձգտումը մի շարք ազգերի մոտ նպաստավոր պայմաններ ստեղծեցին եվրոպական ազգային պետության գաղափարի փաստական ընկալման և հնարավոր գործարկման համար: Նշյալ գաղափարների մուտքն Արևելք և հատկապես քայքայվող Օսմանյան կայսրություն խոշոր տեղաշարժերի պատճառ դարձան՝ իրենց մի զգալի մասով պայմանավորելով նշյալ տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական գործընթացների ուղեգիծը:

Սակայն հարկ է նշել, որ ազգային պետություն կառուցելու միայն եվրոպական տիպոլոգիան կը չէր, որի մասին երբեմն խոսում են ազգերի և ազգայնականության հիմնախնդիրներով զբաղվող մի շարք հեղինակներ (օրինակ՝ Ա. Թոյնբին), որ իրենով պայմանավորեց Օսմանյան կայսրությունում ազգերի անկախության մղումը, ազգային ազատագրական պայքարը, անկախ պետության կառուցման ձգտումը, այլ ազգերի միջև առկա՝ երբեմն անգամ անհամատեղելի տարբերություններն ու անկախ պետության կառուցման պատմականորեն հասունացած կենսական պահանջը:

⁸³ Стів Современный словарь по политологии., Минск, 2003, էջ 265:

Այսպես, հայ-թուրքական հակադրությունը զուտ քաղաքական անկախության ձեռքբերման, անջատվող ազգի և սեփական տարածքային ամբողջականությունը պահպանել ցանկացող կայսրության հարաբերություններ չէին⁸⁴: Հակասություններն առավել խորն էին և իրենց մեջ ամբողջացնում էին հանրության քաղաքակրթական և կեցութային հիմնարար շերտերում առկա տարբերությունները:

Առաջավոր Ասիայում ազատագրման և անկախացման նմանօրինակ տեղաշարժերի համատեքստում գործընթացների նկատմամբ իր հասուն և ողջամիտ արձագանքով աչքի ընկավ հատկապես հայ ազգը, որը պատմականորեն հիմնավորում ունեցող անկախության իր գաղափարն իրողություն դարձնելու գործողություններում ընդգծված տարբերվեց կայսրության կազմում անկախության ձգտող այլ ժողովուրդներից: Դրա հիմնական պատճառն այն էր, որ անկախության ձգտումը, որ հայ ազգի մոտ ձևավորվել ու շարժընթաց էր ապրել առնվազն նախորդ երկու դարերի ընթացքում, իր մեջ հանրագումարում էր հայ ազգի պատմության և մշակույթի ելակետային ավանդական գաղափարների գործնական արտահայտությունը: Սա արդյունքն էր նաև նրա, որ հայ քաղաքական գիտակցության ընդհանրական ներկայանակն իր մեջ ամբողջացնում էր կրթական, պատմամշակութային և իրավական մի այնպիսի հանրագումար, որը համապատասխանում էր հայոց պատմության և մշակույթի դարավոր ավանդույթներին, հայի կյանքում ողջ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբում տեղի ունեցող հասարակական-տնտեսական փոփոխություններին⁸⁵: Այս հանրագումարի մաս էր կազմում այդպես էլ չգործարկված 1860թ. Սահմանադրությունը, որը գործնական տարբերակում մտցրեց հայի և կայսրության կազմում բնակվող այլ ազգերի իրավաքաղաքական գիտակցության միջև: Այսպիսով, 19-րդ դարի կեսերին ակնհայտ էր, որ հայ ազգն Օսմանյան կայսրության այն բացառիկ քրիստոնյա ազգերից մեկն էր, որը կայացել էր որպես հասարակություն՝ ունակ ինքնորոշման միջոցով ինքնիշխան կազմավորում ձևավորել:

Պետության ձևավորման ենթատեքստում ազգային գիտակցությունը վերափոխվելով, հասունանալով և համապատասխանեցնելով ժամանակի ոգուն և առաջընթացի հրամայականներին՝ ազգային կեցության մեջ դրսևորվում էր որպես հանրային գիտակցության և քաղաքական հասունության մի նոր մակարդակ: Նշյալ իրավիճակում որպես ազգ-հանրության գործողությունների ուղենշման և դրանց կանոնակարգման հիմնա-

⁸⁴ Տե՛ս Գևորգյան Յ.Ա., նշվ. աշխ., էջ 14:

⁸⁵ Տե՛ս Գևորգյան Յ.Ա., նույն տեղը:

կան սուբյեկտ կարող էր ներկայանալ ազգի մտավոր և կրթական սերունդը՝ մտավորականությունը, ֆեոդալական և ազնվական դասի՝ հանրային հեղինակություն վայելող շրջանակները, հեղափոխականության արմատական գաղափարներով տարված հանրության առավել ակտիվ մասը, պատմականորեն վստահության ներուժ և ինքնության պահպանման գործառույթ իրականացնող եկեղեցին ու եկեղեցական դասը: Պետականակերտման հայկական գործընթացներում առանձնակի կարևոր դերակատարում էր ստանձնել, ըստ էության, պետական իշխանության գործառույթներ իրականացնող եկեղեցին, որը, հոգևոր-կրոնական գործունեությունից զատ, իր վրա էր վերցրել ազգապահպանման և պետականաստեղծման պարտավորություններ: Եկեղեցու նշյալ գործառնությունը տեղավորվում էր ժամանակի առաջադեմ մտքի մոտ ազգային շահի՝ «ազգ-եկեղեցի» հոլովության միջակայքում:

Նախ՝ ինքնավարության, ապա՝ ինքնիշխանության պահանջատիրությունը նշյալ ժամանակաշրջանում նույնացվում է պետության ձևավորման՝ ազգի հիմնարար շահերի հետ: Սա փաստում է, որ անգամ պետական կենտրոնացված իշխանության բացակայության պարագայում ազգի և հատկապես հայ ազգի մոտ, ազգային շահի պատկերացումները ձևակերպվում էին նախ՝ որպես ազգային պետության ստեղծման շահեր, ապա՝ ձևավորվում պետության՝ որպես ազգ-հանրության քաղաքական կամքի արտացոլման բարձրագույն ձևի գործառնական բնույթով: Այսպիսով, ազգի և նրա իրավաքաղաքական առավել բարձր մակարդակի՝ հանրության ինքնորոշման, ապա ինքնիշխանության կենսական պահանջումներին բավարարման արդյունքում ձևավորվում է ազգ-պետությունը՝ որպես ազգ-հանրության անվտանգության և զարգացման կենսական շահերի՝ ազգային շահերի, առանցքային բաղադրատարրերի իրացման հիմնական երաշխավոր:

Պետության կառուցման արդյունքում ազգային շահի կրող հիմնական սուբյեկտներ դիտվում են պետական իշխանության մարմինները, իսկ որպես հայեցակարգի իրականացման միջոց՝ ազգային շահի պետական քաղաքականությունը: Պետական իշխանության մարմինները, հաշվի առնելով անհատի և հանրության օբյեկտիվ շահերը, պահանջումները և պետական անվտանգության ու զարգացման կարիքները, ձևորոշում և սահմանում են շահերի այն խմբաքանակը, որը, որպես հավաքական ձևակերպում, կարող է ստանալ «ազգային շահի հայեցակարգ» անվանումը: Կոնկրետ շահի ներմուծումն ազգային շահի հայեցակարգ բավականին բարդ գործընթաց է, որը տեղի է ունենում ներիշխանական, երբեմն

իշխանություն - ընդդիմություն և առավել հազվադեպ իշխանություն - հանրություն մակարդակներում քննարկումների արդյունքում: Սակայն ազգային շահի արժևորման առաջնահերթությունը սովորաբար պատկանում է պետական իշխանության մարմիններին, որոնք ազգային շահին առնչվող իրենց քաղաքական որոշումները կայացնում են արժեքային և իրավիճակային բաղադրիչների միախառնմամբ: Մեր կարծիքով, քաղաքական որոշման արժեքային բաղադրիչը պատասխանում է «ի՞նչն է արժեքավոր և կարևոր պետության և հանրության շահերի համար» հարցին, իրավիճակային բաղադրիչը (նրա ներքին ու արտաքին բաղադրամասերը)՝ «ի՞նչն է պետության համար էական» և «ի՞նչն է իրատեսական պետության համար» հարցերին:

Ազգային շահի ձևորոշման քաղաքական գործընթացի հաջորդ քայլը շահերի հանրագումարին աստիճանակարգային կանոնակարգված տեսք տալն է, որը կբնութագրի նրանց կարևորության աստիճանը, հետևաբար՝ նաև շահերի իրականացման ժամանակ պետական իշխանության մարմինների կողմից կոնկրետ գործողությունների հնարավոր բնույթը և սահմանները: Շահերի աստիճանակարգման հստակեցմանը զուգահեռ պետական իշխանության մարմիններն ազգային շահի համակարգում շահերի կոնկրետ տեսակի իրացման համար անհրաժեշտ ռեսուրսների հավաքագրում պետք է իրականացնեն՝ գործնականում պատասխանելու այն հարցին, թե ազգային շահի հայեցակարգում իրացման տեսանկյունից շահի n° տեսակն է առավել, կամ սակավ իրատեսական: Այդ մասին է նշում նաև Հ.Մորգենթաուն. «Ազգային շահի ամբողջական հայեցակարգի սահմանման կարևոր քայլերից է շահի կոնկրետ տիպի իրացման համապատասխան գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ուժային ռեսուրսների հավաքագրումը, որն էլ պայմանավորում է ազգային շահի հայեցակարգում տվյալ շահերի սպասարկման հնարավորությունները, այն է՝ իրատեսականության աստիճանը»⁸⁶:

Պետական իշխանության մարմինների կողմից ազգային շահի հայեցակարգի իրացմանն ուղղված գործողությունները ներհասարակական մակարդակում օբյեկտիվորեն արժանանում են հանրային տարբեր օղակների արձագանքին, որն իր հերթին որոշակի լրամշակումների պատճառ է հանդիսանում՝ բարձրացնելով հայեցակարգի գործառնական արդյունավետությունը:

Մեր կարծիքով, ազգային շահի արժևորման շուրջ քննարկումները

⁸⁶ St'eu Morgenthau H.J., In Defense of the National Interest, (New York: Alfred A.Knopf), 1951, էջ 117-118:

նպաստում են քաղաքական որոշում ընդունող պետական իշխանության մարմիններին առավել նպատակային քաղաքականություն իրականացնել: Ազգային շահերի արդյունավետ քաղաքականություն կերտելիս քաղաքական որոշումներ կայացնողները պետք է պատասխանեն մի շարք առանցքային հարցադրումների, որոնք ազդում են ազգային շահի կոնկրետ տիպի ընտրության և ձևակերպման յուրահատկությունների վրա: Հարցադրումների նմանօրինակ հանրագումարը, մեր կարծիքով, ունի հետևյալ տեսքը. ինչպե՞ս կանդրադառնան պետության հզորության վրա ընթացիկ զարգացումները, հակառակորդ ուժերն ունա՞կ են արդյոք վնասել պետության կենսական շահերին, արդյո՞ք պետությունը տիրապետում է բավարար ուժի՝ պաշտպանելու սեփական կենսական շահերը, ո՞ր շահերն են կենսական, որոնք՝ երկրորդական, պետության հզորության ներուժի ո՞ր մասն է նա պատրաստ օգտագործել շահերի պաշտպանության համար, ինչպիսի՞ գործարքների են պատրաստ պետական իշխանության մարմինները՝ երկրորդական շահերին վերաբերվող զիջումների ժամանակ:

Ազգային շահի որոշակիացման բարդ գործընթացում, միջավայրային օբյեկտիվ իրողություններից ելնելով, ազգերն ու պետությունները մշակում են հավակնությունների ներքին ինքնասահմանափակիչներ, որոնք ածանցվելով ազգի ներքին կառուցվածքից՝ դրսևորվում են հանրային և պետական շահի բազմակենտրոն փոխգործակցության կերպով: Որքան մեծ է շահերի բազմազանությունը, նրանց հիմնավորվածությունը, այնքան առավել լավ են պաշտպանված ազգային շահերը զգայական խեղումներից՝ լինի դա կայսերապաշտական մեծապետականություն, թե շովինիստական միլիտարիզմ:

Ազգային շահի ռացիոնալ և ողջամիտ հայեցակարգի ձևավորումը շարունակական գործընթաց է, որը նպատակ ունի իրականությունը համապատասխանեցնել հանրության և պետության պահանջներին: Մեր կարծիքով, որպես ազգային շահի ռացիոնալ համակարգ կարելի է դիտել այն հայեցակարգը, որը ձևավորվում է պետական իշխանության մարմինների կողմից ազգային շահին վերաբերվող որոշումներ ընդունելուց և գործողություններ նախաձեռնելուց առաջ շահերի հստակեցման, նրանց իրացմանն ուղղված ներուժի հաշվառման, հնարավոր գործողությունների ուղղակի կամ անուղղակի հետևանքների կանխատեսման, նրանց համեմատման, կապերի և իրավիճակային գործոնների հաշվարկման վրա:

Ազգային շահի ողջամիտ հայեցակարգի գործարկման աստիճանը կախված է պետական իշխանության շրջանակներում ազգային շահի քա-

ղաքականության վերաբերյալ ռացիոնալ քննարկումներից: Հենց այդ քաղաքականությունն է, որ պայմանավորում է պետության և հանրության անվտանգության ու զարգացման շահերի սպասարկումը՝ գործարկելով կոնկրետ գործողությունների շարունակական մի համակարգ:

Հայաստանի պարագայում որպես պետական անվտանգության ռազմավարական հայեցակարգի մշակման վերջնափուլի հիմք դիտվում է արտերկրյա և հայրենական գիտական, պետական իշխանության ճյուղերի շրջանակներում քննարկումների իրականացումը, որը խնդիր ունի անվտանգության հայեցակարգին առավել հաշվենկատ և համապարփակ տեսք և բովանդակություն հաղորդել⁸⁷:

Ազգային շահի պետական քաղաքականության վրա իրենց կայուն կամ փոփոխական ազդեցությունն ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի տարաբնույթ մի շարք գործոններ, որոնք կանխորոշում են այդ քաղաքականության արդյունավետության մակարդակը⁸⁸: Մեր կարծիքով որպես նման գործոններ կարող են դիտվել պետությունների համագործակցության աստիճանը, ռազմավարական տեղակայվածությունը, կենսական կարևորության բնական ռեսուրսների առկայությունը կամ բացակայությունը, շուկայում ապրանքաշրջանառության, կենսական կարևորության ապրանքների ներմուծման և արտահանման ծավալը, ներմուծման այլընտրանքային աղբյուրների քանակը, երկրում մասնավոր ներդրումների քանակը, բնակչությունը, արդյունաբերության ընդգրկունությունը, ռազմական հզորությունը և այլն:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ ազգային շահի համակարգի ձևավորման և դրա իրացման շուրջ ներքին համաձայնություններից զատ կարևոր է նաև պետության կողմից իր սեփական ազգային շահերի նկատմամբ արտաքին արձագանքի հաշվարկումը, որն էական դեր է խաղում ազգային շահի հայեցակարգի ձևակերպման իրատեսականության համար: Միջազգային հարաբերությունների անարխիկ համակարգը սահմանափակում է այդ համակարգի մաս հանդիսացող պետության ազգային շահերը, որոնք պետությունները միջպետական փոխհարաբերությունների այդ համակարգ են ներմուծում իրացման նպատակով: Նշյալ համակարգում յուրաքանչյուր պետություն հետապնդում է իր սեփական շահերը (չնայած որ

⁸⁷ Այս մասին առավել մանրամասն տե՛ս, հարցազրույց ԶԶ ՊՆ նախարարի խորհրդական, քաղաքական գիտությունների դոկտոր, ԶԶ ՊՆ միջգերատեսչական համձնաժողովի քարտուղար, գեներալ-մայոր Զայկ Քոթանջյանի հետ, 06.11.06; ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՅԻՆ ԱՆՎՏԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, Նախագիծ, 28.11.2006, <http://www.mil.am/security/>:

⁸⁸ St u Goldstein Martin E., The Role of National Interest in International Relations, Intellect, November, 1975, էջ 157-158:

շահեր ունեն նաև պետությունների դաշինքներն ու միությունները), որոնք երբեմն ոչ միայն տարբերվում են միմյանցից, այլ նաև՝ ընդգծված կերպով հակադրվում: Այս պարագայում պետության կողմից հաստատված ազգային շահերի և դրանց իրացման ռեսուրսների սահմանափակությունը պետությունների միջև խթանում է ազգային շահի իրացման մրցակցությունը⁸⁹, որը երաշխավորված կերպով արդյունավետ կարող է լինել միայն կողմերի կոմպլեմենտար շահերի առկայության պարագայում:

Ազգային շահի իրացման պետական քաղաքականության արդյունավետության տեսանկյունից, մեր կարծիքով, արտաքին միջավայրային գործոնների շարքում առանձնակի կարևոր են պետության ռազմավարական դիրքը և միջազգային հարաբերությունների անարխիկ համակարգում ազգային շահի իրացման անհրաժեշտության հիմնավորվածության չափանիշները:

Որպես պետության ռազմավարական դիրքի ցուցանիշներ ներկայանում են պետության աշխարհագրական բնութագիրը, ռեսուրսային հզորությունները, հաղորդակցային ներուժը և այլ ցուցանիշներ, որոնք անհրաժեշտ են պետության ազգային շահերի իրացման քաղաքականության արդյունավետության համար:

Ազգային շահի իրացման միջավայրային հաջորդ գործոնն իր մեջ ներառում է միջազգային հարաբերությունների համակարգում ազգային շահերի իրացման հիմնավորվածության և ընդունելիության չափանիշները, որոնք ներկայանում են երեք հիմնական մոտեցումների տեսքով.

- Որքանո՞վ են տվյալ պետության պահանջներն ածանցվում նրա իրական ազգային շահերից, այսինքն՝ նշյալ պահանջների չբավարարման դեպքում կարո՞ղ է վտանգվել շահերի սուբյեկտ հանդիսացող պետության անկախության ու կարողունակության շարունակականությունը:

- Արդյո՞ք տվյալ պետության ազգային շահերն ունեն այնպիսի բնույթ, որ չեն վտանգում այլ պետությունների կամ նրանց խմբերի անկախության և ինքիշխանության շահերը: Այս պարագայում կարևոր է հաշվի առնել պետական քաղաքականության բնույթը՝ նվաճողակա՞ն է այն, թե՞ ոչ:

- Արդյո՞ք տվյալ պետության ազգային շահերը չեն վտանգում կամ խախտում ուժերի միջազգային հարաբերակցությունը⁹⁰:

Քանի որ միջազգային հարաբերությունների համակարգն անկախ և տարաբնույթ քաղաքական սուբյեկտների և միությունների միավորում է,

⁸⁹ Տե՛ս David W. Clinton, National Interest: Rhetoric, Leadership and Policy. (Boston: University Press of America), 1988, էջ 43- 44:

⁹⁰ Տե՛ս David W. Clinton, The Two Faces of National Interest, էջ 64-66:

որոնցից յուրաքանչյուրը ներկայանում և պաշտպանում է սեփական ազգային շահերը, ապա հարաբերակցվելով՝ նրանք կամ ամրապնդում, կամ թուլացնում են միջպետական կապերը⁹¹: Ակնհայտ է, որ այս իրավիճակում պետությունների միջև հարաբերությունների փոփոխությունն ունի օբյեկտիվ բնույթ և պայմանավորված է միջազգային հարաբերությունների համակարգի իրողություններով: Այս մասին է փաստում նաև Հ.Մորգենթաունը՝ նշելով. «Պատերազմի կամ խաղաղության հանգեցնում է միջոցների այն համակարգը, որը կիրառելով՝ պետությունը հետապնդում է իր շահերը: Եթե պետությունն իր շահերը պաշտպանում է խաղաղ կամ ուժային միջոցներով, ապա դա միայն իր ընտրությունը չէ, այլ նաև օբյեկտիվ բնույթի որոշակի պայմանների արդյունք է»⁹²:

Վերոնշյալից հետևում է, որ պետության ազգային շահերի ընկալումը երկկողմանի է՝ ներքին և արտաքին, որոնք արդյունավետ պետական քաղաքականության մեջ պետք է հավասարակշռվեն: Ինչպես ազգային շահի պահանջների շուրջ ներքին, այնպես էլ միջազգային ընկալման միջև փոխազդեցությունը ներգործում է ազգային շահի իմաստավորման վրա: Եթե պետությունը ծայրահեղ պահանջներ է ներկայացնում միջազգային հանրությանը, ապա պետական իշխանությունը պետք է պատրաստ լինի ուժի և ռեսուրսների հավաքագրման: Այս պարագայում, մեր կարծիքով, պետության քաղաքական վարքը դառնում է որպես այլ պետությունների և միջազգային հանրության քննարկման առարկա՝ զուգահեռաբար ազդելով պետության ներսում քաղաքական բանավեճերի ուղղվածության և բնույթի վրա: Ազգային շահի վերաբերյալ ներքաղաքական բանավեճերն իրենց հերթին պայմանավորում են այդ շահերի վերաբերյալ արտաքին արձագանքի ուղղվածության մի մասը⁹³: Սա փաստում է, որ ազգային շահի ներքին և դրա իրացման արտաքին արձագանքները պատճառահետևանքային կապի մեջ են և պայմանավորում են ինչպես ազգային շահի իրացման աստիճանը, այնպես էլ՝ պետական քաղաքականության արդյունավետության գործակիցը:

Արդի աշխարհում որպես ազգային շահերի ապահովման և պաշտպանության հիմնական միջոցներ դիտվում են դիվանագիտական բանակցային մեխանիզմները, քանզի դրանք տնտեսական՝ մասնավորապես ֆինանսական, մարդկային առավել սակավ ռեսուրսներ են պահանջում՝ չխախտելով ժողովրդավարական համակեցության հիմնարար սկզբունք-

⁹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 57-59:

⁹² Տե՛ս Carr E.H., The Twenty Years' Crisis, 1919-1939. (1939: rpr. New York, 1964), էջ 51:

⁹³ Տե՛ս Morgenthau H.J., The Purpose of American Politics, 1950, էջ 186:

ները: Մեր կարծիքով, եթե սահմանված ազգային շահերն ակնհայտ կոնֆլիկտային չեն, ապա, ըստ կողմերի շահերի համատեղելիության աստիճանի, բանակցությունները կարող են ունենալ հնարավոր հետևյալ հետևանքները՝ կենսական անհամատեղելի շահերի միջև բանակցություններն անհնար և անարդյունավետ են, իսկ կարևոր (համատեղելի կամ անհամատեղելի) շահերի պարագայում համաձայնությունները կայանում են շահերի բավարարման գործարքային մեխանիզմի կիրառման միջոցով: Այսինքն արդյունավետ բանակցությունները հնարավոր են առավելապես կարևոր և երկրորդական շահերի դեպքում: Մեր կարծիքով, պետական արդյունավետ քաղաքականության մեջ ազգային շահերի իրացմանն ուղղված դիվանագիտության խնդիրը պետք է լինի այդ պայմանների կառավարումը՝ փորձելով նվազեցնել վիճարկելի շահերի բախման վտանգը: Այս առթիվ Հ.Մորգենթաուն նշում է. որ. «Ազգային շահի պետական քաղաքականության մեջ դիվանագիտության գերխնդիրն է՝ ճշգրտորեն գնահատել հակառակորդ երկրների կենսական շահերի բախման պայմաններում խաղաղ լուծման հնարավորությունները և նրանց հզորության ներուժի հարաբերակցությունը»⁹⁴: Փաստորեն ազգային շահի իրացման դիվանագիտական և ուժային մեխանիզմներն արձանագրում են, որ այդ շահերի սահմանափակման հիմնական գործոնն այլ երկրների ազգային շահերն են: Փոխադարձ կորուստները նվազագույնի հասցնելու և գոյատևման տարրական պահանջումքները մի պարագայում ստիպում են պետություններին փոխադարձորեն սահմանափակել ազգային շահերը, մեկ այլ պարագայում՝ համատեղ ձևակերպել և իրացնել դրանք: Ազգային շահի փոխադարձ սահմանափակման հիմնական հետևանքը միջազգային իրավունքի ձևավորումն էր, իսկ հավաքական շահի իրացման արդյունքը՝ ինտեգրման միջոցով միջազգային կազմակերպությունների և վերազգային կազմավորումների ձևավորումը: Նման իրավիճակում բնորոշ է գերտերությունների կողմից երկրագնդի առանձին տարածաշրջաններ սեփական «ազգային շահերի» կամ, այսպես կոչված, «կենսական շահերի» ոլորտ հռչակելը: Նման հայտարարությունների աշխարհագրությունը չի սահմանափակվում միայն կոնկրետ տարածաշրջաններն ուղենշելով: Այն յուրահատուկ ազդանշան է, որ նշյալ տարածաշրջանում գերտերությունն իր շահերի բավարարման նպատակով ընդունակ է անգամ ուժի միակողմանի կիրառման՝ միաժամանակ հայտարարելով, որ տարածաշրջանի սահմաններից դուրս իրավիճակն իրենց առանձնապես չի հետաքրքրում,

⁹⁴ St'u Morgenthau H.J., In Defense of the National Interest, էջ 136:

եթե այս կամ այն կերպ չի առնչվում նշյալ տարածաշրջանում իր շահերի հետ:

Ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ *ժամանակակից աշխարհում աշխարհընկալման և քաղաքակրթական փոփոխությունների համապրեքսում անգամ պետությունը չի դադարում հանդիսանալ ազգային շահի հիմնական սուբյեկտ, չնայած որ քաղաքացիական ինստիտուտների և ոչ պետական կառույցների ազդեցությունը զգալիորեն մեծացել է*: Լինելով ազգային շահի հիմնական կրող՝ պետությունը ինքիշխան է այդ շահերի սպասարկման ժամանակ կիրառել ինչպես դիվանագիտական, այնպես էլ ուժային միջոցներ, որոնք հնարավորություն կընձեռեն բավարարել ազգային շահի պետական հայեցակարգի նվազագույն պահանջները: Սակայն ակնհայտ է նաև, որ թե՛ դիվանագիտական, թե՛ ուժային միջոցների կիրառումն ազգային շահերի իրացման ժամանակ ուղղակիորեն անանցվում է այն ներուժից, որին տիրապետում է ազգային շահի սուբյեկտ հանդիսացող պետությունը: Ազգային շահի իրացման ներքին և արտաքին քառուղիներում պետության արդյունավետ քաղաքականության հիմնական գրավականը *սեփական ներուժի - հավակնությունների - օբյեկտիվ իրողությունների* միջև հավասարակշռության պահպանումն է, որը կարող է և լիովին չբավարարել կոնկրետ շահը՝ սպասարկելով միայն շահի կենսական և իրատեսական մասնաբաժինը: Իսկ ազգային շահի կենսական տեսակների երաշխավորված բավարարման առանցքը պետության հզորության հավաքական ներուժի իրատեսական գնահատականն է և նրա առջև իրական նպատակների առաջադրումը:

2.2 Պետության ռազմավարական ներուժի դերակատարումն ազգային շահերի իրացման քաղաքականության համատեքստում

Ազգային շահերի հիմքով պետական քաղաքականությունը խնդիր ունի ապահովել պետության և հանրության անվտանգությունն ու զարգացումը: Այս մակարդակում կարևոր է ոչ միայն այդ շահերի ողջամիտ ու հստակ արժևորումը, այլ նաև ռեսուրսների այն հանրագումարի առկայությունն ու հավաքագրումը, որն ազգային շահերի իրականացման հնարավորություն կընձեռի: Եթե «ազգային շահեր - իրացման միջոցներ» հարթության մեջ առկա է անհամամասնություն՝ ոչ հոգուտ պետության ներուժային հզորության, ապա դա կարող է անիրականանալի դարձնել պետության նպատակների իրագործումը, քանզի ռեսուրսների ոչ իրատեսական գնահատումը «դատապարտում» է ազգային շահերի հիմքով պետական քաղաքականության արդյունավետությունը: Այս պայմաններում, մեր կարծիքով, պետության զարգացման ընդհանուր ռազմավարությունը, մասնավորապես նրա արտաքին քաղաքական քաղադրատարրը և այն իրագործող գործադիր իշխանությունը, ածանցվելով պետության ռեսուրսային ներուժից, զսպանակների և սահմանափակիչների համապատասխան համակարգի միջոցով կանոնակարգում են ազգային շահի ծավալային ընդգրկունությունը: Մինչդեռ եթե հարաբերակցությունն այլ բնույթ է կրում և գերակայում են ռեսուրսները, ապա պետական քաղաքականության տարածական ուղեգիծը դառնում է առավել ընդգրկուն, իսկ հավակնությունները՝ առավել մեծ: Սա մեզ համար հիմք է պնդելու, որ *ազգային շահերի սահմանափակման կամ նրա միջակայքի ընդլայնման առաջնային ցուցանիշն ազգային շահի սուբյեկտի ներուժային բնութագիրն է:*

Պետությունը՝ որպես ազգային շահի հիմնական սուբյեկտ, բնութագրվում է կառուցվածքային տարրերի և բնորոշիչների հավաքական այնպիսի համակարգով, որի կառուցակազմով, զարգացման աստիճանով, արդյունավետ գործառնման հնարավորություններով են որոշվում ազգային շահերի իրացման մակարդակը և գործարկման աստիճանը: Մեր կարծիքով, *ազգային շահերի ներուժի կարևորման փեսանկյունից պետության «օրինական» շահերը և «անօրինական» հավակնություններն ըստ էության ոչ այլ ինչ են, եթե ոչ գործնական քաղաքականության մեջ ուժի հարաբերակցության հարց:*

Ստացվում է, որ ազգային շահերի իրացման և ազգային անվտանգու-

թյան ապահովման գերակա խնդիրների լուծման անկյունաքարը պետության տիրապետության տակ գտնվող հնարավորությունների համակարգն է: Նշված գերակայությունների իրականացման միջոցառումների ձեռնարկումը պետք է իր մեջ հանրագումարի ազգային անվտանգության իրավիճակային հնարավոր զարգացումների այլընտրանքային դիպաշարերի կազմումը: Նման պայմաններում, մեր կարծիքով, ազգային անվտանգությանն իր առավել լայն կտրվածքով ներկայանում է որպես անվտանգության ապահովման նպատակով հանրության, պետության, զինուժի, հոգևոր և նյութական ուժերի, նրանց իրացման հնարավորությունների հավաքական ամբողջություն:

Ավանդաբար պետության հավաքական ներուժը նրա «նյութական և հոգևոր ուժերի ամբողջությունն է», որը հնարավոր պատերազմի պարագայում հաղթանակի ապահովման նպատակով հանրագումարում է պետության, հանրության և զինուժի առկա և հավաքագրման ենթական հնարավորությունները⁹⁵: Այդ ներուժը կարող է իրողություն դառնալ միայն տնտեսական և ռազմական հավաքագրման հատուկ պայմաններում՝ հանրության և պետության բոլոր ռեսուրսների առավելագույն համախմբման իրավիճակում: Այսինքն, պետության հավաքական ներուժը տվյալ իրավիճակում ազգային անվտանգության ապահովմանն ուղղված պետության, հանրության և զինված ուժերի նյութական և հոգևոր ռեսուրսների ընդհանուր հանրագումարն է: Հարկ է, սակայն, չխառնել «ներուժ(պոտենցիալ)» և «հզորություն» հասկացությունները, որոնք բովանդակությամբ նույնական չեն, քանզի համապատասխանում են «հնարավորություն» և «իրականություն» փիլիսոփայական հասկացություններին: Եթե իրականությունը կեցության հնարավորությունների և նրա սոցիալական ձևերի գործնական իրացումն է, ապա հզորությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ կոնկրետ պայմաններում ներուժի իրացման աստիճանն է: Փաստորեն ներուժն առավելապես ստատիկ հասկացություն է, և այն հզորության է վերածվում՝ իր մեջ ներմուծելով դինամիզմի տարրեր:

Պետության հավաքական ներուժը հավասար է պետության տրամադրության տակ գտնվող ամբողջ հավաքական հզորության հնարավոր առավելագույն իրացման մակարդակին: Պետության հավաքական ներուժը բավական լայն, սակայն ոչ կոնկրետ հասկացություն է՝ ի տարբերություն պետության հավաքական հզորությանը, որն օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի պայմանների պարագայում համապատասխանում է իրակա-

⁹⁵ См. в **Военный энциклопедический словарь**, М., 1983, т. 2 581:

նացված գործողությունների ամբողջությանը: Ազգային անվտանգության առավել ամբողջական ապահովման պետության իրական հնարավորությունները կարող են որոշվել միայն այդ բոլոր գործոնների և պայմանների ողջ բազմազանությունը հաշվի առնելու դեպքում, որն իր ամբողջության մեջ բնութագրվում է որպես պետության հավաքական հզորության ցուցանիշների համակարգ: ԱՄՆ-ում համանման հասկացության տակ վաղուց արդեն լայն կիրառում է ստացել «ազգային հզորություն» հասկացությունը: 1997թ. ԱՄՆ նախագահ Բ.Բիլնթոնն իր՝ «ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարությունը 21-դարում» ելույթում օգտագործեց «ազգային հզորություն» հասկացությունը՝ առանց բացառության նշելով բոլոր այն տարրերը, որոնք կազմում են պետության հզորության համակարգը և իրենց առջև խնդիր ունեն ապահովել ԱՄՆ ազգային շահերն աշխարհում⁹⁶:

Ազգային շահերի պետական քաղաքականության մեջ առանձնակի կարևոր է պետության հավաքական հզորության ամբողջական գնահատման խնդիրը, որն առանցքային է առանձին պետությունների համեմատական վերլուծության և յուրահատկությունների վերհանման ժամանակ:

Մեր կարծիքով, ազգային շահերի իրացումը երաշխավորելու և ազգային անվտանգությունը լիարժեքորեն ապահովելու անհրաժեշտությունից է, որ պետության հավաքական հզորության գնահատումը պետք է կատարվի տեսականորեն հնարավոր ռազմական գործողությունների ծավալման պարագայում, որը պետական քաղաքականության գործնական արդյունավետության արտացոլման փորձաքար է: Հնարավոր պատերազմը պետության ուժեղ և թույլ բոլոր կողմերի համար փորձություն է, որի ժամանակ չկա բացարձակապես «ուժի և թուլության և ոչ մի որակ, որը չազդի պայքարի արդյունքի վրա»⁹⁷: Ժամանակակից պատերազմում հաղթանակը տարբեր գործոնների բարդ փոխազդեցության ուղղակի կամ անուղղակի արդյունք է: Նշյալ գործոններն իրավիճակային կոնկրետ պայմաններում ուժի այն տարրերն են, որոնք կանխորոշում են պայքարի արդյունքը: Այս իմաստով «պետության հզորությունը» հավաքական հասկացություն է, որը ներառում է հզորության կառուցվածքային տարբեր տարրեր՝ տարածքի մեծություն, սահմանների բնույթ, ազգաբնակչության քանակ, բնական ռեսուրսների առկայություն կամ բացակայություն, տնտեսական և տեխնիկական զարգացվածության մակարդակ, ֆինանսական հզորու-

⁹⁶ Стен A National Security Strategy for a New Century, Washington, 1997, էջ 1- 9:

⁹⁷ Стен Steinmetz S. Rudolf, Soziologie des Kriedes, 2-nd., Leipzig, J.A.Barth, 1949, էջ 227:

թյուններ, էթնիկ կազմ, սոցիալական արդյունավետ հանրակարգ, քաղաքական կայունություն, ազգային մենթալիտետ⁹⁸:

Պետության հզորության ներկայացված տարրերի կարևորություն այն է, թե նրանցից ո՞ր մեկը և ի՞նչ մասնաբաժնով պատերազմական կամ արտակարգ այլ իրավիճակում կարող է նպաստել պետության ազգային շահերի իրականացմանն ու ազգային անվտանգության ապահովմանը: Թերևս նշյալ կարևորությամբ է, որ պետության հզորության մեծությունը և բնույթը պայմանավորված են նպատակների կարևորությամբ և նրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցների ծավալների վերաբերյալ երկրում գերիշխող կարծիքներով: Որքան քաղաքականապես կարևոր են հետապնդվող նպատակները տվյալ պետության համար, այնքան մեծաքանակ միջոցներ է պետությունը ունակ հավաքագրել նրանց իրացման համար:

Փաստորեն կարելի է նշել, որ ազգային շահերի հիմքով պետական քաղաքականության և ազգային անվտանգության միջոցների ձեռնարկման համար պետության հավաքական հզորությունն իր մեջ պետք է ներառի առավել ներկայացուցչական ցուցանիշների ելակետային մի համակարգ՝ կազմված նյութական հզորությունները, բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակը և ռազմաքաղաքական իրավիճակը բնութագրող հիմնական խումբ ցուցանիշներից:

⁹⁸ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Spykman J. Nicolas, *America's Strategy in World Politics*, New York, Harcourt, Brace, 1942, էջ 19; Morgenthau H.J., *In Defense of the National Interest*, New York, Knopf, 1951, էջ 175; Gulik L., *Administrative Reflection from World War II*, University of Alabama Press, 1948, էջ 18 - 20; Steinmetz S. Rudolf, նշվ. աշխ., էջ 227; Տե՛ս Fisher Guido, «Der Wehrwirtschaftliche Bedarf», *zeitschrift fur die Gesamte Staatswissenschaft*, XCIX (1939), էջ 519:

2.2.1. Նյութական հզորությունները բնութագրող ցուցանիշներ

Պետության նյութական հզորություններն առավելագույնս ամբողջականորեն արտացոլվում են ցուցանիշների այնպիսի հավաքածուով, որը բնութագրում է տրամադրության տակ գտնվող նյութական և մարդկային ռեսուրսների ողջ ամբողջությունը, պայմանավորում նրանց իրացման մակարդակը՝ կախված տնտեսական գործընթացներում հանրային աշխատանքի բաժանման բնույթից, արդյունաբերական հզորությունների տեղակայումից, արտաքին տնտեսական կապերից և ռեսուրսների ներգրավվածությունը կանխորոշող այլ գործոններից:

Կենսական կարևորության նման ցուցանիշների թվին են պատկանում *աշխարհագրական, տնտեսական և ազգաբնակչության* հիմնական բնութագրիչները:

Պետության հզորության բոլոր տարրերը այս կամ այն կերպ կապված են աշխարհագրական բնութագրի հետ: Պետության կարևորագույն և առաջնային ռեսուրսներից մեկը նրա աշխարհագրական դիրքն է, որի նշանակությունն ու կարևորությունը պայմանավորված է աշխարհագրական զանազան բնութագրիչներով՝ տարածքի մեծությամբ, ռելիեֆի բնույթով և այլ ցուցանիշներով: Աշխարհագրական բնութագրի ցուցանիշների շարքում առանձնանում է պետության տարածքը (հատկապես օգտագործելի հողային և ջրային տարածությունը), որն արտադրության և կենսապահովման նյութական հիմքն է: Պետության տարածքը, պայմանավորված ծավալային իր ընդգրկումությամբ, դեռ վաղուց դիտվել է որպես նրա հզորության հիմնական ռեսուրս: Պետության տարածքի չափը նրա աշխարհագրական ռելիեֆի մակերեսն է, որտեղ պետական իշխանության լիազորությունները բացառիկ բնույթ ունեն: Մեծ տարածք ունեցող պետությունները ենթադրաբար ունեն անվտանգության և զարգացման ավելի մեծ հնարավորություններ, քանի որ տարածքը որոշակիորեն ազդում է պետության անվտանգության և զարգացման ռազմավարության վրա, պայմանավորում ռազմական ներուժի անհրաժեշտ ծավալը, արտաքին քաղաքական ուղեգիծը: Օրինակ՝ պետության տարածական մեծությունն առանցքային դերակատարում ունեցավ երկրորդ աշխարհամարտում որհրդային Միության հաղթանակի գործում:

Սակայն հարկ է նշել, որ մեծ տարածքով պետություններն ունեն նաև

մեծ խնդիրներ՝ կապված երկրի անվտանգության ապահովման, տնտեսության զարգացման և այլ ոլորտների հետ⁹⁹:

Ռազմական ներուժի տեսանկյունից մեծամասշտաբ տարածքն այնպիսի գործոն է, որը հնարավորություն է ընձեռում պետության պոտենցիալ հզորություններին՝ իրական հզորությունների վերածվելիս ժամանակ շահել: Սակայն ժամանակակից տեխնոլոգիական և ինդուստրիալ զարգացումները նվազեցնում են տարածքի ընդգրկումության նշանակությունն ու աշխարհագրական տեղակայվածության կարևորությունը, քանի որ մերօրյա տեխնոլոգիական, հաղորդակցային միջոցները, բարձր ճշգրտության և հեռահարության զինտեխնիկան նվազագույնի են հասցնում ոչ նպաստավոր աշխարհագրական տեղակայվածության ոչ կառուցողական ազդեցությունը: Վերոնշյալի տիպական օրինակ է Իսրայելը, որը գտնվելով աշխարհագրական «բարդ» միջավայրում (չնայած որ ունի ծովափնյա եզր)՝ ինդուստրիալ, տեխնոլոգիական և ժամանակակից ռազմատեխնիկական զարգացվածության շնորհիվ կարողանում է նվազագույնի հասցնել բնական միջավայրի բացասական անդրադարձը:

Պետության տարածքի չափերից զատ քաղաքաաշխարհագրական նրա բնութագրի մեջ իրենց ուրույն տեղն ունեն տարածքի որակական բնութագրիչները՝ ձևաբանությունը, բնական պաշարները և այլ հատկանիշներ: Պետության տարածքի ձևաբանությունը նրա տարածքի երկրաչափական ձևի վերլուծությունն ու գնահատումն է: Որպես պետության տարածքի «լավագույն» ձև դիտվում է շրջանաձև կամ պետության աշխարհագրական կենտրոնից հարաբերականորեն համահավասար հեռավորության վրա գտնվող սահմաններ ունեցող տարածքը: Ոչ նպատակահարմար ձգվածության տարածք, այսինքն՝ հաղորդակցության տեսանկյունից երկար ձգվածություն, դժվարանցանելի հատվածներ ունեցող պետություններն առավել խոցելի են: Օրինակ, Վրաստանի և ՌԴ-ի համար՝ Կովկասյան լեռնաշղթան:

Հվ.Կովկասում Հայաստանը, աշխարհագրական տեսանկյունից գտնվելով ոչ այնքան նպաստավոր դիրքում և անմիջական ելք չունենալով դեպի ծով, իսկ Ջանգեզուրի հատվածում՝ դեպի արևելք և արևմուտք, ունի պետական տարածքի նեղ լայնություն: Հայաստանի նկատմամբ հարևան պետությունների համահեռավորությունը ՀՀ աշխարհագրական կենտրոնից, որը գտնվում է Գառնի գյուղի մոտակայքում, բավական մեծ է: Օրի-

⁹⁹ St'u Harris D. Chauncy, «Industrial Resources», in Abraham Bergson (ed), Soviet Economic Growth, Evanston, 11 Row, Peterson, 1953, էջ 164:

նակ՝ Իրանի հետ սահմանը բավական հեռու է Երևանից, մինչդեռ Թուրքիայի հետ սահմանը հակառակը՝ մոտավորապես 2/3-ով ավելի մոտ է:

Անկասկած աշխարհագրական միջավայրն այն հիմքն է, որի վրա կառուցվում է պետական զարգացման ողջ պրոյեկցիան: Սակայն ավելացնենք նաև, որ աշխարհագրական գործոնը շատ կարևոր է, բայց՝ ոչ վճռորոշ, քանզի պետության անվտանգության և զարգացման քաղաքականության արդյունավետ ընթացքը պայմանավորված է նաև տարաբնույթ այլ գործոններով՝ կազմակերպվածություն, հաշվենկատ պետական քաղաքականություն և այլն:

Ունենալով «բարդ» աշխարհագրություն (որն իր մի մասով պայմանավորում է տարածաշրջանում Հայաստանի աշխարհաքաղաքական, այսինքն տարածաշրջանային քաղաքական գործընթացների վրա ՀՀ-ի ազդեցության չափաբաժինը), Հայաստանը Հվ.Կովկասի այն միակ երկիրն է, որն աշխարհագրական իր տարածքում չունի խնդիրներ և վերահսկում է պետական իր ողջ տարածքը:

Մեր կարծիքով, «բարդ» աշխարհագրությունը մի կողմից խնդիրներ է ստեղծում տնտեսական և հաղորդակցային ոլորտներում, մյուս կողմից՝ նպաստում երկրի պաշտպանողունակությանը: Այս մասին է նշում նաև Գ.Նժդեհը. «Մեր բարձրավանդակն անառիկ է, մեր լեռները՝ մեկ-մեկ անխոցելի պատնեշներ»¹⁰⁰: Այսինքն, ՀՀ աշխարհագրական «ոչ նպաստավոր» նկարագիրը բացասական անդրադարձերից բացի, նաև կառուցողական ազդեցություն է ունենում ՀՀ պետական անվտանգության քաղաքականության կերտման վրա:

Տարածքի որակական բնորոշման հաջորդ ցուցանիշ է համարվում պետության տարածքի քաղաքաաշխարհագրական դիրքի և առկա բնական պաշարների ընդհանուր բնութագիրը: Ռազմավարական առումով կարևոր են այն տարածքները, որոնք ունեն քաղաքաաշխարհագրական նպաստավոր դիրք և ռազմավարական նշանակության բնական ռեսուրսներ: Պետության ռազմավարական կարևորության օգտակար հանածոներ ընդունված է համարել անառիկ աշխարհագրական ռեսուրսները՝ նավթը, գազը, ածուխը, մետաղական ռեսուրսները՝ տիտանը, քրոմը, կոբալտը, ալյումինը, պլատինը, ոսկին, ուրանը, ալմաստը, նիկելը և այլն: Ըստ բաղադրության և օգտագործման առանձնահատկությունների, հանքային ռեսուրսները բաժանվում են վառելիքային, մետաղային և ոչ մետաղային խմբերի: Հայաստանում երկրորդ և երրորդ խմբերը ներկայացված են ամենաբազմա-

¹⁰⁰ Տե՛ս . Նժդեհ, Հավատամք, «Հայ դատ», Եր., 1991, էջ 44:

զան տեսակներով, մինչդեռ առաջին խմբի՝ հանքային վառելիքի արդյունաբերական պաշարներ դեռևս հայտնաբերված չեն: Ռազմավարական տեսանկյունից ՀՀ-ում իրենցից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում պղնձամոլիբդենային, ոսկու, ալյումինային հումքի, երկաթի՝ գոյություն ունեցող և ուրանի հանքանյութի՝ նոր հետազոտվող հանքավայրերը:

Պետության քաղաքաաշխարհագրական հետազոտության հիմքը, մեր կարծիքով, նրա աշխարհագրական դիրքի վելուծությունն է, որը գնահատվում է նրա անվտանգության և զարգացման համար շահեկանության տեսանկյունից: Սովորաբար աշխարհագրական դիրքի գնահատումը կատարվում է ձևային չափանիշներով՝ պետության աշխարհագրական կոորդինատների համակարգով, սակայն առավել կարևոր է աշխարհագրական դիրքի, նրա ռազմավարական բնութագրիչների որակական գնահատականը: Որակական գնահատական ասելով հարկավոր է նկատի ունենալ աշխարհագրական միջավայրի՝ ռելիեֆի, տեղագրության, ջրային և կլիմայական ռեսուրսների, օգտակար հանածոների ծավալների գնահատականը: Դեռ վաղ պատմական ժամանակներից հայտնի էր, որ ռազմավարական առումով կարևոր են այն պետությունները, որոնք ելք ունեն դեպի ծով¹⁰¹, որը պետությանը քաղաքական ազդեցության առավել մեծ հնարավորություն է տալիս, իսկ ֆինանսական տեսանկյունից՝ առավել շահեկան դարձնում արտաքին աշխարհի հետ հարաբերվելը: Տնտեսաաշխարհագրական և աշխարհառազմավարական տեսանկյունից բացասական հանգամանք է ծովերից ՀՀ-ի հեռու գտնվելը: Հայաստանը Սև, Կասպից, Միջերկրական ծովերից և Պարսից ծոցից ուղիղ գծով գտնվում է համապատասխանաբար 160, 190, 750 և 1000 կմ հեռավորության վրա¹⁰²: Դեպի ծով ելքի բացակայությունը պետությանը հաճախ ստիպում է որոշակի կախման մեջ գտնվել ծովափնյա եզր ունեցող հարևան երկրներից, որը բացասաբար է անդրադառնում պետության անվտանգության և զարգացման վրա: Դեպի ծով ազատ ելքը պետությանը հնարավորություն է տալիս նաև կարևոր տարանցիկ դերակատարում ստանձնել (ինչպես, օրինակ, Վրաստանի պարագայում) դեպի ծով ելք չունեցող հարևան պետությունների և անգամ ողջ մակրոտարածաշրջանների համար՝ վերահսկելով վերջիններիս ապրանքաշրջանառությունը և արտաքին աշխարհի հետ ծովա-

¹⁰¹ Այս առթիվ ամերիկացի աշխարհաքաղաքագետ Ն.Սպիկմենը նշում էր, որ. «Սահմանային ավաներն գտնվում են «Rimland»-ը (անգլ. - եզր, սահման բառից), «ցամաքի» և «ջրի» կցման կետում առանցքային կարևորություն ունի: (Steven Spykman N., «Geography of the World», 1944, էջ 46):

¹⁰² Տես՝ Լ.Յ. Վալեսյան, «Չայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհաբանություն», Եր. 1988թ., էջ 11:

յին հաղորդակցությունը: Այսպես՝ Հվ.Կովկասում Վրաստանի տարանցիկ նշանակությունը հատկապես մեծացավ հայ-ադրբեջանական հակամարտության արդյունքում, երբ պաշտոնական Թբիլիսին, ելնելով հարևան երկրների նկատմամբ իր՝ հարաբերականորեն լոյալ վերաբերմունքից, Հայաստանի և Ադրբեջանի համար տարանցիկ մեծ կշիռ ձեռք բերեց:

Պետության քաղաքաաշխարհագրական բնութագրի համատեքստում մեծ նշանակություն ունի միջազգային և մակրոտարածաշրջանային հաղորդակցային տարանցիկ ուղիների նկատմամբ պետության հարևանությունը կամ, որ ավելի շահեկան է, նրանց վերահսկողությունը: Մեծ առավելություն ունեն այն երկրները, որոնք վերահսկում են նեղուցները. վերջիններս խաղաղ պայմաններում պետական բյուջեի ֆինանսական համալրման կայուն աղբյուր են, իսկ պատերազմի պայմաններում կարող են ազդել հարևան պետության քաղաքական գործընթացների վրա: Օրինակ՝ Թուրքիան վերահսկում է Բոսֆոր և Դարդանել նեղուցները, որոնք՝ որպես քաղաքական լծակ, հմտորեն օգտագործվում են ՌԴ-ի, միջերկրածովյան և սևծովյան մի շարք այլ երկրների նկատմամբ:

Պետության քաղաքաաշխարհագրական դիրքի ուսումնասիրման ժամանակ հետազոտվում են ոչ միայն նրա տարածքի չափերը, դեպի ծով ելքի հնարավորությունը, կարևոր առևտրային ուղիների նկատմամբ տեղակայվածությունը, միջազգային և/կամ մակրոտարածաշրջանային հաղորդակցային ուղիների նկատմամբ հարևանությունը, պետության տարածքի ձևաբանությունը, այլ նաև պետական տարածքի անկլավային կամ ոչ անկլավային բնույթը, հարևան պետությունների թվաքանակը, նրանց հետ հաղորդակցային ուղիների բնույթը, քաղաքական սահմանների այնպիսի յուրահատկությունները, ինչպիսիք են ձգվածությունը, ձևավորման տարիքը, ծագումնաբանությունը, պատմությունը, կայունությունը, թափանցելիությունը, վիճարկելիությունը: Նշյալ ցուցանիշներն առանցքային են պետության մակրոտարածաշրջանային դերի որոշման համար: Մեր կարծիքով, այդ ցուցանիշների շարքում առանձնակի կարևոր են տարածքային հավակնությունների առկայությունը կամ դրանց բացակայությունը, որը պայմանավորում է պետության նկատմամբ հարևան պետությունների և արտաքին աշխարհի վերաբերմունքը: Քաղաքաաշխարհագրական վերոնշյալ ցուցանիշների հավաքական և համակարգային հետազոտությունն իրական հնարավորություն է ընձեռում պետությանը հստակ վերլուծություն իրականացնել ազգային շահերի իրացման ներուժի այն հիմնարար բաղադրատարրերի շրջանում, ինչպիսին, օրինակ, պետության աշխարհագրական բնութագիրն է:

Պետության քաղաքաաշխարհագրական դիրքը, պետական տարածքի չափերն ու ձևաբանությունը, քաղաքական սահմաններն ու սահմանային տարածքների բնույթը, տարածքային հավակնությունները, պետության տարածքի աշխարհագրական ինտեգրման և ապաինտեգրման մակարդակը, տարածքային էվոլյուցիան և մի շարք այլ գործոններ պայմանավորում են հարևանների հետ նրա հարաբերությունների բնույթը, այլ կերպ ասած՝ նրա աշխարհաքաղաքական կշիռը, այսինքն արտաքին քաղաքականության աշխարհագրական հիմքերը: Ամերիկացի աշխարհաքաղաքագետ Պ.Թեյլորը նշում է, որ «աշխարհաքաղաքական կշիռ ասելով՝ հարկ է հասկանալ պետության կողմից իր ազգային շահերի սահմանման, ազդեցության ոլորտների վերաբաշխման, հարևանների հետ հարաբերությունների հաստատման, գլոբալ շահերի ուղեկցման գործընթացները»¹⁰³:

Պետության աշխարհաքաղաքական կշիռն ըստ էության այդ երկրի պատկերացումներն են աշխարհի և աշխարհում իր տեղի ու դերի վերաբերյալ:

Այս տեսանկյունից *մասնավորվելով Հայաստանի աշխարհաքաղաքական կշռի դիրարկման վրա՝ կարելի է եզրակացնել, որ իր պատմական զարգացման մի զգալի ժամանակահատվածում հայկական պետությունը, չլինելով «ծովային» պետություն, սակայն գրկնվելով երեք՝ Սև, Կասպից և Միջերկրական ծովերի միջև, ցամաքային բնական կամուրջի դերակատարում է ունեցել, որից էլ ածանցվել է նրա ռազմավարական տեղակայվածության նկատմամբ հարևան պետությունների հետաքրքրությունը: Ներկայումս, կորցնելով իր երբեմնի տարածքի մեծ մասը, Հայաստանն իր փոքր տարածքով անգամ չի կորցրել մակրոտարածաշրջանային խաչմերուկի իր գործառույթը «Հյուսիս-Հարավ» և «Արևելք-Արևմուտք» ուղեգծերի խաչման տեսանկյունից, որը կարևոր դերակատարում ունի մակրոտարածաշրջանային քաղաքական և տնտեսական ինտեգրման ծրագրերի գործարկման առումով: Նշյալ գործառույթից էլ մի զգալի մասով ածանցվում է ՀՀ արտաքին քաղաքականությունը և համաշխարհային ու տարածաշրջանային տերությունների հետ հարաբերությունների հաստատման բնույթը:*

Հարկ է նշել նաև, որ Հայաստանի աշխարհագրական բնութագրի և պետության հզորության ներկայակալի մյուս տարրերի հետագոտման և Հայաստանի վրա դրանց տեղայնացման վերաբերյալ մոտեցումները խիստ ընդգրկուն են, ուստի այսօրինակ աշխատանքի շրջանակներում դրանց մանրակրկիտ անդրադարձը հնարավոր չէ:

¹⁰³ Stū Teylor P., Political geography of the 20th century, 1993, էջ 35 - 36:

Պետության հավաքական հզորության նյութական ցուցանիշների շարքում առանցքային դերակատարում ունեն տնտեսական հզորությունները: Ժամանակային առավել լայն հատվածում տնտեսական հզորությունները բնութագրող առանձնակի կարևոր ցուցանիշ է պետության համախառն ազգային արդյունքը(ՀԱԱ), որը ազգաբնակչության կողմից ստեղծված և տվյալ պահին գոյություն ունեցող նյութական օբյեկտների և արտադրանքի ամբողջությունն է: ՀԱԱ-ը բնութագրվում է գոյություն ունեցող նյութական ռեսուրսներով, որոնք կազմում են պետության արտադրական և ոչ արտադրական հիմնական ֆոնդերը, շրջանառման ֆոնդերը և արտադրության մեջ ներառված բնական ռեսուրսները: Ներկայումս ՀԱԱ-ն տարբեր երկրներում հաշվարկվում է տարբեր կերպ: Սակայն 1950-ականներից առավել մեծ տարածում է ստացել անընդմեջ գույքագրման մեթոդը, որն օգտագործում է երկարաժամկետ միջակայքում ընթացիկ վիճակագրության տվյալների համեմատությունը՝ արձանագրելով, որ ՀԱԱ-ն սովորաբար 3-5 անգամ մեծ է համախառն ներքին արդյունքից (ՀՆԱ-ից):

Պետության տնտեսական հզորությունների որոշակիացման ժամանակ կարևորություն ունի տնտեսական ազատ այն միջոցների առկայությունը, որոնց հնարավոր է օգտագործել պետության անվտանգության և կենսապահովման կարիքների համար: ՀԱԱ-ի և նրա բաղադրատարրերի հետազոտումը հնարավորություն է տալիս որոշել արտադրության ծավալների այն ավելցուկը, որը մնում է քաղաքացիների նվազագույն կենսապահովումից հետո: Սովորաբար ՀԱԱ-ն կազմվում է ծախսերի առանձին տեսակներից, որոնք ցույց են տալիս՝ ինչպես է օգտագործվում այդ արտադրանքը: Ընդհանուր առմամբ ՀԱԱ-ն ազգաբնակչության սպառման ծախսերի, երկրի ներսում մասնավոր ներդրումների ընդհանուր ծավալի, ապրանքների և ծառայությունների պետական գնումների, արտերկրում մաքուր ներդրումների հանրագումարն է: Նշյալ կառուցատարրերի կառուցվածքային բաշխումը պայմաններ է ստեղծում պատկերացում կազմելու տնտեսական ռեսուրսների աղբյուրների մասին: Հարկ ենք համարում նշել, որ այս տարրերի հարաբերությունը և համադրությունը հնարավորություն է տալիս վերհանել տնտեսական ռեսուրսների այն ավելցուկը, որը կարող է օգտագործվել ազգային անվտանգության և ազգային շահերի ապահովման համար:

Նշյալը հատկապես սուր է դրված Հայաստանի համար, քանզի, չունենալով առանձնակի կարևորության բնական պաշարներ և ԽՍՀՄ-ից ժառանգած ժամանակակից չափանիշներին համապատասխանող արտադ-

րական ֆոնդեր, Հայաստանը տնտեսական կառավարման արդյունավետ քաղաքականության կերտման խնդրի լուծման միջոցով անվտանգության բարձր սահմանագծի սպասարկման համար անհրաժեշտ միջոցներ հայթայթելու գերխնդիր ունի: Մեր կարծիքով, այս պայմաններում տնտեսագիտական և մաթեմատիկական հաշվառման մեթոդաբանության կիրառման միջոցով անվտանգության կարիքների սպասարկման հնարավորություն կստեղծի «ՀԱԱ+ արտադրական ապրանքներ – ազգաբնակչության սպառման նվազագույն մակարդակ – երկրում մասնավոր ներդրումների նվազագույն ծավալ – պետական ոչ ռազմական բնույթի գնումների նվազագույն ծավալ –/+ արտերկրում որոշակի ներդրումների գումարի փոփոխություն –/+ աշխատանքի արտադրողականության մակարդակի փոփոխություն = Տնրեսական ազատ մնացորդ», որը կարելի է օգտագործել ազգային անվտանգության սպասարկման համար:

Ժամանակային կոնկրետ պայմաններում պետության տնտեսական հնարավորությունները բնութագրող առավել կոնկրետ ցուցանիշը պետության համախառն ներքին արդյունքն է: Պետությունում առկա օբյեկտիվ տնտեսական հնարավորություններն ամեն պահ կարող են օգտագործվել, այսինքն իրենց պոտենցիալ կարգավիճակից վերածվել իրականի, որն իր հերթին կախված է տարբեր գործոններից, որոնք չեն կարող չանդրադառնալ արտադրության վերջնարդյունքի վրա: ՀՆԱ-ի ծավալը ճշգրտության այս կամ այն աստիճանով բնութագրում է տնտեսության իրական վիճակը տվյալ պահին: Այդ պատճառով է, որ ՀՆԱ-ն բնութագրում է պետության տնտեսական առկա հզորությունները, այն դեպքում, երբ ՀԱԱ-ն ավելի շուտ ներկայացնում է տնտեսական ներուժը: Ի տարբերություն ՀԱԱ-ի, ՀՆԱ-ն ժամանակային կոնկրետ միջակայքում իր մեջ հանրագումարում է տվյալ պետության տարածքում արտադրական միջոցների և ռեսուրսների հավաքական ամբողջությունը:

Հայաստանի (և ոչ միայն) տնտեսական հզորության գործակցի վերաբերյալ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀԱԱ-ից և ՀՆԱ-ից զատ տնտեսական հզորության հստակեցման հիմք են ծառայում ոչ միայն զուտ տնտեսական, ֆինանսական ցուցանիշները՝ ՀԱԱ-ի/ՀՆԱ-ի ընդհանուր ծավալը, ՀՆԱ-ի ծավալը 1 շնչի հաշվով, ՀՆԱ-ի ծավալը 1 շնչի հաշվով նույն ցուցանիշի համաշխարհային միջինի համեմատությամբ, տարեկան սղաճի մակարդակը, ՀՆԱ-ում բյուջեի պակասորդի չափը (%), ոսկու և դրամական պահուստների ծավալը և այլն, այլ նաև սոցիալ-ժողովրդագրական, գիտակրթական ու ռազմական ոլորտների ցուցանիշները՝ ազգաբնակչության կյանքի միջին տևողությունը, ՀՆԱ-

ում գիտության, կրթության և պաշտպանական ծախսերի չափաբաժինը (%-ով) և այլն:

ՀՀ տնտեսական հզորության որոշակիացման յուրահատուկ ցուցանիշ է հայկական սփյուռքի գործունը, որը պետական առանձնակի կարևորության կարիքները հոգալու նպատակով նյութական մեծ աջակցություն է ցուցաբերում ինչպես հայրենաբնակ հայությանը, այնպես էլ ՀՀ-ի և ԼՂՀ-ի կառավարություններին:

Տնտեսական հզորությունների բնութագիրը բավական ընդգրկուն է և առանձին հետազոտության նյութ է, սակայն հարկ է նշել, որ հարավկովկասյան հաղորդակցային իրողությունների ներկայիս պայմաններում ՀՀ-ն որդեգրել է տնտեսական հզորությունների զարգացման ամենից արդյունավետ և շահեկան մոտեցումը՝ սփյուռքի տնտեսական ներուժի օգտագործումից զատ, զարգացնել տեղափոխման (լոգիստիկ) նվազագույն ծախսեր պահանջող և առավելագույնս գիտատար ոլորտները:

Ինչպես տնտեսական հզորությունների շարքում, այնպես էլ պետության նյութական հզորությունների ներկայանակում առանձնակի կարևոր դերակատարում ունեն մարդկային ռեսուրսները, որոնք աշխարհագրական պայմանների տնտեսական կիրարկման սուբյեկտներն են և ապահովում են նյութական հզորությունների եռամիասնական համակարգի ամբողջականությունը: Պետության անվտանգության ռեսուրսային ներուժի մեջ առանցքային դեր ու նշանակություն ունի ազգաբնակչությունը, որի քանակական և որակական հատկանիշները պայմանավորում են պետության անվտանգության ապահովման օրակարգն ու զարգացման տրամաբանությունը: Ազգաբնակչությունը հավաքական հզորությունների տեսանկյունից ներկայանում է որպես անվտանգության ապահովման և աշխատանքային հիմնական ռեսուրս: Ոստի հասկանալի է, թե երկրի տնտեսության, արտադրական ներուժի գնահատման համար որքան մեծ նշանակություն ունի աշխատանքային ռեսուրսների քանակական և որակական ցուցանիշների ուսումնասիրումը: Պետության աշխատանքային ռեսուրսները բնակչության աշխատունակ այն մասերն են, որոնք բաղկացած են աշխատանքային տարիքի, այսինքն՝ 16-65(60) տարեկան տղամարդկանցից և կանանցից (առանց հաշմանդամների), ինչպես նաև ոչ աշխատանքային տարիքի (անչափահասների և թոշակային տարիքի) այն անձանցից, որոնք զբաղված են հանրօգուտ գործունեությամբ:

Պետության ազգաբնակչության ժողովրդագրական հատկանիշների վերլուծությունը գնահատում է նաև պետության՝ որպես միասնական համակարգի կենսունակության և արդյունավետ գործառնման իրական հնարավորությունները: Երկրի ժողովրդագրական իրավիճակը պետության սոցիալ-տնտեսական, քաղաքական, էթնիկ բազմազանության կարևորագույն ցուցանիշներից է, որը պետք է դիտարկվի երկրի ազգային շահերի համատեքստում: Պետության ազգային շահերի սահմանումն ու իրացումը ժողովրդագրական իրավիճակի և այն վտանգող սպառնալիքների երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գնահատման անհրաժեշտություն են ստեղծում:

Ազգային անվտանգության շահերից ելնելով՝ կարելի է տարանջատել պետությանը սպառնացող ժողովրդագրական վտանգների հետևյալ հիմնական խմբերը.

- երկրի բնակչության թվաքանակի երկարաժամկետ նվազման միտումներ,
 - ազգաբնակչության մահացության ցուցանիշի գերակայում ծնելիության ցուցանիշի նկատմամբ, որի արդյունքում բնակչության բնական աճի միտումները նվազում են,
 - ժողովրդագրական ծանրաբեռնվածության մեծացում, այսինքն՝ գործունակության տարիքից ցածր և բարձր տարիք ունեցող անձանց թվի աճ, որը գնահատվում է գործունակ 1000 մարդու կտրվածքով,
 - ծնելիության ցուցանիշի նվազում, որը ենթադրում է ֆերցիլային՝ սերնդաշարունակության, տարիքի մեկ կնոջ հաշվով 2,15 երեխայից (կամ 1000 երեխա/տարի հաշվով 10 երեխայից) պակաս ծնելիության միտումներ,
 - մահացության ցուցանիշի աճ (8 մարդուց ավել 1000 մարդ/տարի հաշվով),
 - կանանց թվաքանակի գերակայում տղամարդկանց թվաքանակի նկատմամբ (բնակչության՝ հատկապես գործունակ տարիքային խմբերի կտրվածքով),
 - երկրի զինապարտ ազգաբնակչության թվաքանակի այնպիսի նվազում, որը չի ապահովում պետության զինված ուժերի բնականոն գործառնությունը պատերազմական և խաղաղ պայմաններում:
- Վերոնշյալ ցուցանիշներն առանձնակի կարևոր են հատկապես պետության ժողովրդագրական կենսունակության ապահովման տեսանկյունից, որի որոշակիությունը պարզելու համար փորձագիտական տարբեր շրջանակների կողմից մշակվել է ժողովրդագրության ոլորտում սահմանային ցուցանիշների հաշվառման յուրահատուկ մեթոդաբանություն¹⁰⁴:

104 Стів Экономическая Безопасность России: Общий курс: Учебник / Под ред. Сенчагова В.К.- Дело, М. 2005, էջ 733:

Պետության և հատկապես հայկական պետության մարդկային ներուժի քանակական, որակական, ժողովրդագրական ցուցանիշների հիմքով բնութագրման ժամանակ հարկ է հաշվի առնել մի քանի կարևոր գործոններ.

1. Հայ ազգի և պետության գոյության կարևոր գործոն է աշխարհասփյուռ հայությունը, որը՝ որպես հայ ազգի օրգանական մաս, իր առանցքային դերակատարումն ունի ՀՀ ազգային շահերի և անվտանգության ապահովման հզորությունների համակարգում՝ իր մասով ամրապնդելով այդ համակարգի ամբողջականությունը և արդյունավետությունը: Այս համատեքստում Հայաստանի պաշտոնական քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ, մեր կարծիքով, պետք է ածանցվի հայապահպանության և սփյուռքի կառույցներին տարաբնույթ օգնության տրամադրման հրամայականից: «Իսկ սփյուռքի զարգացման ռազմավարությունն, - ինչպես նշում է Ա.Այվազյանը, - կարող է ունենալ մի ելակետ՝ Հայաստանակենտրոնությունը, այսինքն Հայաստանի հզորացմանն ուղղված գործունեությունը»¹⁰⁵:

2. ՀՀ ազգաբնակչության ժողովրդագրական բնութագրի մեջ առանձնակի կարևոր գործոն է նաև այն, որ Հայաստանն էթնիկ կազմի տեսանկյունից առավելապես միատարր երկիր է, ուստի ազգային շահերի ձևորոշման ժամանակ էթնիկ բազմազանության տարաբնույթ շահերի սպասարկման և դրանից հետևող բարդությունների հետ, ընդհանուր առմամբ, առնչվելու խնդիր չունի:

Շարադրանքից հանգում ենք այն եզրակացության, որ պետության հավաքական հզորության հանրագումարի նյութական բաղադրատարրը լիարժեք տեսք է ստանում միայն աշխարհագրական պայմանների, տնտեսական հզորությունների և ազգաբնակչության բնութագրիչների փոխգործակցության պայմաններում:

2.2.2 Բարոյահոգեբանական պատրաստվածությունը բնութագրող ցուցանիշներ

Աշխարհագրական պայմանները, տնտեսական հզորությունները և ազգաբնակչության քանակական և որակական ցուցանիշները, որոնք անհրաժեշտ են պետությանը ազգային անվտանգության ապահովման և ազգային շահերի իրացման ժամանակ, որոշակիանում են գործոնների այն-

¹⁰⁵ Տես Այվազյան Ա., Հիմնահարցեր Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի: Մաս Ա, Եր., 2002, էջ 188:

պիսի խմբի միջոցով, որն իր մեջ ներառում է տվյալ ազգային հանրության բնորոշ «զանգվածային անհատի» հատկանիշային բնութագիրը, և ազգային շահերի ու ազգային անվտանգության ապահովման նպատակով պատերազմ վարելու բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակը: Ցուցանիշների նշյալ խումբը, փաստորեն, ամբողջացնում է ազգի հոգևոր ներաշխարհի ու հոգեկերտվածքի նախ՝ ընդհանուր գծերը, հատկանիշները, ապա նաև՝ յուրահատկությունները, ազգ-հանրության ներքին կենսունակության և արտաքին աշխարհի ընկալման աստիճանը պայմանավորող պատմական և հոգեբանական գործոնները: Նման պարագայում կարևոր է պարզաբանել ազգ-հանրության հոգեբանական իրական վիճակը՝ ազգի «զանգվածային անհատի» առավել բնորոշ բնութագրիչները համեմատելով «ազգային կատարելատիպերի» վերաբերյալ պատկերացումների հետ, վերհանել նրանց միջև տարբերություններն ու նմանությունները՝ հստակեցնելով խզման չափը: Սոցիալ-մշակութային և հոգևոր հասկացություն «զանգվածային անհատը» ոչ թե մշակութային ուտոպիստական կատարելատիպ է, այլ՝ էթնոսոցիալական հանրության պատկանող անհատին բնորոշող այնպիսի տիպ, որը մյուս տիպերի նկատմամբ գերակայում է հավաքական իր ցուցանիշներով և սոցիալական կշռով: Ազգի «զանգվածային անհատ» անվանում են նրա՝ «ազգային բնավորության» կրող հանրության տեսական տիպը, որն ազգի ներկայացուցիչների կողմից իրադրություններին հակադրելու գծերի և հակումների ամբողջություն է: Հիմնական կարելի է համարել այն անհատին, որն առավելագույնս է արտահայտում տվյալ մշակության էական արժեքները: Հենց հիմնական անհատի տիպին բնորոշ հատկանիշներից է ածանցվում ազգային հոգեկերտվածքը, որը, իր հիմքում ունենալով առավել կայուն և դարեր շարունակ չփոփոխվող հատկանիշների համակցություն, հատկանիշների պատմականորեն փոփոխվող դինամիկ համակարգ է:

Այն հաճախ ինչ-որ առումով նույնացնում են ազգի «ԵՍ»-ի հայեցակարգին, որն ունի «հարաբերականորեն կայուն բնույթ»¹⁰⁶ և որի կայացման վրա ուղղակի ազդեցություն են ունենում տարաբնույթ և բազմապիսի գործոններ, պատմական իրադարձություններ, գործընթացներ:

Հոգեկերտվածքային հատկանիշները և զանգվածային անհատի բնութագրիչները, պատմական կարծրատիպերի հետ հանրագումարում պայմանավորում են արտակարգ իրավիճակներում և հատկապես ռազմական հակամարտության պայմաններում ազգ-հանրության բարոյահոգեբանա-

¹⁰⁶ Տե՛ս Նալչաջյան Ա., նշվ. աշխ., էջ 343:

կան պատրաստվածության մակարդակը: Մեր կարծիքով, արտակարգ իրավիճակն առավել օբյեկտիվ գնահատական և նկարագիր է տալիս ազգ-հանրության հնարավորությունների և պետության նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, քանզի հատկապես պատերազմական կամ արտակարգ այլ իրավիճակներում են երևում պետության հավաքական հզորության սահմանային հնարավորությունները: Նման իրավիճակում ռեսուրսների գերլարման ունակությունը յուրահատուկ երաշխիք է խաղաղ պայմաններում ազգային անվտանգության ապահովման և ազգային շահերի արդյունավետ քաղաքականության իրականացման համար:

Հայաստանի դեպքում ազգաբնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության բարձր մակարդակի մասին, մեր կարծիքով, փաստում են 1988թ. երկրաշարժից հետո և արցախյան ազատագրական պայքարի մարտերում հայ ազգաբնակչության ցուցաբերած տոկոսությունն ու կամային որակները, որոնք հետագայում հիմք դարձան նորանկախ հանրապետությունում ներքին և արտաքին մի շարք մարտահրավերների՝ ազգաբնակչության կողմից արժանավայել դիմակայելու համար:

Այս պարագայում տեղին է հիշել Է.Հարությունյանի այն միտքը, թե «ազգի կամային ուղղվածությունը կանխորոշում է նրա կենսափոխակերպության և կյանքի մշակույթի բովանդակությունը»¹⁰⁷: Այսպիսով, պետության հավաքական հզորությունը ներառում է տարբեր միջոցներ և հնարավորություններ, այդ թվում ազգաբնակչության կամային հատկանիշները, որոնք անհրաժեշտ են ռազմական մեխանիզմներով սեփական ազգային շահերը սպասարկելու համար:

Պատերազմական պայմաններում երկրում գերիշխող տրամադրությունների բարդ համակարգը պայմանավորում է մարդկային ռեսուրսների հավաքագրման մակարդակը, պարբերականությունը և մեթոդները: Հավաքագրման պայմաններում՝ որպես հոգեբանական պատրաստվածության ցուցանիշ, հանդես է գալիս նախաձեռնողականության և ոգեղենության գործոնը:

Պատմականորեն հոգևոր ներուժի թերագնահատումը հանգեցրել է նրան, որ թերագնահատվել է ազգի «կամքը առ հաղթանակը, կամքը առ զոյապահպանումը»: Նշյալն ընդգծված կերպով դրսևորվել է հատկապես հայ ազգի պատմական շարժընթացի մի շարք դրվագներում (428թ. Արշակունիների անկում, 1045թ. Անիի անկում, 1918թ. Կարսի բերդի հանձնում և այլն), երբ սեփական ուժերի նկատմամբ անվստահությունը հանգեցրել է

¹⁰⁷ Տե՛ս Հարությունյան Է., նշվ. աշխ., էջ 20:

պարտության: Գ.Նժդեհն այս առթիվ նշում է. «Մեր պարտությունները հոգեբանական էին, պարտվեցինք ոչ թե նրա համար, որ թվապես ու տեխնիկապես թույլ էինք, այլ որովհետև այդպիսին էինք հոգեպես»¹⁰⁸: Շարունակելով իր այս միտքը՝ նա ընդգծում է. «Վաղը հաղթելու է նա, ով մինչ այդ վաղն իր մեջ կտանի հաղթանակը»¹⁰⁹: Նշյալ դրույթներն իրենց հաստատումը գտան դարաբաղյան ազատագրման մարտերում, երբ տեխնիկապես, նյութապես և մարդկային թվաքանակով հակառակորդին զիջող հայ ազատագրական ուժերն այդ հակառակորդին հաղթեցին իրենց հոգիներում, հաղթեցին առաջին հերթին բարոյապես, ինչն իր արտացոլումը գտավ ռազմադաշտում:

Վստահորեն կարելի է արձանագրել, որ պետության ռազմավարական հզորությունների ավելացումը մի զգալի չափով կախված է ազգաբնակչության պատրաստվածությունից և ունակությունից, պատերազմական նպատակների համար գործել առավել շատ և սպառել առավել քիչ: Մեր կարծիքով, նման պայմաններում կենսագործելու մարդկանց և պետության ունակություններն այն հիմնական ցուցանիշն են, որոնք բնութագրում են պատերազմին պետության պատրաստվածության մակարդակը: Անգամ եթե պետությունը տիրապետում է մեծածավալ տնտեսական ռեսուրսների, իսկ պատերազմ վարելու ազգաբնակչության բարոյահոգեբանական պատրաստվածությունը ցածր է, ապա նման պարագայում պետությունն այնուամենայնիվ զուրկ կլինի ռազմավարական հզորությունից: Պայմանները, որ կանխորոշում են հոգեբանական պատրաստվածությունը, իրենցից ներկայացնում են միջավայրային գործոնների այնպիսի ամբողջություն, որն արմատավորվելով հանրային կարգում, քաղաքական համակարգում և մշակույթում, ստեղծում է պատերազմի պատրաստվածության որոշակի մակարդակ՝ իր մասին հիշեցնելով ռազմական իրավիճակներում: Օրինակ՝ հայ ազգի պատմական շարժընթացը փաստում է, որ գտնվելով, մեղմ ասած, ոչ բարիդրացիական միջավայրում, նա պարբերաբար գոյության և ինքնության պահպանման գերխնդիր է ունեցել, որի հետևանք է հանդիսացել հայ ժողովրդի մեջ անվտանգության ապահովման անհրաժեշտության սուր զգացումի ձևավորումը: Հայ ազգի հոգեբանական այն ընկալումը, թե ինքը կենսագործում է աներևութական ռազմաճակատի առաջնային գծում, ստիպում է նրան միշտ պատրաստ լինել ազգի և նրա քաղաքական կամքի դրսևորում հանդիսացող պետությանը

¹⁰⁸ Տե՛ս Գ. Նժդեհ., նշվ. աշխ., էջ 48:

¹⁰⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 64:

նետված մարտահրավերների հակադարձմանը: Ներկայումս ՀՀ առջև ծառայած այսօրինակ մարտահրավերների շարքում, մեր կարծիքով, ընդգծված կերպով տարբերվում է շփման գծում պատերազմական գործողությունների հնարավոր վերսկսման հանգամանքը:

Պատերազմի հոգեբանական պատրաստվածությունը կոնկրետ իրավիճակի նկատմամբ յուրահատուկ արձագանք է, արձագանք՝ առանձին անհատների՝ նպատակների, շահերին վերաբերող և պատերազմից ակնկալվող արդյունքների նկատմամբ: Ուստի բացահայտել՝ ինչպիսին կլինի այդ արձագանքը կոնկրետ պայմաններում, հնարավոր է միայն կոնկրետ գործողությունների միջոցով: Նման իրավիճակում ազգաբնակչության պատերազմելու «ոգին» կարող է փոփոխվել՝ առանձին մարդկանց վարքում արտացոլված պատրաստվածության աստիճանի դրդապատճառներին համապատասխան: Որքան շատ օգուտ կարող են ակնկալել մարդիկ պատերազմի հաղթական ավարտից, այնքան բարձր է նրանց բարոյական պատրաստվածության մակարդակը: Եթե պատերազմական պայմաններում մարդիկ կարողանան ինչ-որ չափով հրաժարվել անհատական շահերից, որոնք խոչընդոտում են ուժերի լիարժեք հավաքագրմանը՝ փոխարինելով այն առավել բարձր մակարդակի՝ հավաքագրման նպատակներով և շահերով, ապա պատերազմի պատրաստվածության բարոյահոգեբանական մակարդակը բավարար կլինի այն իրականացնելու համար:

Պատերազմին հանրության՝ ազդեցիկ խմբերի բարոյական պատրաստվածությունն ընդհանուր առմամբ կախված է կառավարման ձևից, հանրության մեջ տեղի ունեցող քաղաքական գործընթացների բնույթից և քաղաքական ինստիտուտների կողմից դավանվող հոգևոր արժեքներից: Մեր կարծիքով, տարբեր խմբերի, անհատների կամ սոցիալական ինստիտուտների շահերի և նպատակների տարբերությունն անխուսափելի է, քանի որ այդ շահերն ունեն տարբեր հիմքեր: Ընդ որում՝ ոչ բոլոր խմբերը, առանձին անհատները կամ սոցիալական ինստիտուտներն են նույնական դեր կատարում պատերազմի նկատմամբ հանրության շարքերում վերաբերմունքի ձևավորման հարցում: Որքան նրանք մեծ ազդեցություն ունեն պետության քաղաքականության կամ սոցիալական տարբեր շերտերի և խմբերի բարոյական պատրաստվածության վրա, այնքան պատերազմի նկատմամբ նրանց դիրքորոշումը կարևոր դերակատարում կունենա:

Կենտրոնանալով պետության ռազմավարական հզորությունների հիմնական տարրերի, ինչպես նաև պատերազմ վարելու ազգաբնակչության հոգեբանական պատրաստվածության վրա՝ պետք է հիշել, որ տարբեր իրավիճակներում այդ տարրերը կարող են համատեղվել տարբեր կերպ՝

առավել կամ քիչ արդյունավետ: Հայաստանի պարագայում 1980-ականների սկզբին նման առաքելություն էր ստանձնել մտավորականությունը և ինտելեկտուալ ընտրանին, որը ոգեշնչում և ուղղորդում էր ներքաղաքական փոփոխությունները և դարաբաղյան ազատագրման մարտերին հանրության ակտիվ շերտերի մասնակցությունը:

Եթե պատերազմին հոգեբանական պատրաստվածությունը ընդհանուր հասկացություն է և ներառում է ռազմավարական հզորությունների բավական տարբեր կողմեր, ապա նրա գնահատումը հանգում է ռազմական այն ջանքերի մեծության կանխատեսմանը, որոնք ի վիճակի է պատերազմի այս կամ այն պայմաններում կիրառել պետության ղեկավարությունը:

Պատերազմի հոգեբանական պատրաստվածության, կազմակերպչական ղեկավարման և տնտեսական հնարավորությունների միջև փոխադարձ կապերի հստակեցումը մեծ դերակատարում ունի ռազմավարական հզորությունների ընկալման տեսանկյունից: Այսպես՝ հոգեբանական պատրաստվածության մակարդակը մեծ ազդեցություն է ունենում տնտեսական ռեսուրսների հավաքագրման և կազմակերպչական ղեկավարման բնույթի վրա: Նշյալ գործոնների փոխկախվածությունը բավական բարդ է: Պատերազմի հոգեբանական պատրաստվածությունն իր մի մասով կարող է կախված լինել քաղաքացիների կողմից հնարավոր հաղթանակի կանխատեսման հեռանկարներից, որոնք իրենց հերթին կախված են պետության արդյունավետ տնտեսական և կազմակերպչական գործողություններից, մյուս մասով՝ ազգաբնակչության բարոյահոգեբանական հասունության մակարդակից:

ՀՀ-ի պարագայում ազգաբնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության բարձր մակարդակն ավանդաբար նույնացվել է գոյապահպանման կենսական հրամայականի հետ, որը հիմնականում թելադրվել և ներկայումս էլ թելադրվում է միջավայրային և պատմական գործոններով: Հայ ազգը գործնականում ապացուցել է պատերազմին՝ իր բարոյահոգեբանական պատրաստվածության բարձր մակարդակը՝ հաղթանակ տանելով դարաբաղյան հակամարտության ռազմական փուլում:

Այսպիսով, ազգի հզորությունն առավել ակնհայտորեն կախված է պատերազմի նկատմամբ ընդհանուր վերաբերմունքից, որը համարժեք է քաղաքացիների շահերի համեմատությամբ պատերազմում հնարավոր հաղթանակի նշանակության գերակայությանը:

2.2.3. Ռազմաքաղաքական իրավիճակը բնութագրող ցուցանիշներ

Պետության հավաքական հզորության համակարգում նյութական հզորությունները և բարոյահոգեբանական պատրաստվածության ցուցանիշների կենսունակության և զարգացածության բարձր մակարդակը պայմաններ են ստեղծում պետության հավաքական հզորության համակարգի քաղաքական և ռազմաքաղաքական տարրերի գործառնական արդյունավետության համար, որոնք պետության տարածքային ամբողջականության անվտանգության պահպանման, տնտեսական հզորությունների զարգացման, ազգաբնակչության ֆիզիկական անվտանգության և հոգևոր բավարարման միջավայրի ապահովման հիմնական երաշխավորն են:

Հզորության քաղաքական բաղադրատարրը կարևորագույն դերակատարում ունի ինչպես պետական անվտանգության ապահովման, այնպես էլ ազգային շահերի քաղաքականության իրականացման հարցում: Պետական հավաքական հզորության քաղաքական բաղադրատարրն իր մեջ ներառում է պետության քաղաքական զարգացումների ողջ ներկայականը՝ կառավարման ձևը, քաղաքական վարչակարգի բնույթը և քաղաքական հարաբերությունների ընդհանուր միտումները:

Ազգային շահի իրացման պետության հավաքական ներուժի ցուցանիշների շարքում առանձնակի կարևոր դեր և նշանակություն ունեն ներքաղաքական, արտաքին քաղաքական և ռազմաքաղաքական մի շարք ցուցանիշներ.

- պետության ներքաղաքական կայունության մակարդակը և քաղաքական վարչակարգի բնույթը,

- պետական իշխանության լեգիտիմության և իշխանության գործունեության հանրային աջակցության աստիճանը (ի դեպ, ժամանակակից աշխարհում ինքնիշխանությունն այլևս չի դիտվում որպես պետական իշխանության մարմինների միջազգային լեգիտիմության միակ երաշխիք¹¹⁰: Լեգիտիմության դերակատարման նման փոփոխությունն արտացոլում է «հումանիտար ներթափանցում» հասկացությունը, որը ձևակերպվել է Հ. Հրոցիուսի կողմից 17-րդ դարում և նշանակել է «արտերկրյա քաղաքացիների իրավունքների պաշտպանություն բռնապետական վարչակարգերի պայմաններում»¹¹¹),

¹¹⁰ St'u Ellsworth R.F., Simes P.K., Imposing our values' by Forcell, The Washington Post, 1999. December 29, էջ 27:

¹¹¹ St'u Held D., Mc Grew A., Goldblat D., Parraton J., Global Transformations. Cambridge: Policy Press, 1999, էջ 65:

- քաղաքական գործընթացների ժողովրդավարացման աստիճանը և ներքաղաքական սուբյեկտների գործունեության բնույթն ու հիմնական բնութագրիչները,

- «պետական իշխանության մարմիններ - ընդդիմություն» հարաբերման միջակայքը,

- ազգաբնակչության քաղաքական մասնակցության աստիճանը և քաղաքական ընտրանու ձևավորման հիմնական միտումները,

- քաղաքական առաջնորդության ինստիտուտի կայացվածության և քաղաքացիական հասարակության ակտիվության մակարդակը,

- պետության դիվանագիտական ներուժը, արտաքին քաղաքական գերատեսչության կադրերի որակական մակարդակը և պետության քաղաքական ղեկավարության արտաքին քաղաքական հեղինակությունը,

- պետության արտաքին քաղաքական կշիռն ու ներուժի գնահատման արտաքին արձագանքը,

- հարևան պետությունների, մակրոտարածաշրջանային և համաշխարհային ուժային կենտրոնների հետ հարաբերությունների բնույթն ու որակը,

- երկկողմ կամ բազմակողմ դաշնակցային հարաբերությունները, նրանց խորությունն ու համաչափությունը,

- հարաբերությունները տարածաշրջանային և համաշխարհային ռազմաքաղաքական դաշինքների հետ:

Ներկայացվող ցուցանիշները պետության հավաքական հզորության քաղաքական բաղադրատարրի կարողունակության մակարդակը ձևորոշում են իրենց ամբողջության մեջ:

Հայաստանի պարագայում, մեր կարծիքով, վերոնշյալ ցուցանիշներից ներքաղաքական կայունությունն առանցքային նշանակություն ունի, քանզի գտնվելով «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» իրավիճակում Ադրբեյջանի և դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում Թուրքիայի հետ, Հայաստանը չի կարող իրեն «թույլ տալ» ներքաղաքական անկայունություն և քաղաքական ճգնաժամեր: Քաղաքական իրողությունների հրամայականներին համապատասխան՝ Հայաստանը փորձում է որոշակի հավասարակշռություն ապահովել ինչպես արտաքին քաղաքական, այնպես էլ ռազմաքաղաքական շփումների ոլորտում՝ այդկերպ զուգորդելով արտաքին քաղաքական և ռազմաքաղաքական շփումների իր հիմնական՝ եվրասիական և եվրատլանտյան ուղղությունները: Նշյալ մոտեցումը, մեր կարծիքով, համապատասխանում է հարավկովկասյան և մակրոտարածաշրջանային աշխարհաքաղաքական իրողությունների իրական պատկերին:

Միջավայրային այսօրինակ խճանկարը «ստիպում» է, որ Հայաստանը հարավկովկասյան ռազմաքաղաքական հարթությունում փորձի առավել ինքնաբավ քաղաքականություն վարել՝ որպես այդօրինակ քաղաքականության ելակետ ընդունելով հայաստանակենտրոնությունից ածանցվող ռազմական հզորությունների համապատասխանեցումը ժամանակի և քաղաքական իրողությունների պահանջներին:

Հարկ է նշել, որ ռազմական հզորությունը բավական ընդգրկուն երևույթ է: Պետության հնարավորությունները՝ մեծացնել իր զինուժը և, անհրաժեշտության դեպքում, ավելացնել սեփական ռազմական հզորությունները, կազմում են պետության ռազմական հզորությունների հավաքական ամբողջությունը: Ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ պատերազմական իրավիճակում պետությունը սովորաբար չի սահմանափակվում ուժի միայն մեկ բաղադրատարրի կիրառմամբ: Կառավարության տրամադրության տակ կան ուժի տարբեր բաղադրատարրեր (Հայաստանի պարագայում «ուժի» տարբեր բաղադրատարրերի շարքում առանձնակի կարևորություն ունեն հայկական սիյուռքի, որակյալ զիտական ներուժի և այլ գործոնները), որոնք սովորաբար կիրառվում են այս կամ այն համակցությամբ:

Պետության ռազմական հզորության՝ զինուժի և նրա նյութատեխնիկական զինանոցի հավաքագրման հնարավորությունները պայմանավորվում են աշխատուժով, պետության հողային ֆոնդերով, արդյունաբերական պոտենցիալով և այլ ռեսուրսներով: Ակնհայտ է, որ պետության ռազմական հզորությունը պետք է գործարկվի իր տիրապետման տակ գտնվող ռեսուրսների հիմքով: Հետևապես պետության տնտեսական հզորության մեծությունը և որակական ցուցանիշներն այն հիմնական գործոններն են, որոնք կանխորոշում են ռազմական ներուժի բնույթը: Այս պարագայում ռազմական հնարավորությունները պետության ազգաբնակչության քանակի և կառուցվածքի, տարածքի և բնական պաշարների, տնտեսական և տեխնիկական զարգացվածության ցուցանիշ հանդիսացող արդյունաբերական հզորության հավաքական արտացոլումն են:

Ակնհայտ է, որ պետության ռազմական հզորության գործնական գնահատման լավագույն ցուցանիշ կարող են լինել միայն ռազմական գործողությունները: Անկասկած, զինված ուժերի քանակական ցուցանիշների, կառուցվածքային և կազմակերպչական հատկանիշների, զինապարտության բնույթի, տարիքի, զինժառանգության ժամկետի, զինապարտ բնակչության թվաքանակի, պրոֆեսիոնալ բանակի առկայության կամ բացակայության, զինված ուժերի տեխնիկական համալրվածության, նրա ար-

դիականության մակարդակի, քանակական ցուցանիշների, պետության ռազմական բյուջեի և զինտեխնիկայի արտահանման կամ ներմուծման ծախսերի չափով, զինված ուժերի սպայական կազմի քանակով, համեմատականության սկզբունքով կարելի է որոշել պետությունների ռազմական հարաբերակցությունը, սակայն առանց որակական գնահատականի համեմատությունը լիարժեք չի կարող լինել: Այս պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել զինուժի կառուցատարրերի տիպատեսակային քանակական հարաբերակցությունը: Օրինակ՝ պետության ռազմաօդային ուժերի գերակայության ի՞նչ մակարդակը կարող է հավասարակշռել ցամաքային ուժերի զիջող թվաքանակին: Կամ զինտեխնիկայի քանակական գերակայությունն ի՞նչ չափով կարող է կոմպենսացնել հակառակորդի մարդկային ռեսուրսների գերակայությունը և այլն:

Մեր կարծիքով, ռազմական հզորության որակական տարրերի էական գերակայությունն ունակ է ապահովել հաղթանակն անգամ այն դեպքում, երբ երկու հակամարտող բանակների մարդկային թվակազմի և զինտեխնիկայի քանակը գրեթե նույն է: Ջինտեխնիկայի քանակը, նրա զարգացվածության աստիճանը և կիրառման մարտավարական մեխանիզմները կարող են որոշակիորեն լրացնել ինչպես զինուժի քանակական անհամամասնությունը, այնպես էլ նրա բարոյական պատրաստվածությունը: Ռազմական գերակայությունը, որը ճիշտ կիրառման արդյունքում հանգեցնում է հաղթանակի, կարող է ապահովվել ցանկացած տարրով կամ ռազմական հզորության որակաքանակական տարրերի համակցությամբ:

Պետության ռազմական ներուժի գնահատման ժամանակ սխալակա- նության աստիճանը, մեր կարծիքով, հնարավոր է նվազեցնել համեմատու- թյան ժամանակ կիրառելի փոփոխականների թվի նվազեցման միջոցով: Մյուս կողմից փորձը ցույց է տալիս, որ եթե երկու պետությունների ազգա- բնակչության քանակի միջև առկա է էական տարբերություն, ապա ոչինչ, բացի հզորության այլ ոլորտներում մեծ առավելությունից, չի կարող լրաց- նել ռազմական ներուժի այդ տարբերությունը: Հայտնի է նաև, որ պետու- թյունները, որտեղ քաղաքական անկայունություն կամ քաղաքացիական պատերազմ է, էականորեն թույլ են այն երկրներից, որտեղ քաղաքական կայունություն է, եթե միայն առաջինի մոտ չկա լրացնող այլ գործոններ:

Պետությունների հավաքական հզորության համեմատության բարդու- թյունն այն է, որ կանխավ բարդ է որոշել՝ ինչպիսի գործակիցներն են առանցքային: Մեր կարծիքով, սակայն, կան գործակիցներ, որոնք, այնու- ամենայնիվ, հնարավորություն են տալիս գնահատել ռազմական ներուժի տարրերը. օրինակ՝ ազգաբնակչության քանակն ու կառուցվածքը, մետա-

ղական համաձոնների ու վառելիքի արտադրման հզորությունները, պարենային և արդյունաբերական հումքի ներմուծումից պետության արտաքին կախվածությունը և այլն: Կան, իհարկե, այլ չափանիշներ ևս, որոնք առավել քիչ են հետազոտված և կիրառվում. օրինակ՝ ազգաբնակչության շրջանակներում սոցիալաբանությունը, ընտրական վիճակագրությունը, համապետական ընտրությունների արդյունքները: Մեր կարծիքով, այս տվյալներն իրապես օգտակար կարող են լինել պետությունների հզորությունների համեմատության ժամանակ: Նշյալ մեթոդի հետագա վերացարկումը հնարավորություն կընձեռի գերծ մնալ ներըմբռնողական դատողություններից և առավել հստակ գնահատել պետության ներուժը:

Պետությունների ռազմական հզորությունների համեմատության ցուցանիշների շարքում հիմնական ցուցանիշը զինուժի քանակն է: Ջինուժի սպասարկումը կախված է տնտեսական խոշորածավալ ծախսերի հետ, որը հանգեցնում է նյութական զոհաբերությունների և՛ որպես դրանց արձագանք, երբեմն մասնակցության սուր դժգոհությունների: Մեծաքանակ զինուժի ստեղծման և սպասարկման ծախսերը սովորաբար աճում են աստիճանաբար և այդ պատճառով քիչ նկատելի են: Նրանց հեռանկարային հետևանքը, իհարկե, եթե պետությունը չունի իրական հակառակորդներ, այն է, որ վերջնահաշվով զինուժի և նրա ծախսերի ավելացումը հանգեցնելու է պետության ռազմավարական հզորության թուլացմանը: Մեծաքանակ զինուժի ստեղծումն ու սպասարկումը բացասաբար է անդրադառնում պետության տնտեսության վրա, որի արդյունքում նվազում են ներդրումները դեպի արդյունաբերություն, ենթակառուցվածքների զարգացում՝ հանգեցնելով պետության ռազմական ներուժի առավել դանդաղ զարգացմանը: Գործնական արդյունավետության տեսանկյունից անօգուտ է խաղաղ պայմաններում պահել հավաքագրված զինուժի այնպիսի քանակ, որն անցնում է անհրաժեշտ սահմանը: Սահման, որը որոշակիանում է ինչպես սեփական պետության կարիքների ապահովման, այնպես էլ անմիջական հարևանների զինուժի քանակի հաշվառման և համադրման արդյունքում:

Շարադրանքից հանգում ենք այն եզրակացության, որ ռազմական ներուժի վերածումը հավաքագրված զինուժի, եթե այն անցնում է պետության համար անհրաժեշտ հասարակված սահմանագիծը, բացասաբար է անդրադառնում նրա հզորության վրա: Այդ սահմանագիծը պայմանավորում է ռազմական հզորության ներուժի և հավաքագրված զինուժի միջև նորմալ հարաբերակցությունը, որի նույնիսկ մոտավոր ձևորոշումը բավական բարդ է, հատկապես, երբ հաշվի են առնում ժամանակային կոնկրետ հատվածում խաղաղության «ամրության» գնահատման իրական և ճշգ-

րիտ հնարավորությունները: Տեսնելով այլ պետություններում զինուժի ավելացում և չցանկանալով ռիսկի դիմել՝ կառավարությունները հաճախ ավելացնում են սեփական ռազմական ծախսերը: Նման իրավիճակում հատկապես կարևոր է պետության՝ սեփական ռազմական ներուժն իրական ուժի վերածելու ունակությունները: Որքան մեծ են դրանք, այնքան մեծ են հավաքագրված այն ուժերը, որոնք կարող է տրամադրել ռազմական պոտենցիալը և այնքան նվազ է խաղաղ պայմաններում հաստատված սահմանագիծն անցնելու ռիսկը:

Փաստորեն, այլ գործոններից զատ զինուժի քանակը կախված է նաև նրանից, թե որքան ֆինանսներ է պետությունն ունակ հատկացնել բանակին: Եթե «անհրաժեշտի» և «հնարավորի» միջև առկա է տարբերություն, արտաքին քաղաքականության նպատակներն անհրաժեշտ է համապատասխանեցնել նրանց իրականացման համար անհրաժեշտ միջինացված չափազանց, քանզի հակառակ դեպքում իրական միջոցների անբավարարության պատճառով արտաքին քաղաքականությունն անհաջողության կմատնվի: Հարկ է նշել, որ զինուժի քանակից ոչ ցածր կարևորության ցուցանիշ է հավաքագրված ուժերի հնարավոր քանակը, որը կախված է խաղաղ պայմաններում պետության քաղաքական հաշվարկներից: Այդ հաշվարկները բխում են զինուժի վրա կատարվող այս կամ այն ծախսերի և նրանցից ակնկալվող օգտակարության համադրումից:

ՀՀ պարագայում ազգային հզորության քաղաքական բաղադրատարրն իր մեջ ամբողջացնում է ներքաղաքական կայունության ապահովման և հավասարակշռված արտաքին հարաբերությունների իրականացման սկզբունքները: Ռազմական հզորությունների մասով ՀՀ քաղաքական և ռազմական ղեկավարությունը պետական և ազգային անվտանգության ապահովման համար նպատակահարմար է գտնում ստեղծել քանակական և որակական խիստ որոշակի համադրումից ածանցվող «հավասարակշռված զինուժ և ռազմական հզորություններ», որոնք իրենց հիմքում ունենալով պետության տարածական, տնտեսական և ազգաբնակչության, հոգևոր և քաղաքական ներուժի ամենից արդյունավետ համադրումը, պետք է առավելագույնս լավ պատրաստված լինեն՝ հնարավոր պատերազմական պայմաններում կարողանալով ռազմական միջոցներով առավելագույնս արդյունավետորեն ապահովել ազգային անվտանգությունն ու ազգային շահերը:

2.3 Պետության ռազմավարական ներուժի գնահատման մեթոդաբանական հիմքերը

Քաղաքակրթական և տեխնոլոգիական մերօրյա իրողությունները որոշակի փոփոխություններ են ներմուծել պետության ռազմավարական հզորության ներկայակալ: Մասնավորապես, որոշակի փոփոխություն են կրել պետության հզորության ավանդական՝ ուժային, ընկալումները: Այս առումով ազգային շահերի պետական քաղաքականության մեջ առանձնակի կարևորություն ունի հատկապես պետության ռազմավարական հզորության և ներուժի գնահատման խնդիրը, որն առանցքային է առանձին պետությունների ազդեցության համեմատական վերլուծության ժամանակ¹¹²: Սակայն պետության ռազմավարական հզորության և ներուժի որոշակիացման և գնահատման մոտեցումները տարբեր են ինչպես կիրարկվող մեթոդաբանության, այնպես էլ հզորության որոշման հիմքերի առումով:

ա. Պետության ռազմավարական հզորության գնահատումը մեկ ցուցանիշով

Պետության հզորության մեկ ցուցանիշի վրա հիմնված գնահատականներ տալը, թերևս, պետությունների ազդեցիկության որոշման ամենավաղ մոտեցումն է: Մեկ ցուցանիշը՝ լինի դա պետության տարածքը, բնակչության կամ զինված ուժերի քանակը, հնարավորություն էր տալիս պետության հզորության և ազդեցության չափաբաժնի վերաբերյալ որոշակի ենթադրություններ կատարել դեռ անցյալում: Այս առթիվ տեղին կլինի հիշատակել Հ. Քիսինձերին, որն իր «Դիվանագիտություն» հիմնարար աշխատության մեջ, անդրադարձ կատարելով ռուսական արտաքին քաղաքական ավանդույթի մեկնաբանմանը, կարծիք է հայտնում, թե միջազգային հարաբերությունների պատմության մեջ Ռուսաստանի քաղաքականության և հզորության հիմքում ավանդաբար առանցքային դերակատարում է ունեցել նրա տարածքային ընդգրկունության գործոնը, որը պայմանավորել է Ռուսաստանի նշանակությունն ինչպես եվրոպական, այնպես էլ՝ միջազգային անվտանգության ապահովման գործընթացներում¹¹³:

¹¹² St u Richard L. Merritt, Dina A. Zinnes, Validity of Power Indices, International Interactions, Vol. 14, N 2 (1988), էջ 141-151; Charles S. Taber, Power Capability Indexes in the Third World, in Stoll and Ward, նուև տեղում էջ 29-48; Jacek Kugler and Marina Arbetman, Choosing Among Measures of Power: A Review of the Empirical Record, in Stoll and Ward, նուև տեղում, էջ 49-78:

¹¹³ Այս մասին առավել մանրամասն տես Գ. Киссинджер, *Дипломатия.*, М., 1997; Գ. Киссинджер, *Нужна ли Америке внешняя политика ? К дипломатии для XXI века*, М., 2002:

Սակայն հարկ է նշել, որ մեկ ցուցանիշի վրա հիմնված համեմատության պարագայում հետազոտողները միակարծիք չեն, թե ինչ բնույթի և տիպի ցուցանիշ է դա լինելու: Մի շարք հետազոտողներ, օրինակ՝ քաղաքագետներ Ի. Կլոդը¹¹⁴ և Կ. Դոյչը¹¹⁵, փորձում են պետության ազդեցության ընթացիկ բաժնենասը գնահատել՝ կենտրոնանալով ռազմական մեծ հնարավորությունների վրա: Մյուսները՝ Ն. Օլբրոր և Ա. Նյուբոմբը¹¹⁶, կիրառում են ռազմական ծախսերի չափը, Ջ. Մոդելսկին և Վ. Թոմսոնը գտնում են, որ վճռորոշ է զինված ուժերի տիպային հարաբերակցությունը¹¹⁷:

Անդրադառնալով Մոդելսկու և Թոմսոնի մոտեցմանը՝ կարելի է նշել, որ, օրինակ՝ Երկրորդ աշխարհամարտի առաջին տարիներին ռազմական ոլորտում ԽՍՀՄ անհաջողությունների հիմնական պատճառը, այլ հանգամանքներից զատ, մեր կարծիքով, կապված էր հատկապես այն հանգամանքի հետ, որ խորհրդային բանակը համալրված չէր իր ժամանակի ռազմական իրողություններին համապատասխան ռազմական տեխնիկայով:

Ի հավելումն ռազմական ռեսուրսների, տնտեսական բնութագրիչները նույնպես կիրառվում են որպես հզորության գնահատման բազային ցուցանիշ, օրինակ՝ Կ. Նորը¹¹⁸, որի խնդիրն էր հետազոտության միջոցով որոշակիացնել պետության ռազմավարական հնարավորությունների փոփոխման երկարաժամկետ միտումները, մեծ դեր ու նշանակություն է տալիս տնտեսական զարգացվածության մակարդակին: Տնտեսական ցուցանիշների շարքում ժողովրդագրագետ Քինսգլի Դեյվիսը¹¹⁹ առանձնակիրքն կարևորում է «ազգային հարստությունը», քաղաքագետ Ա.Ֆ.Կ. Օրգանսկին¹²⁰ տնտեսական հզորությունները համարում է «պետության տիրապետման տակ գտնվող ռազմավարական հզորության ամենից տեսանելի ցուցանիշ»¹²¹:

Առավել հիմնավորված է Չարլզ Հիթչի և Ռոլանդ Մակ Զինի մոտեցումը, որոնք, կարևորելով տնտեսական ցուցանիշի դերակատարումը, տն-

114 Այս մասին առավել մանրամասն տես Inis L. Claude, *Power and International Relations*, New York: Random House, 1962:

115 Այս մասին առավել մանրամասն տես Karl W. Deutsch, *The Analysis of International Relations*. Englewood Cliffs, Prentice-Hall, 1968:

116 Այս մասին առավել մանրամասն տես Norman Z. Alcock, Alan G. Newcombe, *The Perception of National Power*, «Journal of Conflict Resolution», Vol. 14 (1970):

117 Այս մասին առավել մանրամասն տես George Modelski, William R. Thompson, *Seapower in Global Politics 1494-1983*, Seattle, 1987:

118 Այս մասին առավել մանրամասն տես Klaus Knorr, *The War Potential of Nations*, Princeton, 1956:

119 Տես Kingsley Davis, *The Demographic Foundations of National Power*, in Morrow Berger et al. (eds.), *Freedom and Control in Modern Society*. New York: Farrar, Straus & Giroux, 1954, էջ 206–242:

120 Այս մասին առավել մանրամասն տես A.F.K. Organski, *World Politics* New York, Knopf, 1958:

121 Տես նույն տեղում, էջ 436:

տեսական ցուցանիշի մեջ առանձնացնում էին տնտեսական մի շարք ոլորտներին՝ արտադրության, արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաներին, նորարարություններին վերաբերող գործակիցներ՝ դիտարկելով դա որպես «պետության հավաքական արտադրանք»¹²² կամ ՀԱԱ:

Կարևորելով ռազմավարական հզորությունների համեմատության ժամանակ տնտեսական ցուցանիշի կարևորությունը՝ Բ. Ռասսետը¹²³ իր հետազոտություններում հանգեց այն եզրակացության, որ վառելիքի և էլեկտրաէներգիայի սպառման ծավալները պետության հզորության գնահատման լավագույն բազային ցուցանիշն է: Այդ կարծիքին էր նաև Օ. Մորգենսթերնը¹²⁴, որն իր հետազոտություններում կարևորում էր հատկապես էներգաարտադրող բնական պաշարների առկայության գործոնը:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ մեկ բազային ցուցանիշով պետության հզորության հետազոտության մեթոդաբանության կիրառումը պայմանավորված է մի շարք հանգամանքերով: Առաջին՝ մեկ ցուցանիշի դեպքում գնահատական տալը մեթոդաբանական տեսանկյունից առավել դյուրին է: Երկրորդ՝ պետության հզորության որոշման «միացուցանիշ» մեթոդաբանության ընտրությունը կապված է այն հանգամանքի հետ, որ պետության ռազմավարական հզորության և ներուժի համեմատության/գնահատման ժամանակ հաճախ առանձին ոլորտների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն կամ չկա, օրինակ՝ ռազմական ոլորտի յուրահատուկ ցուցանիշների մասով, կամ հաշվարկման ենթակա չէ, օրինակ՝ ազգաբնակչության հոգեբանական պատրաստվածության աստիճանը և այլն: Հետևաբար մի շարք հետազոտողներ նպատակահարմար են գտնում կիրառել համեմատություն մեկ ցուցանիշով, որն, ըստ նրանց, առավել տեսանելի կդարձնի ռազմավարական ներուժի հարաբերակցությունը¹²⁵:

Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ պետության հզորության որոշակիացման մեթոդաբանությունը, որը հիմնված է մեկ ցուցանիշի վրա, ինչպես մաթեմատիկական, այնպես էլ ռազմաքաղաքական իրականության պահանջներին համապատասխանելու տեսանկյունից առանձնանում է այդ գնահատականի միակողմանիությամբ և ոչ բավարար հիմնավորվածությամբ:

122 Այս մասին առավել մանրամասն տես Charles Hitch, Roland McKean, *The Economics of Defense in the Nuclear Age*, Cambridge, 1960:

123 Steven Bruce M. Russett, *Is There a Long - Run Trend Towards Concentration in the International System ?*. *Comparative Political Studies*, Vol. 1 (1968), էջ 103–122:

124 Այս մասին առավել մանրամասն տես Oskar Morgenstern et al. *Long Term Projections of Political and Military Power*, Cambridge Ballinger, 1973:

125 Steven Richard L. Merritt, Dina A. Zinnes, նշվ. աշխ.:

*բ. Պետության հզորության որոշման բազմացուցանիշ
մեթոդաբանությունը*

Փորձելով զերծ մնալ մեկ բազային ցուցանիշով պետության հզորության գնահատման հետ կապված միակողմանիությունից և սառը պատերազմական իրողությունների համատեքստում իրենց առջև խնդիր դնելով առավել հստակ որոշել պետությունների հզորությունների հարաբերման հարցերը՝ մի շարք մտածողներ տարաբնույթ հետազոտություններ իրականացրին կապված բազմացուցանիշ բանաձևումների մշակման և դրանց միջոցով պետության հզորության որոշման հետ: Նշված հետազոտություններում, մասնավորապես, աչքի է ընկնում պետության հզորության որոշակիացման Կլաուս Նորի բազմացուցանիշ մեթոդաբանությունը, որն ունի ոչ գծային բնույթ: Իր՝ «*Պետությունների ռազմական պոտենցիալը*» հիմնարար աշխատանքում նա խնդիր է դրել «*պատերազմական պայմաններում ռազմական ռեսուրսների քանակի և ներմուծումների սպահովման*»¹²⁶ նպատակով վերհանել պետության հնարավորությունների չափաբաժինը: Նորը պետության հզորության չափաբաժինը պայմանավորում է տարաբնույթ գործոններով՝ տնտեսական հնարավորություններ, վարչական ձեռնահասություն(կոմպետենտություն), պատերազմի նկատմամբ ազգաբնակչության վերաբերմունք և այլն: Հարկ է սակայն նշել, որ չնայած նման բազմաթիվ գործոնների դիտարկմանը, Նորը, այնուամենայնիվ, չառաջարկեց ոչ մի հավաքական մոդել, որը հնարավորություն կընձեռներ պետության հզորությանը այդ գործոնների միջոցով ամբողջական գնահատական տալ:

Նորի բազմացուցանիշ մեթոդաբանական մոտեցումներին իրենց հետագա ուսումնասիրություններում անդրադարձան պետությունների հզորության համեմատությամբ և միջազգային ռազմաքաղաքական հարաբերակցության հիմնախնդիրների վերլուծությամբ զբաղվող այլ հետազոտողներ:

Նմանօրինակ ոչ գծային բազմացուցանիշ մեթոդաբանություն, որն իր մեջ ամբողջացնում է առանձին փոփոխականներ և որոշակիացնում նրանց կապերը, առաջարկեց *Բլիֆորդ Ջերմանը* 1960 թ.-ին հրատարակած իր՝ «Համաշխարհային ուժի փորձնական շարժընթացը» հոդվածում: Նա մշակեց «*գերպերության հզորության ցուցանիշը*», որի բանաձևումն ունի հետևյալ տեսքը.

¹²⁶ Տե՛ս Klaus Knorr, նշվ. աշխ., էջ 41:

$G = \text{պետության հզորություն/գերիշխանություն} = N (L + P + I + M),$

որտեղ N -ը պետության միջուկային հնարավորություններն են, L -ը՝ տարածքը, P -ն՝ ազգաբնակչությունը, I -ը արդյունաբերական ֆոնդերը, M -ը ռազմական հզորությունը¹²⁷: Այս փոփոխականներից յուրաքանչյուրն իր մեջ հանրագումարում է մի շարք գործոններ, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին կազմված է բազմազան ցուցանիշներից և գործակիցներից:

Ոչ գծային, սակայն փոքր ինչ ավելի պարզ բազմացուցանիշ գործակից, 1965 թ.-ին առաջարկվել է Վիլիելմ Ֆաքսը, որը պետության հզորությունը «ստանում էր» երեք հանրագումարային քանակական փոփոխականներից. ազգաբնակչության քանակ - (p), էներգիայի(z) և մետաղի($z1$) արտադրության ծավալներ, որոնք հզորությունը - (M) գնահատելու նպատակով տեղադրվում էին համապատասխան բանաձևումներից մեկի մեջ՝ ստանալով այս՝ $M = p2z$, $M = p3/2z$, դրսևորումները¹²⁸:

Ի տարբերություն Ք. Ջերմանի, Վ. Ֆաքսի, հետագայում նաև Ն. Օլքոքի և Ա. Նյուքոմբի, ոչ գծային մոտեցումների, 1970 թ.-ին առաջ քաշվեց պետական հզորության գնահատման գծային մեթոդաբանություն, որը նույնպես կիրառում էր բազմաչափ փոփոխականներ: Կիրառելով երեք փոփոխականների (*մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալ, ազգաբնակչություն և ազգաբնակչության խտություն*) հետընթաց վերլուծությունը՝ ռոբրտի մասնագետները փորձեցին գնահատել տարբեր երկրների հարաբերական հզորությունները:

Հնարավորությունների գնահատման նմանօրինակ գծային մոտեցում, որը, կենտրոնանալով պետության իրական միջոցների, այլ ոչ թե այդ միջոցների վերաբերյալ պատկերացումների, կանխատեսումների վրա, առաջարկեց *Դեյվիդ Սինգերը* «Պատերազմի հարաբերակցությունը» 1972թ.-ին հրատարակված աշխատությունում¹²⁹: Դ. Սինգերի առաջարկած բանաձևն է՝ $P = p + i + m$, մեջ ազգաբնակչությունը (դիտարկվում են ընդհանուր քանակական և քաղաքային բնակչության ցուցանիշները), *արդյունաբերական հնարավորությունները* (դիտարկվում է էներգետիկ սպառման, երկաթի, այլ մետաղական արտադրության ծավալները) և *ռազմական հնարավորությունները* (դիտարկվում է ռազմական ծախսերի և հզորության մեծությունը) գումարվում են, որպեսզի կազմեն նշված պե-

¹²⁷ Այս մասին առավել մանրամասն տես F. Clifford German, A Tentative Evaluation of World Power, «Journal of Conflict Resolution», Vol. 4 (1960):

¹²⁸ Այս մասին առավել մանրամասն տես Wilhelm Fucks, Formeln zur Macht: Prognosen über Volker, Wirtschaft Potentiale. Verlags-Anstalt, 1965:

¹²⁹ Տես J. David Singer et al. Capability Distribution, Uncertainty, and Major-Power War, in Bruce Russett (ed.), «Peace, War and Numbers», Beverly Hills: Sage, 1972, էջ 19–48:

տության կարևորությունը՝ ցույց տալով նույն ցուցանիշների հարաբերակցությունը համաշխարհայինի հետ:

Գնահատման գծային մեթոդի հիմքով իր մոտեցումներում ոլորտի մյուս մասնագետները քիչ բանով էր առանձնանում *Ուայն Ֆերիսը*, որը 1973 թ.-ին մշակած իր գործակցի միջոցով 1850-1966 թթ.-ի միջակայքում փորձում էր «*մի խումբ ցուցանիշներով իրար նման երկրների խումբը համեմատել մեկ այլ ցուցանիշներով իրար մոտ երկրների այլ խմբի հետ*»¹³⁰: Նրա հզորությունների պատմական համեմատության մեթոդաբանությունը կենտրոնացել էր 6 հիմնական ոլորտների վրա՝ տարածք, բնակչություն, պետական շահույթ, ռազմական ծախսեր, միջազգային առևտրի արժեքայնություն, զինուժի քանակ:

Պետության հզորության գնահատման առավել համակարգային և հանգամանալից գործակից 1975 թ.-ին մշակեց Ռեյ Քլայնը¹³¹: Այդ ոչ գծային բազմագործակից բանաձևումը փորձում է գնահատել պետության հզորության ընկալման կարգը.

$$Pp = (C + E + M) (S + W),$$

որտեղ Pp - ն «պետության հավաքական հզորությունն» է, C - ն՝ «սահմանային զանգվածը», որը պետության «ազգաբնակչության» և «տարածքի» գործակիցների հանրագումարն է, E - ն տնտեսական հզորությունների գործակիցն է, որն իր մեջ ամբողջացնում է տնտեսության առանցքային ճյուղերի (էներգետիկա, ֆինանսներ, արդյունաբերություն, ոչ վառելիքային բնական ռեսուրսներ, գյուղատնտեսություն, առևտուր) և պետության ռազմավարական նշանակության օգտակար հանածոների ցուցանիշները, M - ը՝ ռազմական հզորությունը, որն ամբողջացնում է պետության զինված ուժերի, ռազմական տեխնիկայի քանակական ու որակական գործակիցները, ինչպես նաև ռազմավարական հավասարակշռության + ռազմական ունակությունների + ռազմական պատրաստվածության և ջանքի խթանման միջոցների գործակիցները: Բանաձևման մեջ S-ը «ռազմավարության ազգային գործակիցն» է, W-ն՝ ազգային նպատակները/շահերը, որոնք իրենց մեջ ներառում են ազգային ինտեգրման մակարդակ, առաջնորդության ուժը, առաջարկվող ռազմավարության համապատասխանությունն ազգային շահերին: Հետագայում, սակայն, ԱՄՆ-ի Ջորջթաունի համալսարանի և Միջամերիկյան ռազմական քոլեջի փորձագետներն առաջարկեցին պետության ռազմավարական ներուժի գնա-

¹³⁰ St' u W. Ferris, The Power Capabilities of Nation-States, Lexington, 1973, էջ 58:

¹³¹ Այս մասին առավել մանրամասն տես Ray S. Cline, World Power Trends and U.S. Foreign Policy for the 1980's, 1980:

հատման ոչ գծային առավել բարդ բանաձև՝ $Pp = (C+E+M) (S+W+P)$: Նախորդի համեմատ, նշյալ բանաձևի մեջ փորձագետներն ավելացրին P գործակիցը, որն իշխանության լեգիտիմության և հեղինակության գործակիցն էր: Որպես արդյունք, վերջնական բանաձևը՝ $(S+W+P)$, ստացավ (ռազմավարական նպատակի + բնակչության աջակցության + իշխանության լեգիտիմության/հեղինակության) հավաքական գործակցի տեսք:

Ներկայացված բանաձևումը թեև բավական հանգամանորեն է ներկայացնում պետության հզորության հավաքական գործակիցը, սակայն, մեր կարծիքով, եթե այն վերացարկվի դարաբաղյան հակամարտության վրա, ապա ռազմական գործողություններում հայկական կողմի հաղթանակի նախապայմանների շարքում առանձնակի դերակատարում կունենան առաջին հայացքից պետության ռազմական հզորության ներուժի հետ անմիջական կապ չունեցող այնպիսի գործոններ, ինչպիսիք են ռազմավարական նպատակի շուրջ հայ ազգաբնակչության համախմբվածությունը, պետական իշխանության լեգիտիմության բարձր մակարդակը, ազգաբնակչության մեծ մասի կողմից իշխանության գործունեության աջակցությունը, սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում ազգաբնակչության ներքին ինտեգրման բարձր մակարդակը և այլ հանգամանքներ: Նշյալը, մեր կարծիքով, գործնական հարթության վրա հաստատում է այն կարծիքը, որ մեր օրյա իրողությունների պարագայում պետությունների հզորության որոշման և գնահատման ժամանակ առանձնակի կարևորություն է ստացել ազգաբնակչության աջակցության և հոգեբանական պատրաստվածության գործոնների հաշվարկումը:

Պետությունների հզորության հետազոտման արևմտյան մոտեցումներից զատ բավական ուշագրավ ոչ գծային և բազմագործակից մեթոդաբանություն է առաջարկում Ա. Պրոխոժևը: Ըստ նրա մոտեցման, պետության հզորության հավաքական գործակիցը հաշվարկելու համար անհրաժեշտ են մեթոդաբանական հատուկ մեխանիզմներ, քանի որ պետության հզորությունների համակարգը բնութագրող տարածն բացարձակ մեծությունները պարզ հանրահաշվային հաշվարկման ենթակա չեն: Այդ է պատճառը, որ անհրաժեշտություն կա անցում կատարել հարաբերական ցուցանիշների և գործակիցների մեթոդաբանությանը: Ըստ Պրոխոժևի, պետության հզորության հավաքական գործակիցն այս պարագայում իրենից ներկայացնում է պայմանական միավորներով հիմնական ցուցանիշների նշանակության միջինացված գնահատական, որը այսպես կոչված «էվկլիդյան տարածության» չափման մեթոդի կիրառմամբ հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{Պետության հզորություն} = 1 - \sqrt{\frac{\sum_{i=1}^n (1 - x_{ij})^2}{n}}$$

Ներկայացվող բանաձևում j - ն վերլուծվող երկրների թվաքանակն է, i - ը՝ հետազոտվող ցուցանիշները, x - ը՝ հաշվարկային հարաբերական ցուցանիշը, որն իր մեջ ամբողջացնում է հետազոտվող երկրների խմբաքանակի տեսանկյունից նշանակալի ցուցանիշների հանրագումարում « j » երկրի տեսակարար կշիռը¹³²: Նման մոտեցումը, ըստ հեղինակի, հնարավորություն է տալիս որոշել պետությունների հզորության գործակիցը, հետազոտել նրա փոփոխության շարժընթացը և դրա վրա ազդող գործոնները:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ պետության ռազմավարական հզորության որոշակիացման գործընթացը մեթոդաբանական ճշգրտության տեսանկյունից պետք է հաշվի առնի ինչպես մի շարք բազային ցուցանիշներ՝ պետության աշխարհագրական բնութագիրը, տնտեսական հզորությունների մեծությունը, ազգաբնակչության քանակը, այնպես էլ մեծ կարևորություն ունեցող, սակայն արդեն առավելապես վերնաշենքային բնույթի ցուցանիշներ՝ ազգաբնակչության միատարրության աստիճանը, զինված ուժերում զինատեսակների տիպային հարաբերակցության աստիճանը, պատերազմին ազգաբնակչության պատրաստվածության մակարդակը և այլն: Այսինքն՝ պետության հավաքական հզորության համակարգում ցուցանիշների հարաբերակցությունը և համեմատությունը խիստ որոշակի ձևորոշում է կրում՝ պայմանավորվելով իրավիճակային օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Սա փաստում է, որ ազգային շահերի պետական քաղաքականությունն ուղիղ համեմատական է հավաքական հզորությունների համակարգին և պետության կողմից նրա արդյունավետ գործարկմանը, ուստի այդ հզորության գնահատման ժամանակ ընտրվող մեթոդաբանությունը պետք է համապատասխանի ինչպես տվյալ պետության առանձնահատկություններին, այնպես էլ միջավայրային օբյեկտիվ և սուբյեկտիվ իրողություններին, որոնք կայուն կամ փոփոխական ազդեցություն են ունենում պետության քաղաքական վարքի վրա:

Պետության հզորության որոշակիացումն ու գնահատումը հնարավորություն են ընձեռում տարբերակելու պետությունները, ցույց տալու նրան-

¹³² См. **Общая теория национальной безопасности: Учебник / Под общ. ред. А. А. Прохожева, РАГС, М., 2005. էջ 248 – 249:**

ցից յուրաքանչյուրի տեղն ու դերը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ աշխարհում: Նման հետազոտության պարբերական իրականացումը պայմաններ է ստեղծում, որպեսզի ժամանակի և տարածության մեջ որոշակիացվեն պետության հավաքական հզորության հանրագումարում կոնկրետ ցուցանիշների կախվածությունը իրավիճակային կամ այլ պայմաններից: Ցուցանիշների փոփոխման միտումներում որոշակի շարժընթացի հայտնաբերումը հիմք է, որպեսզի պետության հավաքական հզորության հետագա հաշվարկման և կանխատեսման համար որոշակի տիպոքինակներ և գրաֆիկներ կազմվեն, որոնք հնարավորություն կտան տարածաշրջանային մակարդակում ուժերի հարաբերակցության փոփոխության կանխատեսումներ իրականացնել: Պետության հզորության որոշակիացման, հատկապես՝ ոչ զծային բազմագործակից մեթոդաբանությունը պետությունների հզորության համեմատական վերլուծության ժամանակ ապահովում է օբյեկտիվության բարձր մակարդակ, որը կարող է բավարար հիմք լինել գիտականորեն հիմնավորված ազգային անվտանգության ապահովման պետական քաղաքականության մշակման համար: Սա արդիական է հատկապես մի տարածաշրջանում և զարգացվածության հարաբերականորեն մոտ ցուցանիշներ ունեցող պետությունների հզորության գնահատման և համեմատման ժամանակ, քանի որ այս պարագայում առավել օբյեկտիվ և հիմնավոր համեմատություն, ինչպես նաև կանխատեսում է կատարվում՝ հաշվի առնելով ոչ միայն այն հանգամանքը, որ այդ պետությունները մի շարք ցուցանիշների մասով իրար բավական մոտ են կանգնած, այլ նաև այն, որ այդ պետությունները իրենց վրա են կրում միևնույն աշխարհաքաղաքական գործոնների դրական և բացասական անդրադարձերը:

Վերոշարադրյալից ակնհայտ է դառնում, որ ամեն պետություն չէ, որ ի վիճակի է ապահովել իր անվտանգությունն ու ազգային շահերի իրացումը, քանզի դրա համար անհրաժեշտ են այդ շահերի իրատեսական ձևակերպում և նրանց իրացման համար անհրաժեշտ հզորությունների հավաքական համակարգի առկայություն: Այս դեպքում հավաքական հզորության համակարգում ցուցանիշների հարաբերակցությունը և համեմատությունը խիստ որոշակի ձևորոշում է կրում՝ պայմանավորվելով իրավիճակային օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Սա փաստում է, որ ազգային շահերի պետական քաղաքականությունն ուղիղ համեմատական է հավաքական հզորությունների համակարգին և պետության կողմից նրա արդյունավետ օգտագործմանը:

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս տարբերակել պետու-

թյուններն իրենց հավաքական հզորությամբ և ցույց տալ նրանցից յուրաքանչյուրի տեղն ու դերը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ աշխարհում: Նման հետազոտության պարբերական իրականացումը հնարավորություն է տալիս ժամանակի և տարածության մեջ որոշակիացնել պետության հավաքական հզորության հանրագումարում կոնկրետ ցուցանիշների կախվածությունը իրավիճակային կամ այլ պայմաններից: Ցուցանիշների փոփոխման միտումներում որոշակի շարժընթացի հայտնաբերումը հիմք է հանդիսանում, որպեսզի որոշակի տիպօրինակներ և գրաֆիկներ կազմվեն պետության հավաքական հզորության հետագա հաշվարկման և կանխատեսման համար: Այս կերպ ուժերի հարաբերակցության փոփոխության քանակական կանխատեսման համար հնարավորություն է ընձեռվում, որն իր հերթին պայմաններ է ստեղծում տարածաշրջանային իրավիճակի որակական վերլուծության լրամշակման համար: Նման մեթոդը պետությունների հզորության համեմատական գնահատման ժամանակ ապահովում է օբյեկտիվության բարձր մակարդակ, որը կարող է բավարար հիմք հանդիսանալ գիտականորեն հիմնավորված ազգային անվտանգության ապահովման պետական քաղաքականության մշակման համար:

ԳԼՈՒԽ 3.

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

3.1 ՀՀ ազգային շահերն ու ազգային շահերի հայեցակարգերը

Ընդունելով ազգային շահի առանցքային դերը պետական քաղաքականության կերտման մեջ՝ նշենք, որ այն պետական քաղաքականության յուրահատուկ բնութագրիչն ու գնահատման չափանիշն է և տարաբնույթ գործոնների ազդեցության ներքո կարող է փոփոխել պետական քաղաքականության ուղեգիծը: Գործնականում, ցանկացած պետության ներսում գոյություն ունեն ազգային շահի ընկալման այլընտրանքային մի քանի հայեցակարգեր, սակայն կառավարող վարչակազմի կողմից ընդունված հայեցակարգը միշտ գերակա է վերջիններիս նկատմամբ: Ազգային շահի ընկալման տարբեր հայեցակարգերի առկայությունը պայմանավորված է նրանով, որ ազգային շահն այս համատեքստում դիտվում է որպես ազգի զարգացման առավելագույն նպաստավոր պայմանների համակարգ, հետևաբար միանշանակ չի կարող ընկալվել և ընդունվել ազգաբնակչության բոլոր շերտերի կողմից: Մա ենթադրում է, որ ներհասարակական մակարդակում ազգային շահի որոշակիացման գործընթացն ուղեկցվում է կոնֆլիկտայնությամբ և դիրքորոշումների սուր բախումով, քանզի ազգային շահի այս կամ այն հայեցակարգի ընդունումն անմիջականորեն ազդում է պետության միջազգային դերակատարման ձևավորման վրա: Ընդգծենք նաև, որ հաճախ միջազգային պայմաններն իրենք են կանխորոշում ազգային շահի ընդունված հայեցակարգի բնույթն ու արդյունավետության չափանիշները, հետևաբար ազգային շահի մասին պատկերացումների անհամապատասխանելիությունը քաղաքական իրականության պահանջներին պետության քաղաքականությունն անխուսափելիորեն դարձնում է անհեռանկար:

Ասվածն առանձնակի կարևորություն է ձեռք բերում հատկապես անվտանգության և ազգային շահերի հիմքով պետական քաղաքականության կերտման խնդիր ունեցող նորանկախ այնպիսի երկրների համար, ինչպիսին, օրինակ Հայաստանն է: Ներկայացված դիտարկումները թույլ են

տալիս չէ-ում ձևավորված յուրահատուկ իրավիճակը դիտարկել՝ հաշվի առնելով, որ այստեղ ազգային շահի մասին պատկերացումները ձեռք են բերում յուրահատուկ բովանդակություն՝ կապված հայկական պետության գոյության մի շարք առանձնահատկությունների հետ. չէ աշխարհագրական դիրք, պետական քաղաքականության վրա էթնիկ միատարրության և ներէթնիկ կապերի մեծ ազդեցություն, չէ-ից դուրս առկա ազդեցիկ ազգային քաղաքական ուժերի և հայ էթնիկ գիտակցության մեջ սփյուռքի պայմաններում ձևավորված ազգային շահի վերաբերյալ կայուն պատմական հայեցակարգերի գերակայություն, չլուծված դարաբաղյան քաղաքական խնդրի առկայություն և այլն:

Նման իրավիճակում պետական առաջնահերթ նպատակների նկատմամբ համաձայնությունը՝ լինի դա Սփյուռքում, թե՛ չէ-ում, դառնում է առանցքային խնդիր, քանզի պայմանավորում է ազգի և պետության անվտանգության և զարգացման հետագա շարժընթացը: Հարկ է ընդգծել, որ չէ-ում պետության և/կամ ազգի գոյատևման սահմանային պայմաններում ազգային շահի արժևորման համաձայնություն այնուամենայնիվ կայանում է, որին ենթարկվում են ներէթնիկ ինտեգրման և ապահովման գրեթե բոլոր գործընթացները: Դրա վառ ասպարեզն է 1980-ականների վերջին հայաստանյան քաղաքական զարգացումները: 1988թ.-ին՝ հայ ազգի ոգեղենության և ինքնավերակերտման ժամանակաշրջանում ազգապահպան և պետականաստեղծման գործընթացներն օրախնդիր էին դարձել՝ պայմանավորելով հայ տեսակի պատմաքաղաքական հիշողության հիմնարար շերտերից ածանցվող կենսական իղձ-պահանջների իրագործման եզակի հնարավորությունը: Ազգային ինքնագիտակցության վերելքի առիթ (գործոն) էր նաև հայ քաղաքական մշակույթի հիմնարար արժեք հանդիսացող գոյապահպանման առանցքային պահանջմունքի իրացումը, որն իր դրսևորումը գտավ ազգի գոյատևման շարունակականությանը նետված՝ դարաբաղյան մարտահրավերին հավաքական ուժով դիմագրավելու մեջ: Փաստորեն սա մի ժամանակաշրջան էր, երբ նյութականանում էր անկախ պետության ստեղծման հայ ազգի դարավոր պահանջը, որի արդյունքում Հայաստանը «նետվեց» միջազգային հարաբերությունների՝ նոր իրողություններով լեցուն «ալեկոծ ծով»:

Այս պայմաններում պարզ դարձավ, որ հայկական պետությունը չունի ազգային շահի հիմքով պետական քաղաքականության կերտման քաղաքական փորձ, քանի որ երկարաժամկետ կտրվածքով անկախ պետության, ուստի նաև անկախ պետական քաղաքականության կերտման բացակայությունը նմանօրինակ ավանդույթի ձևավորման համար անհրա-

Ժեշտ պայմաններ չի ապահովել: Ազգային շահի հիմքով «քաղաքական» ավանդույթը չի կայացել Հայաստանի առաջին հանրապետության գոյության տարիներին, քանզի վերջինս կարճ կյանք ունեցավ և իր կենսագրության ընթացքում չհասցրեց ձևակերպել ազգային շահի կոռ հայեցակարգ: Այն չի ձևավորվել նաև որհրդային Հայաստանի տարիներին, երբ Հայաստանը խորհրդային հզոր կայսրության մի մաս էր միայն՝ փաստացիորեն գուրկ ինքնիշխան պետությանը բնորոշ հիմնական բնութագրիչներից: 1991թ.-ին, երբ իրողություն դարձավ Հայաստանի ինքնիշխան և անկախ հանրապետությունը, ՀՀ ղեկավարությունը դեմ հանդիման հայտնվեց այն իրողության հետ, որ քաղաքականության կերտման հայկական ավանդույթը չունի անկախ և ինքնիշխան պետության ղեկավարման քաղաքական մշակույթից բխող և ազգային շահի սպասարկման հիմքից ածանցվող քաղաքական կառավարման մեխանիզմներ: Ինքնիշխան պետության բացակայության պայմաններում ձևավորված հայ քաղաքական մշակույթին ընդհանուր առմամբ բնորոշ էին քաղաքական համակերպողականությանը սահմանակցող զգուշավորությունն ու ազգային ինքնության պահպանման գերակայությունից ածանցվող պահպանողականությունը, որը կարելի է դիտել որպես հայ ազգի գոյապահպանման հրամայականի յուրօրինակ դրսևորում: Այն, փոխանցվելով սերնդից սերունդ, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս, բավական լուրջ ազդեցություն է գործում քաղաքական իրողությունների զարգացման և «անհատ - հասարակություն - պետություն» եռամիասնական հարաբերությունների ընթացքի վրա: Գոյապահպանման հրամայականը պատմական իրողությունների արդյունք է, որ կանխորոշում է քաղաքականության կերտման հայկական ավանդույթի վերաբերմունքն արտաքին քաղաքական առաջնային միջավայրի քաղաքական սուբյեկտների նկատմամբ: Վերոնշյալից գատ, ազգային շահի վերաբերյալ պատկերացումների ձևակերպումն ու պետական քաղաքականության գործարկումն իրենց վրա են կրում նաև հայ ազգի հոգեկերտվածքի ձևավորման պատմաքաղաքական օբյեկտիվ մի շարք գործոնների ազդեցությունները, որոնք պայմանավորում են ընդունելի շահերի յուրահատկությունն ու նրանց իրացման հնարավորությունների միջակայքը: Ազգի հոգեկերտվածքն այն հիմնական գործոններից է, որը կանխորոշում է ազգի և նրա՝ քաղաքականապես գործուն հատվածի՝ հասարակության քաղաքական մշակույթի հիմնական բնութագրիչները:

Ազգի հոգեկերտվածքի ձևավորման ուղին բավական բարդ գործընթաց է, որն իր վրա կրում է ազգի կենսագործունեության տարբեր ոլորտների և

պատմական զարգացումների ազդեցությունը՝ պայմանավորելով հոգեկերտվածքային այս կամ այն հատկանիշի ընդգծվածության աստիճանը: Էթնոհոգեբան Ա.Նալչաջյանի կարծիքով, ցանկացած ազգի պատմական զարգացման ընթացքում տեղի են ունենում այնպիսի իրադարձություններ՝ հեղափոխություններ, պատերազմներ, մեծածավալ բարեփոխումներ, պետականակերտման գործընթացներ, որոնք հետագայում առանձնակի նշանակություն են ձեռք բերում՝ իրենցով պայմանավորելով քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացների բնույթն ու ընթացքը¹³³: Հայ ազգն իր պատմական ժամանակագրության ընթացքում, մեր կարծիքով, անցել է այնպիսի իրադարձությունների շարժընթացով, որոնք առանցքային են եղել ազգի և պետության հետագա ճակատագրի համար: Պատմական նմանօրինակ իրադարձություններից առանձնացվում է 1915-23թթ. թուրքական իշխանությունների կողմից կազմակերպած հայերի ցեղասպանությունը, որը՝ որպես գործոց, հայ ազգի ձևակերտման հետագա գործընթացում առանցքային դերակատարում է ունեցել: Նման հանգամանքի ազդեցությունն ակնհայտ է մինչ օրս և հաճախ իրենով պայմանավորում է ժամանակակից քաղաքական մշակույթի հիմքերը: Հարկ է նշել, որ պատմական իրադարձությունների շարքում մեր տեսանկյունից կան այնպիսիները, որոնք իրենց ծավալներով՝ որպես հոգեբանական ցնցում, իհարկե, չեն կարող համեմատվել ցեղասպանության հետ, սակայն իրենց մեջ նույնպես ազդեցության ծանրակշիռ ներուժ են պարունակում: Դրանցից են սոցիալական և տարերային աղետները, սուր ճգնաժամերն ու հակամարտությունները: Հայի համար, մեր կարծիքով, այդպիսիք հանդիսանում են 1988թ.-ի Սպիտակի երկրաշարժը, 90-ականներին դարաբաղյան հակամարտությունը:

Ներկայացվող աշխատանքում կանդրադառնանք միայն մի քանի նման կարծրատիպերի, քանի որ դրանցից յուրաքանչյուրի՝ առավել մանրամասն դիտարկումը առանձին հետազոտության խնդիր է:

Հայ քաղաքական մշակույթի ամենից ազդեցիկ գծերից է «պատմական կորուսյալ հայրենիքի» գաղափարը, որը կապված է Թուրքիայում 1915-1923թթ. հայության զանգվածային կոտորածների հետ: Նշյալ իրողությունը խոր ազդեցություն և դրոշմ ունի հայ ազգի հոգեկերտվածքի և արժեքային համակարգի ձևավորման, վերափոխման ու վերարժեւորման վրա: «Պատմական հայրենիքի» վերադարձի գաղափարը նախկինում համեմատաբար ավելի էր գերակայում ՀՀ քաղաքացիների, հայրենաբնակ և

¹³³ Տե՛ս Նալչաջյան Ա., նշվ. աշխ., էջ 343:

սփյուռքաբնակ հայության քաղաքական գիտակցության մեջ: Այն ներկայումս էլ առկա է ՀՀ-ի ներքին և արտաքին քաղաքական օրակարգերում: Կորուսյալ հայրենիքի և հայության բնաջնջման ծրագրի հեղինակ օսմանյան և երիտթուրքական Թուրքիայի իրավահաջորդ ժամանակակից Թուրքիայի նկատմամբ վերաբերմունքը, ըստ էության, երկար տարիներ ածանցվել և մասամբ նաև այսօր ածանցվում է հենց նշյալ գործոնից: «Թուրքի» կերպարն այս պարագայում նույնացվում է թշնամու հետ՝ դրանից բխող բացասական բոլոր հետևանքներով:

Կարևորագույն հաջորդ գործոնը 1918-20թթ. Հայաստանի առաջին հանրապետության գոյության փաստն է, որի ոգեղենությամբ մասամբ պայմանավորվեց 1988թ. ազգային վերածննդի հուժկու ալիքը՝ 1991թ. հանգեցնելով Հայաստանի անկախ հանրապետության հռչակմանը:

Ազգային շահի ձևորոշման գործընթացում առանցքային իր դերակատարումն ունի նաև «ղարաբաղյան հակամարտության» գործոնը, որը հայի հոգեբանության մեջ զուգորդվում է պատմական հայրենիքի մի մասի վերադարձի, հայ ազգաբնակչության անվտանգության ապահովման և տարածաշրջանային նվաճողականողականությանը դիմագրավելու գերխնդիրների հետ: Վերջինիս տակ հայ քաղաքական գիտակցության մեջ ավանդաբար դիտվում է թյուրք էթնոսին պատկանող ազգերի տարածաշրջանային հավակնոտ քաղաքականությունը: Այս իրավիճակում գոյատևման խնդիր լուծող հայ ազգը և հայկական պետությունը, ելնելով սեփական անվտանգության ապահովման հրամայականից, հաճախ հայցում են դաշնակից՝ աշխարհագրորեն Հվ.Կովկաս տարածաշրջանից դուրս գտնվող պետությունների օգնությունը՝ արդյունքում օբյեկտիվ կախման մեջ ընկնելով նրանցից: Պատմաքաղաքական վերոնշյալ առանձնահատկությունները պայմանավորեցին ոչ միայն հայ քաղաքական մշակույթի կողմից ազգային շահի կարևորման յուրահատկությունները, այլ նաև այդ շահերի կրողների բնույթը:

1991թ. անկախացմամբ Հայաստանն իր առջև խնդիր դրեց կայանալ որպես ժողովրդավար և ազատական պետություն՝ հասկացությանը բնորոշ բոլոր բնութագրիչներով: Սակայն հայ քաղաքական համակարգի ձևավորման պայմանների յուրահատկությունն այն է, որ համակարգը ձևավորվել (ձևավորվում) է շահերի երեք կենտրոններից, որոնք են՝ ՀՀ հասարակությունը, ղարաբաղյան հակամարտության փիլիսոփայությունը և հայկական սփյուռքի գործոնը: Նշյալ բոլոր երեք շրջանակներում վերջին տասնամյակի ընթացքում ձևավորվել են փոխկապակցված քաղաքական տեսլականներ, իշխանության կենտրոններ ու քաղաքական շահեր: Հենց վերը նշյալ եռամի-

ասնությունն է որոշում հայ քաղաքական համակարգի զարգացման սկզբունքների գրեթե ողջ միջակայքը՝ իրենով պայմանավորելով այդ համակարգի անվտանգության և զարգացման ընդհանուր միտումները: Փաստորեն կառուցվածքային նշված բոլոր տարրերն ազգային ինտեգրացիոն քաղաքական համակարգի փոխկապակցված օղակներն են, չնայած ձևային(ֆորմալ) տեսանկյունից ՀՀ ազգային շահերը ձևորոշելու մենիշխան իրավունքը պատկանում է ՀՀ քաղաքացիներին և նրանց ինքնիշխան քաղաքական կամքն արտահայտող պետական իշխանությանը: Դա, սակայն, չի խոչընդոտում, որ ՀՀ ազգային շահերի սահմանման հիմնական օղակների միջև ժամանակի ընթացքում ձևավորվի փոխհարաբերությունների կայուն համակարգ, որի պայմաններում ԼՂ իշխանությունը ֆինանսատնտեսական և ռազմական առումով կախվածության մեջ է ՀՀ իշխանությունից, ՀՀ իշխանությունը խիստ շահագրգիռ է ԼՂ խնդրի կարգավորման հարցում, սփյուռքահայությունը և սփյուռքի քաղաքական ուժերը փոխկախվածության մեջ են ՀՀ ղեկավարությունից և ԼՂ խնդրի լուծման միտումներից: Ազգային քաղաքական համակարգի առանձին օղակների կառուցվածքային նման փոխհարաբերությունները կանխորոշեցին համակարգի զարգացման ընդհանուր բնույթը՝ պայմանավորելով բոլոր երեք կողմերի միջև առկա հետագա համաչափ կամ անհամաչափ փոխազդեցությունը:

Ժամանակակից աշխարհում ազգ-պետությունների ինքնիշխանության գաղափարի վրա հիմնված ազգային շահերի ընկալումներն աստիճանաբար փոխարինվում են պետության և ազգի միջև առկա հարաբերությունների ավելի բարդ համակարգով: Այն իր մեջ ներառում է ինչպես ազգային շահերի՝ որպես պետության գիտակցված պահանջմունքների աշխարհաքաղաքական ընկալումը, այնպես էլ հիմնվում աշխարհում տարասփյուռ հայ ազգի՝ որպես արժեքի գոյապահպանման ելակետային դրույթի վրա: Նշյալ համակարգը միավորող գաղափարը պետության և ազգի համահունչ փոխգործակցության տիպօրինակն է: Ավանդական ընկալմամբ ազգը, իր շահերի իմաստավորման գերխնդիրը գրեթե ամբողջովին փոխանցելով պետությանը, փաստորեն «դուրս է եկել» նրա տարածական սահմաններից: Այն գլոբալ մրցասպարեզի՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական և այլ ոլորտներում հետապնդում է պետական շահերին զուգահեռ նպատակներ՝ առաջ բերելով ազգերի միջև մրցակցության երևութական ասպարեզ: Նման պայմաններում մրցակցությունը վերածվում է մի կողմից՝ հայրենի պետության տարածքների պաշտպանության, ընդարձակման և վերահսկողության, մյուս կողմից՝ տարբեր մրցադաշտերի գլոբալ խճանկարի մեջ որոշակի արժեքների գերակայության համար

ընթացող պայքարի: Այս համատեքստում, այսինքն իր ազգային կեցության բնօրրան հայրենիքից դուրս, «հայկական» գործոնի բարձր մրցունակության ապահովման կարևորության խնդիրը կարելի է դիտել որպես ՀՀ ազգային շահերի բաղադրամաս:

Մրցակցային նոր միջավայրը, ուր ազգային շահերը կառուցվածքային առումով դրսևորվում են ոչ միայն տարածքային, այլև արժեքային հարթությունների վրա, և որտեղ առաջին պլան է մղվում ազգի մտավոր ներուժի իրացման խնդիրը, բնորոշ է ինքնատիպ քաղաքակրթություն, նրանից բխող՝ մտավոր ներուժ, սփյուռք ունեցող այնպիսի ազգերին, ինչպիսին հայ ազգն է, որն, ի դեմս Հայաստանի Հանրապետության, արդեն ունի նաև իր հնարավորությունների ու ներուժի կենտրոնատեղի՝ անկախ և ինքնիշխան պետություն: Մինչ ժամանակակից քաղաքական հրամայականներին համահունչ ձևակերպում ստանալը՝ առնվազն վերջին չորս դարերի ընթացքում, ազգային շահերի հայկական ընկալումն անցել է զարգացման մի քանի շրջափուլ:

Ազգային շահի հայկական ընկալման առաջին փուլն ամանցվում է միջնադարյան կրոնակեղեցական այն մոտեցումներից, որոնց համաձայն՝ հայկական անկախ պետության բացակայության պայմաններում (ընդհուպ մինչև 18-րդ դարը) ազգային շահերը հանդես են եկել որպես Հայ առաքելական եկեղեցու կողմից ղեկավարվող կրոնական համայնքի շահեր՝ իրենց մեջ ներառելով ազգ-եկեղեցի բանաձևման միջակայքը: Հարկ է նշել, որ ազգային շահերի ձևորոշման գրեթե բոլոր փուլերում հայ եկեղեցին կարևորագույն դերակատարում է ունեցել՝ պայմանավորելով ազգի առջև ծառայած գոյատևման հրամայականն ապահովելու կոնկրետ գործողությունները:

Ազգային շահի վերաբերյալ պատկերացումներն ուրույն բնույթ ստացան 18-րդ դարում, երբ հայ քաղաքական միտքն իր մեջ հանրագումարեց Իսրայել Օրու, Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի գաղափարները, որոնք կազմեցին ազգային շահերի հայ ընկալման երկրորդ շրջափուլը: Այս շրջանում ազգային շահի հայկական ընկալումն ըստ էության հանգում էր թուրք-պարսկական լծից հայ ազգի ազատագրությանը, ինքնավարությանը և ինչու չէ, անգամ ինքնիշխան պետության կառուցման նպատակին, որն «Ի.Օրու և Հ.Էմինի դեպքում կապվում էր քաղաքական և դիվանագիտական ծրագրերի իրագործման, Մ.Բաղրամյանի դեպքում՝ հայ ազգի ներուժի վերածննդի, իսկ Շ.Շահամիրյանի մոտ հայ-ռուսական դաշինքի և Սահմանադրության հետ»¹³⁴:

¹³⁴ Տե՛ս Մանուչարյան Գ., Դրվագներ Գայ քաղաքական մտքի պատմության, Եր., 2002, էջ 121:

Ազգային շահի հայ ընկալման երրորդ շրջափուլն իր մեջ ամբողջացրեց 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակն ընկած ժամանակաշրջանում քաղաքական բանավեճերի առարկա հանդիսացող նպատակներն ու խնդիրները: Սա շրջան էր, երբ համաշխարհային զարգացումների կենտրոնը դարձավ Մերձավոր Արևելքը, իսկ «Արևելյան հարցը» վերածվեց Օսմանյան կայսրության լծի տակ հեծող ազգերի ազատության և ինքնորոշման հարցի լուծման հնարավոր տարբերակի: Նմանօրինակ պայմաններում սահմանազատվում և համախմբվում էին հայ ազգի՝ քաղաքական, գիտական և մշակութային ուժերը: Ըստ էության, հայ ազգի ազատագրման և հայկական պետության կառուցման նպատակը դարձավ այն հիմնական գործոնը, որը հայ քաղաքական դաշտում «խթանեց» տարաբնույթ քաղաքական հոսանքների (կղերաֆեոդալական, լիբերալ-բուրժուական, հեղափոխական, դեմոկրատական) և քաղաքական կուսակցությունների («Արմենական», «Հայ սոցիալիստ-հեղափոխականների (հնչակյան)», «Հայ հեղափոխական դաշնակցության») միջև քաղաքական երկխոսության ծավալումն ու ազգի փրկության գործողությունների նոր ծրագրերի քննարկումները:

Քաղաքական գործընթացների տեսակետից այս ժամանակահատվածում Հայաստանը ներկայացվում է որպես «Արևելյան հարցի», ռուս-թուրքական պատերազմների և ազգային ազատագրական շարժումների թատերաբեմ, սոցիալ-տնտեսական տեսակետից՝ ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնող բնակատեղի-երկիր, քաղաքակրթության տեսակետից՝ Արևմտյանի՝ Լուսավորիչների, հեղափոխական-դեմոկրատական ու նարողնիկական գաղափարների տարածման կենսադաշտ¹³⁵: Այս շրջանում հայ ազգի նախորդ դարաշրջանների պատմական իրողությունները հանգեցրեցին այն համոզման, որ թուրքական և պարսկական լուծը հնարավոր է թոթափել միայն Ռուսաստանի օգնությամբ: Դա 1804-1813թթ. և 1826-1828թթ. ռուս-պարսկական և 1806-1812թթ. և 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմների հետևանքն էր, որի ժամանակ հայերն օժանդակում էին ռուսական զորքերին և որի արդյունքում Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Մինչդեռ Արևմտյան Հայաստանն այս պատմաշրջանում իրենից ներկայացնում էր թուրքական և քրդական կիսանկախ իշխանությունների բաժանված մի շրջան, որը Ռուսաստանի համար Դրիմի պատերազմի անհաջող ելքից հետո դարձավ 1877-1878թթ. ռուս-թուրքական նոր պատերազմի պատճառ: Ռուս-թուրքական նշյալ պատերազմը

¹³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 157:

հայ ազգի համար հատկանշական էր այն տեսանկյունից, որ պատերազմի հետևանքների վերացմանն ուղղված նախ՝ Սան-Ստեֆանոյի պայմանագրում, ապա՝ Բեռլինի համաժողովում, Օսմանյան կայսրության գերիշխանության տակ գտնվող ազգերի ու ժողովուրդների (այդ թվում նաև հայերի) ազատության և ինքնորոշման հիմնախնդիրները միջազգային դիվանագիտության օրակարգ ներմուծվեցին՝ նշյալ հարցին տալով միջազգային քաղաքական բովանդակություն: Սրանով փաստորեն միջազգային դիվանագիտության թատերաբեմ ներառվեցին նախ «Արևմտյան Հայաստանի բարենորոգումներ», ապա՝ «ինքնավարության խնդիրներ» ձևակերպումները, որոնք հավաքական կերպով կարելի է անվանել «Արևելյան հարցի» հայկական բաղադրամաս կամ «Հայկական հարց»: Այս տեսանկյունից «Հայկական հարցի» դրույթներն իրենց մեջ լիովին կարող են ամբողջացնել ազգային շահի՝ հայ ընկալման երրորդ շրջափուլը: «Հայկական հարցն» այս իրավիճակում ըստ էության արևմտահայերի գոյավիճակի և քաղաքական ճակատագրի հարցն է, որոնք գտնվելով Օսմանյան կայսրության տիրապետության տակ՝ ենթարկվել են սոցիալ-քաղաքական ճնշումների, ազգային ու կրոնական հալածանքների¹³⁶: Նշյալ տեսանկյունից Օսմանյան կայսրության գերիշխանության տակ գտնվող հայ ազգի ազգային շահերը ձևակերպվում են որպես կայսրության տարածքում բնակվող հայ ազգի ֆիզիկական և հոգևոր անվտանգության, սոցիալ-տնտեսական բարեփոխումների և ինքնավարության շահեր, որոնք հեռանկարում կարող են վերաճել ինքնիշխան պետության կառուցման շահերի:

Ազգային շահի ընկալման հաջորդ փուլն իր մեջ ամբողջացրել է անկախության ձեռքբերման և տարածքների ամբողջացման խնդիր ունեցող ազգի պետականաստեղծման քաղաքական շահերը՝ դրսևորվելով ազգ + հայրենիք = պետություն բանաձևմամբ: Հայացքների նշյալ համակարգը՝ «Հայ դատի» պատմական հայեցակարգն է, որ հայկական սփյուռքում և ՀՀ որոշ շրջանակներում դիտվում է որպես ՀՀ ազգային շահերի գերակա հանրագումար: Նշյալ պատկերացումներն իրենց հստակ ձևակերպումը ստացել են հայկական սփյուռքում՝ իրենց մեջ ամբողջացնելով նպատակների հետևյալ միակցությունը. միջազգային հանրության շրջանակներում ներկայիս Թուրքիայի կողմից 20-րդ դարասկզբի իրականացված հայ ազգաբնակչության ցեղասպանության փաստի՝ առաջին հերթին Թուրքիայի կողմից ընդունում և ճանաչում, ներկայումս Թուրքիայի տարածքում գտնվող կորսված հայկական պատմական տարածքների և այլ

¹³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 162:

սեփականության վերադարձ հայազգի սեփականատերերին և/կամ նրանց սերունդներին, աշխարհով սփռված հայության վերադարձ Թուրքիայի ներկայիս տարածքում գտնվող հայկական պատմական բնակավայրեր:

Հայ դատի սկզբունքներն, ըստ էության, հիմնվում են հայկական պատմաքաղաքական այն ավանդույթի վրա, համաձայն որի՝ որպես ՀՀ ազգային անվտանգության հիմնական սպառնալիք է դիտվում տարածաշրջանային նվաճողականությունը: Անվտանգության ապահովման ռազմավարական այդօրինակ վտանգի ընկալումն ինչ-որ առումով ձևավորել է տարածաշրջանում հայկական մեկուսացվածության քաղաքականություն, որն իրականացվում էր և ներկայումս մասամբ իրականացվում է տարածաշրջանից դուրս գտնվող արտաքին ուժերի հետ ռազմավարական գործակցության միջոցով: Նշված քաղաքականությունն իր առաջնայնությունը միշտ տվել է հարևան երկրներից հայ ազգի հոգևոր մեկուսացվածությանը և տարածաշրջանից դուրս գտնվող արտաքին ուժերի հետ ռազմական համագործակցությանը: Ազգի զարգացման պայմանների նման դիտարկումը ժամանակի ընթացքում ձևակերպվել է որպես քաղաքական հայացքների բարդ համակարգ, որը 20-րդ դարում ձևավորել է ազգային շարժումներ՝ հավակնելով պետական մակարդակում քաղաքականության կերտման: Նշված հայեցակարգն այս կամ այն կերպ ընդունվում է գրեթե բոլոր քաղաքական ուժերի և կուսակցությունների կողմից թե՛ ՀՀ-ում, թե՛ Սփյուռքում: Որպես նշյալ հայեցակարգի աշխարհընկալման հիմք՝ դիտվում է պատմական տարածքների և տարածքային հավակնությունների հայ ազգի իրավունքը:

Ազգային շահի ընկալման հայկական մոտեցման մի յուրօրինակ ժամանակաշրջան էր հայկական առաջին հանրապետության ձևավորումը: Նորանկախ հանրապետությունում, որը պատերազմի, տնտեսական ճգնաժամի, սոցիալական աղետի շեմին էր կանգնած և դիմակայում էր մի կողմից թուրք-թաթարական, մյուս կողմից՝ խորհրդային համայնավարների վտանգին, ազգային շահի ընկալումը նույնացվում էր պետականության և ազգի կենսական շահերի ապահովման հետ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո ազգային շահի հայ ընկալումը բավականին լուրջ փոփոխություններ կրեց՝ կապված որհրդային Միությունում ՀԽՍՀ դերի, իրավական և գործնական կարգավիճակի յուրահատկությունների հետ: Ջրկված լինելով ինքնիշխան պետության հիմնական բնութագրիչներից և անկախ պետական քաղաքականություն վարելու հնարավորությունից՝ խորհրդային վարչակարգը կեղծ համարեց հայ

ազգի քաղաքական գիտակցությունից բխող և հայ ազգային շահի ընկալմամբ պայմանավորված մի շարք դրույթներ՝ հայտարարելով դրանք անօրինակական և «ազգայնական»: Չնայած դրան, 1960-ականներից ազգային ինքնագիտակցության վերելքը կանխորոշեց հայ տեսակի պատմական հիշողության վերածնունդը և մասամբ նաև «Հայ դատի» գաղափարների գործարկումը, որը ձևային բնույթ չէր կրում և սահմանափակվում էր ազգապահպան գործունեությամբ: Փաստորեն, ազգային շահի հայ ընկալումը խորհրդային տարիներին ածանցվում էր համայնավարական գաղափարախոսության սկզբունքներից և ԽՍՀՄ-ի՝ որպես ինքնիշխան պետության գոյության ձևային միջակայքից:

1991թ. Հայաստանի անկախ հանրապետության ձևավորմամբ հայ ազգաբնակչության և նոր ձևավորվող հայ քաղաքական ընտրանու մի մասի շրջանում «Հայ դատի» նկատմամբ վերաբերմունքը որոշակիորեն փոխվեց: «Հայ դատի» ավանդական մոտեցումներն ազգային շահի հայեցակարգ ներառել-չներառելու շուրջ քննարկումների արդյունքում, 20-րդ դարի 90-ականների սկզբին որպես ազգային շահի հայեցակարգի ելակետ ընդունվեցին ՀՀ անկախության պաշտպանության և ԼՂ անվտանգության, ՌԴ-ի հետ ռազմավարական գործընկերային հարաբերությունների ապահովման և ՀՀ-ի՝ Եվրակառույցներին ինտեգրման հիմնադրույթները, տարածաշրջանային համագործակցությունը և ՀՀ-ի՝ Սև ծովի և Պարսից ծոցի նավահանգիստներ ազատ մուտքի ապահովման առաջնայնությունները: Այս շրջանում ՀՀ պետական քաղաքականության կողմից առաջադրված ռազմավարական խնդիրներից մեկը Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումն էր, որը զուգորդվեց ՀՀ-ում քաղաքական փոխհարաբերությունների որակական նոր փուլի անցման հետ: Արդյունքում՝ արդեն 1990-ականների վերջում, ազգային շահի քաղաքական բաղադրատարրը որոշակի փոփոխություններ կրեց: ՀՀ նորագույն պատմության այս շրջանում ազգային շահի արժևորումներն աստիճանաբար սկսեցին համընկնել նրա դասական եվրոպական ընկալումներին: Ազգային շահը սկսեց դիտվել որպես ազգի նպատակները հետապնդող ու արժեքները պաշտպանող պետության գիտակցված պահանջումների հանրագումար: Վերոնշյալին զուգահեռ քաղաքակրթական փոփոխությունները հանգեցրին նրան, որ գլոբալացող աշխարհում և հատկապես՝ նրա եվրատլանտյան հատվածում ազգի և պետության փոխհարաբերությունները որակական նոր տեսք ստանան: Այս պայմաններում ՀՀ ազգային շահերի ուղենշման տեսանկյունից նման «վերաիմաստավորումը» հնարավոր է միայն, եթե, հաշվի առնելով արդի աշխարհում ազգային

շահի հայեցակարգի ընկալման գերակա մոտեցումները և ՀՀ պետական և ազգային կեցության առանձնահատկությունները, ազգային շահերին վերաբերող հայկական բոլոր պատկերացումները վերադասավորվեն որպես ազգային-քաղաքական առաջնահերթությունների աստիճանակարգային համակարգ: Նշյալը շահերի իրացման գործընթացի վերջնահանգրվանում, մեր կարծիքով, կհանգեցի ազգային շահերի ամբողջական ու միասնական ընկալման: Ընդ որում, բարդ ու բազմաբնույթ առաջնահերթությունների այսօրինակ համակարգում պետության անվտանգության ապահովումը պետք է դիտվի որպես առանցքային արժեք՝ միաժամանակ դառնալով այն առանցքը, որի շուրջ է միայն հնարավոր, ըստ սուբյեկտային և դրսևորման ոլորտային բնութագրիչների ձևավորել ՀՀ ազգային շահերի հավասարակշռությունը:

Որոշակիորեն ամփոփելով՝ կարելի է նշել, որպես ՀՀ ազգային շահերի կրողներ հանդես են գալիս ՀՀ *քաղաքացիները, հայրենաքնակ հայությունը (Արցախ, Չավախք և այլն) և Սփյուռքի հայկական համայնքները*: Նրանք հավասարակշռում են իրենց շահերը հայկական պետության հանդեպ սեփական պարտավորություններից բխող իրավական և արժեքային սանդղակի հիման վրա, որի՝ որպես գիտակցված շահերի ամբողջության հավասարակշռությունն իր մեջ է ներառում ազգային շահի տարածական և արժեքային հարթությունները: Տարածական հարթությունն ապահովում է ազգային անվտանգության, այսինքն՝ պետության, հայրենաքնակ հայության ու ինչ-որ առումով նաև հայկական համայնքների գոյատևման խնդրի գերակայությունը, մինչդեռ արժեքային հարթությունն ազգային շահերի արժեքային ընկալման այն լայն դիտանկյունն է, որի միջով ազգային անվտանգության գերակայությունները տարբաշխվում են ազգային շահերի դրսևորման որոշակի ոլորտների և նրանց հարաբերակցության ապահովման առավելագույն նպաստավոր տարբերակի:

Մեր կարծիքով, ժամանակակից աշխարհում ՀՀ ազգային շահերը ՀՀ *քաղաքացիների, հայրենաքնակ հայության և Սփյուռքի հայկական համայնքների շահերի հավասարակշռված հանրագումարն է*, որի ձևավորման միջոցով մրցակցային նոր միջավայրում լուծվում են գիտակցված պահանջմունքների վերածված ազգային նպատակների հետապնդման և արժեքների պաշտպանության խնդիրները: Ազգային շահերի տարածական հարթության խնդիրները կարգավորվում են ազգային անվտանգության հայեցակարգի, իսկ արժեքային հարթության մակարդակում առկա խնդիրներն իրենց լուծումն են գտնում ողջ աշխարհում «հայկական» գործոնի մրցունակության ապահովման գործողությունների միջոցով: Հարկ է

նշել, որ երկու հարթություններում առկա խնդիրները տարանջատվում են միևնույն՝ քաղաքական, տնտեսական, հոգևոր, մշակութային, գիտական և այլ ոլորտների, ուստի կարող է առաջ գալ ազգային շահերի պաշտպանության որոշակի ոլորտներին զուգահեռաբար տարբեր ուղեգծերից մոտենալու անհրաժեշտություն, որը չպետք է տարանջատի ազգային շահերի ապահովման որևէ ոլորտի ամբողջականությունը: Մա նշանակում է, որ նման դիտանկյուններն անհրաժեշտ են հայի գիտակցված պահանջ-մունքների՝ մի կողմից՝ շարունակականության, մյուս կողմից՝ որակական չափորոշիչների մեծացման գործընթացի հավասարակշռման համար՝ հայկական պետությանը գոյատևման ու զարգացման խնդիրների համաժամանակյա լուծման հնարավորություն ընձեռելով:

Որպեսզի հստակ պատկերացնենք ՀՀ-ի ռազմավարական խնդիրների համակարգը, մասնավորվելով նրա առաջնահերթ նպատակները պայմանավորող անվտանգության և արտաքին քաղաքական հարթության վրա, անհրաժեշտ է վերհանել ազգային շահի իրականացման հիմնական խնդիրները և դրանց սպառնացող վտանգները: Այդօրինակ վերհանումը հնարավորություն է տալիս գնահատել այս կամ այն նպատակի առաջնահերթությունը շահերի ընդհանուր ներկայանակում: Սակայն հարկ է նշել, որ ճշմարիտ չէ այս կամ այն քաղաքական երևույթը և/կամ գործոնը միանշանակ դիտել որպես ազգային շահին սպառնացող վտանգ կամ նրա իրականացման հնարավորություն, քանզի դա նեղացնում է ռազմավարական դիտարկման միջակայքը՝ վտանգվելով ոչ միայն ազգային շահի ձևակերպման, այլև իրացման հնարավորությունները: Հետևաբար անհրաժեշտ է տարանջատել միջազգային հարաբերությունների կարևորագույն այն ոլորտները, որոնք առավել մեծ ազդեցություն են ունենում ոչ միայն հարավկովկասյան աշխարհաքաղաքական զարգացումների, այլ նաև ՀՀ ազգային շահերի իրացման վրա, քանզի կարող են դիտվել որպես սպառնալիք կամ շահի իրականացման հնարավորություն՝ ազդելով ՀՀ արտաքին քաղաքական ռազմավարության ձևակերպման վրա: Որպես այդօրինակ ոլորտներ կարելի է դիտել ռուս-թուրքական, ռուս-վրացական և ռուս-ադրբեջանական հարաբերությունները, տարածաշրջանի թյուրքալեզու երկրների ինտեգրացիոն միտումները, ռուս-ամերիկյան փոխհարաբերությունները, ԱՄՆ - Վրաստան, Ադրբեջան և Իրան շփումները, թուրք-վրացական համագործակցությունն ու Եվրամիության շահերը տարածաշրջանում: Աշխարհում իրականացվող համաշխարհային փոփոխությունների և պետությունների փոխհարաբերությունների նոր ձևերի պայմաններում հարաբերությունների նշված ոլորտների վիճակն իր մեջ ներառում է ինչ-

պես ՀՀ ազգային շահերին սպառնացող վտանգների, այնպես էլ դրանց իրականացման հնարավորությունների համակարգ: Այս համատեքստում հատկապես կարևոր նշանակություն է ձեռք բերում պետության՝ տարածաշրջանային և միջազգային հարաբերություններում աշխարհաքաղաքական դերակատարման որոշումը, տարածաշրջանում քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բնույթի նվաճողականության, արտաքին համակարգային կախվածության և ռազմական հակամարտության վտանգները: Վերոբնակյալ գործոնները ՀՀ-ի համար ձեռք են բերել Թուրքիայի և Ադրբեջանի կողմից տարածքային շրջափակման, Ադրբեջանի հետ ռազմական հակամարտության, Թուրքիայի հետ դիվանագիտական վակուումի դրսևորումներ: ՀՀ-ի ազգային շահերի և այդ շահերին սպառնացող ներքին և արտաքին վտանգների, նրանց իրականացման հնարավորությունների մասին եզրահանգումները հնարավորություն են ընձեռում վերհանել ՀՀ-ի առջև ծառայած ռազմավարական խնդիրների այն ամբողջությունը, որը միջազգային հարաբերությունների համակարգում որոշում է նրա քաղաքական դերն ու նշանակությունը: Այդօրինակ իրավիճակում տրամաբանական է սեփական անվտանգության և զարգացման հրամայականների հիմքով կոմպլեմենտար արտաքին քաղաքական ուղեգծի գործարկումը, քանզի հավասարակշռման և փոխյրացման քաղաքականությունը կարող է ընդլայնել արտաքին քաղաքականության մեջ հնարավոր խուսանավումների միջակայքը՝ փորձելով առավելագույնս մեծացնել ազգային շահերի իրականացման աստիճանը:

3.2 ՀՀ ազգային շահերի ու անվտանգության արտաքին քաղաքականությունը հարավկովկասյան նոր իրողությունների ներքո

Աշխարհառազմավարական այն զարգացումները, որ տեղի ունեցան 20-րդ դարի վերջին քառորդում ունեցան համերկրային ազդեցություն՝ իրենցից անմասն չթողնելով նաև աշխարհաքաղաքական նոր որակ ստացած Անդրկովկասը կամ Հվ.Կովկասը: Աշխարհաքաղաքական նոր միջավայրում գլոբալ քաղաքական նորօրինակ տեղաշարժերը կանխորոշեցին, որ Հվ.Կովկասը «քաղաքական լուսանցքի» երբեմնի իր կարգավիճակից վերածվի աշխարհաքաղաքական շահերի հանգուցակետի: Շահերի բախման նման հանգուցակետում էլ վերջին քսան տարվա ընթացքում ազգային շահերի հիմքով պետական քաղաքականություն է կերտում Հայաստանի Հանրապետությունը: Նրա ազգային շահերի և անվտանգության արտաքին քաղաքականությունը, որն առաջին հայացքից կարող է հակասական թվալ, իրականում պատմական և աշխարհագրական գործոնների բնական համադրման արդյունք է: ՀՀ արտաքին քաղաքականության և ազգային շահերի իրացմանը միտված գործողությունների հաջորդականության ժամանակակից մոտեցումներն անցել են ձևավորման և կայացման մի դժվարին շարժընթաց, որի արդյունքում են միայն ձևորոշվել որպես առաջնային միջավայրում հայկական պետության անվտանգության ապահովման արտաքին ողջամիտ և ռացիոնալ քաղաքականություն: Մինչ ներկայիս ձևակերպում ստանալը, ՀՀ արտաքին քաղաքականության և ազգային շահերի իրականացման մոտեցումները կայացման իրենց գործընթացում պարբերաբար կրել են առանձնակի կարևոր ներքին (պետականակերտման գաղափարախոսական մոտեցումներ, արտաքին քաղաքականության իրացման վերաբերյալ ավանդական դիրքորոշումներ, արտաքին սպառնալիքների և շահերի մասին պատկերացումներ) և արտաքին (տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակ և պետությունների տարբեր դերակատարություններ, հաղորդակցման ուղիների կարգավիճակ, շրջափակում, ճգնաժամային և կոնֆլիկտային վիճակներ) մի շարք գործոնների տարաբնույթ ազդեցությունը: Այսօրինակ ազդեցության ներքո պետականության վերականգնման նախնական փուլում արտաքին քաղաքականության մի շարք ձևակերպումներ և դրսևորումներ ներկայացել են ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման, պետության անվտանգության ապահովման, անկախացման, ազգա-

յին շահերի առաջնայնության պաշտպանության՝ հանրային օբյեկտիվ պահանջների հանրագումարի տեսքով: Նման ոչ միանշանակ իրավիճակում ներկայացվեցին արտաքին քաղաքականության և ազգային շահերի ապահովման գործողությունների առաջին տեսական փորձերը՝ «զնացքից թռչելու ժամանակը» մտահանգումն ու «երրորդ ուժի բացառման» սկզբունքը, որոնք ավելի շուտ հրապարակախոսական բանաձևումներ էին, քան համապարփակ հիմնավորված եզրահանգումներ: Այս դիտանկյունները չնայած նոր էին հայկական արտաքին քաղաքական դիրքորոշումների շարքում, սակայն իրենց մեջ դեռևս պահպանում էին քարացած մի շարք տեսակետներ, որոնց մեջ հիմնավորվում էր կողմնորոշման քաղաքականության շահավետությունն ազգային անվտանգության ու ազգային շահերի իրացման տեսանկյունից: Հայաստանի նորանկախ հանրապետությունում առաջին տեսությունների դերակատարումն անկասկած խիստ կարևոր էր, քանի որ դրանք կոտրում էին, անվերապահորեն մոտալուտ, ընդհուպ մինչև առասպելականացված թուրքական վտանգի կողմից ոչնչացման և դրանից ռուսական փրկության համադրությունը: Փաստացիորեն առաջարկվում էր գործունեության նոր ուղեգծեր, աշխարհաքաղաքական նոր ինքնաընկալումներ: Սակայն քաղաքական զարգացումների հետագա շարժընթացը, իրենով պայմանավորելով արտաքին քաղաքական հայեցակարգային փոփոխությունների անհրաժեշտությունը, ձևակերպվեց որպես «բոլոր հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններ ունենալու» և «չկան մշտական բարեկամներ, կան մշտական շահեր» բանաձևումների տեսքով: Նշյալ մոտեցումները փորձում էին ՀՀ անվտանգությունն ու ազգային շահերի իրականացումն ապահովել չեզոքության ձգտող կարգավիճակների հաշվին՝ հավասարակշռելով արտաքին քաղաքականության բոլոր ուղղությունները: Նոր մոտեցումներն իրենց մեջ ամբողջացնում էին անվտանգության ապահովման, տնտեսական համագործակցության, հաղորդակցման հաստատման, պետության կյանքում պատերազմի և խաղաղության տեղի հստակեցման, պետության համար ճգնաժամային պայմաններում դիվանագիտական գործելաոճի, միջոցների զինանոցի կուտակման և այլ հիմնադրույթներ: Նոր մոտեցումների ձևակերպմանը զուգահեռ ԼՂ խնդրի կարգավորման գործընթացները և պատերազմական դիվանագիտության փորձի կուտակումն աստիճանաբար ձևավորեցին հայկական արտաքին քաղաքական հիմնադրույթի այլ ուրվագծեր և ս, որոնց համաձայն երրորդ ուժի միջամտությունը հնարավոր չէ բացառել, քանզի հարավկովկասյան աշխարհաքաղաքականությանը մասնակից պետությունների շահերը մրցակցում են, հետևաբար

Հայաստանի դիվանագիտությունը պետք է կարողանա խուսանավել գերտերությունների միջև՝ հավասարակշռելով իր հարաբերությունները նրանց հետ: Նշյալ մոտեցումը գործնական իր դրսևորումը ստացավ տնտեսության զարգացման ոլորտում արևմտյան ինստիտուտների հետ ակտիվ համագործակցության մեջ, ռազմաքաղաքական խնդիրներում՝ ՌԴ-ի հետ և ԱՊՀ կառույցներում համատեղ քաղաքականության կերտման շրջանակում՝ զուգահեռաբար իր հնարավոր նվազագույն մասնակցությունն ապահովելով նաև արևմտյան անվտանգության համակարգերին ու ծրագրերին: Այս պարագայում ԼՂ և ՀՀ-ի իշխանությունների միջև իրողություն դարձավ երկու պետությունների գործողությունների համակարգման և համատեղ դիրքորոշմամբ հանդես գալու անհրաժեշտությունը, որի պայմաններում «դարաբաղյան» գործոնը հանդես էր գալիս որպես ՀՀ կողմից վերահսկվող, բայց ինքնուրույն դերակատար: Առանձնակի կարևոր այլ ոլորտում՝ հայ-թուրքական հարաբերություններում, պահպանվեց հայոց ցեղասպանության փաթեթից արմատականացման անցնելու մոտեցումներից հրաժարվելու դիրքորոշումը:

Այս կերպ, արտաքին քաղաքականության և ազգային շահերի ապահովման տեսանկյունից հայ ազգի «երեք հատվածների»՝ Հայաստանի, ԼՂ-ի, Սփյուռքի առաքելության աստիճանական հստակեցման հիմքեր էին ստեղծվում՝ ազգային ռազմավարության մեջ նրանցից յուրաքանչյուրին օժտելով համապատասխան դերակատարմամբ: Արդյունքում որոշակիացվեցին ՀՀ նորանկախ հանրապետության արտաքին քաղաքականության մի քանի հիմնական մոտեցումներ՝ Հայաստանը միանգամից չի ճանաչելու ԼՂ անկախությունը, ընդունելով սակայն ԼՂ-ի հետ փոխհամաձայնեցված որոշումների կայացման անհրաժեշտությունը: Նոր պայմաններում ցեղասպանության խնդրի լուծմանն ուղղված փաթեթի հիմնական սուբյեկտ դիտարկվեց Սփյուռքը, որը միջազգային ատյաններում ցեղասպանության հարցի բարձրացման պարագայում կստանա ՀՀ-ի տարակերպ աջակցությունը:

Այսպիսով, վատահորեն կարելի է փաստել, որ հարավկովկասյան ներկայիս իրողությունների պարագայում, երբ ռուսական կապերի հետ մեկտեղ Հվ.Կովկասն ունի հստակ տեսանկյունի իրանական կապ, թուրքական չափելիություն, ինչպես նաև վերտարածաշրջանային հարաբերություններ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի և Մերձավոր Արևելքի հետ, արտաքին քաղաքական և ազգային շահերի իրացման նախկին մոտեցումներն արդյունավետ չեն, քանի որ կողմնորոշման քաղաքականությունը տարածաշրջանային աշխարհաքաղաքական խճանկարի պայմաններում սպառվել է և

Ժամանակակից չէ: Ուստի, մի երկրի հետ հարաբերությունները չեն կարող բացառել այլ երկրների հետ հարաբերություններում շահերի դրական հավասարակշռության պահպանումը: Դրական հավասարակշռությունը շահերի համագործակցային հավասարակշռությունն է, որը ՀՀ արտաքին քաղաքական կոմպլեքսնտար (հանդուրժողական, փոխընդունելի) ուղեգծի գործառնման առանցքն է: Անդրադառնալով ՀՀ արտաքին քաղաքական ուղեգծին՝ նշենք, որ այն մի զգալի չափով ածանցվում է արտաքին քաղաքականության վարման դասական տիպոլինակներից և միայն հարմարեցված ու լրացված է ժամանակի պահանջներին համապատասխան: Այն, ըստ էության, ոչ ռազմավարական, ոչ էլ մարտավարական ուղեգիծ չէ, քանի որ Հայաստանի աշխարհաքաղաքական առաջային՝ հարավկովկասյան, և երկրորդային՝ մերձավորարևելյան միջավայրերում անհամաչափ պարբերականությամբ տեղի ունեցող փոփոխությունների պարագայում նույնիսկ ավելի մեծ ներուժ և քաղաքական ազդեցություն ունեցող պետությունները չեն կարողանում երկարաժամկետ ռազմավարություններ մշակել: Ուստի նման իրավիճակում ազգային շահերի իրացման և արտաքին քաղաքականության իրականացման ցանկացած մոտեցում ռազմավարական է այնչափ, որչափ համապատասխանում է քաղաքական իրատեսականության հրամայականներին ու պետության ազգային շահերի ապահովման հզորություններին: ՀՀ փոխլրացման ուղեգիծն ավելի շուտ մոտեցումների մի յուրօրինակ համակարգ է՝ պայմանավորված տարածաշրջանային աշխարհաքաղաքական վայրիվերումների ընդհանուր միտումներով: Այն խիստ դինամիկ է և ժամանակի ընթացքում Հվ.Կովկասի շուրջ կազմավորվող «ավազանային» կասպիական, սևծովյան, պարսից ծոցի, միջերկրական քաղաքական դաշտերի կտրվածքով իր մեջ կարող է նոր բաղադրատարրեր ամբողջացնել:

Ռազմավարական ներուժի օբյեկտիվ գնահատման տեսանկյունից ակնհայտ է, որ Հայաստանն իր սահմանակից ամբողջ շրջագծով անվտանգություն և զարգացում ապահովելու նպատակով պետք է ձգտի իր մասով ներդաշնակեցնել գերտերությունների տարածաշրջանային շահերը՝ չհայտնվելով դրանց մրցակցության կիզակետում: Իսկ դա հնարավոր է միայն տարածաշրջանային համագործակցության պայմաններում, որը պետք է ածանցվի հարավկովկասյան երկրների պետական քաղաքականության ճկունությունից: Հայաստանի դեպքում՝ որպես նման քաղաքականության տիպոլինակ ներկայանում է «քաղաքական իրատեսության», «չբացառման», «ներգրավման», «փոխլրացման» և «համագործակցության» գերակա սկզբունքներից ածանցվող ազգային շահերի սպասարկ-

ման և արտաքին քաղաքականության կերտման գործողությունների ամբողջությունը: Արտաքին քաղաքական նշյալ ուղեգիծը ՀՀ-ին հնարավորություն է ընձեռում պահպանել խուսանավման հնարավորությունը և համագործակցություն ծավալել շահագրգիռ բոլոր երկրների հետ, որպեսզի նվազագույնի հասցվի իրադարձությունների հնարավոր բացասական զարգացման ազդեցությունը և տարածաշրջանային գործընթացներից ՀՀ-ի քաղաքական և տնտեսական մեկուսացմանն ուղղված որոշ պետությունների ջանքերը: Սակայն հետագայում, ելնելով քաղաքական իրատեսականության հրամայականներից, փոխլրացման հայեցակարգի համագործակցության ծավալման առանցքային բաղադրամասի մասով Հայաստանի մոտեցման մեջ լրամշակումներ կատարվեցին՝ նպատակահարմար գտնելով կիրառել անվտանգության և պաշտպանության ոլորտում հարաբերությունների անհամաչափ շեշտադրում, քանզի այս կամ այն երկրի հետ գործակցության պարագայում նշյալ ոլորտներում թվաքանական հավասարություն չի կարող լինել: Միաժամանակ հարկ է նշել, որ անվտանգության ոլորտում փորձ է արվում հարաբերությունների նշյալ անհամաչափությունը հավասարակշռել այլ ոլորտներում փոխլրացման՝ շահագրգիռ սուբյեկտների հետ փոխգործակցությամբ, կամ անգամ նույն ոլորտի, սակայն ոչ նույն հիմնախնդիրների լուծման շուրջ համագործակցությամբ: Այս կերպ, Հայաստանի փոխլրացման քաղաքականությունը, հենվելով տարածաշրջանում մրցող տերությունների շահերին հարմարվելու և դրանցից օգուտ քաղելու սկզբունքի վրա, փորձում է ապահովել ինչպես իր, այնպես էլ տարածաշրջանային անվտանգությունը՝ փորձելով հարավկովկասյան անվտանգության և կայունության տեսանկյունից տարածաշրջանային շահերի կենտրոններին ներկայացնելով իր ձեռնարկած այս կամ այն քայլի նպատակահարմարությունը:

Ներկայումս փոխլրացման, այսինքն Հայաստանի ազգային շահերի և արտաքին մասնակի հավասարակշռված քաղաքականությունն իր գործնական արտահայտությունն է գտել պաշտոնական Երևանի քաղաքական այն ուղեգծերի մեջ, որտեղ նա ռազմավարական իր ներուժի մի մասով փորձում է դրական հավասարակշռություն պահպանել երկու խոշոր քաղաքական հանրագումարների՝ ռուսաստանակենտրոն և եվրատլանտյան համակարգերի միջև՝ հերթափոխելով և զուգադրելով սեփական երկրի անվտանգության և տնտեսական զարգացման հարաբերությունները նրանց հետ:

3.2.1 Ռուսաստանի Դաշնություն և հայ-ռուսական հարաբերություններ

Հվ.Կովկասում ներկայումս գլոբալ միտումները դրսևորվում են արտատարածաշրջանային տարբեր ուժերի շահերի բախմամբ, զուգամիտմամբ, փոխլրացմամբ: Տարածաշրջանային տարբեր ուժերի՝ ԱՄՆ, Թուրքիա, Իրան, շարքում ՌԴ-ն առանցքային ազդեցություն ունի: Դա օբյեկտիվ իրողություն է և կախված չէ տարածաշրջանային երկրներում իշխող քաղաքական էլիտաների նախապատվություններից¹³⁷, քանի որ ՌԴ-ն ունի տարածաշրջանային ազդեցության տնտեսական, ռազմաքաղաքական, էթնիկ տարբեր լծակներ:

Վերլուծելով Հվ.Կովկասում ՌԴ-ի քաղաքականությունը կարելի է արձանագրել, որ այն որքան պարզ, նույնքան էլ բարդ է. պարզ, քանի որ առկա է յուրահատուկ օրինաչափություն, համաձայն որի՝ ՌԴ-ի քաղաքականությունը Հվ.Կովկասում ռեֆլեկտիվ է և կարող է լինել բավական կոշտ, բարդ՝ առաջին հերթին այն պատճառով, որ.

- ռուսական քաղաքականության մեջ մինչ օրս թերևս չկա Հվ.Կովկասի տեղի և դերի վերաբերյալ ռազմավարական հռչակված տեսլական տարածաշրջանային երկրներից յուրաքանչյուրի հետ հարաբերությունների զարգացման պրագմատիկ մոտեցում,

- սեփական ռազմավարական շահերը՝ ամեն գնով պաշտպանելու նպատակադրումը ՌԴ-ի գործողությունները հաճախ դարձնում է առավել կանխատեսելի, ինչի արդյունավետությունը պահանջում է գործընկերների և մրցակիցների կողմից առավել հավասարակշռված և խոհեմ արձագանք,

- անգամ հարավկովկասյան երկրների համար, որոնք ՌԴ-ն դիտում են «սև» - «սպիտակ» գույներով, դժվար է պահպանել հավասարակշռությունը և նվազագույնի հասցնել ՌԴ-ի քաղաքականության «սիրո» կամ «ատելության» հետևանքները:

Անդրադառնալով Հվ.Կովկասում ՌԴ քաղաքական վարքի մոդելին՝ նշենք, որ այն հիմնված է մի քանի հիմնական մոտեցումների և տեսլականների վրա.

1. Ռուսաստանի հարավկովկասյան քաղաքականությունը ձևավորվել է 1990-ականների կեսին, երբ սկսվեց «Անդրկովկաս» հասկացության՝ որպես ՌԴ-ի բացարձակ ազդեցության գոտու խորքային վերանայ-

¹³⁷ St'u Crisis Management in the CIS: Wither Russia ? // Eds. H.- G.Erhart, A.Kreikemeyer, A.V.Zagorski. - Baden - Baden: Nomos, 1995:

ման՝ և Հվ.Կովկասի՝ որպես առաջատար երկրների, կազմակերպությունների, տարածաշրջանային գերտերությունների շահերի մրցակցության և խաչաձևման շրջանի փոխակերպման գործընթացը:

2. ՌԴ-ի՝ որպես գերտերությունից տարածաշրջանային տերության փոխակերպումը ընթանում էր բավական ցավազին և պահանջում էր սեփական ամբիջիաների հաղթահարում, սեփական հնարավորությունների վերագնահատում և հարևանների հետ որակապես այլ հարաբերությունների զարգացում: Դիտարկելով «մերձավոր արտասահմանը» որպես սեփական կենսական շահերի գոտի, ՌԴ-ն հատկապես Վ.Վ.Պուտինի պաշտոնավարման շրջանից ի վեր առավել սուր էր դրսևորում, որ ինքը չի պատրաստվում իր ազդեցությունը կիսել ցանկացած այլ երկրի հետ:
3. Ռուսական հանրության մեջ ազգայնականության աճը նպաստավոր հող է հարևան երկրների նկատմամբ ցանկացած տիպի՝ այդ թվում տնտեսական, քաղաքական և անգամ ռազմական գործողությունների արդարացման և աջակցման համար, ինչն էլ իր հերթին բարենպաստ իրավիճակ է ստեղծում վերականգնելու ՌԴ-ի գերտերության իմիջը: Այս նպատակը հստակ արձանագրված էր 2009թ. մայիսի 12-ին ընդունված «*ՌԴ ազգային անվտանգության հայեցակարգը մինչև 2020թ.*» փաստաթղթում¹³⁸ (Տես Գլուխ 3. «Ազգային շահերը և ՌԴ-ի ազգային ռազմավարական առաջնահերթությունները»): Այս առումով տեղին է դիտարկել ռազմավարության հետևյալ դրույթները. «ձևավորվում են միտումներ, որոնք նպատակ ունեն լուծելու տարածաշրջանային առկա խնդիրները և ճգնաժամային իրավիճակներն առանց արտատարածաշրջանային երկրների մասնակցության» և «ռեսուրսների համար մրցակցային պայքարի պայմաններում բացառված չեն առկա խնդիրների լուծումը ռազմական ուժի կիրառմամբ, որը կարող է խախտել ՌԴ-ի և նրա դաշնակիցների սահմանների մոտ ձևավորված ուժային հավասարակշռությունը» (Գլուխ 2. «Ժամանակակից աշխարհը և ՌԴ. իրավիճակ և զարգացման միտումներ»)¹³⁹:

2000թ. ՌԴ «Ազգային անվտանգության հայեցակարգում» միջազգային ասպարեզում վտանգների շրջանակը ներկայանում էր որպես «այլ պետությունների փորձեր հակադարձել ՌԴ-ի՝ որպես բազմակենտրոն

¹³⁸ Տես СТРАТЕГИЯ национальной безопасности Российской Федерации 2020г., <http://www.scrf.gov.ru/documents/99.html>

¹³⁹ Տես նույն տեղում:

աշխարհի կենտրոններից մեկի ամրապնդմանը, խոչընդոտել նրա ազգային շահերի իրականացմանը, թուլացնել նրա դիրքերը Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Անդրկովկասում, Կենտրոնական Ասիայում և աղաղովկիանոսյան տարածաշրջանում»:

Խոսելով ՌԴ-ի տարածաշրջանային շահերի մասին՝ չենք կարող չանդրադառնալ երկու կարևոր հանգամանքի, որոնք էականորեն պայմանավորում են նրա քաղաքականության առանձնահատկությունները Հվ. Կովկասում. տարածաշրջանում առկա է անվտանգության և ժողովրդավարության դեֆիցիտ, ինչը պայմաններ է ստեղծում, որպեսզի տարածաշրջանային զարգացումների ուղղակի դերակատար դառնան արտատարածաշրջանային ուժերը և հատկապես ՌԴ-ն:

Այս պարագայում Հվ. Կովկասում անվտանգությունը տևական ժամանակ փորձում էր «կառավարել» ՌԴ-ն, մինչդեռ Ժողովրդավարացման գործընթացները փորձում են ուղղորդել՝ ԱՄՆ-ն և ԵՄ-ն: Եվ սա այն դեպքում, երբ արդի աշխարհում որպես անվտանգության խորքային պարադիգմ ընդունված է «Ժողովրդավարությամբ անվտանգություն կերտելու սկզբունքը»: Նման իրողությունների պայմաններում տարածաշրջանային անվտանգության դեֆիցիտի առկայությունը հնարավորություն է տալիս ՌԴ-ին իր շահերի տեսանկյունից նպաստավոր հարաբերություններ հաստատել տարածաշրջանային երկրների հետ՝ այդ կերպ թողնելով տարածաշրջանային հարաբերություններում խուսանավման բավական նեղ միջակայք:

Դիտարկելով Հվ. Կովկասը որպես սեփական ուղղակի ազդեցության գոտի՝ ՌԴ-ն փոխում է քաղաքական վարքի իր մոդելը՝ հիմնականում արձագանքելով արտաքին զարգացումներին, որոնք կարող են ուղղակի սպառնալիք լինել իր ազգային անվտանգությանը ՌԴ-ի քաղաքականության մեջ միաժամանակ բացակայում են այդ երկրների ներքին զարգացման դինամիկայի և միջազգային հարաբերությունների վերլուծությունը: ՌԴ-ին սպառնացող իրական վտանգների պրիզմայի ներքո, ինչպես նաև գործնականում առկա չեն ՌԴ-ի համար տարածաշրջանային երկրների հետ երկկողմ և բազմակողմ հարաբերությունների տեսանկյունից ռազմավարական կորստի և ձեռքբերման ամեն կոնկրետ իրավիճակի գնահատումները: Նշված երկրներից յուրաքանչյուրի ներքին գործընթացները ՌԴ-ի կողմից դիտվում են որպես երկրորդային մինչև այն ծայրահեղ կետը, երբ իրավիճակի հնարավոր զարգացումները կարող են հանգեցնել այդ երկրների արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխմանը:

Այսպիսով, տարածաշրջանային զարգացումներում, փաստորեն, ՌԴ-ի

հիմնական թուլությունն այն է, որ պաշտոնական Մոսկվան չունի հստակ մշակված, ձևակերպված և հռչակված քաղաքականություն Հվ.Կովկասի նկատմամբ, ինչպես նաև տարածաշրջանի տարածքային-քաղաքական յուրաքանչյուր բաղադրիչի նկատմամբ: Այս պարագայում ՌԴ-ի որդեգրած քաղաքական մեթոդաբանությունը տարբեր է տարածաշրջանի յուրաքանչյուր խնդրի պարագայում, որը վտանգում է նրա՝ միջնորդի հեղինակությունը և իմիջը:

2008թ. օգոստոսի ՌԴ-ն տևական ժամանակից հետո առաջին անգամ ցույց տվեց, որ ինքը պատրաստ է ամեն գնով պաշտպանել իր ազգային շահերը՝ ներառյալ «կոշտ քաղաքականության» գործիքաբան օգտագործելը, և հստակ հասկացրեց, որ իր գերակայությունը Հվ.Կովկասում ձևավորվում է «ոչ մի քայլ ետ» սկզբունքով: ՌԴ-ի քաղաքականությունն այս պարագայում հաշվի էր առնում Վրաստանի ռազմավարական սխալը և Արևմուտքի բացարձակ անպատրաստվածությունը՝ ձեռնարկել որևէ համարժեք պատասխան քայլ ՌԴ-ի դեմ: Վերոնշյալ զարգացումների ներքո կարելի է արձանագրել, որ առնվազն միջնաժամկետ միջակայքում Հվ.Կովկասի համար պայքարում ՌԴ-ն հասավ որոշակի հաջողությունների, քանի որ.

- միջնաժամկետ հեռանկարում քիչ հավանական է Վրաստանի և Ուկրաինայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին,

- ամերիկյան «նոր» վարչակազմի վերալիցքավորման քաղաքականության հաստատման համատեքստում «վրացական» գործոնը դիտվեց որպես երկրորդային՝ չնայած հռչակված դիրքորոշումների տարբերություններին,

- «վրացական» գործոնը ցույց տվեց ՌԴ-ի դերակատարման փոփոխությունն իրական քաղաքականության մեջ և, դա գիտակցելով, ԵՄ-ն զերծ մնաց ՌԴ-ի հետ Վրաստանի պատճառով առճակատման գնալուց՝ այդ կերպ ընդունելով նրա քաղաքական ազդեցության իրողությունը:

Այսպիսով, 2008թ. ռազմարշավը փոխեց տարածաշրջանի «status quo»-ն՝ արձանագրելով, որ ՌԴ-ն տարածաշրջանում ուղղակի դերակատար է և առանցքային ազդեցություն ունի յուրաքանչյուր խնդրի լուծման մեջ և անհրաժեշտությամբ դեպքում կարող է ուղղակի՝ ռազմական ներգործություն ունենալ:

Հայ-ռուսական հարաբերություններ

Արտաքին քաղաքականության ոլորտում Հայաստանն որևէ այլ երկրի հետ չունի համաձայնագրերի նման համակարգ, որը կընդգրկի անվտան-

գության հարցերի գրեթե ողջ համալիրը: Այս հանգամանքը Ռուսաստանի հետ հարաբերությունները որակապես տարբերակում է գործընկեր այլ պետությունների հետ Հայաստանի հարաբերություններից: Սակայն հարկ է նշել, որ անգամ նմանօրինակ հարաբերությունների պարագայում, ՀՀ-ի և ՌԴ-ի շահերը միջազգային հիմնախնդիրների բոլոր ոլորտներում չի, որ կարող են համընկնել:

Քաղաքական իրատեսականությունը, որն այսօր առկա է այդ հարաբերություններում, փաստում է, որ կողմերը, գիտակցելով փոխադարձ հետաքրքրությունները նաև այլ՝ երբեմն մրցակից երկրների հետ գործակցության ծավալման ոլորտներում, «քաղաքական խանդի» տեսարաններ չեն ստեղծում: Քաղաքական հանդուրժողականությունը ոչ թե տարանջատում, այլ երբեմն առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում եռակողմ կամ միջնորդավորված շփումների, ուստի նաև առանձին խնդիրների լուծման համար: Օրինակ՝ Մոսկվան Թբիլիսիի նկատմամբ իր հայտնի վերաբերմունքի պարագայում անգամ, ըմբռնելի քաղաքական դիրքորոշում է ցույց տալիս հայ-վրացական հարաբերությունների նկատմամբ՝ գիտակցելով Հայաստանի համար Վրաստանի դերն ու նշանակությունը: Հայաստանի համար, նույն կերպ հասկանալի և ըմբռնելի են ռուս-ադրբեջանական էներգետիկ գործակցության ծրագրերը: Ավելին, կողմերը երբեմն բավական արդյունավետորեն են օգտվում նաև միջնորդավորված շփումների ընձեռնված հնարավորություններից: Նշյալ իրողությունները հայ-ռուսական հարաբերություններում որակապես նոր բնույթի գործընկերային մթնոլորտ են ձևավորում՝ պայմաններ ստեղծելով գործակցության նոր՝ առավել արդյունավետ ոլորտների ձևավորման համար:

ՌԴ-ի հետ 1997թ.-ից վերընթաց ապրող ռազմաքաղաքական հարաբերությունները այսօր լրացվում են տնտեսական համագործակցության, տարածաշրջանային հաղորդակցային ծրագրերին համատեղ մասնակցության, ներդրումային ներկայացվածության, էներգետիկ և բեռնափոխադրումային տարանցման միացյալ ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներով: ՌԴ և ՀՀ նախագահների փոխայցերը, ամենատարբեր մակարդակի բազմաբանակ աշխատանքային այցելությունները, դարաբաղյան հարցում ռուսական կողմի նախաձեռնողականությունը փաստում են, որ տարածաշրջանային անվտանգության և կայունության ապահովման մի շարք բաղադրիչների մասով երկկողմ հարաբերություններում առկա է արդյունավետ և խորը գործակցություն: Ավելին, հարաբերությունների քաղաքական բաղադրատարրի լրացումը փոխշահավետ տնտեսական և հատկապես էներգետիկ գործակցությամբ Հայաստանում

պայմաններ է ստեղծում ռուսական կապիտալի ակտիվ ներգրավման, գազային ռեսուրսների արտոնյալ գնային պայմաններով ձեռք բերման և տնտեսական փոխշահավետ գործակցության ծավալման համար¹⁴⁰:

Ընդհանուր շահի և միջազգային անվտանգության ամենից սուր հիմնախնդիրների համանման ըմբռնումները, էներգետիկ ակտիվ գործակցությունը և տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման գերակայությունները կազմում են հայ-ռուսական ռազմավարական շփումների օրակարգը:

Եթե Հայաստանին հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցությունը, տալիս է անվտանգության որոշակի երաշխիքներ, ապա Ռուսաստանի համար այն որոշակի առհավատյա է պահպանելու ներկայությունն ու ազդեցության լծակներն իր համար ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջանում: Դա, մեր կարծիքով, նաև Ռուսաստանի համար որոշակի հնարավորություն է ԱՊՀ Հավաքական անվտանգության համակարգը տարածաշրջանում կենսունակ պահելու տեսանկյունից: Հայ-ռուսական ռազմական համագործակցությունը, հանդիսանալով տարածաշրջանում Ռուսաստանի ներգրավվածությունն ու ներկայությունն ապահովող կարևոր գործոններից մեկը, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության հետ մեկտեղ¹⁴¹, առավելագույնս նվազեցնում է Հայաստանի նկատմամբ հարևան պետություններից բխող հնարավոր սպառնալիքների հավանականությունը: Մասնավորապես, ռուսական ռազմակայանների տեղաբաշխումը Հայաստանում, մեր կարծիքով, պայմանավորված է տարածաշրջանում Հայաստանի և Ռուսաստանի շահերի համընկնումով, Թուրքիայի կողմից Հայաստանի նկատմամբ վարվող անբարյացակամ քաղաքականությամբ, որոշակի հանգամանքների առկայության պայմաններում Թուրքիայի քաղաքականության՝ Հայաստանի անվտանգության նկատմամբ ուղղակի սպառնալիքի վերածման վտանգով, Հայաստանի և Թուրքիայի ռազմական, տնտեսական, մարդկային և այլևայլ ռեսուրսների բացարձակ անհամեմատելիությամբ, հայ-ադրբեջանական հարաբերությունների լարվածությամբ և Ադրբեջանի հետ Թուրքիայի ունեցած հատուկ հարաբերություններով,

¹⁴⁰ ԶՅ-ում ռուսական ուղակի ներդրումների ընդհանուր ծավալը կազմում է մոտ 1.8 մլրդ. \$: ԶՅ-ում մոտ 1000 ընկերություններ գործում են ռուսական կապիտալի ներգրավմամբ: Գործնականում ռուսական բոլոր խոշոր ընկերությունները ուղակի կամ անուղակի ներկայացվածություն ունեն ԶՅ-ում: ԶՅ-ի շուկայում արդյունավետ գործում են «Գազպրոմ», «Ինտեր ՌՍՕ ԵՄՍ», «ՎՏԲ բանկ», «Ռուսական այլումին», «Վինպելկոմ», «ՌԵՇ» բաց բաժնետիրական ընկերությունները:

¹⁴¹ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Шакарянц С., Вопросы коллективной безопасности СНГ и Армения./Ориентиры внешней политики Армении. Под ред.-ей Г.В.Новиковой: Центр стратегического анализа "СПЕКТР", 2002, էջ 95-116**

Կովկասում Թուրքիայի կողմից վարվող անհավասարակշիռ քաղաքականությանը, որը նպատակաուղղված է Հայաստանի մեկուսացմանը և բաժանարար գծերի ամրապնդմանը տարածաշրջանում, ցեղասպանությանը պայմանավորված Թուրքիայի նկատմամբ հայ ժողովրդի պատմական հիշողությանը:

Մեր կարծիքով, ՌԴ-ի հետ Հայաստանի նման սերտ համագործակցությունը ունի նաև որոշ բացասական անդրադարձեր. մասնավորապես՝ ռուսական ռազմակայանների ներկայությունը Հայաստանում Արևմուտքի կողմից երբեմն մեկնաբանվում է այնպես, որ Հայաստանը ՀՎ. Կովկասում Ռուսաստանի շահերի «կրողն» է՝ որոշակիորեն կաշկանդելով եվրատլանտյան ուղղությամբ ՀՀ-ի հարաբերությունների զարգացումը, իսկ Արևմուտքի և Հայաստանի որոշ հարևանների կողմից դիտվում որպես տարածաշրջանում ռազմական հավասարակշռությունը խախտող հանգամանք (թեև ռազմակայանի առկայությունը չի հակասում ԵՄՁՈՒ պայմանագրի պահանջներին): Այն պայմաններում, երբ Հայաստանն իրենից անկախ և, փաստորեն, պարտադրված հանգամանքների բերումով իր անմիջական դրացիներից երկուսի հետ չունի դիվանագիտական հարաբերություններ, երբ վերջիններս միջազգային հարաբերությունների ասպարեզում շատ դեպքերում բացահայտ թշնամական քաղաքականություն են վարում Հայաստանի նկատմամբ, Ռուսաստանի ռազմական ներկայությունը տարածաշրջանում հանդիսանում է ոչ թե խոչընդոտող, այլ՝ հավասարակշռող ու կայունացնող գործոն, հուսալի առհավատշյա երկրի անվտանգության ապահովման համար: Սակայն հարկ է նշել, որ Ռուսաստանի հետ ռազմական համագործակցության փաստը չի բացառում Հայաստանի անվտանգության համակարգի մյուս կարևոր գործոնի՝ եվրատլանտյան ուղղությամբ՝ ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման նպատակով ակտիվ համագործակցության ծավալումը: Քանի որ Հայաստանը դրական ներգրավվածության է ձգտում միջազգային հարաբերությունների բոլոր ուղղություններով, ինչն, անկասկած, արտաքին հարաբերությունների ասպարեզում ՀՀ ազգային-պետական շահերի առավել արդյունավետ իրականացման հիմնական գրավականներից է և բխում է Հայաստանի կողմից որդեգրած արտաքին քաղաքականության փոխլրացման սկզբունքից, ուստի, եվրատլանտյան ուղղությամբ համագործակցությունն ընդլայնելու Հայաստանի նկրտումները Ռուսաստանի կողմից չպետք է ընկալվեն որպես իր հետ ռազմական համագործակցության ու Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության տրամաբանությանը հակասող քայլեր:

3.2.2 Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն և ՀՀ - ՀԱՊԿ հարաբերություններ

Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգության և արտաքին քաղաքականության հիմք ընդունելով փոխլրացման գերակա մոտեցումը՝ արդեն մեկ տասնամյակից ավել առաջնորդվում է բոլոր շահագրգիռ կողմերի հետ գործակցության հաստատման սկզբունքով: Սկզբունք, որն իր կոնկրետ արտացոլումն է ստանում ՌԴ-ի, ՀԱՊԿ-ի և եվրատլանտյան անվտանգային կառույցների հետ ակտիվ շփումներով: Իգուր չէ, որ Հայաստանի Հանրապետության անվտանգության և պաշտպանության քաղաքականության գերակա փաստաթղթերում հստակ արձանագրված է բազմավեկտոր քաղաքականության տեղն ու դերը երկրի անվտանգության և զարգացման տեսլականների կերտման գործում: Այս առումով համագործակցությունը պաշտոնական Երևանի համար ունի առաջնահերթ նշանակություն, որն արձանագրված է ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունում (Տես 1.1 Արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչները)¹⁴²:

«...Պայմանագրի նպատակն է միասնական ուժերով կանխել, իսկ անհրաժեշտության դեպքում վերացնել մասնակից պետությունների դեմ ուղղված ռազմական սպառնալիքը:

Անդամակցությունը ՀԱՊԿ-ին Հայաստանի անվտանգության ապահովման բաղադրիչներից է, որն ապահովվում է անդամ-պետությունների միջև բազմակողմ կապերի շնորհիվ: Պայմանագրի ռազմական բաղադրիչն արտոնյալ պայմաններ է ընձեռում անդամ-պետություններին ռազմատեխնիկական մատակարարումների հարցում, ինչն առաջնային կարևորություն ունի Հայաստանի համար:

ՀԱՊԿ ռազմական բաղադրիչի զարգացումը միտված է անդամ-պետությունների միջև ռազմական համագործակցության գործունե ճեխանիզմների ստեղծմանն ու կայացմանը, միջազգային սպառնալիքների՝ ահաբեկչության, թմրանյութերի և զենքի անօրինական շրջանառության դեմ պայքարի արդյունավետ միջոցների ստեղծմանը, այս ասպարեզում տեղեկատվության փոխանակմանը»:

ՀՀ պաշտպանական և ռազմական անվտանգության մեկ այլ ուղղենիչային փաստաթղթում՝ ՀՀ Ռ-ազմական դոկտրինում, կարևորվում է տարածաշրջանային կայունության ամրապնդմանը նպաստող ՀԱՊԿ-ի գործու-

¹⁴² Տես ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՎԶՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ,
<http://www.mil.am/1297157753>

նեությունը, ինչպես նաև «ԱՊՀ և ՀԱՊԿ հակաօդային պաշտպանության համակարգի կատարելագործումը», «երկկողմ ձևաչափով համագործակցությունը ՀԱՊԿ անդամ պետությունների հետ»¹⁴³:

Փաստորեն ՀԱՊԿ այսօր ՀՀ ազգային անվտանգության և ռազմական պաշտպանության օրգանական մասն է, որը հնարավորություն է ստեղծում ՀՀ-ին սեփական ռազմաքաղաքական հզորություններից զատ օգտագործել գործընկեր երկրների և դաշնակիցների ներուժը՝ այդ կերպ երկրի անվտանգության ապահովման գործընթացում առավել բարձր նշանող ապահովելով:

Խոսելով ՀԱՊԿ-ի՝ որպես հավաքական անվտանգության կազմակերպության մասին, նշենք, որ այն ԱՊՀ անդամ պետությունների միջև (Հայաստան, ՌԴ, Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան և Տաջիկստան, որոնց 1993թ. միացան Ադրբեյջանը, Վրաստանը և Բելառուսը) Տաշքենդում 1992թ.-ի մայիսի 15-ին կնքված Հավաքական անվտանգության պայմանագրի հիման վրա 2002թ. հոկտեմբերին Կիշնևում ՀԱՊԿ-ի Իրավական կարգավիճակի համաձայնագրի և Կանոնադրության ստորագրմամբ ձևավորված միջազգային ռազմաքաղաքական դաշինք է: Հիշեցնենք, որ Հավաքական անվտանգության պայմանագիրն ուժի մեջ է մտել 1992թ. ապրիլի 20-ին և նախատեսված էր 5 տարի ժամկետով: 1999թ. ապրիլի 2-ին Հայաստանն այն պետություններից էր (Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, ՌԴ և Տաջիկստան), որոնք ստորագրեցին պայմանագրի գործունեությունը ևս 5 տարով երկարաձգելու մասին Արձանագրությունը: Պայմանագրին 1993թ. միացած պետությունները մինչ այդ դեռ 1997թ. ստեղծել էին ՎՈՒԱՄ-ը (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեյջան, Մոլդովա)՝ ռազմաքաղաքական դաշինքը, որը որդեգրել էր ընդգծված հակառուսական դիրքորոշում: 1999թ. ՎՈՒԱՄ-ին միացավ նաև Ուզբեկստանը, որից հետո միությունն անվանվեց ՎՈՒՌՄՄ, իսկ 2006թ. Ուզբեկստանը վերադարձավ ՀԱՊԿ, որը սակայն մինչ օրս մասնակցում է Կազմակերպության գործառնության ոչ բոլոր ոլորտներին և միջոցառումներին: Այսօր ՀԱՊԿ-ին անդամակցում է 7 երկիր՝ ՀՀ-ն, ՌԴ-ն, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը, Բելառուսը և Ուզբեկստանը: Ռազմավարական առումով ՀԱՊԿ երկրներն ընդհանուր առմամբ ունեն մոտ 200մլն ազգաբնակչություն, 1.3մլն ընդհանուր թվաքանակով զինուժ¹⁴⁴ և ընդգրկում են 20828.2 հազ. կմ² ընդհանուր տարածք:

¹⁴³ Տե՛ս ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՁԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, <http://www.mil.am/1297157753>

¹⁴⁴ Խոսքը Օպերատիվ(արագ) արձագանքման միացյալ ուժերի մասին չէ, այլ այդ երկրների զինված ուժերի գումարի:

Այսօրինակ ներուժ ունենալով՝ ՀԱՊԿ-ն իր առջև դրել է մի քանի հիմնական խնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել մի քանիսը.

Հավաքական անվտանգության պայմանագրի 4-րդ հոդվածում ամրագրված դրույթը, համաձայն որի, «եթե անդամ-պետություններից որևէ մեկը ենթարկվի ագրեսիայի որևէ պետության կամ պետությունների խմբի կողմից, ապա դա կդիտարկվի որպես ագրեսիա պայմանագրի բոլոր անդամ-պետությունների դեմ, որի պարագայում Կազմակերպության անդամ բոլոր պետությունները անհրաժեշտ օգնություն (ներառյալ ռազմական) կցուցաբերեն»¹⁴⁵,

- պայքար ահաբեկչության, թմրանյութերի ոչ օրինական շրջանառության, ՁՈՁ-ի տարածման դեմ,

- ռազմատեխնիկական ակտիվ համագործակցության իրականացում Կազմակերպության անդամ երկրների միջև (այդ թվում զինտեխնիկայի՝ արտոնյալ պայմաններով միմյանց տրամադրում),

- համատեղ հակաօդային պաշտպանության համակարգերի ստեղծում,

- տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում ակտիվ գործակցություն:

ՀՀ - ՀԱՊԿ հարաբերություններ

Անդրադառնալով ՀՀ-ի ՀԱՊԿ հարաբերություններին՝ նշենք, որ Հայաստանը կազմակերպության հիմնադիր անդամ-պետություններից է, որը բավական մեծ ներդրում է ունեցել կազմակերպության կայացման, ինչպես նաև մի շարք հիմնարար փաստաթղթերի մշակման և ընդունման գործում¹⁴⁶:

2008թ. հունիս-օգոստոս ամիսներին Հայաստանում հաջողությամբ անցկացվեցին «ՀՀ ինքնիշխանության և տարածքային ամբողջականության համատեղ պաշտպանության գործողության նախապատրաստում և անցկացում» թեմայով ՀԱՊԿ անդամ պետությունների «Ռուբեժ-2008» համատեղ հրամանատարաշտաբային զորավարությունը, որը հնարավորություն ընձեռեց ստուգելու անդամ պետությունների հավաքական պաշտպանության պատրաստվածությունը, ինչպես նաև մշակելու Հա-

¹⁴⁵ Տե՛ս **Договор о коллективной безопасности**, <http://www.odkb.gov.ru/start/index.htm>

¹⁴⁶ 2009թ. մայիսի 14-15-ը «ՀԱՊԿ-ը որպես կայունության և անվտանգության գործոն Կովկասյան տարածաշրջանում» խորագրով միջազգային համաժողովի ժամանակ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ն.Բորոյուժան նշել է, որ Հայաստանը կազմակերպության ամենակտիվ պետություններից՝ ընդգծելով ՀՀ նախագահության ժամանակահատվածում կազմակերպության համար օգտակար նախաձեռնությունների, ինչպես նաև մի շարք կարևոր փաստաթղթերի ընդունման մասին:

յաստանի հանդեպ հնարավոր ազդեցիկ սպառնալիքի կամ ազդեցիկ ակտի դեպքում ձեռնարկվելիք միջոցները:

2008-ի օգոստոսյան «հնգօրյա» պատերազմի անդադարձերը բնականաբար չչրջանցեցին նաև ՀԱՊԿ-ն՝ որպես տարածաշրջանային ռազմաքաղաքական կազմակերպություն, այն պարագայում, երբ կազմակերպության անդամ-երկրներից մեկը՝ ՌԴ-ն, ռազմական գործողությունների կողմ էր, իսկ անդամ մեկ այլ երկիր՝ Հայաստանը, ռազմական բախման թատերաբեմի սահմանակից երկիր: Չնայած վերոնշյալ հանգամանքներին, կազմակերպությունը հետխորհրդային տարածաշրջանում ռազմական ճանապարհով հակամարտությունների լուծման վրացական նախաձեռնության վերաբերյալ բավական զուսպ և հավասարակշռված որոշում ընդունեց՝ փաստելով դրա անընդունելիությունը և հնարավոր հետևանքները: Այս առթիվ ՀԱՊԿ անդամ-երկրների ղեկավարների հանդիպմանը հետևած մամուլի ասուլիսում ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը նշեց, որ ՀԱՊԿ-ի էլ ավելի հզորացման համար ռազմական բաղադրիչի ամրապնդումից բացի, անհրաժեշտ է նաև լրջորեն համակարգել ՀԱՊԿ անդամ-երկրների արտաքին քաղաքական գործունեությունը, քանի որ **«մենք մեկ կազմակերպության անդամներ ենք, և պետք է ղեկավարվենք դրանով. եթե մենք կատարեինք բոլոր որոշումները, ապա շատ ավելի ուժեղ կլինեինք, քան կանք այսօր»**: Սա կանխարգելիչ դիտարկում էր, որը փաստում էր, թե ՀԱՊԿ անդամ-երկրները առավել համախմբված պետք է լինեն նոր բնույթի մարտահրավերներին հակադարձելու իրենց նպատակադրման մեջ, որը պետք է արտացոլվի համատեղ արտաքին քաղաքական նախաձեռնություններում, ինչպես նաև կազմակերպության ռազմական բաղադրիչի ամրապնդման մեջ: ՀՀ նախագահի նման դիտարկումն իր ենթատեքստում ուներ հետևյալը, որ արդեն այսօր կազմակերպությունը պետք է դեղատոմսեր մշակի հետագայում վրաց-ռուսական ռազմական բախման նախադեպի կրկնությունը բացառելու համար, քանի որ առանձին երկրներ, օգտվելով առիթից, հետխորհրդային տարածաշրջանում առկա սառեցված հակամարտություններն իրենց պատկերացմամբ լուծելու ռազմական փորձեր կարող են ձեռնարկել:

2008թ. սեպտեմբերի 5-ից ՀԱՊԿ-ի նախագահությունը՝ հիմնված ռոտացիոն սկզբունքի վրա, անցավ Հայաստանին: Դա նոր թափ հաղորդեց կազմակերպության կայացման գործընթացին, որի մասին արձանագրեց նաև նրա Գլխավոր քարտուղարը, անդամ մյուս երկրները:

2008թ. սեպտեմբերի վերջին Հայաստանում մեկնարկեց ՀԱՊԿ որի-դարանական ասամբլեայի մշտական հանձնաժողովի արտագնա նիստը:

Դա կարևոր քայլ էր ուղղված ՀԱՊԿ-ն բազմաֆունկցիոնալ կառույցի վերածվելու ուղղությամբ: Նույն տարվա նոյեմբերին Երևանում տեղի ունեցավ ՀԱՊԿ անդամ-պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի նիստը, որն իր օրակարգում ուներ Կազմակերպության անվտանգային խնդիրներին նվիրված բազմաթիվ հարցեր:

2008թ. դեկտեմբերին Ղազախստանում ՀԱՊԿ ոչ պաշտոնական գազաթնաժողովի ժամանակ ձեռք բերվեց պայմանավորվածություն «Օպերատիվ(արագ) արձագանքման հավաքական ուժեր» ստեղծելու վերաբերյալ:

ՀԱՊԿ-ի 2009թ. Մոսկվայի փետրվարյան հանդիպման ժամանակ, որը վարում էր ՀԱՊԿ նախագահող երկրի դեկավար ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը, կազմակերպությունը, հաշվի առնելով սառեցված հակամարտությունները ռազմական ճանապարհով լուծելու առանձին երկրների հնարավոր նպատակադրումները բացառելու նախորդ հանդիպումների ժամանակ արտահայտված դիտարկումները, ընդունեց մեկ կարևոր որոշում, որով ՀԱՊԿ-ի բոլոր անդամները սկզբունքային համաձայնության եկան կազմակերպության շրջանակներում «Օպերատիվ արձագանքման հավաքական ուժեր» ստեղծելու վերաբերյալ: Փաստորեն այս քայլով կազմակերպությունն իր առջև խնդիր է դնում իրավական իր տիրույթի շրջանակներում արագ արձագանքման զինված ուժեր ստեղծել, որոնք պաշտպանական, ինչպես նաև այլ բնույթի գործառույթներ կիրականացնեն:

Անդրադառնալով ՀԱՊԿ-ի շրջանակներում արագ արձագանքման հավաքական ուժերի ստեղծմանը՝ Հայաստանի նախագահ Ս. Սարգսյանը նշեց, որ «օպերատիվ հակազդման հավաքական ուժերի ստեղծումը նպատակամղված է ՀԱՊԿ-ի ռազմական բաղադրիչի ամրապնդմանը»:

ԱԱՀՌԻ-ի առաքելությունն է անվտանգություն ապահովել անդամ-պետությունների տարածքում, ինչպես նաև պաշտպանել այդ երկրների տարածքային ամբողջականությունն, ինքնիշխանությունը: Հիշեցնենք, որ պաշտոնական Երևանը մնան կարգի գորամիավորումներ ստեղծելու առաջարկով հանդես է եկել դեռ մի քանի տարի առաջ: Հայաստանը՝ որպես ԱԱՀՌԻ-ի մասին համաձայնագրի անդամ, այդ նպատակով առանձնացրել է բանակային և հատուկ նշանակության համապատասխան ուժեր ազգային անվտանգության և ներքին գործերի մարմիններից: Նշենք, սակայն, որ ստորագրված համաձայնագիրը չի նախատեսում ԱԱՀՌԻ-ի շրջանակներում ստեղծել մշտական կառույցներ: Հայաստանի կողմից ԱԱՀՌԻ-ի համար առանձնացված միավորումները գտնվում են իրենց տեղակայման մշտական վայրերում և կօգտագործվեն, եթե կոնկրետ ռազմա-

կան խնդիրների լուծման համար նման անհրաժեշտություն ի հայտ կգա: ԱԱՀՈՒ-ի ձևավորման նախաձեռնությամբ ՀԱՊԿ-ն փաստացիորեն փորձում է ցուց տալ իր հավակնությունների լրջությունը և ավելի ռեալ քայլեր ձեռնարկել անվտանգության տարբեր սպառնալիքները կանխելու ուղղությամբ: Ինչ վերաբերում է ՀՀ-ի համար ԱԱՀՈՒ-ի կարևորությանը, ապա այս ուժերն Հայաստանի դեմ ագրեսիայի կամ դրա սպառնալիքի դեպքում կարևոր առաքելություն կարող են ունենալ: Մյուս կողմից ՀԱՊԿ-ի նմանօրինակ հզորացումը և իրական գործառնական դաշտ տեղափոխվելը փաստում է, որ մրցակցությունը եվրասիական տարածության ցանկացած տարածաշրջանում բավական սուր է լինելու առնվազն միջնաժամկետ հեռանկարում, որի պայմաններում արդյունավետ խուսանավելու համար Հայաստանն արդեն այսօր բավական որոշակի հիմքեր է ստեղծել՝ մի կողմից ակտիվորեն գործարկելով ՀԱՊԿ-ի, մյուս կողմից՝ ՆԱՏՕ-ի հետ:

3.2.3 Միացյալ Նահանգներ և հայ-ամերիկյան հարաբերությունները

Ժողովրդավարացման և եվրոպականացման հրամայականներից զատ վերջին տասնամյակներում տարածաշրջանում Արևմտքի քաղաքականության կիզակետը զգալի մասով պայմանավորվել է տարածաշրջանային էներգետիկ պահուստների շահագործման և տարածաշրջանային տերությունների մրցող շահերի «միջանցքով» արտահանում ապահովելու նկատառումներով: Բավական երկար ժամանակ է, ինչ հիմնարար փոփոխություններ են տեղի ունենում ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության մեջ: Միացյալ Նահանգների վաղեմի մտահոգությունն էներգապահովման հարցերով ներկայումս զուգահեռվում է ահաբեկչության դեմ համաշխարհային պայքարի շրջանակներում անվտանգության և կայունության հետապնդման նպատակադրումով, հատկապես 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո ձևավորված նոր աշխարհաքաղաքական «լանդշաֆթի» պարագայում: Զուգահեռաբար այդ պայքարի համատեքստում Միացյալ Նահանգները փոխակերպումների լայն ու ընդգրկուն գործընթացք է «նախաձեռնել» Մեծ Մերձավոր Արևելքում, որի ընթացիկ միտումները արձանագրում են տարածաշրջանում խորքային փոփոխություններ և ժողովրդավարացման գործընթացների ներքո անվտանգային նոր իրողությունների ձևավորում:

Տարածաշրջանում ամերիկյան ներկայիս քաղաքականության հիմքերն ածանցվում են ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև ռազմավարական նոր գործընկերության տարածաչափից: Սակայն, հաշվի առնելով, որ Ռու-

սաստանը ի պատասխան ամերիկյան ներկայության ընդարձակմանը, փորձում է վերահաստատել իր դիրքերը Կենտրոնական Ասիայում և Հվ.Կովկասում, տարածաշրջանի՝ արդեն իսկ խոցելի պետությունների միջև անվտանգության և կայունության համար մղվող պայքարը թևակոխում է սրման նոր փուլ: Նմանօրինակ թեժ մրցակցությանը զուգահեռ նշմարվում են նաև ռուս-ամերիկյան հարաբերությունների որոշակի փոփոխություններ, որ փաստում են այն մասին, որ աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում այդ հարաբերությունների հանրագումարն այլևս զրո չէ: Սա առավել ակնհայտ դարձավ, երբ 2010թ. ստորագրվեց «Ռազմավարական հարձակողական սպառազինությունների կրճատման մասին» նոր պայմանագիրը, իսկ 2011-ին այն վավերացվեց:

Ահաբեկչության դեմ պայքարի արդյունքում ԱՄՆ-ի անվտանգության հայեցակարգը մի շարք պետությունների նկատմամբ տարատեսակ փոփոխություններ է կրել: Այդ պետությունների շարքում են ինչպես ավանդական «ախտյաններ» Չինաստանն ու Ռուսաստանը, այնպես էլ ավանդական «դաշնակիցներ» Թուրքիան ու Սաուդյան Արաբիան, «նոր» գործընկերներ Պակիստանն ու Լեհաստանը: Կենտրոնական Ասիայում և Հվ.Կովկասում ձևավորված անվտանգության նոր միջավայրերը նույնպես վկայում են, որ ԱՄՆ անվտանգության քաղաքականության մեջ իսկապես տեղի են ունեցել էական տեղաշարժեր: Երկու տարածաշրջաններն էլ կարևոր դեր են կատարում ԱՄՆ-ի համար՝ որպես ուժերի նախագծման հարթակներ՝ Կենտրոնական Ասիայից դեպի Աֆղանստան և, որ դեռևս պակաս հավանական է, Հվ.Կովկասից դեպի հյուսիսային Միջագետք, անգամ՝ դեպի Իրան:

Ներկայումս առավել ընդհանուր մակարդակով ԱՄՆ-Ռուսաստան նոր ռազմավարական գործընկերությունն արտացոլում է երկու տերությունների միջև հարաբերությունների ավանդական բնույթի փոփոխությունը: Սակայն ահաբեկչության դեմ պայքարում ԱՄՆ միակողմանիության ներկայիս ընթացքը և «ահաբեկչության դեմ պատերազմի» շարունակումը, ամենայն հավանականությամբ, նպաստելու են ռուս-ամերիկյան՝ դեռևս բավական մակերեսային ռազմավարական գործընկերության որոշակի սառեցմանը: Հետագա հնարավոր տարածայնությունները կաճեն նաև այն հանգամանքի ուժով, որ աստիճանաբար ավելանում է «արևմտյան» զինուժի վտանգավոր մերձությունն «ավանդաբար» ռուսական ազդեցության գոտիներում: Նման պարագայում ակնհայտ է, որ Հվ.Կովկասի և Կենտրոնական Ասիայի պետությունները կարող են ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունների հնարավոր ցանկացած խաթարման «գոհերը» դառնալ: Չնայած նշյալ վտանգը որոշ չափով մեղմվում է ռուս-ամերիկյան ռազմավարական

գործընկերության ընդհանուր նկատառումներով, այնուամենայնիվ, տարածաշրջանում ՌԴ-ի շահերը և Կենտրոնական Ասիայում գերիշխող դիրքը պահպանելու՝ Ռուսաստանի աշխարհաքաղաքական հավակնություններն ըստ էության հակադրվում են ԱՄՆ-ի տարածաշրջանային դերակատարմանն ու դրա հետագա հնարավոր ավելացմանը:

Հայ-ամերիկյան հարաբերություններ

Մրցակցային նմանօրինակ բարդ խճանկարի ներքո հարավկովկասյան տարածաշրջանում սեփական անվտանգության և արտաքին քաղաքականության կերտման նպատակադրումը տարածաշրջանային երկրների և հատկապես Հայաստանի համար էական նշանակություն և դերակատարում ունի: Դա առավել կարևորվում է հատկապես փոխլրացման արտաքին քաղաքական ուղեգծի որդեգրման պայմաններում:

Հայաստանի համար Միացյալ Նահանգների հետ հարաբերություններն ունեն առանցքային նշանակություն կապված նրա՝ միջազգային անվտանգության և քաղաքականության մեջ ստանձնած առաջատար դերակատարման, ԼՂ հարցում ակտիվ ներգրավվածության, տնտեսական հզորության և հավաքական ներուժի, ԱՄՆ-ում հայկական բազմամարդ սփյուռքի առկայության, ցեղասպանության իրողությունների վերաբերյալ Միացյալ Նահանգների վերաբերմունքի հետ:

ՀՀ-ի անկախությունը ճանաչելով 1991թ. դեկտեմբերի 25, դիվանագիտական հարաբերություններ հաստատելով 1992թ. հունվարի 7-ին՝ Միացյալ Նահանգները ՀՀ-ում դեսպանություն է հիմնել 1992-ի փետրվարին¹⁴⁷: ՀՀ-ի անկախության ճանաչումից և Երևանում դեսպանության հիմնադրումից ի վեր հայ-ամերիկյան գործակցությունն իր մեջ է ներառել շփումների բավական լայն և ընդգրկուն միջակայք, որն իր մեջ ամփոփում է հունանիտար¹⁴⁸, տնտեսական, քաղաքական, առևտրային և անգամ ռազմաքաղաքական հարաբերությունների ոլորտներ¹⁴⁹:

147 ԳՂ-ն Միացյալ Նահանգներում դեսպանություն է հիմնել 1992թ. մարտին, իսկ առաջին դեսպան է նշանակվել Ռ. Շուգարյանը: 1999թ. ԱՄՆ-ում ԳՂ դեսպան է նշանակվել Ա. Կիրակոսյանը, 2005-ից ԱՄՆ-ում ԳՂ դեսպանն է Թ. Մարգարյանը:

148 ԱՄՆ օժանդակությամբ Հայաստանում իրականացնում են վերապատրաստման (Fulbrightes Scholars Program, JFDP, IVP, ASCP) տարբեր տևողությամբ ծրագրեր, ինչպես նաև կրթական ոլորտի ներկայացուցիչների համար նախատեսված (FLEX), (UGRAD), (MUSKIE) համապատասխան կրթաթոշակային ծրագրերը:

149 Հարաբերությունների բնականոն զարգացման մասին է վկայում փոխայցելությունների քանակը. ԱՄՆ 27 և ավելի այցեր են ունեցել ԳՂ-ի բարձրաստիճան պաշտոնեաներ, իսկ ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնեաները Հայաստան՝ 17: Երկու երկրների միջև ստորագրվել են երկկողմ համագործակցությունը կանոնավորող տասներկու միջպետական համաձայնագիր:

Ընդհանուր բարիդրացիական գործակցային ետնապատկերում կարելի է առանձնացնել հայ-ամերիկյան ակտիվ գործակցությունը տնտեսական ոլորտում, որը համակարգվում է Տնտեսական հարցերով հայ-ամերիկյան աշխատանքային խմբի կողմից: Երկու երկրների միջև արդյունավետ տնտեսական գործակցության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ 2004-ին Հայաստանին է շնորհվել Մշտական կանոնավոր առևտրային հարաբերությունների՝ (Permanent Normal Trade Relations) կարգավիճակ, ինչպես նաև վերացվել է բարձր տեխնոլոգիաների վաճառքն արգելակող «Ջեքսոն-Վեյնիքի» դրույթը:

Անդրադառնալով հայ-ամերիկյան տնտեսական փոխգործակցությանը՝ հարկավոր է առանձնացնել հատկապես համագործակցությունը «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի շրջանակներում: 2006թ. մարտի 27-ին Վաշինգտոնում ստորագրվել է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի և Հայաստանի միջև համաձայնագիրը, որով Հայաստանին պետք է հատկացվի 235.65 մլն. դոլար՝ ուղղված գյուղական ճանապարհների կառուցմանը, ոռոգման ենթակառուցվածքներում ռազմավարական ներդրումներ կատարելուն, ֆինանսական ու տեխնիկական աջակցության ցուցաբերմանը: 2006թ. սեպտեմբերի 29-ին համաձայնագիրը պաշտոնապես մտավ ուժի մեջ, որից հետո 2009թ. հունիսին տեղի ունեցավ Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվեցին Հայաստանին վերաբերող խնդիրները և որոշվեց Հայաստանի հետ համագործակցությունը շարունակել, սակայն ճանապարհաշինական ծրագիրը ժամանակվորապես դադարեցվեց:

Առավել առարկայական դիտարկելու համար հայ-ամերիկյան տնտեսական շփումների ընդհանուր նկարագիրը՝ փորձենք այն դիտարկել տնտեսական ցուցանիշների տեսքով¹⁵⁰:

Հայ-ամերիկյան տնտեսական շփումներում ինչպես նաև երկու երկրների գործակցության մեջ իր ուրույն, կարևոր ու կամրջող դերակատարումն ունի ԱՄՆ-ում բնակվող մեկ միլիոնից ավել կազմող հայ համայնքը, որն այդ երկրի բավական ակտիվ և կազմակերպված համայնքներից է¹⁵¹: Խոսելով հայ համայնքի մասին հարկավոր է արձանագրել, որ նրա շրջանակներում գործում են բազմաթիվ կազմակերպություններ, սակայն դրանցից առավել հեղինակավոր և ազդեցիկ են Ամերիկայի հայկական ազգա-

150 Հայաստանի և ԱՄՆ միջև առևտուրը 2000-2009թթ. (հազ. ԱՄՆ դոլար) ըստ առևտուր իրականացնող երկրի:

151 Ներկայումս Միացյալ Նահանգներում բնակվող հայերի մեծ մասը ապրում են Կալիֆոռնիայում, ինչպես նաև Նյու Յորքում, Բոստոնում և Չիկագոյում: Համայնքի շրջանակներում լույս են տեսնում մի շարք պարբերականներ, գործում են մի քանի տասնյակ կիրակնօրյա դպրոցներ:

յին հանձնախումբը (Հայ Դատի գրասենյակ, Armenian National Committee of America, ANCA), Ամերիկայի հայկական համագումարը (ԱՀՀ) (Armenian Assembly of America) և Ամերիկահայկական հասարակական հարաբերությունների հանձնաժողովը (USAPAC) ազգային լոբբիստական կազմակերպությունը: Նշյալ երեք կարգակերպություններն էլ ակտիվ շփումներ են իրագործում երկրի օրենսդիր մարմինների, Պետքարտուղարության և այլ կառույցների հետ, առաջ են քաշում ԱՄՆ իշխանությունների կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչման հարցը, օժանդակում են Ամերիկայի հայ համայնքին մտահոգող հիմնախնդիրների լուծմանը, որոնք վերաբերում են Հայաստանի առաջընթացին, ինչպես նաև աջակցում Լեռնային Ղարաբաղի՝ ինքնորոշման իրավունքի իրագործմանը:

Տ/թ	ՆԵՐՄՈՒԹՈՒՄ	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ	ՀԱՇՎԵԿՇԻՌ
2000թ.	102 675.1	37 861.0	-64 814.1
2001թ.	84 152.6	52 268.2	-31 884.4
2002թ.	52 722.0	46 238.3	-6 483.7
2003թ.	111 248.0	56 105.2	-55 142.8
2004թ.	104 824.3	70 646.2	-34 178.1
2005թ.	116 326.7	62 219.1	-54 107.6
2006թ.	136 691.7	65 055.7	-71 636.0
2007թ.	199 383.7	51 400.3	-147 983.4
2008թ.	302 837.1	52 831.1	-250 006.0
2009թ.	168 145.2	66 961.0	-101 184.2
2010թ.	135552.2	82710.6	- 52841.5

Հենց հայ համայնքի ակտիվ աշխատանքի և լոբբիստական գործունեության արդյունքում է, որ ԱՄՆ-ում հայոց ցեղասպանության պատմական իրողության նկատմամբ ձևավորվել է ընդգծված վերաբերմունք, որը դրսևորվում է ամեն տարի ապրիլի 24-ին ԱՄՆ-ի նախագահի՝ տեղաբնակ հայ համայնքին և համայն հայությանը ուղղված հիշատակի ու հարգանքի ելույթով:

Այսպես. 2009-ին Հայ-ամերիկյան կոնգրեսական խմբի կողմից 252 բանաձևը ներկայացվեց ԱՄՆ 111-րդ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի քննարկմանը: Նույն տարվա ապրիլի 24-ին Հայոց Ցեղասպանության տարելիցի կապակցությամբ ամենամյա հայտարարության մեջ ԱՄՆ նախագահ Բ.Օբաման արտասանեց «Medz Yeghern» արտահայտությունը: Նույն թվականի հոկտեմբերի 21-ին սենատորներ Ռ.Մենենդեսի և Ջ.Ին-

սայնի կողմից ԱՄՆ Սենատի քննարկմանը ներկայացվեց Հայոց Ցեղասպանության վերաբերյալ բանաձևը, որն իր բովանդակությամբ նույնական է ստորին պալատի թիվ 252 բանաձևին:

2010-ի մարտի 4-ին 252 բանաձևը ընդունվեց ԱՄՆ օրենսդիր մարմնի ստորին պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից. այսօր այդ բանաձևին սատարում են ԱՄՆ 141 կոնգրեսականներ: Նույն թվականի ապրիլի 24-ին Հայոց Ցեղասպանության տարելիցին նվիրված ամենամյա հայտարարության մեջ նախագահ Բ.Օբաման կրկին օգտագործեց «Medz Yeghern» արտահայտությունը:

Անկախության ձեռքբերումից ի վեր ԱՄՆ-ն Հայաստանին հատկացրել է ավելի քան 1,8 մլրդ դոլարի մարդասիրական, տեխնիկական և այլ բնույթի օժանդակություն: Նշենք, որ տարիներ շարունակ ամերիկյան ուղղակի օժանդակությունը Հայաստանին կազմել է տարեկան մոտ \$90-100 մլն.: Սակայն, պայմանավորված ԱՄՆ կողմից տարվող հակաահաբեկչական պայքարի համար անհրաժեշտ միջոցներ հայթայթելու նպատակադրմամբ, վերջին տարիներին բոլոր երկրներին տրամադրվող օգնության չափը նվազել է:

Այս առումով կարևոր է նշել, որ օրինակ 2009-ին ռազմական ոլորտում բարեփոխումների իրականացման համար ԱՄՆ-ի կողմից Հայաստանին և Ադրբեյջանին տրամադրվող ֆինանսական օգնության չափը, որ պահպանել էր իր համաչափությունը՝ կազմել է 3 մլն. դոլար:

Անդրադառնալով հայ-ամերիկյան շփումների միջազգային քաղաքական, ինչպես նաև ռազմաքաղաքական բաղադրիչին՝ նշենք, որ այն բավական ինտենսիվ է զարգանում, քանի որ Միացյալ Նահանգները ԼՂ կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, ինչպես նաև ՆԱՏՕ-ի հիմնադիր անդամ երկիր է: Ուստի Հայաստանի համար կարևորվում է ԱՄՆ հետ համագործակցությունը ռազմաքաղաքական և անվտանգության ոլորտներում, որը 1997թ. ի վեր իր մեջ ամփոփում է երկկողմ ռազմաքաղաքական համագործակցությանը, տարածաշրջանային և միջազգային անվտանգությանը վերաբերող հիմնախնդիրների թեմատիկայով ակտիվ խորհրդակցությունների անցկացում:

Ռազմական համագործակցության կարևոր բաղադրիչ է ՀՀ-ի և Միացյալ Նահանգների գործակցությունը միջազգային ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում, որտեղ Հայաստանն իր մասնակցությունը բերեց Իրաքի կայունացման և վերականգնման գործընթացին: Միաժամանակ Հայաստանը շարունակում է մասնակցել Կոսովոյի միջազգային խաղաղապահ գործընթացին, որտեղ են գտնվում 35 հոգի խաղաղապահներ:

Երկկողմ գործակցությունից զատ ԱՄՆ հետ համագործակցությունը ծավալվում է նաև ՆԱՏՕ-ի ձևաչափում. այս առումով կարևոր է նշել, որ Աֆղանստանում իրականացվող միջազգային անվտանգության և կայունությանն օժանդակման ծրագրի շրջանակներում 2010թ. փետրվարից հետո Աֆղանստանում հայ խաղաղապահների թիվը 100-ից ավել է:

3.2.4 Հյուսիսարլանդյան դաշինքի կազմակերպություն և ՀՀ - ՆԱՏՕ հարաբերություններ

ՆԱՏՕ-ն եվրատլանտյան տարածաշրջանի կարևորագույն կառույցներից է, որն ունի Արևմտյան Եվրոպայում անվտանգության ապահովման գործառույթներ: Վերջին տարիների իրադարձությունները ցույց տվեցին, որ այդ կազմակերպությունը ոչ միայն Եվրոպայում, այլ նաև ողջ աշխարհում ստանձնել է խաղաղության ու անվտանգության պահպանման ու վերականգնման գործառույթներ՝ կենտրոնական դեր գրավելով միջազգային անվտանգության ապահովման միջազգային ճարտարապետության մեջ: Իր մեջ ամբողջացնելով 28 երկիր, որ առաջնորդում են անվտանգային պահանջների բավարարման նույնաման տրամաբանությամբ և հավաքական անվտանգության ապահովման սկզբունքներով, ՆԱՏՕ-ն ուղակի շահեր ունի ինչպես Հվ.Կովկասում ու Կենտրոնական Ասիայում, այնպես էլ Մեծ Մերձավոր Արևելքում: Իրողություններ և քաղաքական օրինաչափություններ, որոնք իրավունք չունի անտեսել տարածաշրջանային և ոչ մի պետություն:

Անցնելով քաղաքական ու ռազմական նպատակների փոխակերպման երկար գործընթաց՝ այսօր ՆԱՏՕ-ն դեմ հանդիման է կանգնած կոնկրետ մարտահրավերների, որոնց հակադարձելու համար անհրաժեշտ է ինչպես կառուցակազմի օպտիմալացում, վարչական կապերի հստակեցում, այնպես էլ գործընկերային նոր կապերի հաստատում: Հենց դրան են ուղղված ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Անդերս Ֆոզ Ռասմուսենի ջանքերը, որը, տնտեսական ճգնաժամի պայմաններում խնայելով ֆինանսական միջոցներ, իր առջև խնդիր է դրել ՆԱՏՕ-ն դարձնել ավելի արդյունավետ: Չուզահեռաբար այսօր ՆԱՏՕ-ն շարունակում է հակահրթիռային պաշտպանության՝ իր որդեգրած ռազմավարության իրագործումը, հակաահաբեկչական ակտիվ պայքարը Աֆղանստանում, խաղաղապահ գործունեությունը Կոսովոյում, ՉՈՉ տարածման, ծովահենության դեմ պայքարը:

Այս համատեքստում կարևոր է դիտարկել Դաշինքի 2010թ. նոյեմբերի

19-20-ին Լիսաբոնի գագաթաժողովը, որտեղ ընդունվեցին ՆԱՏՕ-ի համար ռազմավարական բնույթի մի շարք կարևոր փաստաթղթեր. «Հյուսիսատլանտյան Դաշինքի պետությունների և կառավարությունների ղեկավարների Լիսաբոնի գագաթաժողովի քաղաքական հռչակագիր», «Ակտիվ ներգրավում, ժամանակակից պաշտպանություն. Լիսաբոնում պետությունների և կառավարությունների ղեկավարների կողմից ընդունված պաշտպանության և անվտանգության համար» ռազմավարական հայեցակարգ, ՆԱՏՕ-Ռուսաստան խորհրդի համատեղ հայտարարություն, «Գործընկերության մասին ՆԱՏՕ-ի և Աֆղանստանի կառավարության միջև հռչակագիր», «ՄԱԿ-ի բանաձևերի հիման վրա Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի ՆԱՏՕ-ի կողմից ղեկավարվող գործողությանը օժանդակող պետությունների և կառավարությունների ղեկավարների հռչակագիր», «Կանանց, խաղաղության և անվտանգության մասին ՄԱԿ-ի Ա1325 և համանման այլ բանաձևերի իրականացման վերաբերյալ ՆԱՏՕ/ԵԱԳ քաղաքականության մասին» զեկույց:

Կարծում ենք, որ Լիսաբոնի գագաթաժողովը հատկանշական է նաև նրանով, որ այն իր մեջ որոշակիացրեց Դաշինքի վերաբերմունքը միջազգային հիմնախնդիրների բավական լայն շրջանակի հանդեպ: Ի մասնավորի՝ գագաթաժողովի քաղաքական հռչակագրում նշվում էր, որ Աֆղանստանում ՆԱՏՕ-ի կողմից ղեկավարվող միջազգային անվտանգության աջակցման ուժերի գործողությունը ՆԱՏՕ-ի կարևորագույն առաջնայնությունն է: Միաժամանակ ՆԱՏՕ-ն վերահաստատում է Կոսովոյում իր կողմից իրականացվող խաղաղապահ գործողության շարունակականությունը: Հռչակագրում Դաշինքը սահմանում է իր համագործակցությունը ԵՄ-ի և ԵԱՀԿ-ի հետ, ապա վերահաստատվում է Բուխարեստի գագաթաժողովի դրույթը, որով երկարաձգվում է Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիա Հանրապետության անդամակցության ժամկետը: Հռչակագրի 21-րդ կետը վերահաստատում էր Բուխարեստի գագաթաժողովի հռչակագրում ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության ապագա իրագործումը, ինչպես նաև օժանդակություն հայտնում Վրաստանում իրականացվող բարեփոխումներին, պաշտպանում նրա տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը: Ուկրաինայի մասով հռչակագրում նշվում էր, որ Դաշինքը հարգում է Ուկրաինայի ինքնիշխան իրավունքը չանդամակցել որևէ դաշինքի՝ ողջունելով վերջինիս կառավարության որոշումը շարունակել արդեն հաստատված համագործակցության մակարդակը, միաժամանակ ընդգծելով, որ ՆԱՏՕ-ի «դռները բաց» են Ուկրաինայի համար: Հռչակագրի 35-րդ կետը վերաբերում էր Հվ.Կովկասում և Մոլդովայում սառեց-

ված հակամարտություններին. նշվում էր, որ Դաշինքը կոչ է անում հակամարտության կողմերին գործել կառուցողական ոճով, խաղաղ ճանապարհով՝ հարգելով գոյություն ունեցող բանակցությունների ձևաչափերը, ինչպես նաև ՆԱՏՕ-ն իր աջակցությունն էր հայտնում Հայաստանի, Ադրբեյջանի, Վրաստանի և Մոլդովայի տարածքային ամբողջականությանը, ինքնիշխանությանն ու անկախությանը՝ շարունակելով օժանդակել հակամարտությունների խաղաղ կարգավորմանն իր կողմից հռչակված մոտեցումներին համաձայն:

Լիսաբոնի քաղաքական հռչակագրում անդրադարձ կատարվեց նաև հակահրթիռային պաշտպանության, բալիստիկ հրթիռների ստեղծման տեխնոլոգիայի տարածման վտանգներին, ինչպես նաև կիրերանվտանգությանը:

Մյուս կարևորագույն փաստաթուղթը, որն ընդունվեց գործընկերների կողմից Լիսաբոնում, Դաշինքի անդամ պետությունների պաշտպանության և անվտանգության ռազմական հայեցակարգն էր: 2010թ. նոյեմբերի 19-20-ին Լիսաբոնում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովում անդամ երկրների ու կառավարությունների ղեկավարները հաստատեցին ՆԱՏՕ-ի նոր ռազմավարական հայեցակարգը, որը Դաշինքի համար ուղեցույց կհանդիսանա գործունեության առաջիկա տասնամյակի համար: Հիմնադրումից ի վեր, սառըպատերազմյան ժամանակաշրջանի պաշտպանական Դաշինքից, ՆԱՏՕ-ն անվտանգության միջավայրի մարտահրավերներին համահունչ փոխակերպման և զարգացման երկար ճանապարհ է անցել: Լիսաբոնի հայեցակարգը, ըստ էության, հերթական անգամ, սակայն արդեն յուրովի, ամրագրեց փոխակերպված Դաշինքի նոր դերակատարությունը՝ իր պատասխանատվության տարածքից դուրս գործողությունների նախաձեռնման և անցկացման շեշտադրումներով: 1999թ. Սերբիայում նախաձեռնված գործողություններով սկսված փոխակերպման այս փուլից հետո ՆԱՏՕ-ի դերակատարումը և ռազմավարությունը որակապես փոփոխվեց՝ իր մեջ ներառելով նաև գործընկերությունների աշխարհագրական ընդգրկման աննախադեպ ընդլայնում: Բացի վերոնշյալ հանգամանքներից, ՆԱՏՕ-ի փոխակերպման տրամաբանությունն իր մեջ ամփոփում էր սեփական գոյության իրավունքի պահպանում և գործողությունների լեգիտիմություն, քանի որ վտանգի աղբյուրի իրավական կարգավիճակի փոփոխությունը (ԽՍՀՄ և Վարշավյան պակտի կազմալուծումը) կասկածի տակ էր դնում Դաշինքի հետագա գոյության նպատակահարմարությունը ընդհանրապես: Այդ պայմաններում Միացյալ Նահանգների և Եվրոպայի միջև անփոխարինելի կապը շարու-

նակելու, Դաշինքի հետագա ներքին ամբողջականությունն ու շաղկապվածությունն ապահովելու առումով կենսական անհրաժեշտություն էր կազմակերպության ստատիկ բնույթից ձերբազատումը և նրան շարժունակության հաղորդումը:

Ռազմավարական նոր հայեցակարգը բնականաբար վերահաստատեց Վաշինգտոնի համաձայնագրի 5-րդ կետը՝ ռազմական ագրեսիայի դեպքում անդամ երկրների տարածքի անվերապահ հավաքական պաշտպանության հանձնառությունը, սակայն կազմակերպության գործունեության և պատասխանատվության օրակարգում արձանագրեց նաև այնպիսի ոլորտներ, որոնք անհամեմատ ընդլայնում են նրա ընդգրկումը: Միաժամանակ, զգալիորեն շեշտադրվում է պայմանագրի 4-րդ կետը, որը նախատեսում է անհապաղ խորհրդատվություններ այն պարագայում, երբ Դաշնակիցներից որևէ մեկն ունի իր անվտանգությանը սպառնալիքի մտահոգություն: Ենթադրվում է, որ այդ կետի կիրառմամբ, այլ՝ ոչ ռազմական բնույթի սպառնալիքները կարող են որակվել որպես հոդված 5-ի պահանջներից համապատասխանող և դրանով իսկ նախատեսեն համապատասխան գործողություն: Լիսաբոնի հայեցակարգի կառուցվածքը շարադրվում և զարգանում է անվտանգության հիմնական երեք՝ հավաքական անվտանգության, ճգնաժամային կառավարման (ճգնաժամերի կանխում, կառավարում, հետճգնաժամային կայունացում և վերականգնում) և համատեղ խնդիրների շուրջ, որոնք սահմանում են ինչպես Դաշինքին սպառնացող վտանգների հիերարխիան, բնույթը և ընդգրկումությունը, այնպես էլ դրանց կանխարգելման և հակադարձման միջոցների գործիքարանը:

Գործընկերությունների հետ հարաբերությունների խթանման հարցում ՆԱՏՕ-ն առանձնակի կարևորություն է հատկացնում ՄԱԿ-ի, ԵՄ-ի և Ռուսաստանի հետ հարաբերություններին, ինչպես նաև ԵԱԳ-ին և ԳՀ-ին, քանի որ ինչպես վտանգների ու սպառնալիքների, այնպես էլ անվտանգային միջավայրի կերտման տեսանկյունից առաջադրվող հիմնահարցերի մեծ մասը ընդհանուր է և պահանջում է համակարգային համատեղ լուծումներ: Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցում Լիսաբոնում ընդունված հայեցակարգն ընդգծում էր, որ Դաշինքը հանձնառու է ՌԴ-ի հետ քաղաքական խորհրդակցությունների և գործնական համագործակցության զարգացմանը, ներառյալ՝ հակահրթիռային պաշտպանության, հակասահաբեկչության և թմրանյութերի անօրինական շրջանառության, ծովահենության դեմ պայքարի ոլորտներում:

Անդրադառնալով Դաշինքի քաղաքականության դիտարկմանը՝ հարկավոր է ներկայացնել Հվ.Կովկասում ՆԱՏՕ-ի գործընկերային հարաբե-

րությունները ՀՀ-ի հարավկովկասյան երկու միջազգայնորեն ճանաչված հարևանների՝ Վրաստանի ու Ադրբեջանի հետ:

Ռուս-վրացական օգոստոսյան պատերազմից հետո, չնայած Դաշինքի կողմից Վրաստանին ցուցաբերված քաղաքական աջակցությանը, երկրի անդամակցության հեռանկարը դարձավ առավել մշուշոտ: ՌԴ կողմից Աբխազիայի և Հվ.Օսիայի անկախության ճանաչումը ստեղծեց աշխարհաքաղաքական նոր իրավիճակ, որի վերաբերյալ սկզբունքային տարածայնությունների առկայության պայմաններում գործնականում անհնար դարձավ առաջընթացը Վրաստանի՝ Դաշինքին անդամության խնդրի շուրջ: Ստեղծված ՆԱՏՕ-Վրաստան հանձնաժողովը, մշակեց ու սկսեց իրականացվել Տարեկան ազգային ծրագիրը, որն իր բովանդակությամբ նույնական է ՆԱՏՕ-ի Անդամակցության գործողության ծրագրին, սակայն, ըստ էության, որևէ հստակ պարտավորեցնող հանձնառություն չստանձնվեց: Ձևավորված իրավիճակը Վրաստանի ղեկավարության մոտ որոշակի հիասթափության պատճառ հանդիսացան, որի արդյունքում երկրի նախագահը հայտարարեց, թե երկիրը կատարում է իր առջև դրված խնդիրները, սակայն դա չի հանգեցնում Դաշինքի կողմից համապատասխան ընդառաջ քայլերի:

2010թ. մարտի 25-ին Վրաստանի նախագահ Մ.Սաակաշվիլին այցելեց ՆԱՏՕ-ի կենտրոնակայան: Վրաստանի նախագահի այցի ժամանակ ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Ռասմուսենը նշեց, որ Դաշինքը շարունակում է օժանդակել Վրաստանին եվրատլանտյան իր ձգտումներում և սատարում է երկրի տարածքային ամբողջականությունը: Իր խոսքում ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարը ընդգծեց. «Մենք ունենք ճիշտ գործիքներ Վրաստանի անդամակցությունը նախապատրաստելու համար, ներառյալ ՆԱՏՕ-Վրաստան հանձնաժողովը և Տարեկան ազգային ծրագիրը»: ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարը Վրաստանին երախտագիտություն հայտնեց մաս Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերին օժանդակելու համար: Հոկտեմբերի 1-ին ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Ա.Ֆ.Ռասմուսենն այցելեց Վրաստան: Հանդիպելով երկրի ղեկավարությանը՝ Գլխավոր քարտուղարը վերահաստատեց ՆԱՏՕ-ին Վրաստանի ապագա անդամակցության Բուխարեստի գազաթաժողովի փաստաթղթի դրույթը, երկրի տարածքային ամբողջականությանն ու ինքնիշխանությանը Դաշինքի աջակցությունը՝ միաժամանակ նշելով, որ ՆԱՏՕ-ն աշխատում է՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների զարգացման ենթատեքստում հավատարիմ մնալ Վրաստանի առնչությամբ իր դիրքորոշմանը և այդ խնդիրները փորձում է տարանջատել միմյանցից:

2011թ. փետրվարին Մյունխենի Անվտանգության ապահովման ամե-

նամյա համաժողովի ընթացքում Վրաստանի նախագահ Մ. Սասկաշվիլին հայտարարեց, որ իր երկիրը պատրաստ է ավելի մեծ աջակցություն ցույցաբերել և ընդլայնել իր մասնակցությունը ISAF գործողությանը¹⁵²: Նշենք, որ անկախ դիտորդների, ինչպես նաև ՆԱՏՕ-ի ներսում օբյեկտիվ գնահատմամբ, ISAF-ին Վրաստանի նման նախանձախնդիր մասնակցությունը երկրի բանակաշինության և զինված ուժերի մասնագիտական փորձառության տեսանկյունից բոլորովին արդարացված չէ և հետապնդում է զուտ քաղաքական նպատակներ՝ Դաշինքին անդամակցության քաղաքականության շրջանակներում:

Ի տարբերություն Վրաստանի, Ադրբեջանն առավել հավասարակշիռ է Դաշինքի հետ հարաբերություններում¹⁵³: Ադրբեջան-ՆԱՏՕ համագործակցությունը գործնականում էականորեն չի տարբերվում Հայաստանի հետ Դաշինքի համանման համագործակցությունից, բացառությամբ հայկական կողմի կողմից պաշտպանական ոլորտում բարեփոխումների ավելի առաջընթաց արձանագրելու հանգամանքից: Սակայն նշենք, որ 2010թ. ընթացքում Ադրբեջանը, հաշվի առնելով նրա ֆինանսապես առավել կարողունակ լինելը, Դաշինքի հետ ավելի շատ համատեղ միջոցառումներ է կազմակերպել, քան՝ Հայաստանը:

Ինչպես և Հայաստանը, Ադրբեջանը նույնպես Դաշինքի հետ հարաբերվում է ԱԳԳԾ շրջանակներում, որի իրականացման երկրորդ փուլի ավարտից հետո քննարկման դրված Ադրբեջան-ՆԱՏՕ ԱԳԳԾ երրորդ փուլի փաստաթղթի հետ կապված ի հայտ են եկել լուրջ տարաձայնություններ: Դաշինքը ցանկանում է, որպեսզի փաստաթղթի քաղաքական բաժինը լինի առավել հազեցած և ընդգրկի ժողովրդավարական բարեփոխումներին ուղղված նպատակներ, իսկ ադրբեջանական կողմը հակված է փաստաթղթում քաղաքական խնդիրներին հպանցիկ անդրադարձ կատարելուն: Սա հասկանալի է, քանի որ քաղաքական ոլորտում հստակ պարտավորությունների ստանձնումը՝ ի մասնավորի, կապված ընտրությունների անցկացման ժողովրդավարական գործելաոճի հետ, էական խնդիրներ առաջ կբերի Ադրբեջանի ներկայիս իշխանությունների համար:

Դաշինքում հակված են կարծել, որ ԱԳԳԾ-ն, չնայած ընդգրկում է ծավալուն պաշտպանական բարեփոխումների հատված, իրականում շոշա-

¹⁵² Նշենք, որ Վրաստանը, որն արդեն Աֆղանստանում տեղակայել է 924 հոգանոց զորախումբ, նախատեսում է այն համարել 11 հոգանոց զորախմբով, ովքեր մարզելու են աֆղանական ուժերին: Յիշեցնենք, որ 2010թ. սեպտեմբերից մինչև 2011թ. փետրվար ժամանակահատվածում Վրաստանը տվել է 7 զոհ և 14 վիրավոր:

¹⁵³ Նշենք, որ Ադրբեջանը ISAF գործողության մասնակից է 2003թ. և այժմ 94 հոգանոց զորախումբ ունի Աֆղանստանի տարածքում և մտադիր է այն կրկնապատկել:

փելի արդյունքներ չի արձանագրում դրանց իրականացման առումով՝ կապված մեկ այլ կարևոր խոչընդոտող հանգամանքի՝ Ադրբեջանում կոռուպցիոն երևույթների առկայության հետ, որի արդյունքում պաշտպանական բյուջեի աճը չի հանգեցնում զինված ուժերի վիճակի տեսանելի բարելավմանը:

Նշենք նաև, որ ինչպես Ադրբեջանի արտաքին քաղաքական ողջ օրակարգի, այնպես էլ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների ոլորտում էական դերակատարում ունի էներգառեսուրսների ու դրանց տարանցման միջոցների հիմնահարցերը ու չնայած վերջին շրջանում էներգակիրների տեղափոխման ուղիներում Ադրբեջանի կողմից որոշակի ակտիվություն կա դեպի հյուսիս՝ այնուամենայնիվ դա բավարար չէ, ուստի Ադրբեջանը շարունակելու է Վրաստանով և Թուրքիայով էներգակիրների տեղափոխման ծրագրերի իրականացումը, ինչպես նաև աշխատելու է, որպեսզի այդ ծրագրերին հնարավորինս ներգրավվեն Ղազախստանն ու Թուրքմենստան:

Հայաստանի Հանրապետություն – ՆԱՏՕ հարբերություններ

Հայաստանը Դաշինքի հետ առավել ինստիտուցիոնալ ձևաչափով հարաբերվում է դեռ 1994-ից Գործընկերություն հանուն խաղաղության (Partnership for peace) ծրագրի, իսկ 1997-ից՝ Եվրատլանտյան գործընկերության խորհրդի (EAPC) շրջանակներում: Հյուսիսատլանտյան Դաշինքի կազմակերպությունը Հայաստանի, ինչպես նաև հարավկովկասյան մյուս երկրների հետ գործակցում է անհատական սկզբունքով, քանի որ երկրներից ոչ բոլորն են ցանկանում կամ ունակ նույնչափ և նույն խորության հարաբերություններ հաստատել Դաշինքի հետ: Ընդ որում, հարաբերությունների խորությունը և որակական նկարագիրը (քաղաքական արդիականացում և քաղաքացիական վերահսկողություն, ռազմական բարեփոխումների և այլն) անհատական է ամեն երկրի դեպքում: ՆԱՏՕ-ն կարևորում է ՀՎ.Կովկասի աշխարհագրական դիրքը ահաբեկչության, ՉՈՁ-ի տարածման, թմրանյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարում, ինչպես նաև տարածաշրջանի տարանցիկ հնարավորությունների և էներգետիկ պաշարների տեսանկյունից: Այս առումով ՆԱՏՕ-ն շահագրգռված է ՀՎ.Կովկասում կայունության և անվտանգության հաստատման, ինչպես նաև տարածաշրջանը կազմող երկրների հետ ժողովրդավարական և կանխատեսելի հարաբերությունների հաստատման գործում:

Գաշինքի հետ հարաբերությունների ինստիտուցիոնալ հաջորդ փուլը Հայաստանի համար Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (Individual Partnership Action Plan) շրջանակներում համագործակցությունն էր, որ մեկնարկեց 2006թ. և տևելու էր 2 տարի: Ծրագիրը նպատակ ուներ օժանդակել և աջակցել Հայաստանին իր պաշտպանական և անվտանգության համակարգերը բարեփոխելու, ՆԱՏՕ-ի հետ ռազմական փոխգործակցության ունակությունը բարձրացնելու, անվտանգության ոլորտի լայնածավալ բարեփոխումներ իրականացնելու գործում: Այս առումով կարելի է նշել, որ Հայաստան-ՆԱՏՕ համագործակցությունը ԱԳԳԾ շրջանակներում իր մեջ ներառում է չորս հիմնական ոլորտ՝ 1. քաղաքական (ժողովրդավարական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ) և անվտանգության, 2. պաշտպանական և ռազմական, 3. հանրային իրազեկման, գիտության, բնապահպանության, արտակարգ իրավիճակների, 4. վարչական, պաշտպանողական անվտանգության և ռեսուրսների կառավարման:

2009թ. մայիսի 4-ին Հյուսիսատլանտյան խորհրդի կողմից հաստատվեց ՀՀ ԱԳԳԾ 2009-2010թթ. փաստաթուղթը, որի իրականացումն ավարտվեց 2010թ. վերջին: Միաժամանակ նշեք, որ ՀՀ ԱԳՆ-ն ՆԱՏՕ-ի Միջազգային անձնակազմին է ներկայացրել Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ 2011-2012թթ. գործակցային նոր փաստաթղթի նախագիծը, որի հաստատումով գործակցությունը Գաշինքի և ՀՀ-ի միջև նոր փուլ կթևակոխի:

Հայաստանի համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ ԱԳԳԾ-ի շրջանակներում ուղղված է ՀՀ-ի պաշտպանական և անվտանգության համակարգերի բարեփոխմանը, կատարելագործմանը և դաշնակիցների հետ փոխգործակցության ունակությունների բարձրացմանը: Այս համատեքստում համագործակցության կարևոր խնդիրներից է ՀՀ զինված ուժերում քաղաքացիական վերահսկողության ապահովումը, իսկ բարեփոխումների ռազմավարական վերջնանպատակն է արդիական ռազմական պահանջների համապատասխան՝ առավել մրցունակ և ժամանակակից պաշտպանության համակարգի ստեղծումը, որն արդյունավետորեն կիրականացնի Հայաստանի ռազմական անվտանգության ապահովումը:

ՀՀ-ի համար ՆԱՏՕ-ի հետ գործակցությունը հատկապես արտակարգ իրավիճակների պլանավորման և ճգնաժամերի կառավարման, սահմանային անվտանգության և կիբեր պաշտպանության ապահովման ոլորտներում, գիտությունը անվտանգության ապահովման մեջ օգտագործելու, բնապահպանության, տեղեկատվական սպասարկման և հանրային դիվանագիտության ոլորտներում կարևոր և նշանակալից է

հատկապես փորձի փոխանակման և նոր գիտելիքների ձեռքբերման տեսանկյունից:

Միաժամանակ հարկավոր է նշել, որ ՆԱՏՕ-ն Հայաստանի համար խիստ կարևոր մի շարք այնպիսի հարցերում, ինչպիսիք են հայ-թուրքական հարաբերությունների բարելավման Հայաստանի կողմից նախաձեռնված գործընթացը, ԵԱՀԿ Մինսկի շրջանակներում ԼՂ հակամարտության կարգավորման ընթացիկ գործընթացը: ՆԱՏՕ-ն փորձում է կամ որոշակիորեն օժանդակել ընդհանուր գործընթացին (հայ-թուրքական գործընթաց), կամ հնարավորիս չեզոքություն պահպանել՝ հղում կատարելով եվրոպական անվտանգության մեկ այլ կազմակերպության (ԵԱՀԿ)՝ այդ հիմնահարցերով զբաղվելու հանգամանքին:

Այսպիսով, որոշակիորեն ամփոփելով, հետևյալ կերպ կարելի է ձևակերպել ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների կարևորությունը Հայաստանի համար.

- ակտիվ մասնակցությունը ՆԱՏՕ-ի ԳՀ, ապա նաև ԱԳԳԾ ծրագրերին նշանակալից գործոն են Հայաստանի անվտանգության ապահովման ունակությունների բարձրացման գործում, որն իր արտաքին քաղաքականության մեջ առաջնորդվելով փոխլրացման սկզբունքով, ձգտում է հնարավորին ակտիվ և արդյունավետ հարաբերություններ զարգացնել Հյուսիսատլանտյան դաշինքի հետ՝ փորձելով սեփական անվտանգության, վարկանիշի և հարավկովկասյան կայունության ու հավասարակշռության ապահովման տեսանկյունից որոշակի ջանքեր ձեռնարկել, որպեսզի ԵԱԳ, ԳՀ և ԱԳԳԾ-ի շրջանակներում ՆԱՏՕ - Հայաստան հարաբերություններն իրենց մակարդակով չզիջեն ՆԱՏՕ - Վրաստան կամ ՆԱՏՕ - Ադրբեյջան հարաբերությունների մակարդակին,

- ՆԱՏՕ-ն եվրատլանտյան տարածաշրջանի Հայաստանին սահմանակից կենտրոնական կազմակերպություններից է, հետևաբար հարաբերությունների զարգացումն այդ կազմակերպության հետ կարևորվում է, թե՛ միջազգային հարաբերություններում և, մասնավորապես, եվրոպական գործերում Հայաստանի ակտիվ ներգրավման, թե՛ ՀՀ-ի անվտանգության ապահովման առումով,

- Եվրատլանտյան տարածաշրջանում Հայաստանի ակտիվ ներգրավման և մեկուսացման վտանգից խուսափելու տեսակետից կարևորվում է Հայաստանի ակտիվ մասնակցությունը ԵԱԳ շրջանակներում տեղի ունեցող քաղաքական գործընթացներին: Կրավորական պահվածքը տվյալ ատյանում կարող է լրջորեն խաթարել Հայաստանի վարկն ու հեղինակությունը՝ տեղիք տալով եվրոպական երկրների շրջանում ՀՀ-ի մասին ան-

քարենպաստ պատկերացումների ձևավորմանը: Միաժամանակ, ակտիվ մասնակցությունը ԳՀ -ին, ԵԱԳ -ին և ԱԳԳԾ-ին կվկայի արևմտյան արժեքների ու եվրոպական երկրների ընտանիքի լիարժեք անդամ դառնալու նկատմամբ Հայաստանի հանձնառության մասին,

- համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ կլրացնի ՀՀ անվտանգության ապահովման հայ-ռուսական համագործակցային դաշտից դուրս մնացած ոլորտները՝ դրանով փաստականորեն գործարկելով քաղաքական տարբեր բևեռների հետ փոխհամագործակցության իր դիրքորոշումը ու ներկայանալով որպես դրանց զուգադրման յուրահատուկ միջակայք: Այն որևէ կերպ չի կարող ստորադասել Ռուսաստանի հետ ռազմական համագործակցության և ԱՊՀ Հավաքական անվտանգության պայմանագրի դերն ու նշանակությունը:

3.2.5 Վրաստան և հայ-վրացական հարաբերություններ

2003-ի «Վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանում քաղաքական ճգնաժամերը իշխանության ներսում, ինչպես նաև իշխանություն-ընդդիմություն հարաբերություններում ստացել են բնականոն բնույթ: 2008թ. օգոստոսի ռուս-վրացական պատերազմի հետևանքով երկրում առաջացավ քաղաքական նոր ճգնաժամ, որի արդյունքում կարող էր ոչ միայն իշխանափոխություն տեղի ունենալ, այլ նաև վտանգ կար, թե Վրաստանը կարող էր կորցնել իր ինքնիշխանությունը: Սակայն իշխանությունը՝ Մ.Սաակաշվիլու գլխավորությամբ, Արևմուտքի օժանդակությամբ, արտաքին թշնամի գտնելու քարոզչական հնարքներով, ակնհայտ պոպուլիստական այլ գործողություններով, ինչպես նաև սեփական թիմակիցներին «գոհաբերելու» գնով կարողացավ որոշակի կայունացում մտցնել երկրի քաղաքական կյանքում: Դրան, ակնհայտորեն, նպաստեցին նաև քաղաքական խնդրումները ընդդիմադիր ճամբարում: Ընդդիմությունը, հաշվի չառնելով իր ներքին տարանջատվածությունը և միացյալ լիդերի բացակայությունը, չկարողացավ բավարար աջակցության արժանանալ ինչպես հասարակության, այնպես էլ արևմտյան գործընկերների կամ անգամ ռուսական քաղաքական որոշ շրջանակների մոտ: Դրան չնպաստեցին անգամ մի շարք ընդդիմադիրների (նախկին վարչապետ Ջ.Նոդաիդեիլի, Խորհրդարանի նախկին նախագահ Ն.Բուրջանաձեի և այլոց) այցերը ՌԴ մայրաքաղաք, որոնք նպատակ ունեին որոշակի կամուրջներ ստեղծել ՌԴ-ի հետ՝ հետագա քաղաքական մրցապայքարում այդ հանգամանքն օգտագործելու ակնկալիքներով:

2010թ. Վրաստանի ներքաղաքական իրադրությունը ցուցաբերեց կայունացման ակնհայտ միտումներ, որոնց արդյունքում արձանագրվեց իշխանությունների վարկանիշի որոշակի աճ: Դրան նպաստող գործոնները տարբեր էին՝ կապված տնտեսական քաղաքականության ընդգծված ազատականացման ուղեգծի շարունակման, տնտեսության մի շարք ոլորտներում որոշակի բարելավման, ճգնաժամի և պատերազմի հետևանքների մասնակի վերացման հանգամանքներով¹⁵⁴: Այս շրջանում վրացական իշխանությունները արտաքին թշնամու միջոց, ինչպես նաև երկրի տարածքային ամբողջականության վերականգնման կարևորագույն գործոնը խաղարկելով՝ հանգեցին հասարակական լայն շերտերի լոյալությանը և մասնակի աջակցությանը, և դա այն պարագայում, երբ երկրում գործազրկությունը բավական մեծ թիվ է կազմում: Այս պարագայում ներքին կայունության տեսանկյունից առանցքային կարևորություն է ձեռք բերում նաև իշխանությունների վճռականությունը՝ պետական կառավարման և տնտեսվարման բոլոր հնարավոր ոլորտներում շարունակել բարեփոխումները:

Երկրում քաղաքական կայունության և իշխանությունների դիրքերի ամրապնդման տեսանկյունից քաղաքական առանցքային գործոն հանդիսացան Վրաստանում մայիսին տեղի ունեցած տեղական մարմինների և Թբիլիսիի քաղաքապետի ուղղակի ընտրությունները, որոնք քաղաքական առումով կարևոր դեր կատարեցին նախագահ Մ.Սաակաշվիլու դիրքերի ամրապնդման և ընդդիմության՝ իշխանության գալու պլանների ձախողման հարցում:

Վրաստանում վերջին ընտրությունները փաստեցին, որ արմատական ընդդիմությունը պոպուլիստական քայլերից զատ որևէ իրատեսական այլընտրանք չի առաջարկում իշխանություններին: 2010-ի վերջին վրացական ընդդիմության մի հատվածը վերախմբավորվեց և ստեղծեց արմատական ողովածության «Վրացական կուսակցությունը» (առաջնորդներ՝ Լ.Գաչեչիլաձե, Ի.Օկրուաշվիլի, Է.Կիցմարիշվիլի): Նրանց աջակցում են մարդու իրավունքների նախկին պաշտպան Ս.Սուբարը և նախկին վարչապետ Ջ.Նոդաիդելին: Ընդդիմության հաջորդ հատվածը Ն.Բուրջանաձեի գլխավորությամբ, 2010-ի նոյեմբերին կազմավորեց «Ժողովրդական հավաք» միավորումը, որն իր տեղը գտավ ընդդիմադիր դաշտի կենտրոնում: Ի.Ալասանիան և խորհրդարանական ընդդիմության առաջնորդ Գ.Թարգամաձեն իրենց հերթին ընկալվում են որպես առավել զուսպ, ոչ

¹⁵⁴ Սա իրականացվում էր արևմտյան գործընկերների անմիջական ֆինանսական օժանդակության ներքո՝ 4 մլրդ. դոլար, ինչպես նաև վարկային տրամշնորհի տրամադրման միջոցով:

արմատական ընդդիմադիրներ և իշխանությունների կողմից դիտվում որպես ընդունելի, միգուցե նաև կառուցողական ընդդիմություն: Այս իրողությունները և հատկապես ներքին տարանջատվածությունը թուլացնում են վրացական ընդդիմադիրների դերն ու ազդեցությունը՝ նվազեցնելով նրանց հնարավորությունները՝ պատրաստվելու 2012թ. խորհրդարանական և 2013թ. նախագահական ընտրություններին:

2008-ից ի վեր Վրաստանի արտաքին քաղաքականության գերակայությունը շարունակում է մնալ երկրի տարածքային ամբողջականության վերականգնման խնդիրը, որը կտրուկ բարդացել է ՌԴ-ի և մի շարք այլ երկրների կողմից (Նիկարագուա, Վենեսուելա, Նաուրու) Աբխազիայի և Հվ.Օսիայի անկախության ճանաչմամբ և նրանց անվտանգության ապահովման երաշխավորմամբ: Սակայն այսօր, ելնելով մի շարք հանգամանքներից, Վրաստանը որոշակի «խմբագրում» է ՌԴ-ի նկատմամբ իր հրապարակային քաղաքականության բաղադրիչներները, որոնք ունեն տակտիկական բնույթ և հանգում են նրան, որ պաշտոնական Թբիլիսին գերծ է մնալու Աբխազիան և Հվ.Օսիան վերադարձնելու ռազմական որևէ քայլից: Դա այն դեպքում, երբ Մոսկվան շարունակում է պնդել, որ ոչ մի հարաբերություն չի հաստատի նախագահ Մ.Սաակաշվիլու և նրա վարչակարգի հետ:

Այս ուղղությամբ պայքարի հիմնական միջոց Թբիլիսին ընտրել է միջազգային հանրության միջնորդությամբ միջազգային հեղինակավոր կառույցների միջոցով առկա հիմնահարցերի լուծումը:

Նման իրավիճակում Վրաստանը Արևմուտքի՝ ԱՄՆ-ի ու ԵՄ-ի առջև ներկայանում է որպես ժողովրդավար և բարեփոխումների ճանապարհով ընթացող երկրի համբավ ունեցող պետություն, որի համար, սակայն, ռուսամերիկյան հարաբերությունների «վերալիցքավորման» ներկա փուլում կան դժվարություններ՝ կապված Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնման և ռուս-վրացական հարաբերություններում խուսանավումների հնարավորությունների հետ:

Արտաքին քաղաքականության մեջ Վրաստանը հետևողականորեն շարունակում է իրականացնել ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին անդամակցելու իր որդեգրած քաղաքականությունը: Հարկ է նշել, սակայն, որ այսօր ոչ ԵՄ-ն, ոչ էլ ՆԱՏՕ-ն այլևս չեն շտապում վճռական որոշում կայացնել այդ կազմակերպություններին Վրաստանի հնարավոր անդամակցության հարցում՝ դրա փոխարեն առաջարկելով նրան «Արևելյան հարևանության», «Գործընկերություն հանուն խաղաղության (PfP)» տարածաշրջանային բնույթի ընդհանուր ծրագրեր:

Ադրբեջանը Վրաստանի տարածաշրջանային ամենից կարևոր գործըն-

կերներից է, որի ազդեցությունը տնտեսական և քաղաքական առումով Վրաստանում աճի միտումներ է արձանագրում: Վրաստանը ներառված է Բաքվի նավթագազային գործող տարանցիկ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան, Բաքու-Թբիլիսի-Էրզրում ծրագրերում, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու շինարարության մեջ, իրականացնում է առևտրատնտեսական, էներգետիկ, ռազմարդյունաբերական երկկողմ ծրագրեր: Երկու երկրները ՎՈՒԱՄ կազմակերպության անդամ են, իսկ նրանց գործակցությունը, ինչպես հաճախ հայտարարում են երկրների նախագահները, ավելի քան ռազմավարական է:

Սակայն սա չի նշանակում, թե երկրների միջև չկան որոշակի կնճռոտ հարցեր: Պարբերաբար Բաքուն բարձրացնում է Քվեմո-Քարթլիի շրջանում բնակվող ադրբեջանցիների իրավունքների ընդլայնման, իշխանության օղակներում նրանց որոշակի ներկայացված լինելու հարցերը, ինչպես նաև աջակցում թուրք-մեսխեթցիներին Վրաստան վերադարձնելու գործընթացին:

Վրաստանի համար ռազմավարական են հարաբերությունները Թուրքիայի հետ, որին բաժին է ընկնում արտահանման և ներկրման ամենամեծ ծավալը, քանի որ ապրանքաշրջանառությունը գերազանցում է 1.2 մլրդ դոլարը՝ կազմելով Վրաստանի ապրանքաշրջանառության 16%-ը: Վրաց-թուրքական հարաբերությունների ռազմավարական ուղենիշների հիմնարար փաստաթուղթը «Բարեկամության և համագործակցության մասին» երկկողմ պայմանագիրն է: Կան նաև առևտրատնտեսական, գիտատեխնիկական, ռազմական, մշակութային և կրթական ոլորտների այլ համաձայնագրեր: Վրաստանը կարևորվում է Թուրքիայի համար մի քանի տեսանկյունից. այն «միջանցք» է Անդրկովկասում Թուրքիայի գլխավոր գործընկեր Ադրբեջանի հետ հաղորդակցվելու և կենտրոնասիական էներգակիրների ներկրման համար, տարանցման տարածք է նավթագազատարների և բեռնաառևտրափոխադրումների առումով, ռազմական տեսակետից բուֆերային դեր է կատարում Թուրքիայի և Ռուսաստանի միջև, դիտարկվում է որպես ՆԱՏՕ-ի ազդեցության տարածման ևս մեկ գոտի:

Վրաց-թուրքական հարաբերություններում իր տարածաշրջանային քաղաքականության կերտման առումով Թուրքիան ստիպված է հաշվի առնել առնվազն երկու գործոն. նախ իր տարածքում բնակվող մոտ 1 մլն. էթնիկ արխազների գործոնը, որոնք պահանջում են ճանաչել Աբխազիայի անկախությունը, և երկրորդ՝ Անատոլիայում ապրող լազերի պահանջը՝ դատապարտել ՌԴ-ի իրականացրած բռնազավթումը:

Թուրքիայի հետ ռազմավարական գործակցության ներքո անգամ կան որոշակի հանգամանքներ, որոնք չեն արտացոլում Վրաստանի ազգային շահերը. ի մասնավորի՝ չնայած Թբիլիսիի ջանքերին, Անկարան շարու-

նակում է հետևողականորեն առաջ քաշել մեսիսեթցի թուրքերի հայրենադարձության հարցը:

Վրաց-թուրքական օրակարգի դիտարկման ներքո հարկ է հիշատակել նաև, որ ՀՀ-ի կողմից նախաձեռնված հայ-թուրքական հարաբերությունների բնականոնացման երկխոսության համատեքստում Վրաստանի իշխանությունները և հանրային շրջանակները որոշակի անհանգստություններ ունեցան, քանի որ դրա արդյունքում Վրաստանը կարող էր գրկվել ոչ միայն տարանցման տնտեսական շահույթներից, այլև կորցնել ՀՀ-ի քաղաքականության վրա ազդելու կարևոր լծակից: Սա կարող է բացասական հետևանքներ ունենալ Ջավախքում քաղաքական ինքնորոշման հնարավոր գործընթացների զարգացման տեսանկյունից:

Հայ-վրացական հարաբերություններ

Ներկայումս Վրաստանն այն երկրների շարքում է, որի հետ ի սկզբանե հաստատվել են լայն ընդգրկվածության հարաբերություններ, որոնք կրել են բավականին դինամիկ բնույթ՝ ամենաբարձր մակարդակի պարբերաբար շփումներով: Հայ-վրացական հարաբերություններն իրենց բնույթով և ներկա մակարդակով արտացոլում են երկկողմ և տարածաշրջանային գործընթացների ողջ տրամաբանությունը: Այսօր նրանք բավական բարձր մակարդակի վրա են, որի մասին փաստում են առկա իրավապայմանագրային դաշտը (կնքվել է առնվազն 71 պայմանագիր ու համաձայնագիր) և երկրների ղեկավարների փոխալյցելությունների մակարդակը (20 այց):

Վրաստանի հետ ձևավորված երկկողմ իրավապայմանագրային դաշտը իր ծավալով, ընդգրկունությամբ և քաղաքական մակարդակով զիջում է միայն Ռուսաստանի հետ գոյություն ունեցող նորմատիվ - իրավական հենքին: Իրավապայմանագրային մնանօրինակ հենքի տեսանկյունից, որն, ի դեպ, լավ նախադրյալներ է ստեղծում ամենատարբեր ուղղություններով երկկողմ համագործակցության զարգացման և կատարելագործման համար, կարելի է ասել, որ հայ-վրացական հարաբերություններն իրենց էությամբ բարիդրացիական են: Սակայն, այդ հարաբերությունները դիտարկելով միջազգային ասպարեզում և, հատկապես, տարածաշրջանում նրանց կողմից հետապնդված շահերի տեսանկյունից, կարելի է նշել, որ դրական երևույթների հետ մեկտեղ, առկա են նաև երկկողմ հարաբերությունների մակարդակի վրա բացասական անդրադարձ ունեցող խնդ-

րահարույց հանգամանքներ¹⁵⁵: Դրանք, մեր կարծիքով, պայմանավորված են տարբեր գործոններով. գոյություն ունեցող հակամարտությունների կարգավորման հարցում կիրառվող սկզբունքների նկատմամբ կողմերի տարբեր նախապատվություններով, Թուրքիայի և Ադրբեջանի հետ Վրաստանի հարաճուն համագործակցությամբ, նրանց միջև տարածաշրջանային կարևոր ռազմավարական հարցերի շուրջ առկա համակարծրությամբ և այդ երկրներն ընդգրկող յուրատեսակ քաղաքական առանցքի հետզհետե առաջացմամբ, Ռուսաստանի հետ փոխհարաբերություններում կողմերի դրսևորած մոտեցումների խիստ տարամետությամբ, եվրատլանտյան ուղղությամբ համագործակցության նպատակների, մակարդակի և տեմպերի, ինչպես նաև տարածաշրջանում արևմտյան տեղությունների կողմից իրականացվող ծրագրերի նկատմամբ կողմերի ցուցաբերած տարբեր մոտեցումներով ու ձգտումներով:

Երկկողմ հայտարարությունները, թե Հայաստանի ու Վրաստանի միջև չկան այնպիսի խնդիրներ, որոնք հնարավոր չլինի լուծել բանակցությունների միջոցով, արտացոլում են այն իրողությունը, որ կողմերը կարևորում են փոխադարձ դերակատարումը տարածաշրջանային գործընթացներում. ի մասնավորի՝ վրացական կողմի համար նման որոշման հանգեղու դրդապատճառ է հանդիսացել ՀՀ-ի զուսպ և հավասարակշռված կեցվածքը՝ կապված 2008թ. ռուս-վրացական հակամարտության, Աբխազիայի և Հվ. Օսիայի ճանաչման հարցերում:

Դիցույ՛ք. 2008թ. ինչպես Հվ. Կովկասի, այնպես էլ ողջ մակրոտարածաշրջանի երկրների համար յուրահատուկ մարտահրավեր էր այսպես կոչված «հնգօրյա» պատերազմը, որը առարկայական փոփոխություններ մտցրեց տարածաշրջանային ուժային հարաբերակցության մեջ: Այսօրինակ պայմաններում պաշտոնական այցով Վրաստան մեկնելու ՀՀ նախագահի որոշումը արտաքին քաղաքական ճկունության դրսևորում էր, որը փաստեց, որ ՀՀ-ն, անգամ նման բարդ իրավիճակում, ոչ միայն չի խորշում իր համար բավական զգալուն հնարավոր անդրադարձերի պարագայում շիտակ և ուղղակի երկխոսություն վարել Թբիլիսիի հետ՝ այդ կերպ վերահաստատելով Երևանի համար առկա հարաբերությունների բարիդրացիական բնույթը և կարևորությունը, այլ նաև պատրաստ է հնգօրյա պատերազմի արդյունքում առավել տեսանելի դարձած հաղորդակցային, էներգետիկ, բեռնափոխադրումների անվտանգ տարանցման խն-

¹⁵⁵ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Мурдян И., Современные грузино – армянские отношения./ Ориентиры внешней политики Армении. Под ред.-ей Г.В. Новиковой: Центр стратегического анализа "СПЕКТР", 2002, էջ 71 - 95:**

դիրների լուծման այլընտրանքային մեխանիզմներ առաջարկել: Այս պարագայում պաշտոնական Երևանի քաղաքական նախաձեռնողականությունը, մի կողմից պայմանավորված էր բախման կողմերում կենսագործող հայկական մեծաթիվ համայնքների շահերով, մյուս կողմից՝ այն իրողություններով, որ հակամարտության կողմերից մեկը Երևանի ռազմավարական գործընկերն է, մյուսը՝ նրա հարևան երկիրը: Այսօրինակ գործելանոճը փաստեց մեկ կարևոր իրողություն ևս, որ Հայաստանը հաստատական է ներգրավվածության բարձր մակարդակ ապահովել տարածաշրջանային կայունությանը վտանգող մարտահրավերները կանխելու և դրանց հակադարձելու իր նպատակադրման մեջ, որը դրսևորվում է քաղաքական իրատեսականության և հաշվենկատ քաղաքական դիրքորոշումների գործարկման միջոցով: Մոտեցում, որն արտացոլում է տարածաշրջանային կայունության և խաղաղության հրամայականները:

Միաժամանակ պաշտոնական Թբիլիսին լավ գիտակցում է, որ հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր բարելավման և սահմանի բացման դեպքում նրա դերակատարումը Հայաստանի հետ հարաբերություններում խիստ կնվազի: Ավելին, այս պարագայում Հայաստանն առավել անկաշկանդ քաղաքականություն կվարի հայաբնակ Ջավախքի հարցում, որը կարող է հեռանկարում առաջ քաշել այդ տարածաշրջանի քաղաքական ինքնորոշման հիմնահարցի՝ օրակարգ ներառելը: Վերոնշյալի արդյունքում, հաշվի առնելով նաև հայ-ռուսական ռազմավարական գործակցությունը, ՀՀ-ի կշիռը տարածաշրջանում էականորեն կավելանա, որը ոչ մի կերպ շահեկան չէ Վրաստանին:

Արձանագրելով հարաբերությունների խորությունը՝ հարկ է առանձնացնել նաև հիմնախնդիրների այն ցանկը, որոնց մասով կողմերի մոտ առկա են դիրքորոշումների տարբերություններ: Ունենալով Թուրքիայի և Ադրբեջանի հետ տնտեսական շահեր, լինելով ՎՈՒԱՄ-ի անդամ՝ Վրաստանը շարունակում է Հայոց Ցեղասպանությունը չճանաչելու քաղաքականությունը, պաշտպանում է Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքը, քննադատաբար է մոտենում ԱՊՀ-ին և ՀԱՊԿ-ին, որոնց անդամակցում է Հայաստանը: Երկկողմ տարակարծությունների տեղիք են տալիս նաև ՀՀ-ի ու Վրաստանի սահմանանցման գործընթացի առանձին բաղադրիչներ, Վրաստանում առկա հայկական ծագմամբ հոգևոր, կրոնական և մշակութային ժառանգության կոթողների պատկանելության հարցը և դրա հետ կապված մի շարք հանգամանքներ, Հայաստան ներկրվող զինտեխնիկայի տեղափոխման, ինչպես նաև ջավախահայության և Վրաստանում բնակվող հայ ազգաբնակչության իրավունքների և ազատությունների հարցերը:

Վրաստանի պարտքը ՀՀ-ին 2010-ի տվյալներով կազմում է 17 մլն դոլար:
Վերոնշյալ հանգամանքներով հանդերձ՝ երկու երկրների միջև առկա են նաև ակտիվ առևտրատնտեսական հարաբերություններ, համատեղ միջկառավարական հանձնաժողով, որ կանոնակարգում է առևտրային ներկրման և արտահանման մի շարք հարցեր, շփումներ զբոսաշրջության, համատեղ սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման, էներգետիկայի, Բաթում-Մեդրի ավտոմայրուղու կառուցման ոլորտներում:

3.2.6 Թուրքիա և հայ-թուրքական հարաբերություններ

Հվ.Կովկասի «թուրքական» չափումն առանցքային գործոն է տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումների տեսանկյունից: Թուրքիան կենսական շահեր ունի տարածաշրջանում՝ կապված Հվ.Կովկասի նավթային, հաղորդակցային և ընդհանուր ռազմավարական կարևորության հետ: Ունենալով ջերմ հարաբերություններ Վրաստանի և Ադրբեջանի հետ՝ պաշտոնական Անկարան ընդգծված հավակնոտ քաղաքականություն է վարում Երևանի նկատմամբ: Որպես վերջինիս դրսևորում՝ Թուրքիան փակ է պահում Հայաստանի հետ ցամաքային սահմանը, փորձում միջազգային տարբեր կառույցներում ոչ հայանպաստ բանաձևեր նախաձեռնել կապված հատկապես ԼՂ խնդրի լուծման հետ: Մեր կարծիքով, հայ-թուրքական սահմանի բացումը և միջպետական հարաբերությունների բարելավումը կապելով ԼՂ հարցում Հայաստանի դիրքորոշման փոփոխման և ցեղասպանության հիմնախնդրի լուծումից պաշտոնական Երևանի հրաժարվելու նախապայմանների հետ՝ Թուրքիան ռազմավարական սխալ է թույլ տալիս: Այս պարագայում Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականությունը մի կողմից դառնում է իր ամոթալի անցյալի սխալների «գերին», մյուս կողմից՝ Ադրբեջանի քաղաքական շահերի «պատանդը»: Նշյալ հանգամանքները խիստ բացասաբար են անդրադառնում տարածաշրջանում Թուրքիայի դերի արժեվորման վրա՝ առաջին հերթին ավելորդ խնդիրներ ստեղծելով ԵՄ-ին Թուրքիայի հնարավոր անդամակցության ճանապարհին:

Մեր կարծիքով, Թուրքիայի մուտքը ԵՄ շահեկան է ՀՀ ազգային շահերի տեսանկյունից, քանզի ներսից փոփոխված և ժողովրդավարացված Թուրքիան առավել կանխատեսելի ու տղերանտ կլինի: ԵՄ-ին Թուրքիայի հնարավոր անդամակցության արդյունքում Հայաստանը ստիպված չի լինի նրա հնարավոր հավակնություններից պաշտպանվելու նպատակով ռազմաքա-

դաքական դաշնակցային հարաբերություններ հաստատել արտատարածաշրջանային տերությունների հետ: Թուրքիայի հնարավոր մուտքը Եվրոպական միություն հնարավորություն է ընձեռում Հայաստանին սահմանակցել ԵՄ-ին՝ դրանից բխող տնտեսական, հաղորդակցային շահեկանությամբ: Մինչդեռ, եթե Թուրքիային չհաջողվի անդամակցել ԵՄ-ին, ապա պաշտոնական Անկարայի հայացքը լիարժեքորեն կարող է շրջվել դեպի Արևելք՝ Թուրքիայի քաղաքականությունը դարձնելով առավել հավակնոտ:

Հայ-թուրքական հարաբերություններ

Տարածաշրջանային անվտանգության և համագործակցության հեռանկարները հնարավոր չէ պատկերացնել առանց հայ-թուրքական կապերի և հարաբերությունների հաստատման: Սակայն հայ-թուրքական հարաբերությունների ապագան մինչ օրս եղել և մնում է անորոշ: Հայաստան - Թուրքիա ներկայիս հարաբերությունների բնույթն արտահայտվում է այն հանգամանքով, որ երկու հարևան երկրների միջև առ այսօր հաստատված չեն դիվանագիտական հարաբերություններ: Այս փաստը հիմնականում պայմանավորված է թուրք-ադրբեջանական բարեկամական հարաբերություններով և, որպես հետևանք՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի նկատմամբ Թուրքիայի միանշանակ ադրբեջանամետ դիրքորոշմամբ: Մեր կարծիքով, թերևս, առկա են նաև կարևոր այլ գործոններ, այդ թվում՝ հայ-թուրքական հարաբերությունների անցյալին վերաբերող պատմական հանգամանքների և 1915թ.-ի Հայոց ցեղասպանության ճանաչման նկատմամբ Թուրքիայի կողմից որդեգրած խիստ մերժողական դիրքորոշումը: Մինևույն ժամանակ, միջազգային ասպարեզում Հայաստանի նկատմամբ Թուրքիայի դրսևորած անբարյացակամ մոտեցումները, Հվ.Կովկասում նրա անհավասարակշռված և կողմնակալ քաղաքականությունը, որի առավել անցանկալի հետևանքներից են տարածաշրջանում բաժանարար գծերի առաջացումն ու խորացումը, լուրջ մտավախությունների առիթ են հանդիսացել և շարունակում են այդպիսին լինել Հայաստանի համար: ՌԻստի, պատահական չեն սեփական անվտանգությունն արդյունավետ կերպով ապահովելու Հայաստանի ձեռնարկած քայլերը, որոնցից կարևորագույնը ռուս-հայկական ռազմական համագործակցության ծավալումն է:

ՀՀ-ում 2008թ. նախագահական ընտրություններից և նոր կառավարության ձևավորումից հետո, Հայաստանի նախագահը հանդես եկավ հայ-

թուրքական հարաբերությունների կարգավորման աննախադեպ նախաձեռնությամբ: Նա 2008թ. հունիսին Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին հրավիրեց Երևան միասին դիտելու Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի հավաքականների հանդիպումը: Ընդունելով ՀՀ նախագահի հրավերը՝ Ա.Գյուլը սեպտեմբերի 6-ին Երևանում էր, ուր տեղի ունեցավ երկու երկրների նախագահների հանդիպումը, որի ժամանակ երկուստեք պատրաստակամություն հայտնվեց հարաբերությունների կարգավորման վերաբերյալ:

Ետ չկանգնելով հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման տրամաբանությունից և առաջնորդվելով առողջ բանականության և քաղաքական իրատեսականության հրամայականներով՝ պաշտոնական Երևանը Թուրքիայի հետ անմիջական երկխոսելու ճանապարհը համարեց երկու երկրների միջև առկա տարակարծությունների հարթեցման և հարաբերությունների կարգավորման լավագույն ուղին: Եվ իրապես հայ-թուրքական հարաբերություններում ձևավորված պատային իրողություններն առանց շեշտադրված նախաձեռնողականության հնարավոր չէր հաղթահարել: Դա, ի դեպ, լավ գիտակցում էին նաև թուրքական կողմում, որը արտացոլվեց Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի խոսքում, թե «իրեն Հայաստան հրավիրելով, նախագահ Ս.Սարգսյանը կատարել է առաջին քայլը, հրավերն իր կողմից ընդունվել է՝ այն վերածելով համատեղ նախաձեռնության, որն օրինակելի կարող է լինել ողջ տարածաշրջանի համար»: Թուրքիայի նկատմամբ ՀՀ արտաքին քաղաքականությունը, բացի երկկողմ բաղադրիչից, իր մեջ նաև ամփոփեց «հնգօրյա» պատերազմի նախադեպային էֆեկտը կրկնելուց խուսափելու «Կայունության և գործակցության կովկասյան պլատֆորմ» ստեղծելու թուրքական նախաձեռնության շուրջ հայ-թուրքական բանակցությունները: Այսօրինակ քայլը՝ մի կողմից փաստում էր տարածաշրջանային կայունության ապահովման տեսանկյունից ՀՀ կարևորության մասին, մյուս կողմից՝ արձանագրում, որ այսօր Հայաստանը, իրեն դրսևորում է որպես ճկուն և իրատես արտաքին քաղաքականության կրող երկիր, ուստի նրա ակտիվ ներգրավումը տարածաշրջանային գործընթացներին բխում է անգամ նրա նկատմամբ ՀՎ.Կովկասում ավանդաբար ոչ բարյացակամ տրամադրվածություն ունեցող երկրների շահերից:

Ինչպես երկկողմ, այնպես էլ հարավկովկասյան ձևաչափում առաջացնելով ուժային վերադասավորումների իրական հնարավորություններ՝ ՀՀ «ֆուտբոլային դիվանագիտության» անդրադարձներն իրենց դրսևորեցին նաև միջազգային դիվանագիտության տարբեր թատերաբեմերում՝ պայ-

մաններ ստեղծելով, որ փլուզվեն Հայաստանի նկատմամբ տարբեր հաճախականությամբ հնչեցվող հետխորհրդային կարծրատիպային ընկալումները, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումների ու միջազգային անվտանգության ապահովման իրողությունների մերօրյա համատեքստում նորովի վերարժևորվեն մեր երկրի տեղի ու դերի վերաբերյալ կարծիքները: Թուրքիայի նկատմամբ հայկական նախաձեռնողականությունը միջազգային հանրության ամենատարբեր հատվածների կողմից գնահատվեց որպես համարձակ և կառուցողական քայլ՝ ուղղված տարածաշրջանում խաղաղության և կայունության մթնոլորտի ձևավորմանը: Եվ դա այն պարագայում, երբ, ինչպես եվրոպական, այնպես էլ անդրատլանտյան առանձին երկրներ, որոնք ամենաբարձր մակարդակով դատապարտել են 20-րդ դարասկզբին Թուրքիայում տեղի ունեցած հայոց ցեղասպանության փաստը, առանձնացրին և ընդգծեցին, որ այդ քայլն ի նպաստ է ինչպես ՀՀ ինքնիշխանության ամրապնդմանը, խոհեմ և հասուն արտաքին քաղաքականությանը, այնպես էլ ցեղասպանության վերաբերյալ պատմական արդարության միջազգային ճանաչման ընդհանուր գործընթացին: Արձագանքներ հնչեցին, համաձայն որոնց, այս քայլը նպաստավոր էր նաև Թուրքիայի ներքին՝ բավական ցավոտ փոխակերպման համար, համաձայն որի միայն երկխոսելու նպատակադրումը կարող է արդյունավետ լուծումների բաղադրատոմսեր առաջարկել:

Թուրքիայի հետ այսօրինակ քաղաքական գործելաոճն իր հստակ դրսևորումներն ունեցավ ողջ տարվա ընթացքում ինչպես արտգործնախարարների հանդիպումների, այնպես էլ 2009թ.-ի հունվարի 29-ի շվեյցարական Դավոսում Միջազգային տնտեսական համաժողովի օրերին նախագահ Ս.Սարգսյանի և Թուրքիայի վարչապետ Ռ.Թ.Էրդողանի միջև հանդիպման ժամանակ: Հանդիպում, որը նոր թափ հաղորդեց հարաբերությունների կարգավորման հետագա շրջափուլերին: Սակայն երկրների միջև հարաբերությունների հաստատման ինստիտուցիոնալ դրսևորումների առումով առանցքային էր հատկապես 2009թ. ապրիլի 22-ի գիշերը հնչեցված հայտարարությունն առ այն, որ Հայաստանի և Թուրքիայի միջև բնականոն հարաբերությունների հաստատման քայլերի հաջողականություն է արձանագրվել, որի իրականացմանը միջնորդ երկրների օժանդակության ներքո հետամուտ են լինելու գործընթացի կողմերը: Սա գործնականում արձանագրում էր, որ հայ-թուրքական հարաբերությունների ոլորտում առաջիկայում սպասվելու են որոշակի քայլեր, ուստի երկրների ժողովուրդները պետք է իրազեկ լինեն: Նշված տրամաբանության ներքո հարկավոր էր դիտարկել ՀՀ Նախագահի հոկտեմբերի 1 - 7 տևած Համա-

հայկական ուղևորությունը (Փարիզ, Նյու Յորք, Լոս Անջելես, Բեյրութ, Դոնի Ռոստով), որ նպատակ ուներ հայ-թուրքական հարաբերությունների հարցի ընթացիկ փուլին և հնարավոր զարգացումներին տեղյակ ու ինչ-որ առումով նաև մասնակից դարձնել աշխարհասփյուռ հայությանը՝ հաշվի առնելով, որ դա ոչ միայն ՀՀ պետական, այլ նաև ազգային շահերի հարց է:

2009թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ՀՀ եւ ԹՀ ԱԳ նախարարները ստորագրեցին «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» Արձանագրություններ:

Արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիան, կտրուկ փոխելով իր դիրքորոշումը և հրաժարվելով «խելամիտ ժամկետներում» և առանց նախապայմանների երկկողմ հարաբերությունները կարգավորելու ձեռք բերված համաձայնությունից, իր Ազգային Մեծ Ժողովում Արձանագրությունների վավերացումը պայմանավորեց ԼՂ-ի հիմնահարցի կարգավորմամբ, իսկ ավելի ուշ՝ 2011թ. օգոստոսին Թուրքիայի նոր գումարման խորհրդարանն իր օրակարգից ընդհանրապես հանեց արձանագրությունների վավերացման հարցը:

Հենց սկզբից գործընթացի կարևորագույն առանձնահատկությունն այն էր, որ նրա հաջող ընթացքի հիմնական գրավականը «առանց նախապայմանների» գործոն էր, որը հնարավորություն պետք է տար կողմերին առավել անկաշկանդ լինել քաղաքական հարաբերությունների հաստատման հարցում: Սակայն Թուրքիան, փորձելով օգտվել հայկական նախաձեռնությունից, սկսեց աղբրեջանական շահերի լոբբինգով զբաղվել՝ դրանով իսկ նախապայմաններ առաջադրելով բանակցային գործընթացում:

Գործնականում այս քայլը Անկարայի կողմից սկզբում մարտավարական էր, իսկ հետագայում լծակի դերակատարում էր խաղալու նախաձեռնված գործընթացում ՀՀ-ի վրա ճնշումների գործադրման առումով: Սակայն Անկարան մեկ բան հաշվի չէր առել, որ հայկական նախաձեռնության արդյունքում նա մտել էր աշխարհաքաղաքական մի այնպիսի խաղի մեջ, ուր առկա են նաև այլ գործընկեր-խաղացողներ՝ Վաշինգտոնը, որ հետևողականորեն խթանում էր ընթացիկ գործընթացը, Ռուսաստանը, որ հանդիսանալով ՀՀ-ի գործընկեր երկիր, չէր խորշում Անկարայի հետ ռազմավարական գործակցությունից: Եվ ամենակարևորը, որ «հայկական» գործոնը կարող է շատ կոշտ լինել, որի համար հայ-թուրքական հարաբերությունների օրակարգում այլ հարց չկա, բացի ՀՀ-ի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրներից:

Նախաձեռնելով այսօրինակ մեծ օրակարգ՝ «հայկական» գործոնն իր շահերի հետ մեկտեղ աշխարհաքաղաքական համատեքստից օգտվելու և տարածաշրջանային մակարդակի խնդիրների լուծման նպատակ էր հետապնդում, ուր կոտրվելու էին քաղաքական հարաբերակցության նախկին կարծրատիպերը: Անկարան դա թերևս չգիտակցեց և սկսեց սխալների շարանը, որոնք հանգեցրին նրան, որ ինչպես Մոսկվայում, այնպես էլ Վաշինգտոնում ու Բրյուսելում Անկարայի դիրքորոշումն ընկալելի չեղավ: Իրապես այս երկրները չեն կարող հասկանալ, թե ինչու հայ-թուրքական արձանագրությունների ապագան պետք է պայմանավորված լիներ երրորդ երկրի հետ առկա խնդրի լուծումից: Այդ մասին Ռ.Թ.Էրդողանին հայտնեցին ինչպես Մոսկվայում, այնպես էլ Վաշինգտոնում: Թուրքական կողմի սխալներից մեկն էլ այն էր, որ նա հետևողական չեղավ իր քաղաքական քայլերի մեջ: Ունենալով խնդիրներ ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում, Էրդողանի դիվանագիտությունը բավարար ճկուն չգտնվեց, որպեսզի կարողանա նախ՝ հասնել որևէ համաձայնության իր փոքր եղբոր՝ Ադրբեջանի հետ, փորձելով համոզել և բացատրել վերջինիս, թե «դաշնակցությունը՝ դաշնակցություն, քաղաքական շահերը՝ քաղաքական շահեր»: Այս հարցում անկարողությունն էր, որ պայմաններ ստեղծեց Ադրբեջանի քաղաքական հիստորիկ արձագանքի համար, ինչն անդրադարձավ ադրբեջանաթուրքական էներգետիկ ծրագրերի հետագայի վրա: Ընդհանրապես, ստանալով հայկական կողմի «քաղաքական» մեսիջները, թե Երևանը իրապես պատրաստ է քայլ կատարել (ավելին՝ ՀՀ Նախագահը ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումից հետո արձանագրություններն ուղարկելով Ազգային Ժողով՝ ցույց տվեց, թե տեղ և պատասխանատու է իր հայտարարությունների համար)՝ Անկարան չգիտակցեց, որ պետք է ավելի հաշվենկատ լինել: Ավելին, Թուրքիան այս անգամ փորձեց որպես ժամանակ ձգձգելու խաղաքար ընտրել ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը, որն, ինչպես հայտնի է, հաստատեց արձանագրությունների համապատասխանելիությունը ՀՀ Սահմանադրությունը: Փորձելով այս խաղաքարն օգտագործելու միջոցով սպասարկել Ադրբեջանին՝ Անկարան հերթական անգամ անհարմար իրավիճակում հայտնվեց միջազգային հանրության առջև, երբ մի շարք երկրներ՝ հստակեցնելով, որ ՀՀ Սահմանադրական դատարանը հաստատել է արձանագրությունների համապատասխանելիության փաստը, տարակուսանքով հորդորեցին Անկարային՝ հետևողական լինել իր քայլերում և գործել իրական, այլ ոչ թե պոպուլիստական քաղաքականության դաշտում:

Այս բարդ գործընթացում թուրքական կողմի հաջորդ թերացումը Թուր-

քիայի վարչապետ Ռ.Թ.Էրդողանի հայտնի հարցազրույցն էր, ուր նա սպառնում էր վտարել Թուրքիայում անօրինական ապրող, իր խոսքերով, մոտ 100 հազ. հայ ազգաբնակչությանը: Սա, անկասկած, հրապարակային դիվանագիտության թուրքական մոտեցման լուրջ թերացում էր: Իզուր չէր, որ հաջորդ օրն իսկ սկսվեցին մեկնաբանությունները, քննադատությունը, պաշտոնական լրահոսը հայտարարեց, թե վարչապետի խոսքերը սխալ են մեկնաբանվել: Էրդողանին քննադատության սյանը գամեցին անգամ ոչ ընդդիմադիր մի շարք քաղաքական ուժեր: Միջազգային մամուլի արձագանքը նույնպես իրեն սպասեցնել չտվեց: Թուրքիայի վարչապետի նմանօրինակ պահվածքին արձագանքեցին նաև Երևանում. նախ՝ արտաքին գործերի նախարարը, ապա նաև ՀՀ Նախագահը ներկայացրին իրենց սուր քննադատական վերաբերմունքը նմանօրինակ հայտարարությունների վերաբերյալ: Նախագահը արձանագրեց, որ. «հենց այսպիսի խոսքերից սկսվեցին նաև 1915թ. Հայոց ցեղասպանության գործողությունները»:

Այսօր Անկարայում իշխող քաղաքական վարչակարգն իր համար ոչ շահավետ արդյունքներով է դուրս եկել մի գործընթացից: Թուրքիան ինքը դրդե, որ հայկական կողմը 2010թ. ապրիլի 22-ին միակողմանիորեն կասեցնի արձանագրությունների վավերացման գործընթացը՝ հայտարարելով, թե «Թուրքիան պատրաստ չէ սկսված գործընթացը շարունակել և առանց նախապայմանների, արձանագրությունների տառին համապատասխան քայլերով առաջ շարժվել: ...Մենք անընդունելի ենք համարում նաև Հայաստան-Թուրքիա երկխոսությունն ինքնանպատակ դարձնելու անհիմաստ ձեռագիրը և այս պահից սկսած՝ հարաբերությունների կարգավորման ներկա փուլը համարում ենք սպառված»: Եվ դա, ի դեպ, արվեց ՀՀ Նախագահ Ս.Սարգսյանի ԱՄՆ կատարած այցից հետո, երբ Նախագահ Բ.Օբամայի հրավերով ապրիլի 11-ից 13-ը Վաշինգտոնում մասնակցելով Գլոբալ միջուկային անվտանգության հարցերով գագաթնաժողովի աշխատանքներին, հանդիպում տեղի ունեցավ Հայաստանի Նախագահի և Թուրքիայի վարչապետի միջև: Դեռ սկզբում էր պարզ, որ դա Անկարայի վերջին հնարավորությունն է, որը նա սակայն չցանկացավ օգտագործել:

Հայ-թուրքական դիվանագիտական ընթացիկ գործընթացին զուգահեռ ակտիվացան ռուսական և եվրոպական ուղղությամբ քաղաքական զարգացումները, որտեղ վերահաստատվեցին և բացասական գնահատվեցին Թուրքիայի հավակնությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ դառնալու ուղղությամբ՝ պայմաններ ստեղծելով, որ հարևան Ադրբեյջանը անհանգստություններ ունենա կապված Վաշինգտոնի կամ Մոսկվայի պրոհայկա-

կան քաղաքականության հետ: Ավելին՝ ավելի հաճախացած ռազմաշունչ հայտարարությունները հիմք տվեցին կարծելու, թե բանակցային գործընթացում ադրբեջանական դժգոհությունները խորացել են, որը պատճառ է հանդիսանում բանակցային գործընթացում ոչ կառուցողականության նոր դրսևորումների համար:

Այսօր հայ-թուրքական հարաբերությունների հարթակում ձևավորվել է մի իրավիճակ, երբ Հայաստանը նախաձեռնելով, Թուրքիայի հարաբերությունների կարգավորման գործընթաց, փաստորեն այնպիսի պայմաններ ստեղծեց, որ Թուրքիան բացահայտի իր իրական քաղաքական վարքը, որ այլևս հնարավոր չէր քողարկել հանրային դիվանագիտության ճկուն գործելատճում: Այսօր Թուրքիան հրապարակայնորեն հայտարարում է, թե ունակ և պատաստ չէ հարաբերությունների բնականոնացման, քանի որ դրանք հարվածու են Ադրբեջանի դիրքերին ԼՂ կարգավորման գործընթացում: Սթափ գնահատելով իրավիճակը՝ հարկ է նշել, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքում ընկած «գրո խնդիրներ հարևանների հետ» հայեցակարգը, այսօր հենց այդ Թուրքիայի դաշնակից Ադրբեջանի կողմից անհաջողության է մատնվում: Մինչդեռ Թուրքիան շարունակում է հայ-թուրքական նախաձեռնված հարաբերությունների գործընթացում շարժվել ադրբեջանահաճո ուղեգծով:

Խնդիրը դիտարկելով քաղաքական ռեալիզմի դիրքերից՝ կարող ենք նշել, որ բնականաբար կգա մի օր, երբ սեփական երկրի շահն այնուամենայնիվ կգերակայի թուրքական քաղաքական փիլիսոփայության մեջ ունա այս հարցում առավել ճկուն կգտնվի Ադրբեջանի տեղն ու դերը իր համար հստակ վերարժևորելով: Սակայն այդ ժամանակ արդեն կլինի ներուժի և վստահության էական կորուստ: Ակնհայտ է, որ եթե Թուրքիան ցանկանում է ստանձնել տարածաշրջանային առաջատարի դերը, ապա նա ուղակի ստիպված կլինի այդ նպատակին հասնելու համար որոշակի խմբագրումներ կատարել տարածաշրջանային իր քաղաքականության մեջ, իսկ այդ ցուցակում կարծում ենք առաջին հարցը, որին նա կփորձի առավել ճկուն և փոխակերպված դիրքորոշմամբ մոտենալ, հայ-թուրքական հարաբերությունները կլինեն:

3.2.7 Իրան և հայ-իրանական հարաբերություններ

Իրանը, լինելով աշխարհագրական, ռեսուրսային և մի շարք այլ ցուցանիշներով առաջատար երկիր, Մերձավոր Արևելքի, Հվ.Կովկասի և միջագագային անվտանգության ներկա օրակարգում ունի իր կարևոր դերակատարումը: Այսօր Իրանին հաջողվել է մի շարք գործոնների (միջուկային ծրագիր, նավթ և գազ, կրոնական գործոն) զորու պահպանել իր արտաքին քաղաքականության ինքնուրույնությունը և փորձելով զարգացման ուրույն ուղի ընտրել՝ չխորշելով հակադրման մեջ մտնել ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջագագային ուժային կենտրոնների հետ: Այս միտումն առավել ցայտուն սկսեց դրսևորվել, երբ Իրանի նախագահ դարձավ Մահմուդ Ահմադինեժադը: Վերջինս, ստանալով երկրի հոգևոր դեկավարության աջակցությունը, փորձեց նյութականացնել արտաքին քաղաքականության ոլորտում տարածաշրջանային գերտերություն դառնալու Իրանի հավակնությունները: Ինքնաբավության բարձր մակարդակի հասնելու Իրանի նպատակները արտացոլվեցին մի շարք ոլորտներում՝ միջուկային էներգետիկ ծրագրերի իրականացում, նավթային և գազային դիվանագիտություն, շիա մահմեդականության շրջանակներում առաջնորդության և մասնակցային հավակնություններ:

Իրանի միջուկային ծրագիրն ունի ավելի քան կեսդարյա պատմություն. 1958թ. միանալով միջուկային համագործակցությունը համակարգելու նպատակով ՄԱԿ-ի «Ատոմ խաղաղության համար» ծրագրին, որը հետագայում դարձավ Ատոմային էներգիայի միջագագային գործակալության (ԱԷՄԳ) հիմքը՝ Իրանը դարձավ միջուկային ներուժ ունեցող երկրների ընտանիքի անդամ: 1959թ. Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության ներքո հիմնադրվեց Թեհրանի միջուկային հետազոտությունների կենտրոնը, որին նյութատեխնիկական էական աջակցություն ցուցաբերեց ԱՄՆ-ն: Արդեն այդ տարիներին Իրանի Շահ Մոհամմեդ Ռեզա Փեհլևին որոշել էր 30-40 տարվա ընթացքում Իրանում առնվազն 20-25 ատոմային էներգակայան կառուցել: Նշենք, որ Իրանի միջուկային այս ծրագրերի առաջատար գործընկերներ էին համարվում ԱՄՆ-ն, իսկ հետագայում՝ Գերմանիան, Ֆրանսիան և Միացյալ Թագավորությունը: 1968թ. Իրանը ստորագրեց Միջուկային զենքի չտարածման պայմանագիրը, որը վավերացրեց 1970-ին:

Իրանի միջուկային հետազոտությունների իրականացնող երկրների ակումբի անդամ լինելու հեռանկարը սակայն հօդս ցնդեց Իրանում իսլամական հեղափոխության, ինչպես նաև ԱՄՆ-ի հետ դիվանագիտական

հարաբերությունների խզման արդյունքում: Իրանի միջուկային հետազոտությունների ապագայի վրա խիստ բացասական ազդեցություն ունեցավ նաև 1980-88թթ. իրան-իրաքյան պատերազմը, որի արդյունքում ռմբահարման ենթարկված մի քանի կայանները տասնամյակներով ետ գցեցին Իրանին այդ ոլորտում միջնաժամկետ միջակայքում հաջողության հասնելու հեռանկարներից:

Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ միջազգային քննարկումները սկսեցին 2001թ. նոյեմբերից: Միջազգային տարբեր ատյանների, ինչպես նաև առաջատար երկրների ամհանգստությունների հիմնական պատճառն այն է, որ չնայած պաշտոնական Թեհրանի կողմից պարբերական հավաստիացումներին առ այն, որ իր ծրագիրը բացառապես հետազոտական և խաղաղ բնույթ ունի, Իրանի կողմից իրականացվող միջուկային հետազոտությունները և հատկապես դրա շրջանակներում իրականացվող ուրանի հարստացման գործընթացը կարող են հանգեցնել Իրանի՝ սեփական միջուկային զենքի ստեղծմանը: Հանգամանք, որը վտանգում է տարածաշրջանային և միջազգային անվտանգությունը, ինչպես նաև առավել ամրապնդում Իրանի դիրքերը տարածաշրջանում և միջազգային անվտանգային հարթակներում: Սա բացասական նախադեպ կարող է հանդիսանալ նաև տարածաշրջանում միջուկային մրցավազքի մեկնարկի առումով, որը կգրոյացնի տարածաշրջանային անվտանգային ապագան: Անցնող տարիներին ինչպես ՄԱԿ-ի, այնպես էլ ԱԷՄԳ-ի կողմից բազմաթիվ վերջնագրեր են ներկայացվել Իրանին՝ հորդորելով դադարեցնել ուրանի հարստացման աշխատանքները, սակայն պաշտոնական Թեհրանը, մինչ օրս խիստ հաստատակամորեն հրաժարվում է կատարել ներկայացված պահանջները՝ հիմնավորելով իր մոտեցումները այն դրույթներով, թե ցանկացած երկիր, այդ թվում Իրանը, իրավունք ունի խաղաղ նպատակներով զարգացնել միջուկային իր ծրագիրը և չհիմնավորված մեղադրանքների պատճառով չի հրաժարվի օրինական իր այդ իրավունքից:

Իրանը միջուկային իր խնդիրների լուծման, ինչպես նաև իր արտաքին քաղաքականության ողջ միջակայքում բավական արդյունավետորեն կարողանում է օգտագործել տարբեր գործիքներ՝ այդ թվում նավթային և գազային ռեսուրսների իր տիրապետելու հանգամանքը: Հանգամանք, որը նրան շահեկան դիրքում է դնում բանակցային ամենատարբեր ձևաչափերում՝ պայմաններ ստեղծելով, որ որքան էլ անընդունելի լինեն Իրանի մոտեցումները, այնուամենայնիվ աշխարհի հզորագույն երկրները նրան դիտարկեն որպես երկիր, որը ունակ է իրական ազդեցություն ունենալ ինչպես նաև կրոտարածաշրջանային գործընթացների, այնպես էլ էներգակիր-

ների միջազգային շուկաների վրա: Այսինքն տնտեսական բնույթի այդ գործոնը, բավական կոնկրետ ներգործություն է ունենում արտաքին քաղաքականության ասպարեզում և ամեննախնային հիմնագուրկ չեն եվրոպացի փորձագետների այն դիտարկումները, թե եվրոպական երկրները պետք է ավելի շրջահայաց լինեն Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող բանակցություններում՝ տարանջատելով սեփական երկրի էներգետիկ շահերը ԱՄՆ ռազմավարական ծրագրերից: Իրանն իր հերթին փորձում է տարածաշրջանային երկրների միջոցով դեպի Եվրոպա սեփական գազի արտահանման այլընտրանքային ուղիներ որոնել, սակայն այսօր Իրանի միջուկային ծրագրերի շուրջ ծավալվող իրադարձությունները կարճաժամետ հեռանկարում անհրաժեշտ են դարձնում Եվրոպայի հետ էներգետիկ համագործակցության այդ ծրագրերի իրացվելիության հնարավորությունները:

Կրոնական գործոնը խիստ կարևոր դերակատարում ունի Իրանի արտաքին քաղաքականության մեջ: Այն մի կողմից պայմանավորում է Իրանի նկատմամբ աշխարհի ընկալումների քաղաքակրթական և քաղաքական միջակայքերը, մյուս կողմից՝ Իրանի՝ մեծ մերձավորարևելային խաղատախտակում շիա մահմեդականության շահերի պաշտպանության ոլորտները, որոնք հավելյալ լծակներ են նաև հենց Իրանի տարածաշրջանային ազդեցության վերահաստատման տեսանկյունից: Ի մասնավորի՝ ինչպես նախկինում, այսօր նույնպես անհնար է մերձավորարևելյան (խորայելապաղեստինյան) հակամարտության լուծումն առանց Իրանի դիրքորոշումը հաշվի առնելու. դա վերաբերում է նաև Իրաքում իրավիճակի կայունացմանը, Աֆղանստանում խաղաղության հաստատմանը, Լիբանանում իրավիճակի կարգավորմանը:

Իրանը, որը ավանդաբար տարածաշրջանում առաջնորդական հավակնություններ է ունեցել, այդ հանգամանքի գորու օբյեկտիվ մրցակցային հարաբերությունների մեջ է ինչպես Թուրքիայի, այնպես էլ Սաուդյան Արաբիայի հետ, որոնք նմանօրինակ հավակնությունների կրող են: Թուրքիան, որը տարածաշրջանում ՆԱՏՕ-ի անդամ միակ երկիրն է, որպես հարևան և մահմեդաբնակ պետություն, կարևոր տեղ է զբաղեցնում Իրանի արտաքին քաղաքականության մեջ: «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո հարաբերություններն Իրանի հետ հարաբերականորեն ջերմացան: Սակայն իսլամական համերաշխության սկզբունքները, որոնց վրա փորձում է միջպետական հարաբերությունների ջերմացման ետնապատկեր ստեղծել Իրանը, միշտ չի որ ընկալելի են Թուրքիայի կողմից: Իր հերթին Թեհրանն անընդունելի է համա-

րում, որ Թուրքիան ազգային անվտանգության իր երաշխիքները կապում է ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի հետ համագործակցության հետ: Չնայած վերոնշյալին, պաշտոնական Թեհրանն ու Անկարան երկկողմ հարաբերությունները մշտապես բնութագրում են որպես բարեկամական և բարիդրացիական:

Իրանը ոչ միանշանակ հարաբերություններ ունի իր սահմանակից Ադրբեջանի հետ, որի հետ ունի կրոնական ընդհանրության հանգամանք. երկուսն էլ շիա մահմեդականություն են դավանում: Սակայն այդ ընդհանրությունը ամենևին բավարար չէ, որ երկու երկրներն լիարժեք փոխըմբռնման մթնոլորտում հարաբերվեն: Նշենք, որ Իրանի և Ադրբեջանի հարաբերություններն ամենատարբեր փուլեր են անցել՝ իրենց մեջ ամփոփելով ինչպես խորը հակասություններ, այնպես էլ ընդհանրական մոտեցումներ: Երկրների միջև հարաբերությունների կարգավորման առումով նոր փուլ մեկնարկեց այն ժամանակ, երբ Իրանի նախագահ ընտրվեց Մոհամմադ աթամին (1997), իսկ 2002-ին Ադրբեջանում Հ.Ալիևի ընտրությամբ հարաբերությունների զարգացման ներուժը նորովի արժեվորվեց:

Այսօր Իրան-Ադրբեջան հարաբերությունները բնականոն են զարգանում հատկապես էներգետիկ, տնտեսական, առևտրադրյունաբերական ինչպես նաև հաղողակցման ոլորտներում, ուր արձագանքվում են ապրանքաշրջանառության ծավալների աճ:

Սակայն նշենք, որ մինչ օրս երկու երկրների միջև առկա հակասությունները լիովին հարթված չեն: Կողմերը տարբեր մոտեցումներ ունեն Կասպից ծովի իրավական կարգավիճակի հստակեցման հիմնախնդրի շուրջ, ադրբեջանական տարբեր կազմակերպություններ և ՋԼՄ-ներ երբեմն մեղադրանքներ են հնչեցվում Իրանի իշխանությունների հասցեին այնտեղ ադրբեջանցիների իրավունքների ռոնահարման, մշակութային խտրականության կիրառման փաստերի շուրջ, իսկ Իրանը խանդով է վերաբերվում Ադրբեջանի ակտիվ շփումներին ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ:

Իրանի համար ռազմավարական են տարածաշրջանում գործընկերային հարաբերությունները ՌԴ-ի հետ, քանի որ տարածաշրջանային և մասամբ նաև միջազգային անվտանգության ապահովման տեսանկյունից մի շարք հիմնահարցերի մասով նրանց դիրքորոշումները էկանորեն մոտ են: Իրանը ձգտում է գործընկերային հարաբերություններ զարգացնել Ռուսաստանի հետ՝ նկատի ունենալով ինչպես վերջինիս ազդեցությունն Իրանի համար կայունության և անվտանգության տեսանկյունից մեծ կարևորություն ունեցող կովկասյան և միջինասիական տարածաշրջաններում, այնպես էլ նրա ծանրակշիռ դիրքերը միջազգային ասպարեզում: Իրանը Ռուսաստանին համարում է հուսալի պատվար՝ Անդրկովկաս, Մի-

ջին Ասիա և Ռուսաստանի կազմի մեջ մտնող մահմեդական հանրապետություններ թուրքական ազդեցության ներթափանցման ճանապարհին:

Իրան-ՌԴ փոխգործակցությունը ռազմատեխնիկական ոլորտում, լուրջ առաջընթաց քայլ է հարաբերությունների զարգացման հեռանկարի որոշակիացման տեսանկյունից: Դրա մեկ առավել տեսանելի վկայություն է համագործակցությունը միջուկային էներգետիկայի ոլորտում: Ռուսաստանը, անտեսելով ԱՄՆ դժգոհությունները, Իրանի հետ համագործակցում է ատոմային էներգետիկայի բնագավառում, որի շրջանակներում ռուս մասնագետների օգնությամբ 2011թ. շահագործման հանձնվեց Բուշերի ատոմակայանը:

Այս ետնապատկերում բավական ակտիվ առաջընթաց է առկա առևտրատնտեսական հարաբերությունների ոլորտում. 2008թ. երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը կազմել է 3,7 մլրդ. դոլար, 2009թ. համաձայնագիր է ստորագրվել նավթի և գազի ոլորտում համագործակցության մասին:

Ռուսաստանը և Իրանը նաև համագործակցում են ՏՐԱՍԵԿԱ-ի, ՇՀՍ-ի և այլ ռազմավարական նշանակություն ունեցող միջազգային նախագծերի շրջանակներում:

Այսօր Իրան-ԱՄՆ հարաբերությունները բնութագրվում են ընդգծված հակադրմամբ, որն ունի պատմական արմատներ: Այն իր մեջ ամփոփում է իսլամական հեղափոխությունից հետո երկու երկրների հարաբերություններում ի հայտ եկած հիմնախնդիրների մի ամբողջ խումբ («Իրան-Կոնտրա» գործողություն, աջակցություն Իրաքին իրան-իրաքյան պատերազմում, Իրանի նկատմամբ միջազգային ատյաններում խտրական վերաբերմուք, մեղադրանքներ Իրանի նկատմամբ ահաբեկչական կազմակերպություններին ֆինանսավորելու, մարդու իրավունքների և ազատությունների չհարգման, Իրանի կողմից Իսրայել պետության չճանաչման, ինչպես նաև նրա գոյության իրավունքին սպառնալու հարցերում): Եվ այս համատեքստում հարաբերությունների կարգավորման համար Կողմերն առայժմ նախընտրում են միմյանց տարբեր նախապայմաններ առաջադրել:

Տարիներ տևած այս հակադրությունը կարծես որոշակի փոփոխության միտումներ արձագանքեց, երբ իշխանության եկավ Բ.Օբամայի դեմոկրատական թիմը: Սակայն նրա կողմից Իրանին ուղղված նախապայմանները՝ հրաժարվել միջուկային ծրագրից, դադարեցնել աջակցությունը միջազգային ահաբեկչական կազմակերպություններին, հարգել մարդու իրավունքները և այլն, Իրանի իշխանությունների բուռն դժգոհությանն

արժանացան: Պատասխանն իրեն սպասեցնել չտվեց և հնչեցվեց Իրանի Հոգևոր առաջնորդ Ալի Խամենեի շուրթերով: Նա Միացյալ Նահանգների նախագահին խորհուրդ տվեց. «փոփոխություններ պահանջողը նախ ինքը փոխվի և լրջորեն վերանայի սեփական վարքագիծը»:

Չնայած այսօրինակ հարաբերություններին, ինչպես իրաքյան կայունացման գործողությունների, այնպես էլ Աֆղանստանում իրավիճակի կարգավորման հարցերում ոչ ֆորմալ ձևաչափով ամենայն հավանականությամբ հանդիպումներ Իրանի և կոալիցիոն ուժերի կամ ԱՄՆ-ի ներկայացուցիչների միջև տեղի ունեցել են, քանի որ հաշվի առնելով Իրանի սահմանակցումը Աֆղանստանին, Իրաքում տեղի ունեցող գործընթացների վրա (շիա մահմեդականների գործոն) Թեհրանի ազդեցության չափաբաժինը, պարզապես անիրատեսական է Իրանին որոշակի ձևաչափով ինչ-որ փուլում մասնակից չդարձնել կամ հաշվի չառնել նրա դիրքորոշումը տարածաշրջանային անվտանգության և կայունության առանցքային հարցերում:

Հայ-իրանական հարաբերություններ

Տարածաշրջանային տերությունների հետ հարաբերությունների համատեքստում ընդգծված կերպով առանձնանում են հայ-իրանական հարաբերությունները: Իրանի հետ հարաբերությունները, անկախ այդ երկրում գոյություն ունեցող վարչակարգից և իշխանության ձևերից, պայմանավորված են ՀՀ-ի համար դրանց կենսական նշանակություն ունեցող մի շարք գործոններով՝ փոխադարձ տնտեսական շահերով, երկուստեք աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկություններով, տարածաշրջանային մի շարք խնդիրների նկատմամբ ընդհանուր մտեցումներով և պատմամշակութային ու էթնիկ ընդհանրություններով: Անկախության առաջին իսկ տարիներից Հայաստանի և Իրանի միջև հաստատվել են բարիդրացիական հարաբերություններ, որոնց զարգացվածության բավականին բարձր մակարդակի մասին է վկայում անցած տարիների ընթացքում ստեղծված ամբողջական իրավապայմանագրային հենքը, որը թույլ է տալիս փոխշահավետ առևտրատնտեսական համագործակցություն ծավալել թե՛ երկկողմ հարաբերությունների դաշտում, և թե՛ եռակողմ համաձայնագրերի շրջանակներում (Հայաստան - Իրան - Հունաստան, Հայաստան - Իրան - Թուրքմենստան): Այս առումով կարող ենք վստահորեն նշել, որ հայ-իրանական հարաբերություններն առանցքային դերակատա-

րում ունեն չէ-ի արտաքին քաղաքականության միջակայքում և լիարժեքորեն բնորոշվում են որպես ռազմավարական:

Հայ-իրանական հարաբերություններն ամենատարբեր բնագավառներում գտնվում են բարձր մակարդակի վրա: Միջկառավարական և միջգերատեսչական տասնյակ փաստաթղթերով կարգավորվում են հարաբերությունները չէ և ԻԻՀ նախարարությունների, պետական այլ կառույցների միջև: Հաճախակի են տարբեր մակարդակի փոխայցելությունները: Պարբերական բնույթ են կրում երկու երկրների նախագահների հանդիպումներն ու տարբեր գերատեսչությունների ղեկավարների փոխայցելությունները: Հարաբերությունների ներկա բնույթը բավական կայուն հիմք է ստեղծում, որպեսզի երկու երկրների միջև ակտիվ զարգանա առևտրատնտեսական ոլորտը: Մինչ այժմ շահագործման են հանձնվել ռազմավարական բնույթի նախագծեր, ինչպիսիք են Իրան-Հայաստան գազատարը, Հայաստան-Իրան բարձրավոլտ էլեկտրահաղորդման 1-ին և 2-րդ գծերը, Պուշկինի լեռնանցքի հողմակայանները և Իրանը Հայաստանին կապող Մեդրի-Շվանիձոր-Ծավ-Դարավան ճանապարհը: Երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացման առանցքային նախագծերից են Հայաստան-Իրան էլեկտրահաղորդման 3-րդ գծի, Մեդրիի ՀԷԿ-ի, Իրան-Հայաստան երկաթուղու և Իրան-Հայաստան նավթամթերքների խողովակաշարի ու պահեստարանի կառուցման ծրագրերը¹⁵⁶:

Սակայն գոյություն ունեցող հայ-իրանական երկկողմ իրավապայմանագրային դաշտում, որը ենթադրում է համագործակցության ոլորտների բավականին լայն շառավիղ, բացակայում է երկկողմ հարաբերությունների քաղաքական մակարդակն ու բնույթը հաստատող առանցքային որևէ փաստաթուղթ: Հարկ է նշել, որ, մեր կարծիքով, Իրանի հետ քաղաքական սերտ համագործակցությունն այս տեսանկյունից կարող է որոշակի բացասաբար անդրադառնալ Հայաստանի հարաբերությունների վրա թե արևմտյան, և թե անգամ ռուսական ուղղություններով: Հայաստան - Իրան համագործակցության շրջագծում այն ամենը, ինչ փորձում է համագործակցության ձևաչափում իրականացնել Իրանը, իրեն չի կարող թույլ տալ չէ-ն, որն իր արտաքին քաղաքականությունը կերտում և իր ազգային շահերը փորձում է սպասարկել՝ հաշվի առնելով շահագրգիռ բոլոր կողմերի դիրքորոշումները: Այս հանգամանքը, փաստորեն, ինչ-որ առումով գոհացնում է ինչպես Իրանին, որը, այնուամենայնիվ, շահագրգիռ է շիա

¹⁵⁶ Հայաստանի և Իրանի միջև ապրանքաշրջանառության ծավալը կազմում է տարեկան միջինը 200 մլն. դոլար: Տվյալ ապրանքաշրջանառության ցուցանիշն ավանդաբար գործում է 30-ը 70%-ի հարաբերակցությամբ՝ հօգուտ Իրանի:

մահմեդական Ադրբեջանի հետ լավ հարաբերությունների պահպանման մեջ, այնպես էլ Հայաստանին, որը չի կարող հաշվի չառնել արևմտյան տերությունների և հատկապես ԱՄՆ «հայտնի» դիրքորոշումն Իրանի նկատմամբ:

Այսպիսով կարելի է փաստել, որ Իրանի հետ հարաբերությունները Հայաստանի արտաքին քաղաքականության առավել զարգացած և կարևոր ուղղություններից են և մեր կարծիքով կարևորվում են, մասնավորապես, հետևյալ հանգամանքներով.

- Իրանը տարածաշրջանում վարում է հավասարակշռված քաղաքականություն և, մասնավորապես, ԼՂ հիմնահարցի նկատմամբ դրսևորում է անկողմնակալ մոտեցում՝ նախապատվությունը չտալով հակամարտության կողմներից որևէ մեկին,

- Իրանը որոշակի հակակշիռ է տարածաշրջանում Թուրքիայի վարած քաղաքականությանը,

- Իրանի հետ հարաբերությունները, հաշվի առնելով Հայաստանի նկատմամբ կիրառվող շրջափակումը, հատկապես կարևորվում են երկրի տնտեսական անվտանգության ապահովման և արտաքին աշխարհի հետ կապերի բազմազանեցման՝ ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող խնդրի լուծման տեսակետից,

- հաշվի առնելով Թուրքիայի և Ադրբեջանի վարած քաղաքականությունը՝ Հայաստանի կարևոր առևտրային գործընկեր հանդիսացող Իրանի հետ կապերի զարգացումը Հայաստանի համար եզակի հնարավորություններից է խուսափելու տրանսպորտային շրջափակումից և ապահովելու երկրի կենսունակության համար անհրաժեշտ առևտրատնտեսական հարաբերությունների ծավալը,

- Իրանը՝ որպես իսլամական աշխարհի ամենաազդեցիկ երկրներից մեկը, Հայաստանի համար կարևորվում է այդ երկրները միավորող կազմակերպությունների շրջանակներում հակահայկական դրսևորումները մեղմացնելու հնարավորության առումով:

Այսպիսով, վստահորեն կարելի է նշել, որ Իրանի հետ լայն հարաբերությունների զարգացումը բխում է ՀՀ ազգային շահերից և համապատասխանում ՀՀ-ի արտաքին քաղաքական ուղեգծին:

3.2.8 Եվրոպական Միությունն և ՀՀ - ԵՄ հարաբերություններ

Տարածաշրջանում կարևոր շահեր ունեցող սուբյեկտների շարքում առանցքային դերակատարում ունի Եվրոպական Միությունը, որի քաղաքակրթական և սոցիալ-տնտեսական չափորոշիչներով են առաջնորդվում տարածաշրջանային երկրները: Մեր կարծիքով, արդեն տևական ժամանակ է տարածաշրջանն անցնում է փուլային եվրոպականացում, որը ներթափանցում և արտացոլվում է յուրաքանչյուր պետության արտաքին քաղաքականության օրակարգում: Ակնհայտ է, որ նման համատեղ արտացոլումները տարբեր են յուրաքանչյուր դեպքում, ինչպես տարբեր են այս տարածաշրջանը ներկայացնող յուրաքանչյուր պետության փիլիսոփայությունը, մտածելակերպը, հրապարակային քաղաքականությունը և զարգացման աստիճանը: Եվրոպական ինտեգրման, հետևաբար և զարգացման եվրոպական տիպօրինակի ընդունումը հիմնված է արժեքային և մշակութային ընդհանրությունների վրա: Սակայն կարևոր է նաև, որ այն ոչ թե կողմնորոշում է բառիս ավանդական իմաստով, այլ համագործակցության լայն գործընթաց, որը երկրներին հնարավորություն է ընձեռում հավասարակշռված և սերտ հարաբերություններ զարգացնել ինչպես ԱՄՆ-ի և ՌԴ-ի, այնպես էլ տարածաշրջանում գործող անմիջական հարևանների՝ Թուրքիայի և Իրանի հետ:

Հայտնի է, որ Ռուսաստանը Եվրոպան դիտարկում է որպես ռազմավարական գործընկեր, ԱՄՆ-ն անքակտելի կապի մեջ է եվրոպական երկրների հետ ոչ միայն անդրատլանտյան դաշինքի, այլև՝ քաղաքական, տնտեսական և մշակութային ընդհանրությունների տեսանկյունից: Այսինքն, տարածաշրջանի երկրների համար Եվրոպան այն եզակի «թեմաներից» է, որի նկատմամբ առկա է գործնական համաձայնություն և որի հետ համագործակցության համատեքստում հարավկովկասյան պետություններն էական փոփոխություններ են կրում: Այս համատեքստում էլ հարկավոր է դիտարկել, որ տարածաշրջանային երեք պետություններն անդամակցում են մի կողմից ԵԱՀԿ-ին և ԵԽ-ին, մյուս կողմից ներգրավված են ԵՄ-ի «Ընդլայնված Եվրոպա - նոր հարևանություն» նախաձեռնությունը և հատկապես «Արևելյան գործընկերություն» ծրագրերին, որոնք հանդես են գալիս որպես ինտեգրման գործընթացի հետագա զարգացման և, հնարավոր է, տարածաշրջանը ԵՄ-ին կամրջելու կարևոր օժանդակ միջոց: Այս պարագայում, կարծում ենք, դեռևս վաղ է խոսել ՀՎ.Կովկասի՝ լիովին ձևավորված աշխարհաքաղաքական ինքնության մասին, ուստի, ձևավորելով ու մշակելով այս տարածաշրջանի ռազմավարությունը, պաշտոնա-

կան Բրյուսելը պետք է աջակցի հակամարտող պետություններին՝ հարաբերությունները կառուցել տարածաշրջանային համագործակցության հիմքով այսպես կոչված, «փափուկ (soft)» անվտանգային մոտեցումների վրա: Տարածաշրջանային երկրներն իրենց հերթին պետք է «գիտակցեն», որ եվրոպականացման, հետևաբար՝ փափուկ անվտանգության տիպորինակների կիրառումը հնարավոր է միայն այն պարագայում, երբ բարեփոխումները հարավկովկասյան երկրներում լինեն հիմնավոր և գիտակցական գործընթացներ, որոնք իրականացվում են ոչ թե խոստացված տնտեսական միջոցների տրամադրման կամ եվրոպական կառույցներին սիրաշահելու համար, այլ՝ սեփական շահերից ելնելով՝ եվրոպական ժողովրդավարության ու բարեկեցության տիպորինակին մոտենալու համար:

Հարկ է նշել, որ տարածաշրջանային եվրոպականացման գաղափարը անմիջական նպատակ չի դիտարկում ԵՄ-ին անդամակցություն: Վերջինս Հվ. Կովկասին շեշտված նշանակություն է տալիս ոչ միայն ընդարձակ Միջին Արևելքի կամ Մերձավոր Արևելքի հեռանկարում, այլև եվրոպականացման ավելի լայն պատկերացման մեջ, որի յուրահատկությունն այն է, որ նա եվրոպականացումը տեսնում է որպես գործնականում բոլոր եվրոպական երկրներն ընդգրկող առավել ճկուն մի միավորում, որի հիմքում ընկած կլինեն ՆԱՏՕ-ին անդամությունը և ժողովրդավարական հասարակություններին սպառնացող վտանգների դեմ տարվող համատեղ պայքարը, ժողովրդավարացումը և արդիականացումը: Եվրոպականացման այս հայեցակարգում ԵՄ-ն հանդես է գալիս որպես ընդհանուր գործընթացի հավաքական մասնակիցներից մեկը՝ զիջելով եվրոպականացման միակ հավաքական կենտրոնի իր դիրքը, որն ակնհայտորեն շահեկան է ԱՄՆ-ի՝ ոչ ամեն շահի մասով եվրոպական տեսանկյունից համապատասխանող մոտեցմանը:

Այսօր ԵՄ-ն Արլ. Եվրոպայի ու Հվ. Կովկասի երկրներում փոխակերպման գործընթացն առավել ակտիվ ու հասցեական դարձնելու նպատակով շատ կոնկրետ քայլերի մի համակարգ է մշակել ու գործարկում, որն իր մեջ ամփոփելով Եվրոպական հարևանության քաղաքականության մոտեցումները, ինչպես լայն, այնպես էլ նեղ ձևաչափի գործակցային հարաբերություններ է հաստատում նոր գործընկերների հետ:

2009թ. մայիսի 7-ին ԵՄ-ում չեխական նախագահության ընթացքում Պրահայում հրավիրվեց գագաթաժողով, որի մասնակից ԵՄ և Արևելյան Եվրոպայի (Մոլդովա, Ուկրաինա, Բելառուս) և Հվ. Կովկասի (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) պետությունները հռչակագիր ընդունեցին՝ ազդարարելով 2008թ գարնանը Լեհաստանի և Շվեդիայի կողմից ներկայաց-

ված Արևելյան գործընկերության մեկնարկը: 2004թ Եվրոպական Միության կողմից առաջարկված Եվրոպական հարևանության քաղաքականության միջոցով ԵՄ-ն և նրա հարևանները հետամուտ եղավ քաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացման գործին: Սակայն հենց սկզբից պարզ դարձավ, որ Եվրոպական հարևանության ծրագրի արևելյան և հարավային պետությունների հարաբերությունները ԵՄ-ի հետ զարգանալու են տարբեր կերպ: Ուստի, գիտակցելով այս տարբերությունը և ցանկություն ունենալով էլ ավելի զարգացնել և խորացնել ԵՄ և ԵՀԶ հինգ (ինչպես նաև Բելոռուսը) արևելյան երկրների միջև հաստատված համագործակցությունը, Շվեդիան և Լեհաստանը 2008թ հանդես եկան «Արևելյան գործընկերություն» հիմնելու նախաձեռնությամբ: Նրանք կարծում էին, որ Եվրոպական միությունը ձգտում է իր հարևանությամբ տեսնելու կայուն, զարգացած և միմյանց հետ բազմակողմ համագործակցություն ծավալող հարևաններ և պատրաստ է սատարելու նրանց այդ նպատակին հասնելու գործում:

2009թ. մարտի 19-ին և 20-ին Բրյուսելում կայացած ԵՄ զագաթաժողովի հերթական նիստում ընդունվեցին Արևելյան գործընկերության վերաբերյալ եզրակացություններ և հռչակագիր: ԵՄ-ն առաջարկում էր Արևելյան գործընկերության շրջանակներում համագործակցությունը կենտրոնացնել գործընկեր երկրներում ժողովրդավարության զարգացման, էներգետիկ անվտանգության, շուկայական տնտեսության և կայուն զարգացման ապահովման ուղղությամբ: Տնտեսական համագործակցության խթանման համար հետագայում նախատեսվում էր ստեղծել ազատ առևտրի գոտիներ: Գործնականում, Արևելյան գործընկերությունը ԵՀԶ-ի շրջանակներում հիմք դրված համագործակցության առավել ակտիվացված և խորացված տարբերակն է, որը միաժամանակ բավականին զուլավոր է քաղաքական ինտեգրման և ապագա հնարավոր անդամակցության հարցերում: Նախաձեռնության մեջ ավելի հստակ են տնտեսական համագործակցության, ինստիտուցիոնալ բարեփոխումների և օրենսդրության մոտարկման ոլորտները: Արևելյան գործընկերության հիմքում ընկած սկզբունքները արձանագրում են, որ ԵՄ-ն և յուրաքանչյուր գործընկեր երկիր պետք է միասին որոշեն և առաջ տանեն իրենց համագործակցությունը, սակայն յուրաքանչյուր երկրի հետ հարաբերությունները կզարգանան կախված այդ երկրի առաջընթացից: Արևելյան գործընկերությունը չի սահմանափակում առանձին գործընկեր պետությունների նկրտումները ԵՄ-ի հետ իր հարաբերությունների հետագա զարգացման հարցում:

Արևելյան գործընկերությունը ունի երկկողմ և բազմակողմ համագոր-

ծակցության ձևաչափեր: Երկկողմ համագործակցությունը (ԵՄ և յուրաքանչյուր գործընկեր պետության միջև) պետք է հիմքեր ստեղծի ասոցացման համաձայնագրերի կնքման համար, ընդ որում դրանք կմշակվեն այն գործընկերների հետ, որոնք զգալի առաջընթաց կարձանագրեն ժողովրդավարեցման, օրենքի գերակայության, մարդու իրավունքների հարգման, ինչպես նաև շուկայական տնտեսության, կայուն զարգացման և արդյունավետ կառավարման բնագավառներում, և միաժամանակ ցանկություն և հնարավորություն կունենան կատարելու իրենց վրա վերցրած պայմանները, այդ թվում և ազատ առևտրի լայն և համապարփակ գոտիների ստեղծման հարցում: Այլ կերպ ասված, ի տարբերություն Գործընկերության և համագործակցության ներկայիս գործող համաձայնագրերի, նոր պայմանագրային հիմքերը կլինեն տարբերակված՝ յուրաքանչյուր երկրի հնարավորություն տալով ընտրելու իր համար առավել իրատեսական զարգացման ընթացքը: Բազմակողմ ձևաչափը գործարկվում է մասնակիցների համատեղ ընդունված որոշումների հիման վրա, չորս հիմնական պլատֆորմների միջոցով. ժողովրդավարություն, լավ կառավարում ու կայունություն, տնտեսական ինտեգրում և կոնվերգենցիա ԵՄ քաղաքականություններին, էներգետիկ անվտանգություն և մարդկային շփումներ: Այս ձևաչափի նպատակն է բարեփոխումներին և արդիականացման վերաբերյալ տեղեկատվության ու փորձի փոխանակումը և ընդհանուր դիրքորոշումների և համատեղ գործողությունների մշակումը: Առավել կարևոր է այն, որ բազմակողմ ձևաչափը պետք է խթանի կապերը հենց իրենց՝ Արևելյան գործընկերների միջև:

Անդրադառնալով ԵՄ-ի տեղի ու դերակատարման հարցերի դիտարկմանը՝ հարկավոր է ներկայացնել երկու խոշորագույն գործընկերների՝ ՌԴ-ի ու Թուրքիայի հետ նրա հարաբերությունների պրոյեկցիան ու ներկա հանգրվանը:

ԵՄ-ի վերջին ընդլայնումից հետո Ռուսաստանի և ԵՄ-ի ընդհանուր սահմանը կազմում է 2257 կմ.: Եվրոպական Միությունը Ռուսաստանի թիվ մեկ տնտեսական գործընկերն է: 1997թ. վավերացվել է 1994թ. ստորագրած Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը, իսկ 2002թ. ՌԴ-ին տրվեց շուկայական տնտեսության կարգավիճակ: 2005թ. Սանկտ-Պետերբուրգում ԵՄ-Ռուսաստան գազաթափողովի ժամանակ ստորագրվեց համագործակցության նոր փաստաթուղթ՝ *Չորս միասնական փարածքների վերաբերյալ*. տնտեսական միասնական տարածք, ազատության, անվտանգության և արդարադատության միասնական տարածք, արտաքին անվտանգության միասնական տարածք և հետազոտու-

թյունների ու կրթության միասնական տարածք: Ռուսաստանը Եվրոպական անվտանգության ռազմավարության մեջ ներառվեց որպես աշխարհաքաղաքական և անվտանգության հարցերում հիմնական դերակատարում ունեցող երկիր՝ գլոբալ և տարածաշրջանային մակարդակներում: Ռուսաստանը նաև էներգամատակարարող կարևոր գործընկեր է, նա մեծ շուկա է ԵՄ ապրանքների արտահանման և ծառայությունների համար: ԵՄ-ի հիմնական նպատակն է Ռուսաստանի հետ ծավալել ռազմավարական գործընկերություն՝ հիմնվելով ընդհանուր շահերի վրա և կիսելով միևնույն արժեքները: Սակայն հարկ է նշել, որ արտաքին քաղաքականության ոլորտում ինչպես ԵՄ-Վրաստան, այնպես էլ Արևելյան գործընկերության հարցում, Ռ-Ղ-ն զգալի վերապահումներ ունի, գտնելով, որ դա նշանակում է ներթափանցում իր ազդեցության գոտիներ:

Թուրքիայի հետ հարաբերությունները շատ ավելի բարդ են: 2009թ. հունվարին վերսկսվեցին ԵՄ-ի և Թուրքիայի միջև անդամակցության բանակցությունները: Առաջին անգամ բանակցությունների մեկնարկից ի վեր (2005թ.) Բրյուսել այցելեց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանը, որը վերահաստատեց իր երկրի կամքը ԵՄ անդամակցությանը՝ նշելով, որ դա իր երկրի համար օրակարգի թիվ մեկ գերակայությունն է: Սակայն բազում հարցեր դեռ լուծում են պահանջում: ԵՄ-ն շարունակում է ճնշումներ գործադրել Թուրքիայի վրա՝ բարեփոխումների քաղաքականությունն ակտիվացնելու համար: Բացի մարդու իրավունքների և ազատությունների հարգման խնդիրներից, Թուրքիան շարունակում է պահել իր գորամիավորումները Կիպրոսի հյուսիսային մասում, փակ է պահում սահմանը ՀՀ-ի հետ: ԵՄ-ն սառեցրել էր անդամակցության բանակցությունները՝ սպասելով, որ Թուրքիան կբացի իր նավահանգիստներն ու օդանավակայանները ԵՄ անդամ երկիր Կիպրոսի համար: Թուրքիայում կան խնդիրներ նաև կապված ազգային փոքրամասնությունների հետ, ինչպես նաև Թուրքիայի օրենսգրքի մի շարք հոդվածների հետ:

ՀՀ - ԵՄ հարաբերություններ

Հայաստան - Արևմուտք հարաբերությունների ներկայանակում առանցքային տեղ է զբաղեցնում պաշտոնական Երևանի քաղաքականության եվրոպական ուղեգիծը: Այն ՀՀ-ի համար առավելապես կարևորվում է ԵՄ-ի՝ եվրոպականացման և եվրոպական անվտանգության ինքնուրույնու-

թյան մեծացման գործընթացների ներքո, որի վերջնականատակը իր՝ որպես ինքնուրույն բևեռ ձևավորվելն է:

Եվրոպական Միության հետ գործակցությունը, եվրոպականացումը և եվրոպական երկրների հետ հնարավորին լայն ուսայնակով հարաբերությունների զարգացումը, եղել և մնում են Հայաստանի արտաքին քաղաքական գերակայությունների թվում: Եվրոպական միության, որպես համաշխարհային քաղաքականության և տնտեսության խոշորագույն ուժային կենտրոններից մեկի հետ, հարաբերությունների զարգացումը, մեր կարծիքով, կարևորվում է հատկապես տնտեսական և քաղաքական տեսանկյուններից: Օրինակ՝ 2010թ. տնտեսական համագործակցության ցուցանիշները գալիս են հաստատելու, որ ԵՄ ամրապնդում է իր դերը որպես ՀՀ գլխավոր տնտեսական գործընկեր: Վերջին տարիներին նա արտահանման և ներմուծման տեսանկյունից Հայաստանի առաջատար գործընկերների եռյակում է:

Եվրոպական միությունը, անգամ հաշվի առնելով միայն նրա ներդրումային հնարավորությունները, նշանակալի գործոն է Հայաստանի տնտեսական զարգացման համար, ուստի, այսօր առաջնային նշանակություն ունի այդ կազմակերպության և նրա անդամ պետությունների հետ առևտրատնտեսական հարաբերությունների հնարավորին լայն զարգացումը: Երկրորդ՝ Եվրոպական միությունը տարածաշրջանային մի շարք կարևոր ծրագրեր է նախաձեռնել (ՏԲԱՄԵԿԱ, ԻՆՈԳԵՅԹ, ՏԱՄԻՍ, ԹՎԻՆԻՆԳ և ԹԱՅԵՔՍ), որոնց իրականացումը, տնտեսական գործոնի միջոցով, լուրջ խթան կարող է հանդիսանալ Հվ.Կովկասում փոխադարձ վստահության, կայունության և համագործակցության մթնոլորտի հաստատման համար: Երրորդ՝ Եվրոպական միությունը, նկատի ունենալով նրա անդամ պետությունների կողմից միասնական արտաքին քաղաքականություն վարելու հարաճուն ձգտումը, Հվ.Կովկասում և հարակից տարածաշրջաններում նրա ակտիվ ներգրավվածությունը, կարևորվում է նաև որպես նշանակալից գործոն տարածաշրջանային հարաբերություններում առկա խնդիրների լուծման և Հվ.Կովկասում կայունության հաստատման հարցում: Այս առումով, հարկ է ընդգծել Հայաստանի շահագրգռվածությունը Հվ.Կովկասում տարածաշրջանային անվտանգության և կայունության համակարգի ստեղծման գործում ԵՄ անմիջական մասնակցության մեջ:

Արտաքին քաղաքական նշյալ ուղեգծի արդյունավետության լավագույն վկայությունը, մեր կարծիքով, Հայաստան - ԵՄ հարաբերությունների ներկայիս նոր որակն է: Հայաստանի ներառումը ԵՄ-ի հետ հարաբե-

րությունների ինստիտուցիոնալացման գործընթացի հաջորդ փուլը՝ «Ընդլայնվող Եվրոպա - Նոր հարևաններ» ծրագիր¹⁵⁷, իսկ ավելի ուշ նաև մեր երկրի ակտիվ մասնակցությունը ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագրին ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով մեծ հեռանկարն են խոստանում ՀՀ-ին բազմակողմ զարգացման և կայացման առումներով:

ԵՄ-ի Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում Հայաստանն այսօր բանակցություններ է վարում Ասոցացման համաձայնագիր ստորագրելու նպատակով, որը պետք է արտացոլի վերջին տաս տարվա ընթացքում ԵՄ հետ համագործակցության արդյունքները, ինչպես նաև հարաբերությունների զարգացման նոր հավակնոտ օրակարգ սահմանի գալիք տասնամյակի համար: Կարծում ենք, որ հավակնոտ լինելուց բացի Ասոցացման համաձայնագիրը պետք է լինի խիստ կիրառական՝ գործնական միջոց դառնալով հարաբերությունների հետագա խորացման եւ ընդլայնման համար:

3.2.9 Լեռնային Ղարաբաղի հիմնահարց

2008թ. ի վեր ՀՀ արտաքին քաղաքական օրակարգի կարևորագույն հիմնահարց Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ ընթացող բանակցային գործընթացն էականորեն ակտիվացավ: Դա կապված էր տարածաշրջանում տեղի ունեցող ուժային վերադասավորումների և գերտերությունների շահերի վերախմբագրումների հետ: Նշենք, որ ԼՂ հիմնահարցը զուտ ինքնորշման հարց չէ: Այսօր այն ստացել է միջազգային բովանդակություն և մի զգալի մասով պայմանավորում է Հվ.Կովկասում ուժային դասավորվածության խճանկարը. հենց այդ հիմնահարցի լուծմամբ են պայմանավորված ՀՀ - Ադրբեջան հարաբերությունների բացակայությունը, ինչպես նաև Թուրքիայի վերաբերմունքը ՀՀ-ի նկատմամբ:

2008թ. ԼՂ հիմնախնդրի լուծման բանակցային գործընթացի առումով տարին ոչ միայն բավական հազեցած էր, այլ նախորդներից տարբերվեց նրանով, որ բանակցային գործընթացում դրական առաջընթաց արձանագրվեց: ԼՂ հակամարտության լուծման նպատակով Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող բանակցությունների արդյունքը եղավ այն, որ նույնների 2-ին Մոսկվայում կնքվեց Մայնդորֆյան հռչակագիրը: Հռչակ-

¹⁵⁷ Առավել մանրամասն տես Եվրոպական Միություն - ՀԱՅԱՍՏԱՆ «ԵՅՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ, http://www.armeniaforeignministry.am/perspectives/061114_armenia_enp_ap_final_arm.doc

կազրում, տեղ գտան, այնպիսի դրույթներ, որոնք ԼՂ խնդրի լուծման շուրջ ընթացող հայ-ադրբեջանական բանակցային ողջ գործընթացում համապատասխանել են հայկական կողմի մոտեցումներին՝ միաժամանակ հանդիպելով ադրբեջանական կողմի դիմադրությանը. մասնավորապես՝ «հակամարտության բացառապես խաղաղ կարգավորման» մոտեցումը, հիմնահարցը միջազգային իրավունքի՝ «այդ թվում ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի» տիրույթում կարգավորելու սկզբունքները, հակամարտությունը բացառապես ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում կարգավորելու մոտեցումը, ԼՂ-ի ազգաբնակչությանը անվտանգության «միջազգային երաշխիքների» տրամադրումը, հակամարտության կողմերի միջև տարբեր, այդ թվում տարածաշրջանային ատյանների ձևաչափում գործակցության, ինչպես նաև տնտեսական համագործակցության միջոցով վստահության մթնոլորտի ստեղծումը:

Հատկանշական է նաև այն, որ Մայնդորֆյան հռչակագիրը ոչ միայն «Հայաստան-Ադրբեջան» ձևաչափի փաստաթուղթ է, այլ միջազգային Հռչակագիր, որը հայկական և ադրբեջանական կողմերից բացի ստորագրվել էր նաև ռուսական կողմը՝ դրանից բխող քաղաքական բոլոր հետևանքներով: Ռուսաստանի մասնակցությունը սույն Հռչակագրին, բացի փաստաթղթին առավել ծանրակշիռ քաղաքական դերակատարում հադորդելուց, յուրահատուկ երաշխիքի դեր է խաղում՝ ինչ-որ առումով պայմաններ ստեղծելով, որ կողմերը, հակամարտության կարգավորման գործընթացում ելնեն Հռչակագրում արձանագրված դրույթներից: ուսքը այն մասին չէ, թե Ռուսաստանն իրավաբանորեն երաշխավորում է Հռչակագրի պահպանումը և խախտման դեպքում պարտավոր է միջոցներ ձեռնարկել այդ ուղղությամբ, այլ այն մասին, որ Հայաստանի և Ադրբեջանի կողմից Հռչակագրի դրույթների կատարման և պահպանման քաղաքական հսկողությունը Ռուսաստանը փաստացիորեն վերցրել է իր վրա, և նրա հնարավոր խախտման դեպքում քաղաքական հետևանքները պետք է առաջացվեն նախ և առաջ Ռուսաստանի կողմից: Սա փաստում է, որ Հայաստանի, կամ Ադրբեջանի կողմից Հռչակագրի դրույթների հնարավոր անհետևանք խախտումը լուրջ հարված կհասցնի Ռուսաստանի միջազգային հեղինակությանը, իսկ դա նշանակում է, որ հենց միայն այդ նպատակադրումով Ռուսաստանի շահերից է բխում, որ կողմերը հակամարտության կարգավորման գործընթացում հիմնվեն Հռչակագրում տեղ գտած սկզբունքների վրա և պատշաճ կերպով դրանք ի կատար ածեն:

Ընդհանրացնելով՝ կարելի է փաստել, որ ընդունված Հռչակագիրը նախատեսում է բանակցությունների շարունակություն Մինսկի խմբի շրջա-

նակներում և մադրիդյան առաջարկությունների հիման վրա միջազգային իրավունքի շրջանակներում միջազգային երաշխիքներով ամրապնդված ԼՂ հիմնախնդրի խաղաղ քաղաքական կարգավորում:

Նշենք, որ Մայնորֆյան հռչակագրի կնքումն աննախադեպ իրողություն էր, քանի որ այն 1994թ.-ի Բիշքեկյան հրադադարի վերաբերյալ կողմերի միջև ստորագրված արձանագրությունից հետո, ԼՂ-ին վերաբերող միակ փաստաթուղթն էր, որի տակ իրենց ստորագրությունը դրեցին հակամարտության կողմերը և միջնորդ երկիրը: Հաշվի առնելով վրաց-ռուսական ռազմական բախման մտահոգիչ նախադեպը՝ սա նաև առարկայական քայլ էր դեպի հակամարտությունների խաղաղ լուծման գործընթաց: Մայնորֆյան հռչակագրից հետո ԼՂ բանակցային գործընթացը տարբեր հանգրվաններ ունեցավ: Դրանք ինչպես աշխատանքային հանդիպումներ էին կողմերի արտգործնախարարների մակարդակով համանախագահ երկրների միջնորդությամբ, այնպես էլ ամենաբարձր մակարդակի գագաթաժողովներ մասնակից երկրների նախագահների մասնակցությամբ¹⁵⁸:

2009թ. հուլիսին Իտալիայի Լ'Աբվիլա քաղաքում կայացած Մեծ Ութնյակի գագաթաժողովին ԵԱՀԿ Մ համանախագահ երկրներ՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի նախագահներ Բ.Օբաման, Դ.Մեդվեդևը և Ն.Սարկոզին հանդես եկան համատեղ հայտարարությամբ.

«Մենք՝ ԵԱՀԿ Միմսկի խմբի համանախագահ երկրներ Ֆրանսիայի, Ռուսաստանի Դաշնության և Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահներս, հաստատում ենք մեր հանձնառությունն առ այն, որ սատարելու ենք Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարությանը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման Հիմնարար սկզբունքների վերջնականացման հարցում: Մենք հանձնարարում ենք մեր միջնորդներին, որպեսզի նրանք Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին ներկայացնեն 2007թ. նոյեմբերին ընդունված Մադրիդյան փաստաթղթի լրամշակված տարբերակը, որը հիմնարար սկզբունքների՝ համանախագահների կողմից ներկայացված ամենավերջին շարադրանքն է: Մենք Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին հորդորում ենք լուծել իրենց միջև մնացած մի քանի տարածայնությունները և վերջնականացնել այդ Հիմնարար սկզբունքների շուրջ համաձայնեցումը, որոնք ուրվագծելու են համապարփակ կարգավորման ծրագիրը»:

¹⁵⁸ Սանկտ Պետերբուրգ (04.06.2009), Մոսկվա (17.07.2009), Քիշնև (08.10.2009), Սոչի (25.01.2010), Սանկտ Պետերբուրգ (17-19.06.2010):

2010թ. հունիսի 26-ին՝ Կանադական **Մուսկոկա** քաղաքում տեղի ունեցավ Մեծ ութնյակի համաժողով, որի շրջանակում ՌԴ նախագահ Գ.Մեդվեդևը, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Բ.Օբաման և Ֆրանսիայի նախագահ Ն.Սարկոզին Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ նորից հանդես եկան համատեղ հայտարարությամբ.

«Մենք՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների՝ Ֆրանսիայի, Ռուսաստանի և ԱՄՆ նախագահներս, վերահաստատում ենք մեր հանձնառությունը աջակցել Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման Հիմնարար սկզբունքները վերջնականացնելիս:

Մենք որպես նշանակալի քայլ ողջունում ենք, որ երկու կողմերն էլ ճանաչում են, որ տևական կարգավորումը պետք է հիմնված լինի Հելսինկյան սկզբունքների վրա և այն տարրերի վրա, որոնք մենք առաջարկել ենք 2009թ. հուլիսի 10-ին լ'Աքվիլայի գագաթաժողովում արած մեր հայտարարությանը կից, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի հարակից զբաղեցված տարածքների վերադարձ, Լեռնային Ղարաբաղի անվտանգություն և ինքնիշխանություն երաշխավորող միջանկյալ կարգավիճակ, Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող միջանցք, հետագայում Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշում իրավական պարտադիր ուժ ունեցող կամարտահայտության միջոցով, բոլոր ներքին տեղահանվածների և փախստականների վերադարձի իրավունք, ինչպես նաև անվտանգության միջազգային երաշխիքներ՝ ներառյալ խաղաղապահ գործողություն:

Այժմ Հայաստանի և Ադրբեջանի նախագահները պետք է հաջորդ քայլն անեն և ավարտին հասցնեն Հիմնարար սկզբունքների շուրջ աշխատանքը, ինչը թույլ կտա սկսել խաղաղության համաձայնագրի մշակումը: Մենք հանձնարարում ենք մեր նախարարներին և համանախագահներին ինտենսիվորեն աջակցել երկու կողմերին՝ տարածայնությունները հաղթահարելու և Ալմաթիում կայանալիք ԵԱՀԿ ոչ պաշտոնական նախարարականի շրջանակներում նախատեսված համատեղ հանդիպմանը նախապատրաստվելու համար»:

2010թ. հոկտեմբերի 27-ին **Աստրախանում** ԼՂ կարգավորման գործընթացի շրջանակներում ՌԴ նախաձեռնությամբ տեղի ունեցավ ՀՀ և ԱՀ նախագահների հանդիպում, որի ավարտին կողմերը հանդես եկան համատեղ հայտարարությամբ. «ՀՀ, ԱՀ և ՌԴ Նախագահները հանդիպեցին

2010թ. հոկտեմբերի 27-ին Աստրախանում՝ ՌԴ նախագահի հրավերով և հանգամանալից քննարկեցին ԼՂ հիմնախնդրի կարգավորման ընթացքն ու հեռանկարները: Վերահաստատելով 2008թ. նոյեմբերի 2-ի Մոսկվայում ստորագրված համատեղ հռչակագրի դրույթները, Նախագահներն ընդգծեցին, որ հակամարտության կարգավորումը քաղաքական-դիվանագիտական միջոցներով պահանջում է հետագա ջանքերի գործադրում՝ հրադադարի ռեժիմի և ռազմական ոլորտում վստահության ամրապնդման համար: Այդ նպատակով Հայաստանի ու Ադրբեջանի նախագահները պայմանավորվեցին որպես առաջին քայլ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի և Կարմիր աչի միջազգային կոմիտեի աջակցությամբ անհապաղ կատարել ռազմագերիների փոխանակում և զոհվածների աճյունների վերադարձ, ինչպես նաև՝ առաջնորդվել այս մոտեցումներով նաև հետագայում՝ ելնելով այդ հարցերի բացառապես հումանիտար բնույթից»:

2010թ. դեկտեմբերի 1-ին **Աստանայում**՝ ԵԱՀԿ գազաթնաժողովի շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի մրի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարները՝ ՌԴ նախագահ Գ.Մեդվեդևը, Ֆրանսիայի վարչապետ Ֆ.Ֆիյոնը և ԱՄՆ պետքարտուղար Հ.Էլիթընը, Հայաստանի Նախագահ Ս.Սարգսյանին և Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևին համաձայնեցին, որ եկել է ժամանակը առավել վճռական գործողություններ ձեռնարկել՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը: Այդ ենթատեքստում նրանք հղում արեցին Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի Մոսկվայի 2008 թ. նոյեմբերի 2-ի և 2010թ. հոկտեմբերի 27-ի հայտարարություններին: Նրանք համաձայնություն հայտնեցին, որ բանակցությունների միջոցով խաղաղ կարգավորումը տարածաշրջանի ժողովուրդներին կայունություն և անվտանգություն կրերի, և կհանդիսանա միակ հնարավորությունը նրանց միջև համաձայնության հասնելու համար:

Հայաստանի և Ադրբեջանի Նախագահները վերահաստատեցին իրենց հանձնառությունը ձգտելու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին վերջնական կարգավորմանը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկիի Եզրափակիչ ակտի, ինչպես նաև ՌԴ նախագահ Գ.Մեդվեդևի, Ֆրանսիայի նախագահ Ն.Սարկոզիի և ԱՄՆ նախագահ Բ.Օբամայի 2009թ. հուլիսի 10-ի Լ'Ալվիլայի և 2010թ. հունիսի 26-ի Մոսկովայի հայտարարությունների հիման վրա:

Միջնորդ երեք երկրներն իրենց աջակցությունը հայտնեցին Հայաստա-

նի և Ադրբեջանի Նախագահներին, որոնք կանգնած են անհրաժեշտ որոշումների կայացման առջև: Նրանք կոչ արեցին Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին նոր էներգիայով կենտրոնանալ Հիմնարար սկզբունքների դեռևս չհամաձայնեցված հարցերի լուծման վրա, և հանձնարարեցին համանախագահներին շարունակել աշխատանքը հակամարտության կողմերի հետ՝ աջակցելով ձեռնարկվող ջանքերին:

Բանակցությունների ընթացքի մթնոլորտի բարելավման համար, նրանք կոչ արեցին հավելյալ քայլեր ձեռնարկել՝ ուղղված հրադադարի ամրապնդմանը և վստահության միջոցների իրականացմանը բոլոր բնագավառներում:

2011թ. մարտի 5-ին Նախագահ Ս.Սարգսյանի **Սոչի** աշխատանքային այցի շրջանակներում ՌԴ միջնորդությամբ տեղի ունեցավ հանդիպում Ադրբեջանի նախագահի հետ ԼՂ բանակցային գործընթացի շրջանակներում: Հանդիպման արդյունքում ՀՀ, ՌԴ և Ադրբեջանի նախագահների հանդես եկան համատեղ հայտարարությամբ առ այն, որ, քննարկելով 2010թ. հոկտեմբերի 27-ին Աստրախանում ընդունված եռակողմ հայտարարության գործնական կիրառման հարցերը, նախագահները՝ ի լրումն դրանում նախատեսված միջոցառումների, պայմանավորվեցին վստահության հետագա ամրապնդման հետևյալ քայլերի մասին.

- Ամենակարճ ժամկետում ավարտել ռազմագերիների փոխանակումը,
- Չգտել բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ միջոցներով և կրակի դադարեցման գծի երկայնքով կողմերի մասնակցությամբ անցկացնել հնարավոր միջադեպերի հետաքննություն՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո և ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցչի աջակցությամբ:

Նախագահներն ընդգծեցին ԼՂ հակամարտության կարգավորման հարցերով իրենց պարբերական շփումների կարևոր նշանակությունը և պայմանավորվեցին շարունակել դրանք այդ ձևաչափով՝ ի լրումն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքի:

2011թ. մայիսի 26-ին Ֆրանսիայի **Գովիլ** քաղաքում ամենազարգացած ութ պետությունների ղեկավարների գագաթաժողովին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարների հայտարարությունը՝ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ, թվով երրորդ փաստաթուղթն էր: Վերջին հայտարարությունը իր բնույթով և ձևակերպումների առումով որակապես տարբերվում էր նախորդներից ու արձանագրում էր, որ խա-

ղաղության համաձայնագրի կնքման պահը հասունացել է, ու կողմերը պետք է բավարար կամք գտնեն համատեղ բանակցային գործընթացի այդ հանգրվանում՝ արձանագրելով գործնական առաջընթաց քայլ: Գազաթաժողովի շրջանակներում Մինսկի համանախագահ երկրների ԼՂ համակարտության լուծմանն նպատակով բանակցային կողմերին ուղևած հայտարարությունը արտացոլում էր հետևյալ դրույթները. «Մենք՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի և ՌԴ-ի նախագահները, վստահ ենք, որ արդեն ժամանակն է, որ ԼՂ հակամարտության բոլոր կողմերը վճռորոշ քայլ կատարեն խաղաղության համաձայնագրի ուղղությամբ: Մենք կրկնում ենք, որ միայն բանակցային համաձայնագիրը կարող է ուղղորդել խաղաղությանը, կայունությանը և խաղաղության վերահաստատմանը՝ հնարավորություն ընձեռելով տարածաշրջանային զարգացումների և համագործունեության համար: Ուժի կիրառումը ծնում է հակամարտության իրավիճակ ու անկայունություն: Վերադարձը ուժի կիրառմանը կհանգեցնի միայն տառապանքի ու ոչնչացման և կդատապարտվի միջազգային հանրության կողմից: Մենք զգուշացնում ենք կողմերի առաջնորդներին իրենց ազգաբնակչությանը պատրաստել ոչ թե պատերազմի, այլ՝ խաղաղության:

Որպես կողմերի և համանախագահ երկրների ջանքերի արդյունք՝ արձանագրվել է գործնական առաջընթաց: Հիմնարար սկզբունքների վերջին տարբերակը, որ քննարկվել էր մարտի 5-ին Սոչիում, օբյեկտիվ և հավասարակշռված հիմք է նախագծելու խաղաղության համակողմանի համաձայնագիրը: Այդ փաստաթուղթը, որ հիմնվում է Հելսինկյան եզրափակիչ ակտի և ուրվագծված է 2009թ. հուլիսի Լ՝Աքվիլայի, 2010թ. հունիսի Մուսկոկայի մեր միացյալ հռչակագրերից բխող տարրերի վրա, բոլոր կողմերի համար ուղի է ապահովում դեպի արևդուրսի ստատուս քվոյի փոփոխություն:

Հետևաբար մենք կոչ ենք անում ՀՀ-ի և ԱՀ-ի նախագահներին քաղաքական կամք ցուցաբերել ավարտին հասցնելու հիմնարար սկզբունքները հունիսին նախատեսվող գազաթաժողովի ժամանակ: Հետագա դանդաղեցումը, ուշացումը, ձգձգումը միայն հարցականի տակ է դնում կողմերի համաձայնագիր կնքելու հանճառությունը: Միայն արձանագրված(կնքված) համաձայնագիրը կարող է հիմք լինել, որը կվկայի այդ սկզբունքների ֆորմալ ճանաչումը՝ նպաստելով խաղաղության համաձայնագրի նախագծմանը և միջազգային գործընկերների հետ նրա գործարկմանը»:

2011թ. հունիսի 24-25 ԼՂ կարգավորման գործընթացի շրջանակներում տեղի ունեցավ հանդիպում **Կազանում**, ուր ԼՂ հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանական Հանրապետության նախագահների համատեղ հայտարարությամբ հանդես եկան: Հայտարարության մեջ ի մասնավորի ասվում էր. Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահները 2011թ. հունիսի 24-ին հանդիպեցին Կազանում և դիտարկեցին իրենց հանձնարարությամբ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման Հիմնարար սկզբունքների նախագծի համաձայնեցման նպատակով տարվող աշխատանքի ընթացքը: Պետությունների ղեկավարները արձանագրեցին մի շարք հարցերի շուրջ փոխըմբռնման ձեռքբերումը, որոնց լուծումը կնպաստի Հիմնարար սկզբունքներին հավանություն տալու համար պայմանների ստեղծմանը: Հայաստանի և Ադրբեջանի նախագահները երախտագիտություն հայտնեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի առաջնորդներին՝ ԼՂ հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ նրանց մշտական ուշադրության համար և բարձր գնահատեցին պայմանավորվածությունների ձեռքբերմանն օժանդակելու ուղղությամբ Ռուսաստանի Դաշնության նախագահի անձնական ջանքերը:

Նշենք, որ բանակցային ներկա գործընթացում համաձայն կողմերի և միջնորդ երկրների հռչակած մոտեցումների, որպես ելակետային փաստաթուղթի մշակման սկզբունքներ դիտվում է «Մադրիդյան սկզբունքներ» անվանումով փաստաթղթի լրամշակված տարբերակը¹⁵⁹: Հիմնարար սկզբունքները պարունակում են խելամիտ և կողմերի համար ընդունելի փոխզիջումներ, որոնք հիմնված են Հելսինկյան եզրափակիչ ակտի ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության և հավասար իրավունքների ու ժողովուրդների ինքնորոշման սկզբունքների վրա: «Մադրիդյան սկզբունքներ» անվանումով փաստաթղթի լրամշակված տարբերակն իր մեջ ամփոփում է ընդհանուր բնույթի հետևյալ առաջարկները.

- Լեռնային Ղարաբաղը շրջապատող տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողության տակ,
- Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կարգավիճակ, որը կտրամադրի անվտանգության և ինքնակառավարման երաշխիքներ,
- Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը կապող միջանցք,

¹⁵⁹ ԱՄՆ, Ֆրանսիայի և Ռուսաստանի նախարարները 2007թ. նոյեմբերին, Մադրիդում, Հայաստանին և Ադրբեջանին ներկայացրին կարգավորման Հիմնարար սկզբունքների նախնական տարբերակ:

• Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի հետագա որոշում՝ իրավականորեն պարտադիր բնույթ կրող կամարտահայտման միջոցով,

• ներքին տեղահանված և փախստական հանդիսացող բոլոր անձանց՝ իրենց բնակության նախկին վայրերը վերադառնալու իրավունք,

• անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն նաև խաղաղապահ գործունեություն¹⁶⁰:

Վերոնշյալ հիմնարար սկզբունքների հավանությունը Հայաստանի և Ադրբեջանի կողմից թույլ կտա մշակել համապարփակ կարգավորման ծրագիր, որը Հայաստանի, Ադրբեջանի և ամբողջ տարածաշրջանի համար կապահովի խաղաղ, կայուն և բարգավաճ ապագա:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ ներկայացնենք *Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առնչությամբ Հայաստանի դիրքորոշումը*¹⁶¹.

Հայաստանը համոզված է, որ կարգավորման գործընթացի արդյունավետության բարձրացումն անհնար է առանց բանակցություններին հակամարտության կողմ հանդիսացող Լեռնային Ղարաբաղի լիիրավ մասնակցության: Հայաստանը գտնում է, որ հակամարտության կարգավորումը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա.

- Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմք պետք է հանդիսանա Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման ճանաչումը,
- Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ պետք է ունենա հայկական կողմի իրավագործության տակ գտվող անխափան ցամաքային կապ,
- Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը պետք է միջազգայնորեն երաշխավորված լինի:

Այս սկզբունքների ընդունումն ու պայմանագրային ամրագրումը հնարավորություն կընձեռի հասնել հիմնախնդրի համալիր կարգավորմանը:

Հայաստանը կարևորում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությունը՝ որպես բանակցային գործընթացի գործուն ձևաչափ, որը կարգավորման ուղիներ գտնելու բավականաչափ ներուժ ունի:

Հայաստանը հետամուտ է խնդրի կարգավորմանը միայն խաղաղ ճանապարհով: Ադրբեջանի փորձերը ուժի սպառնալիքով կորզելու միակող-

¹⁶⁰ Տե՛ս Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, http://www.mfa.am/u_files/file/statementsarm.pdf:

¹⁶¹ Տե՛ս Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, <http://www.mfa.am/hy/artsakh/>:

մանի զիջումներ ոչ միայն ի սկզբանե դատապարտված են ձախողման, այլև շարունակում են մնալ փոխզիջումային տարբերակով խնդրի կարգավորման հիմնական խոչընդոտը:

Լեռնային Ղարաբաղն ապագա չունի Ադրբեջանի կազմում, և, ինչպիսին էլ լինի լուծումը, այն պետք է բխի հենց Ղարաբաղի ժողովրդի կամքից: Դա է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի առանցքը: Ադրբեջանը չունի Լեռնային Ղարաբաղի նկատմամբ հավակնությունների ո՛չ իրավական, ո՛չ քաղաքական եւ ո՛չ էլ բարոյական հիմքեր¹⁶²:

162 Տե՛ս նույն տեղը:

3.3 Հարավկովկասյան անվտանգության և կայունության տարածաշրջանային համագործակցության ծավալման հիմք ստեղծման նախաձեռնությունները՝ որպես տարածաշրջանային համագործակցության ծավալման հիմք

Անցած տարիների ընթացքում ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական շեղադրումը եղել է ՀՀ անմիջական միջավայրի ու տարածաշրջանային խնդիրների վրա՝ նպատակ ունենալով ապահովել այդ միջավայրի կայունությունն ու տևական խաղաղությունը: Այս առումով, ՀՀ տարածաշրջանային դիվանագիտությունը հետապնդել է հետևյալ նպատակները. նպաստել տարածաշրջանային կազմակերպությունների հզորացմանն ու ամրացմանը, ինչպես նաև օժանդակել տարածաշրջանում անվտանգության և համագործակցության այնպիսի կազմակերպության ստեղծմանը, որը կներառի տարածաշրջանային բոլոր երկրները, հետամուտ լինել մարդու իրավունքների ու ժողովրդավարության տարածմանն ու հաստատմանը հարավկովկասյան տարածաշրջանում, հասնել Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորմանը, նպաստել Հվ.Կովկասում Թուրքիայի դրական ներգրավվածությանը¹⁶³:

Վարելով նպատակամղված քաղաքականություն՝ ՀՀ-ը, մեր կարծիքով, փորձում է ամրագրել տարածաշրջանային բազմակողմ համագործակցության գաղափարը՝ հակառակ տարածաշրջանային որոշ պետությունների կողմից դրա մերժմանն ու Հայաստանի մեկուսացմանն ուղղված գործողություններին:

Նշյալ գաղափարի երևան գալը, մեր կարծիքով, պայմանավորված էր մի շարք հիմնարար հանգամանքներով: Նախ, Հվ. Կովկասում առկա են բազմաթիվ հակամարտություններ, որոնք ինքնին լարվածության աղբյուր են հանդիսանում: Երկրորդ՝ հարակից երկրներում ևս գոյություն ունեն մի շարք հակամարտություններ և դրանց օջախներ (Հյուսիսային Կովկաս, քրդական հարց, և այլն), որոնք հավանական վտանգ են ներկայացնում Հվ.Կովկասի պետությունների համար: Երրորդ՝ Հվ. Կովկասում ակտիվ ներգրավվածություն ունեն հարևան պետություններ Ռուսաստանը, Թուրքիան, Իրանը, ինչպես նաև ԱՄՆ և Եվրոպական միությունը, որոնք շատ անգամ իրարամերժ քաղաքական նպատակներ են հետապնդում տարածաշրջանում: Չորրորդ՝ վերոհիշյալ պետությունների շահերի բախումը նպաստում է տարածաշրջանում անկայունության պահպանմանը, բաժանարար գծերի առաջացմանը և միևնույն նպատակների շուրջ միավորված

¹⁶³ Այս մասին առավել մանրամասն տե՛ս ԳԳ ԱԳՆ տարեկան զեկուցագրեր (1999-2010):

պետությունների առանձին խմբերի միջև լարվածության խորացմանը: Հինգերորդ՝ ներկայումս գոյություն չունի միջազգային որևէ մի ատյան, որն ընդգրկի տարածաշրջանում հիմնական դերակատարներ հանդիսացող վերոնշյալ բոլոր պետությունները: Ուստի, այդպիսի պայմաններում, չափազանց ցածր է տարածաշրջանային խնդիրների արդյունավետ լուծման հավանականությունը:

Ի վկայություն տարածաշրջանային խաղաղության կերտման նպատակով համագործակցության և փոխգործակցության գործողությունների նախաձեռնման կարևորությանը, այն, ընդհանուր առմամբ, արժանացավ նաև տարածաշրջանային և համաշխարհային տերությունների դրական արձագանքին: Թերևս մյուս հանգամանքներից զատ, մեր կարծիքով, նաև նշյալ պատճառներով է, որ ՀՀ-ի արտաքին քաղաքական օրակարգի առաջնային խնդիրների շարքից արդեն որ տարին է, չի իջնում հարավկովկասյան տարածաշրջանում հարաբերությունների կարգավորմանն ուղղված կայունության և անվտանգության համակարգի ստեղծման գաղափարը:

Թվարկված հանգամանքները, մի կողմից վկայում են Հվ.Կովկասում հարաբերությունների ավելի «բարենպաստ» միջավայրի և մյուս կողմից՝ շահագրգիռ բոլոր կողմերն ընդգրկող տարածաշրջանային ատյանի ստեղծման անհրաժեշտության մասին: Մեր կարծիքով, նման ատյանը կարող է նշանակալից գործոն հանդիսանալ Հվ.Կովկասում փոխադարձ վստահության ամրապնդման, երկարատև խաղաղության և կայունության հաստատման, բաժանարար գծերի վերացման, ինչպես նաև երկրների միջև համագործակցության խթանման և ի վերջո, առկա հակամարտությունների կարգավորման համար: Ընդ որում, այս նպատակների իրականացումը, այս կամ այն ձևաչափով, համապատասխանում է ոչ միայն կովկասյան երեք երկրների, այլ նաև՝ տարածաշրջանում ակտիվ ներգրավվածություն ունեցող այլ պետությունների շահերին¹⁶⁴:

1996թ.-ի հունիսին Կիսլովոդսկում Ռուսաստանի և հարավկովկասյան երեք հանրապետությունների նախագահների հանդիպման ժամանակ պաշտոնական Մոսկվան ներկայացրեց Հվ.Կովկասում խաղաղության և կայունության հաստատման իր սեփական ծրագիրը, որը ենթադրում էր տարածաշրջանում Ռուսաստանի աշխարհաքաղաքական ներկայության հաստատագրում և տարածաշրջանային հակամարտությունների լուծման միջնորդավորված կառույցների և մեխանիզմների ստեղծում: Նշյալ ոլոր-

¹⁶⁴ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Шугарян Р., *Идея регионального сотрудничества в контексте внешней политики Армении. / Ориентиры внешней политики Армении. Под. ред.-ей Г.В.Новиковой: Центр стратегического анализа "СПЕКТР", 2002, էջ 10 - 25:*

տում նախատեսվում էր, խթանել Իրան - Թուրքիա գործակցությունը: Սակայն վերոնշյալ ծրագրի գրավչությունը Վրաստանի և Ադրբեջանի համար ակնհայտորեն նվազեց, ապա և վերացավ, քանի որ առաջարկվող ծրագրում երևութական կարմիր թելով ընդգծվում էր Ռ-Դ-ի՝ հարավկովկասյան աշխարհաքաղաքականությունից արևմտյան պետություններին և հատկապես ԱՄՆ-ին հեռու պահելու ձգտումը: Կիսլովոդսկյան ձևաչափի նկատմամբ պաշտոնական Երևանի դիրքորոշումն ընդհանուր առմամբ բնութագրվում էր հետևյալ մոտեցումներով, որ թեև առաջարկը չի կարող ծառայել նշյալ համակարգի ստեղծման վերաբերյալ Հայաստանի վերոհիշյալ նպատակներին, սակայն, շահագրգռված մյուս պետությունների կողմից թուրքական առաջարկի առաջ մղման և «3+3+2» ձևաչափի (որը ներգրավելու էր Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Իրանը, Թուրքիան, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, ԵՄ-ն) ժխտման պարագայում, այն կպաշտպանվի Հայաստանի կողմից և կդիտվի որպես այլընտրանքային տարբերակ: Թուրքիան, ինչպես նաև Ադրբեջանն ու Վրաստանը, հիմնականում ԱՄՆ ազդեցությամբ, առաջարկում էին կայունության համակարգը ձևավորել ԵԱՀԿ հովանու ներքո, որով Իրանը դուրս էր մնում համակարգից: Թուրքական առաջարկն ընդունելի չէր Հայաստանի համար, քանի որ խախտում էր երկրների միջև հավասարակշռությունը՝ դուրս մղելով Հայաստանի տնտեսական գործընկեր Իրանին և առավելություններ տալով Թուրքիային, որը շարունակում է վարել հակահայկական քաղաքականություն, չի նպաստում տարածաշրջանում բաժանարար գծերի վերացմանը, այլ ընդհակառակը՝ խորացնում է դրանք: Միաժամանակ «3+1» ձևաչափը չի բացառում մյուս կողմերի հետագայում միանալու հնարավորությունը և այդ հիմքի վրա Հայաստանի առաջարկած բոլոր ութ դերակատարներին ընդգրկող համակարգի ստեղծման հավանականությունը: Ավելի ուշ, Ռուսաստանի կողմից առաջ քաշված նախաձեռնությունն ուղղված տարածաշրջանային կայունության ապահովմանը, որ հայտնի էր «Կովկասյան քառյակ» անվանումով, նույնպես խնդիր ուներ հակազդել այնպիսի կառույցների և կազմակերպությունների ձևավորմանը, որոնց շրջանակներում արևմտյան երկրներն ու Թուրքիան հնարավորություն կունենային Հվ.Կովկասի հետագա զարգացման մեջ առանցքային դերակատարում ստանձնել: Այդ մասին վկայում է նաև Վ.Պուտինի հայտարարությունն առ այն, թե «հարավկովկասյան հանրապետություններն իրենք պետք է որոշեն սեփական տարածաշրջանի ճակատագիրը»¹⁶⁵: 2000թ.-ի հունվարից

¹⁶⁵ Стів Государственный интерес или имперская ностальгия? // Независ. Газ., 26 янв., 2004:

ՌԴ, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի նախագահները կայունության և հակամարտությունների լուծման միջոցառումներ ձեռնարկելու նպատակով ԱՊՀ գագաթաժողովների շրջանակներում «Կովկասյան քառյակի» ձևաչափում տարածաշրջանում տարբեր պարբերականությամբ տարաբնույթ հանդիպումներ ունեցան, որոնք, սակայն, գործնական արդյունավետության տեսանկյունից առանձնակի ոչնչով աչքի չընկան: Այսպիսով, չստանալով ինստիտուցիոնալ ձևակերպում, նշյալ ձևաչափը, որ, այնուամենայնիվ, կարող էր ծառայել որպես առավել լայն համագործակցության բարենպաստ հարթակ, որում թերևս շահագրգիռ էին թե՛ Հայաստանը, թե՛ Ադրբեջանը, այլևս չկիրառվեց:

Նշյալ ձևաչափի արդյունավետ գործարկման պարագայում, ըստ Ռ.Էլիասոնի, Ռուսաստանը հույս ուներ, որ կովկասյան քառյակի անդամ երկրները միացյալ մոտեցումներ կձևակերպեն տարածաշրջանային անվտանգության և կայունության խնդիրների վերաբերյալ, և հատկապես այնպիսի նոր մարտահրավերների պարագայում, ինչպիսիք են միջազգային ահաբեկչությունը, կազմակերպված հանցավորությունը, անօրինական միգրացիան, զինամթերքի ու թմրանյութերի հանցավոր շրջանառությունը¹⁶⁶: Թերևս նշյալ համատեքստում է հարկ դիտարկել պաշտոնական Մոսկվայի կոչերն առ այն, որ հարավկովկասյան հանրապետություններն առավել ակտիվ մասնակցություն ունենան ԱՊՀ հակաահաբեկչական կենտրոնի գործունեությանը: Սակայն. մեր կարծիքով. պետք է նշել նաև, որ նմանօրինակ խնդրի դիտարկումն ավելի շուտ հակադրության մեջ էր մտնում, քան լրացնում անվտանգության նոր մարտահրավերների պայմաններում հարավկովկասյան որոշ հանրապետությունների և ԱՄՆ-ի ու Թուրքիայի միջև համագործակցությունը: Վրաստանն ու Ադրբեջանն անհանգստությամբ վերաբերվեցին անվտանգության ոլորտում համագործակցության իրականացման Ռուսաստանի վերոնշյալ նախաձեռնություններին:

Ի տարբերություն «Կովկասյան քառյակի» ձևաչափի, տարածաշրջանային անվտանգության և համագործակցության միջավայրի ստեղծման առավել ընդգրկուն մոտեցում դրսևորեց «Հվ.Կովկասի կայունության պակտ» նախաձեռնությունը, որը, մեր կարծիքով, կարող է վերածվել տարածաշրջանային անվտանգության համակարգի կամ ԵԱՀԿ շրջանակներում անվտանգության հարցերով տարածաշրջանային ենթախմբի ստեղծման բավական կայուն հիմքի: 1999թ. նոյեմբերին ԵԱՀԿ Ստամբու-

¹⁶⁶ Stru Allison Roy, «Strategic Security Dilemmas in the Caucasus and Central Asia: The Limits of Multilateralism», NBR Analysis, vol. 14, no. 3, (October 2003), էջ 6:

լի գազաթափողովի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի նախագահներն առաջ քաշեցին տարածաշրջանային կայունության ու անվտանգության համակարգի ստեղծման գաղափարը: Ըստ ադրբեջանական նախաձեռնության, այն կրելու էր «Հվ.Կովկասի կայունության պակտ» անվանումը և իր մեջ ամբողջացնելու էր ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Ռուսաստանի, Թուրքիայի, Վրաստանի, Հայաստանի և ԵԱՀԿ շահագրգիռ բոլոր երկրներին: Առաջարկն անհավասարակշիռ էր, քանզի անտեսում էր Իրանին, հետևաբար գուրկ էր հնարավոր արդյունավետ գործառնման հեռանկարից: Ադրբեջանական առաջարկը նախատեսում էր նման պակտի ստեղծումը ԵԱՀԿ հովանու ներքո և «օտար ուժերի» դուրս բերումը տարածաշրջանից, որը լիովին և ամբողջությամբ արտացոլում էր պաշտոնական Բաքվի քաղաքական գերակայությունները՝ հատկապես կապված ԼՂ-ի խնդրի հետ: Ի տարբերություն ադրբեջանական առաջարկի, հայկական մոտեցումն իր մեջ ամբողջացնում էր տարածաշրջանային շահագրգիռ բոլոր ուժերին ներգրավելու անհրաժեշտությունն ու կարևորությունը: Նույն թվականի դեկտեմբերին ՀՀ ԱԳ նախարարը հանդիպումներ ունեցավ Թուրքիայի ԱԳ նախարար Ի.Ջենի, ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Ս.Թալբի, Իրանի ԱԳ նախարար Զ. արազիի, ՌԴ ԱԳ նախարար Ի.Իվանովի և Վրաստանի ԱԳ նախարար Ի.Մենաղարիշվիլու հետ՝ ներկայացնելով հայկական առաջարկի նպատակներն ու սկզբունքները: Հանդիպումներին հետևեցին պաշտոնական նամակներ (5 հունվարի, 2000թ.)՝ ուղղված նշված անձանց, որոնցում տրվում էին Հայաստանի կողմից ներկայացված առաջարկի մանրամասները, այն է՝ ստեղծել «3+3+2» (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան + Ռուսաստան, Թուրքիա, Իրան + ԱՄՆ, ԵՄ) ձևաչափով քննարկումների ատյան, որը կվերաձվի տարածաշրջանային անվտանգությանն առնչվող խնդիրների քննարկման կանոնավոր ֆորումի, ինչն ի վերջո կհանգեցնի կայունության պակտի ձևավորմանը: Նշված պետությունների նախնական արձագանքը դրական էր, սակայն պաշտոնական պատասխաններում ի հայտ եկան էական տարբերություններ, որոնք հետագայում հնարավոր չեղավ մեղմել: Արդյունքում տարածաշրջանային նմանօրինակ համակարգի ստեղծման հայկական առաջարկն այդպես էլ իրողություն չդարձավ:

Մեր կարծիքով, միջազգային հանրությունը (օրինակ՝ ՌԴ-ն ու ԱՄՆ-ը նշեցին, որ նման ատյանի ստեղծման կարևորությունն ակնհայտ է, սակայն հատկապես ԼՂ հակամարտության չլուծվածության պարագայում՝ ոչ իրատեսական), ընդհանուր առմամբ, դրականորեն էր վերաբերվում տարածաշրջանային կայունության համակարգի ստեղծման գաղափա-

րին: Վերջինիս դրսևորումն էր նաև ԵՄ պատվերով և հովանավորությամբ ստեղծված աշխատանքային խմբի փաստաթուղթը, որը փորձում էր մշակել տարածաշրջանում կայունության համակարգի սեփական հայեցակարգ՝ ընդգրկելով Հայաստանի առաջարկած բոլոր ութ «քաղաքական» միավորներին:

Տարածաշրջանային անվտանգության և համագործակցության ատյանի ստեղծման նկատմամբ Եվրոպայի, իսկ հետագայում հատկապես Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հետաքրքրությունը սակայն չնվազեց և իր գործնական փաստաթղթային ձևակերպումը ստացավ հարավկովկասյան պետությունների և ԵԽԽՎ-ի տարածաշրջանային հարցերով զբաղվող գերատեսչության ներկայացուցիչների հետ 2006թ.-ի նոյեմբերի 17-ի հանդիպման ժամանակ¹⁶⁷: Մեր կարծիքով, սակայն հարկ է նշել, որ վերոնշյալ՝ չափից շատ ընդհանուր բնույթ ունեցող հարավկովկասյան նախաձեռնություններում, բացակայում է հակամարտությունների լուծման հստակ ռազմավարությունը, որն, ի դեպ, հանդիսանում է ԵԱՀԿ՝ խաղարար կառույց ստեղծելու ցանկացած նախաձեռնության հիմքը: Նմանատիպ նախաձեռնության անորոշությունն, ինչպես նաև առաջարկների բազմազանությունը նշանակում է, որ նմանօրինակ Պակտը չի կարող անհրաժեշտ ձևով ապահովել պաշտպանության ոլորտում բազմակողմ համագործակցության ընտրությունը: Այսօրինակ հետևությունը վերաբերում է նաև 2003թ.-ի ապրիլին Իրանի՝ «3+3» (Ադրբեջան, Հայաստան ու Վրաստան + ՌԴ, Թուրքիա, Իրան) ձևաչափով տարածաշրջանային անվտանգության համակարգ ստեղծելու նախաձեռնությանը:

Ինչպես արևմտյան, այնպես էլ հետխորհրդային հեղինակավոր մի շարք վերլուծաբաններ կարծիք են հայտնում, որ Հվ. Կովկասում աշխարհաքաղաքական մերօրյա «խաղի» ելքը պայմանավորվում է «հայ-թուրքական հարաբերությունների», ավելի շուտ դրանց բացակայության գործոնով: Ակնհայտ է, որ հայ-թուրքական հարաբերությունների հարցը զուտ միջպետական կամ տարածաշրջանային հարց չէ: Չեն սխալվում այն

¹⁶⁷ Այս մասին առավել մանրամասն տե՛ս. The establishment of a Stability Pact for the South Caucasus, Recommendation 1771 (2006), <http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta06/EREC1771.htm>; The establishment of a Stability Pact for the South Caucasus, Resolution 1525 (2006), <http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta06/ERES1525.htm>; The establishment of a Stability Pact for the South Caucasus: For debate in the Standing Committee - see Rule 15 of the Rules of Procedure, Doc. 11082, Report Political Affairs Committee:Rapporteur: Mr Adrian Severin, Romania, Socialist Group, 18 October 2006, <http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/WorkingDocs/Doc06/EDOC11082.htm>:

վերլուծաբանները, երբ պնդում են, թե հայ-թուրքական հարաբերություններն իրենց անդրադարձերի առումով ունեն ռազմավարական բնույթ, իսկ նշականության տեսանկյունից ազդում են ոչ միայն հարավկովկասյան, առաջավորասիական, այլ նաև՝ մերձավորարևելյան, «Եվրոպա - Ասիա» աշխարհաքաղաքական տարածությունների ուժային հարաբերակցության որոշակիացման վրա: Ուստի, վստահորեն կարելի է պնդել, որ ՀՎ.Կովկասի «թուրքական» չափումն առանցքային գործոն է տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումների ապագայի և հատկապես տարածաշրջանային անվտանգության հասկարգի ձևավորման առումով: Դա, ոլորտի մասնագետներից բացի, ընդունում են նաև տարածաշրջանային բոլոր երկրները, այդ թվում նաև նրանք, ում, «մեղմ ասած», դուր չեն գալիս Թուրքիայի տարածաշրջանային հավակնությունները: Ուստի տարածաշրջանային անվտանգության և համագործակցության հեռանկարները և առավել ևս տարածաշրջանում անվտանգության և կայունության ցանկացած նախաձեռնություն իրատեսական չէ առանց հայ-թուրքական կապերի և հարաբերությունների հաստատման: Սակայն հայ-թուրքական հարաբերությունների ապագան մինչ օրս եղել և մնում է անորոշ: Ավանդաբար ՀՀ-Թուրքիա հարաբերությունների բնույթն արտահայտվել է այն հանգամանքով, որ երկու հարևան երկրների միջև առ այսօր հաստատված չեն դիվանագիտական հարաբերություններ: Այս փաստը հիմնականում պայմանավորված է թուրք-ադրբեջանական բարեկամական հարաբերություններով և, որպես հետևանք՝ ԼՂ հիմնախնդրի նկատմամբ Թուրքիայի միանշանակ ադրբեջանամետ դիրքորոշմամբ: Մեր կարծիքով, թերևս, առկա են նաև կարևոր այլ գործոններ, այդ թվում՝ հայ-թուրքական հարաբերությունների անցյալին վերաբերող պատմական հանգամանքների և 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման նկատմամբ Թուրքիայի կողմից որդեգրած խիստ մերժողական դիրքորոշումը, տվյալ տարածաշրջանում Թուրքիայի և Ռուսաստանի, ինչպես նաև Թուրքիայի և Իրանի շահերի մրցակցությունը, ռուս-հայկական ռազմական սերտ համագործակցության հետևանքով Թուրքիայի կողմից Հայաստանը՝ որպես ՀՎ.Կովկասում Ռուսաստանի միակ դաշնակից դիտարկելու հանգամանքները: Մինևույն ժամանակ, միջազգային ասպարեզում Հայաստանի նկատմամբ Թուրքիայի դրսևորած անբարյացակամ մոտեցումները, ՀՎ.Կովկասում նրա անհավասարակշռված և կողմնակալ քաղաքականությունը, որի առավել անցանկալի հետևանքներից են տարածաշրջանում բաժանարար գծերի առաջացումն ու խորացումը, լուրջ մտավախությունների առիթ են հանդիսացել և մինչ օրս՝ անգամ առանձին փոխակերպումների պարագայում, շարունակում են այդպիսիք մնալ Հայաստանի համար:

Տարածաշրջանային անվտանգության և մակրոտարածաշրջանային ռազմավարական տեղաշարժերի համատեքստում հարկ է նշել, որ ժամանակակից Թուրքիան «նոր» դեր և նշանակություն է ձեռք բերել, որն առավել ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու Թուրքիայի ձգտման գործնական դրսևորումն է: Նմանօրինակ զարգացումների համար համապատասխան պայմաններ է ստեղծում նաև այն ետնապատկերը, որը ձևավորվում է մերձավորարևելյան աշխարհաքաղաքական զարգացումների՝ մասնավորապես «իրաքյան վերջին կոմպանիայի», «քրդական» հարցի լուծման, ամերիկային «Մեծ Մերձավոր Արևելք» ծրագրի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի հետագա քաղաքական ճակատագրի, ԱՄՆ-ի Սենատում հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևի հնարավոր ընդունման շուրջ ԱՄՆ-ի ու Թուրքիայի տարբերվող մոտեցումներով պայմանավորված Վաշինգտոնի և Անկարայի միջև հարաբերությունները: Այս պայմաններում Անկարան լիովին գիտակցում է, որ Մերձավոր Արևելքում ամերիկյան քաղաքականության մեջ իրեն «հատկացված դերը» լուրջ փոփոխություններ է կրել, որոնք ներկայումս «ստիպում» են իրեն առավել ինքնուրույն քաղաքականություն վարել, որի շրջանակներում նա «լեզիտիմ» իրավունք է ստացել ամերիկյան և եվրոպական իր ուղեգիծը զուգորդել արևելյան կամ բուն եվրասիական ուղեգծի հետ, որն իր արտացոլումներն է ստանում Թուրքիայի ավանդական մրցակիցների/ախոյանների հետ նոր որակի և ձևաչափի հարաբերություններ հաստատելու մեջ:

Հենց այս զարգացումների համատեքստում էլ անհրաժեշտ է դիտարկել **«Կայունության և գործակցության կովկասյան պլատֆորմ»** թուրքական նախաձեռնությունը, որը առաջարկի՝ ժամկետի և ներկայացման համատեքստի առումով բավական տեղին էր: Ռազմական բախումը, որ տեղի ունեցավ Վրաստանի և ՌԴ-ի միջև 2008թ. օգոստոսի սկզբին, բավական լուրջ լրամշակումներ մտցրեց Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական և անվտանգության հետագա իրողությունների խճանկարում, ինչպես նաև տարածաշրջանային երկրների համար նոր պայմաններ ստեղծեց իրենց քաղաքական նախասիրությունների իրականացման տեսանկյունից: Ռազմական բախումից հետո Թուրքիան չշտապեց աջակցել Հարավային Կովկասում իր ակտիվ գործընկեր հանդիսացող Վրաստանին, քանի որ Անկարան սթափ գիտակցեց, որ այսօր և մոտ հեռանկարում Հարավային Կովկասում գերիշխանության մտարը մի շարք գլոբալ և ռեգիոնալ գործոնների ազդեցության ներքո թեքվել է ՌԴ-ի կողմը: Հետագա գործընթացները ցույց տվեցին, որ նա չսխալվեց:

2008թ.-ի օգոստոսի 12-ին Ռ.Թ.Էրդողանը արդեն Մոսկվայում էր, որտեղ փորձում էր լուծել երկու հիմնական խնդիր.

- հրապարակայնորեն՝ ինչպես տարածաշրջանային երկրներին, այնպես էլ իր ավանդական դաշնակիցներին, ներկայացնել, որ ռուս-թուրքական հարաբերություններում որակական տեղաշարժ է արձանագրվել, որը բավական խորն է ու հիմնված ընդհանուր շահերի վրա,
- հետագայում տարածաշրջանային զարգացումներն իր տնտեսության, ռազմավարական դերակատարման և այլ հանգամանքների գորու¹⁶⁸ առավել կանխատեսելի և կայուն դարձնելու գործակցության պլատֆորմի նախաձեռնությամբ. (գաղափարի նկատմամբ ՌԴ-ի արձագանքի որոշակիացման նպատակով, մեր կարծիքով, այն ներկայացվել էր պաշտոնական Մոսկվային դեռ Անկարայում՝ ՌԴ-ի և Թուրքիայի ղեկավարների հանդիպման ժամանակ):

Պարզ էր, որ նման ատյանի հնարավոր ստեղծումը իրատեսական չէր հայ-թուրքական հարաբերությունների բացակայության պարագայում: Թուրքիան այն կարծիքին էր, որ Հայաստանի շրջափակումը չի հանգեցրել իր համար ցանկալի արդյունքների. չնայած տարաբնույթ բարդությունների, Հայաստանը ցույց էր տալիս զարգացման և կենսունակության կայուն միտումներ: Այս պարագայում հարկ է նշել, որ քաղաքական դիպաշարի այսօրինակ դրսևորումների պայմաններում առաջին հերթին տուժում են/էին Թուրքիան և Հայաստանը, մինչդեռ լիովին շահում են/էին Ադրբեջանը և ՌԴ-ն: Հայ-թուրքական հարաբերությունների առումով Թուրքիան իրական խնդիրներ է ունենում ինչպես տարածաշրջանային/միջազգային դիվանագիտական տարբեր հարթակներում ոչ շահեկան քաղաքական հեղինակության, Հարավային Կովկաս լիարժեքորեն թափանցելու և հիմնովին հաստատվելու հնարավորությունների կորստի առումով, այնպես էլ չի կարողանում այդօրինակ պայմաններում յուրացնել տարածաշրջանային գերիշխանության իր վաղեմի ծրագրերը, խնդիրներ է ունենում իր արտաքին և անվտանգության քաղաքականության եվրոպական մասնաբաժնի առումով: Ա.Գ.յուլն ու Ռ.Թ.Էրդողանը վաղուց էին գիտակցել, որ տարածաշրջա-

¹⁶⁸ Կրաստանում իրավիճակի ամեն անկայունություն ուղղակիորեն անդրադառնում է կասպյան խողովակաշարերի գործառնման վրա: Բաքու-Թբիլիսի-Սուփսա, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և այլն խողովակաշարերը դադարեցրին գործառնել ճգնաժամի ժամանակ, որը սկզբունքորեն շահեկան չէ Թուրքիայի համար ինչպես սեփական տնտեսության վրա դրանց անդրադարձերի, այնպես էլ միջազգային շուկաներ այդ նավթի արտահանման տեսանկյունից: Տարածաշրջանային ցանկացած լարման կամ ճգնաժամի պայաններում մշյալ հաղորդուղիներն անգործունակ են դառնում, ուստի կորում է տարիներ և խիստ մեծածավալ ռեսուրսներ սպառած կովկասյան նավթագազային հաղորդուղիների աշխարհա-ռազմավարական և քաղաքական դերակատարումը, որն անթույլատրելի է Թուրքիայի համար:

նային կայունության և անվտանգության փնտրտուքի հարցում մինչ օրս ոչ ճշմարիտ ուղղությամբ էին գնացել, քանի որ առաջին հերթին անհրաժեշտ էր գտնել այդ անկայունության ի հայտ գալու և դրա աջակցման իրական աղբյուրը, այսինքն՝ գնահատել Մոսկվայի քաղաքական դերակատարումը տարածաշրջանային գործընթացների այդ մասնաբաժնում, իսկ Հայաստանի հետ նրանց հարաբերությունների վերականգնումը քաղաքական իրատեսականության առումով, թերևս, կարող էր հավելյալ կարևոր մեխանիզմ լինել «նոր» գործընկերոջ հետ հարաբերությունների զարգացման, սեփական արտաքին քաղաքական մի շարք հարցեր լուծելու և տարածաշրջանային/համաշխարհային դրական քաղաքական իմիջ ձեռք բերելու համատեքստում: Թուրքական դիվանագիտությունը փորձեց այդ հանգամանքը լուծել՝ հայցելով ՀՀ-ի ռազմավարական գործընկեր ՌԴ-ին, որը ՀՀ-ի հետ իր գործընկերային հարաբերությունների ներքո ի վիճակի է, սեփական ազգային շահերի տարբեր համատեքստերից ելնելով, ՀՀ-ին միգուցե այնպիսի առաջարկ անել, որից ՀՀ-ն, տարբեր հանգամանքների բերումով, չի կարող կամ չի ցանկանա հրաժարվել: Եվ խնդրի լուծումը չուշացավ. 2008թ. օգոստոս 2-ին ՀՀ Նախագահ Ս.Սարգսյանը ՌԴ-ի կատարած իր այցի ժամանակ հրապարակային հրավեր ուղարկեց Թուրքիայի նախագահ Ա.Գյուլին Երևանում միասին դիտելու Հայաստանի և Թուրքիայի հավաքականների միջև ֆուտբոլային հանդիպումը: Սա, թերևս, անմիջական շփումների լավագույն առիթն էր:

Մոսկվայից հետո լինելով Բաքվում և Թբիլիսիում՝ Թուրքիայի վարչապետը հրապարակեց իր առաջարկը, որն, ի դեպ նոր չէր, այլ արտացոլում էր մինչ օրս Հարավային Կովկասի մասով արված այսօրինակ նախաձեռնությունների առանձին տարրեր: Առաջարկը, որն ինչպես ռուս և թուրք բարձրաստիճան պաշտոնյաներն էին նշում «**ընդհանր «հում» նախաձեռնություն է, որը դեռ ակտիվ շփումների արդյունքում պետք է լցնել իրական բովանդակությամբ»**, **պայմանավորված էր վրացական գործունի՝ Հվ. Կովկասում ընդհանուր անկայունություն ստեղծելու հեռանկարների հետագա բացառման նպատակադրմամբ:** Հրապարակային առաջարկի ընդհանուր տրամաբանությունն իրոք որ բավական անորոշ էր: Այն բովանդակում էր գործակցության «3+2» ձևաչափը (որը, մեր կարծիքով հեռանկարում նաև Իրանին ներգրավելու հնարավորություն էր ենթադրում՝ հաշվի առնելով նաև նրա՝ ԱՄՆ-ից անկախ դիրքորոշումը, որն այսօր թերևս բավական շահեկան է ինչպես Թուրքիային, այնպես ՌԴ-ին):

Առաջարկին հետևեցին նրա նյութականացմանն ուղղված այցերը,

որոնք սկսվեցին Վրաստանից, որտեղ Ռ.Թ.Էրդողանի և Մ.Սաակաշվիլու օգոստոսի 14-ին համատեղ ասուլիսում Էրդողանը նշեց. «**Վրաստանը կլինի անվտանգության այդ պլատֆորմի մաս... Մենք շահագրգիռ ենք Վրաստանում խաղաղության հարցում, քանի որ դա կարևոր է Թուրքիայի և ողջ տարածաշրջանի համար**»¹⁶⁹: «Կայունության և համագործակցության կովկասյան պլատֆորմի» ձևավորման նախաձեռնության վերաբերյալ օգոստոսի 20-ին արդեն Բաքվում **Ռ.Թ. Էրդողանը** հայտարարեց, որ «**Առաջին հերթին պլատֆորմը պետք է ունենա աշխատակազմական հիմք (այս մասով նա թերևս փորձեց ակնկալվող չհաշտվից դուրս տեսնել ԱՄՆ-ին և ԵՄ-ին, որոնք աշխարհագրորեն չեն տեղավորվում Հարավային Կովկաս աշխարհագրական եզրի շրջանակներում՝ այդ կերպ նաև ինչ-որ առումով միզուցե հիմնավորելով հեռանկարում կառույցին Իրանի հնարավոր մասնակցության հարցը**¹⁷⁰. - ԱՂ)... Նպատակ ունենալ խաղաղություն և անվտանգություն, տնտեսական և էներգետիկ համագործակցություն հաստատել տարածաշրջանում»¹⁷¹:

Ամփոփելով նշենք, որ Ադրբեյջանի մասով նա ստացավ սկզբունքային համաձայնություն, Վրաստանի մասով, հայտնի հանգամանքների ներքո, որոշակի դադար՝ վերջնական պատասխանի համար (*այն է՝ արևմտյան գործընկերների տրամադրությունների որոշակիացումից հետո հստակ դիրքորոշման ներկայացման նպատակով* - ԱՂ):

2008թ.-ի սեպտեմբերի 6-ին Թուրքիայի նախագահ Ա.Գյուլն, ընդունելով ՀՀ նախագահի հրավերը, Հայաստանում էր: Այցի շրջանակներում բանակցային օրակարգն, ըստ էության, հետևյալն էր. տարածաշրջանային իրողությունները և թուրքական նախաձեռնությունը, հակամարտությունների գործոնը և, մասնավորապես, ԼՂ հարցի լուծման հեռանկարներն ու ձևաչափը, և, վերջապես, հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարները: Հանդիպման արդյունքում հայկական կողմը արձանագրեց, որ Թուրքիայի նախաձեռնությունը հատկապես համագործակցության նոր ատյանի ստեղծման մասով կարելի է բնութագրել որպես «**քայլ ուղղված տարածաշրջանում բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը**»:

Ընդհանուր առմամբ գնահատելով այցի անդրադարձերը՝ կարելի էր

¹⁶⁹ Платформа стабильности и сотрудничества на Кавказе. Осуществима ли идея Т. Эрдогана? <http://www.nacbez.ru/society/article.php?id=2528>

¹⁷⁰ Ձևավորված միջազգային իրողություններում Թուրքիան նպատակ ունի առավել արդյունավետ գործարկել իր արտաքին քաղաքական ներուժը, որն իր արտահայտությունը գտավ հարավային և արևելյան ուղղություններում նրա դիվանագիտության ակտիվացմամբ. Թուրքիան եականորեն ակտիվացրել է իր շփումները Իրանի հետ հատկապես հեռանկարում խորացնելով էներգետիկ և գազային գործակցությունը, ակտիվացան հարաբերությունները Սիրիայի հետ, Աֆրիկյան ոլորտում, ՌԴ-ի հետ:

¹⁷¹ Sten **Заявление для печати.** "Бакинский рабочий", 21 августа 2008г.

նշել, որ Թուրքիայի նախագահի այցը Հայաստան ունեցավ ոչ միանշանակ ազդեցություն և արդյունքներ: Ա.Գյուլի այցում իհարկե կային նաև քաղաքական PR-ի տարրեր, քաղաքական մեսիջներ ուղղված ԱՄՆ-ին, ԵՄ-ին, ինչպես նաև տարածաշրջանային երկրներին, որոնք ամեն հասցեատիրոջ պարագայում կոնկրետ նպատակներ էին հետապնդում: Մինչդեռ պարզ էր նաև, որ Ա.Գյուլի կողմից Ս.Սարգսյանի հրավերի մերժումը չէր ընկալվի միջազգային հանրության կողմից և չէր համապատասխանի առաջին հերթին Թուրքիայի հեղինակության քաղաքականությանը, իսկ տարածաշրջանում՝ հատկապես Մոսկվայի կողմից՝ հաշվի առնելով Հարավային Կովկասում ուղղենշվող «երբեմնի թշնամիների» գործակցային նոր ձևաչափը և քաղաքական ծրագրերը: Ընդհանուր առմամբ կարելի էր արձանագրել, որ Ա.Գյուլի այցը Հայաստան մի շարք եզրահանգումների և դիտարկումների հիմք հանդիսացավ:

Առաջին. Թուրքիան հերթական անգամ ցույց տվեց, որ քաղաքական հարաբերությունների հաստատման համար կարող է օգտագործվել նաև առաջին հայացքից ոչ քաղաքական բովանդակություն ունեցող միջոցառում, որն իր մեջ գործակցության ծավալման պայմաններ էր պարունակում:

Երկրորդ. Սկիզբ էր դրվել Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների որոշակիացման հիմքային գործընթացի, որի պայմաններում Թուրքիան ցույց տվեց համաշխարհային հանրությանը, որ ինքը բավական ճկուն է, կարող է գործակցել իր երբեմնի ախոյանների և մրցակիցների հետ՝ լուծելու առկա խնդիրները՝ անգամ առանց իր ավանդական դաշնակիցների աջակցության:

Երրորդ. Ա.Գյուլի այցի արդյունքում հերթական աջակցություն և նոր թափ ստացավ Ռ.Թ.Էրդողանի «Կայունության և գործակցության կովկասյան պլատֆորմի» գաղափարը, քանի որ Թուրքիան լավ էր գիտակցում, որ առանց Հայաստանի մասնակցության, նշյալ գաղափարը ֆիկցիա է և կարող է կիսել նախորդ նախաձեռնությունների ճակատագիրը, մանավանդ, եթե տարածաշրջանային անվտանգության ապահովման ճարտարապետությունը չի կարող գործառնել առանց Հայաստանի, քանի որ վերջինս տարածաշրջանային մի շարք խնդիրների անմիջական կողմ է հանդիսանում:

Չորրորդ. Ա.Գյուլը, Երևանում քննարկելով հնարավոր գործակցության ձևաչափը և անդրադառնալով ԼՂ հիմնահարցի հանգամանքին, մի կողմից ներկայացավ որպես բանակցային գործընթացի միջնորդ՝ ակնկալելով, որ ի վիճակի կլինի տարբեր գործոններ (այդ թվում իր ազդեցությունը

Աղբբեջանի վրա, հայ-թուրքական սահմանի բացման հեռանկարների հանգամանքը Հայաստանի համար, ՌԴ-ի ազդեցության չափաբաժինը հայկական դիրքորոշման հնարավոր փափկեցման տեսանկյունից և այլն) կիրառելով բանակցային գործընթացում էական շարժընթաց արձանագրել, մյուս կողմից՝ որպես տարածաշրջանային երկիր, որը նոր իրողությունների շրջանակներում տարածաշրջանային անվտանգության կառուցման առումով որոշակի ընդհանուր մոտեցումներ ունի ՌԴ-ի հետ, իսկ ԼՂ հանգամանքն առանցքային խոչընդոտ է այդ գործընթացներում, ուստի հարկավոր է այն շուտափույթ կարգավորել:

Հինգերորդ. ակտիվացումը հայ-թուրքական հարաբերությունների հարթակում պայմաններ կարող էր ստեղծել, որ ՀՀ պետական շահերի ելակետից պաշտոնական Երևանը նպատակահարմար չգտնի ակտիվացնել Հայոց ցեղասպանության ճանաչման միջազգային գործընթացը՝ նպատակ ունենալով կոնկրետ օգուտներ ստանալ հայ-թուրքական սահմանի բացումից, ինչպես նաև հարաբերությունների հաստատման հեռանկարից:

Ամփոփելով այցի անդրադարձերը՝ հարկ է նշել, որ դրանք կարևոր էին հատկապես ռուսական կողմի շահերի և միզուցե տարածաշրջանում Թուրքիայի ակտիվացման գործոնի ներքո ռուս-աղբբեջանական հարաբերությունների խորացման համատեքստում (*որի վերջին դրսևորումը 2008թ.-ի հուլիսի 7-ի Ռուս-աղբբեջանական «Բարեկամության և համագործակցության» համաշայնագիրն էր*): Նշյալ հանգամանքը շահեկան չէ տարածաշրջանում հայկական շահերի և դիվանագիտության տեսանկյունից: Այդ տրամաբանության ներքո է պետք դիտարկել այն հիմնական գործընթացները, որոնք պայմաններ են ստեղծում թուրքական նախաձեռնություններում Մոսկվայի՝ որպես կոնկրետ կողմի ներկայանալիության համար:

Թուրքիայի հետ գործակցելով ներկայացված նախաձեռնության շրջանակներում՝ Մոսկվան իր համար տարբեր կարևորության և մարտավարական/ռազմավարական բնույթի մի շարք հիմնական խնդիրներ էր փորձում լուծել.

- իր դրական արձագանքն արտահայտելով թուրքական նախաձեռնության նկատմամբ՝ Մոսկվան Հվ.Օսիայի պաշտպանական գործողությունների համատեքստում փորձում էր էլ ավելի ամրապնդել տարածաշրջանային ռազմավարական իր դիրքը՝ այդ կերպ հստակ ցուցադրելով, որ անտեսել իր շահերը այսօրինակ տարածաշրջանում հղի է անկանխատեսելի անդրադարձերով, որոնք կարող են հիմնարար փո-

փոխել եվոպական և եվրասիական ուժային հավասարակշռության ողջ պատկերը,

- տարածաշրջանային ատյանի «թուրքական» նախաձեռնությունը հնարավորություն էր տալիս ինչ-որ չափով նվազեցնել ԱՄՆ և Արևմուտքի ներգրավվածությունը ռազմավարական մրցակցության կովկասյան ճակատում՝ փորձելով այն դարձնել առավել ինքնաբավ, որտեղ օբյեկտիվ քաղաքական իրողությունների ենթատեքստում ՌԴ-ի դիրքերը գերակայող են և պայմաններ ստեղծել, որ այդ դիրքերն անհետադարձության բնորոշիչներ ձեռք բերեն,
- օգտվել այն հանգամանքից, որ տարիներ շարունակ ԱՄՆ-ը Թուրքիային չի ցուցաբերել այն աջակցությունը, որը նրան անհրաժեշտ էր Հվ.Կովկասում իր գերիշխանության հաստատման համար և հաշվի առնելով ռուս-թուրքական պատմական հայտնի իրողությունները՝ նոր որակի և տրամաբանության հարաբերություններ հաստատել Անկարայի հետ՝ դրանից բխող տնտեսական, հաղորդակցային և էներգետիկ շահույթների և դրանց ռազմավարական նշանակության առումներով,
- նախաձեռնության հաջողության պայմաններում էներգետիկ ոլորտում բացարձակ գերակայության իրողություններ ապահովել՝ պայմանավորված Ադրբեջանի հետ նոր որակի և պարբերականության հարաբերություններ հաստատելու և Թուրքիայի հետ տարածաշրջանային բնույթի գործակցությունը շարունակելու միտումներով,
- Առաջավոր Ասիա թափանցելիության կոնտեքստում Թուրքիայի հետ գործակցելու և այդ համատեքստում նրա քայլերը վերահսկելու, ինչպես նաև ռուս-թուրքական նոր որակի հարաբերությունների պարագայում Թուրքիայի՝ Արևմուտքի առանձին բևեռների շահերի՝ այսօր արդեն բավական թույլ ներկայացուցչությունն էլ ավելի նվազեցնելու առումներով,
- ցույց տալ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային տերություններին (ԱՄՆ, ԵՄ-ի հիմնադիր անդամներ և այլն), որ ունակ է այնպիսի պայմաններ ստեղծել, որ տարածաշրջանում կայունության միջավայր ստեղծվի, բարելավվեն տարածաշրջանային երկրների հարաբերությունները, ինչպես նաև էական առաջընթաց արձանագրվի տարածաշրջանային հակամարտությունների լուծման գործընթացում,
- հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր բարելավման համատեքստում փորձի տեսանելի հիմնավորումներ տալ, որ ՀՀ քաղա-

քական զարգացման ընտրված ուղեգիծը փոփոխման ենթակա չէ, ուստի ցանկացած միտում՝ ուղղված «հայացք դեպի Արևմուտք» եզրահանգմանը, իրատեսական չէ և կարող է էական անդրադարձներ ունենալ ինչպես ՀՀ անվտանգության, այնպես էլ տարածաշրջանում «հայկական» գործոնի արդյունավետ և անվտանգ գործառնման հեռանկարի տեսանկյունից:

Ռուսական և թուրքական քաղաքականության այսօրինակ ենթատեքստերը պայմաններ են ստեղծում, որ առաջ գան նոր հարցադրումներ կապված հատկապես ռուս-ադրբեջանական, ՌԴ-ի «էներգետիկ» դիվանագիտության հեռանկարի, տարածաշրջանում ՌԴ-ի, Թուրքիայի և միգուցե Իրանի հեռահար գործակցության, ԱՄՆ-ի և ԵՄ-ի՝ տարածաշրջանի կամ նրա առանձին երկրների մասով կոնկրետ լրամշակումների իրականացման և մեզ համար ամենից կարևոր՝ ՀՀ ազգային շահերի վրա դրանց անդրադարձերի ապագայի որոշակիացման առումներով:

Այսօրինակ համատեքստում է հարկ անդրադառնալ թուրքական նախաձեռնության իրատեսականությանը և ՀՀ ազգային շահերին դրա համապատասխանելիությանը: *Թուրքական առաջարկի նկատմամբ թերահավատությունը և նրա՝ ՀՀ ազգային շահերի ապահովմանը համապատասխանելիությունը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով.*

1. ենթադրյալ 5 երկրներից առնվազն մեկի՝ Վրաստանի մասով կար անկանխատեսելիության առավել բարձր մակարդակ, քանի որ այն, բացի սեփական շահերի ներկայացումից հանդես է գալիս որպես երկբևեռ Արևմուտքի շահերի կրողը. (Վրաստան-ՌԴ հարաբերությունների ինչպես տարածաշրջանային, այնպես էլ արտատարածաշրջանային մակարդակն իր մեջ ամփոփում է ՌԴ-Արևմուտք/ԱՄՆ հարաբերությունների հարթությունը և խնդիրների այն ողջ ներկայակեր, որոնք առկա են այդ բարգամակարդակ հարաբերություններում),

2. ատյանի հնարավոր մասնակից երկրներից յուրաքանչյուրը ենթադրյալ միության մեկ կամ նույնիսկ մի քանի անդամների հետ այս կամ այն մասով ներգրավված է ակտիվ կամ պասիվ բնույթի հակամարտության մեջ (ՌԴ-Վրաստան, Հայաստան-Արբեջան, Հայաստան-Թուրքիա և այլն)՝ դրանից բխող քաղաքական անհանդուրժողականությամբ,

3. հարավկովկասյան վերոնշյալ նախաձեռնության մեջ, բացակայում էր հակամարտությունների լուծման հստակ և իրատեսական ռազմավարությունը, քանի որ տարածաշրջանային հակամարտությունների փիլիսոփայությունը ոչ միայն ներտարածաշրջանային տրամաբանության կրող

է, այլ իր մեջ պարունակում է այլ՝ առավել «մեծ խաղի» բաղադրատարրեր,

4. տարածաշրջանային ատյանի նախաձեռնությունը պետք է ունենար համաչափ բնույթ, այսինքն պետք է ապահովվեր տարածաշրջանային/համաշխարհային ուժային բոլոր այն բևեռների այս կամ այն կարգի ներկայացվածությունը, որոնք շահեր ունեն տարածաշրջանում, տարբեր բաղադրատարրերի մասով ակտիվ գործակցում են երկրների հետ և ունեն տարածաշրջանային այնքան ներուժ, որ նշյալ հանգամանքների գորու, կարող էին խոչընդոտել համակարգի գործառնման արդյունավետությանը (օրինակ՝ Հվ.Կովկասում իրավիճակի ցանկացած կայունություն հնարավոր չէ լինի իրատեսական, եթե նրա մեջ չներգրավվեն ԱՄՆ, ԵՄ և ՆԱՏՕ-ն: ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի մասնակցության հարցը հնարավոր Պլատֆորմի ձևավորմանը անհրաժեշտ էր, քանի որ ակնկալվող համակարգում առկա են այնպիսի երկրներ, որոնք հանդիսանում էին ուղղակիորեն նշյալ ուժային բևեռների շահերի կրողը, ավելին՝ իրենց քաղաքական զարգացման հեռանկարը տեսնում էին բացառապես այդ կենտրոնների հետ ռազմավարական գործակցության համատեքստում, նրանց հետ ունեն ռազմատեխնիկական ակտիվ շփումներ¹⁷²: Նմանօրինակ հանգամանքներ կարելի էր արձանագրել նաև Իրանի մասով, որն անմիջական ազդեցություն ունի հարավկովկասյան երկու երկրների, ինչպես նաև՝ տարածաշրջանային և միջազգային ակտիվ շփումներ ՌԴ-ի և աճող գործակցություն Թուրքիայի հետ:

5. հնարավոր համակարգի գործառնման կարևոր հանգամանք էր այն, որ ակնկալվող ատյանը չունենար արհեստական, շաբլոնային բնույթ, իր մեջ կամրջեր եվրոպական անվտանգության ճարտարապետության ինստիտուցիոնալ ընկալումների (լինի դա ՆԱՏՕ, թե ԵՄ նորաստեղծ անվտանգության ուժերը) և եվրասիական անվտանգության իրողությունների տրամաբանության (օրինակ՝ ՀԱՊԿ շրջանակները) միախառնությունը, քանի որ ինչպես ներտարածաշրջանային երկրները, այնպես էլ պլատֆորմի նախաձեռնող երկրները իրենք էլ ներկայացնում էին անվտանգության տարբեր համակարգեր,

6. հարկավոր է, որ տարածաշրջանային պետությունների՝ սեփական անվտանգության կազմակերպման հայեցակարգերը չփորձեն ածանցվել

¹⁷² Այդ միտումները, հատկապես Վրաստանի մասով, առավել խորացան ՆԱՏՕ Բուխարեստյան գագաթաժողովից և ռուս-վրացական հարաբերությունների սրացումներից հետո: Այսինքն չի բացառվում, որ մինչև Վրաստանի ՆԱՏՕ Անդամակցության անհատական պլանի հնարավոր հաստատումը նրան կարող են տալ որոշակի միջանկյալ կարգավիճակ ոչ այնքան Վրաստանի անվտանգության նպատակադրումով, որքան Արևմուտք - ՌԴ հարաբերությունների և Հվ.Կովկասում ՆԱՏՕ-ի՝ Թուրքիայից բացի այլ բևեռի ներկայության ապահովման առումով:

նախկին/ներկա «անվտանգություն ի հաշիվ հակառակորդի» անվտանգության ապահովման փոխադարձ բացառման սկզբունքի վրա, որտեղ գործում է «քաղաքական խաղ զրոյական արդյունքով» մոտեցումը, այլ առաջնորդվեն «համագործակցության հիմքով անվտանգություն» կերտելու սկզբունքի նյութականացմամբ:

7. անվտանգության համակարգը պետք է առավելագույնս համարժեք փոխզիջումային ենթատեքստում ձևավորվի, որտեղ կողմերին ներկայացվող փոխզիջումների մակարդակը և խորությունը համակշռելի են և հետագայում չեն կարող հանգեցնել ներհամակարգային անկայունության:

8. վերջ պետք է տրվի ռազմական ներուժային մրցակցությանը, ներքին սպառման ռազմաշունչ հայտարարությունների պրակտիկայի հետագա կիրառմանը, ինչպես նաև ներտարածաշրջանային թշնամանքի սերմանման գործընթացին:

9. համակարգի ձևավորման տրամաբանությունն իր հենքում պետք է ունենա տարածաշրջանային տնտեսական և հաղորդակցային գործակցության նույնական մոտեցումներ, որտեղ ընդհանուր համակարգին կներգրավվեն տարածաշրջանային բոլոր երկրները, այդ թվում նրանք, որոնք հակամարտություններ ունեն միմյանց հետ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ազգային շահի հիմնահարցին նվիրված ներկայացվող հետազոտության շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքներն ամփոփելով՝ կարելի է նշել, որ ազգային շահերի հիմքով պետական քաղաքականությունը պետական կառավարման ողջ ռազմավարության մեջ առանձնահատուկ դերակատարում և նշանակություն ունի: Այն բարդ և բազմամակարդակ համակարգ է, որն իր մեջ հանրագումարում է պետականության շարժընթացի արդյունքները, հանրության արժեքային գերակա կողմնորոշիչները, միջավայրային իրողությունների և սթափ հաշվարկների հրամայականներն ու ողջամիտ պետական քաղաքականության կերտման հիմնական սկզբունքները: Ազգային շահերի բնույթով, փաստորեն, պայմանավորվում են պետության և ազգի գոյատևման ու զարգացման հրամայականների արդյունավետ գործարկումը: Ազգային շահերի գիտական հետազոտումը հիմք է տալիս տարբերակելու ազգային շահերի էության, կառուցվածքի, ձևավորման գործընթացի, նրա վրա ազդող գործոնների, իրականացման մեխանիզմների վերաբերյալ մի շարք արդյունքներ, որոնք ունեն գիտատեսական և գործնական նշանակություն:

1. Ազգային շահերը պետական քաղաքականության կարևորագույն հիմքերն են: Նրանք իրենց մեջ են ամբողջացնում ոչ միայն պետության, այլ նաև ազգի, նրա առանցքային մասերի, ինչպես նաև հանրության և այն կազմող սոցիալական տարբեր շերտերի շահերը:
2. Ունենալով պատմական բնույթ և աստիճանակարգային կառուցվածք՝ ազգային շահը ձևավորվում է այդ շահերի սուբյեկտների բարդ փոխհարաբերակցության, մրցակցության, անգամ հակադրման արդյունքում՝ իրենց վրա զգալով միջավայրային տարբեր գործոնների և մրցակցող այլ շահերի ազդեցությունը:
3. Գլոբալացման ժամանակակից գործընթաները որոշակիորեն փոփոխել են պետության ընկալումները: Առանցքային վերաբժեվորման, սակայն չի ենթարկվել պետության՝ որպես ազգային շահերի գերակա սուբյեկտի բնութագրիչները: Պետությունն արդի իրողությունների պարագայում անգամ շարունակում է մնալ ազգային շահի իրացման հիմնական կրողը, որի արդյունավետ քաղաքականության հիմնական գրավականը սեփական ներուժի - հավակնությունների - օբյեկտիվ իրողությունների միջև հավասարակշռության պահպանումն է: Ուստի, ազգային շահերի

պետական քաղաքականության բնույթն ուղիղ համեմատական է պետության ներուժի և հզորությունների յուրահատուկ համակարգին, ինչպես նաև այդ համակարգի կառուցվածքային տարրերի խիստ որոշակի համադրությանը:

4. Անկախության ձեռքբերմամբ է պայմանավորված ՀՀ-ի՝ որպես ազգպետության քաղաքական վարքը, որից ածանցվում է ազգային շահերի ներկայիս ընկալումը: Հայ ժողովրդի պատմաքաղաքական շարժընթացում ազգային շահերն արժեվորվել և զարգացման յուրահատուկ դինամիկա են ապրել՝ ձևակերպվելով ինչպես մասնավոր մտահանգումների, այնպես էլ դասական կոռ հայեցակարգերի տեսքով:
 5. Անկախ պետականության պարագայում ազգային շահերի հայ ընկալումն իր մի մասով ամբողջացնում է ազգային շահի ավանդական ըմբռնման մի շարք դրույթներ, իր մյուս մասով՝ ժամանակակից քաղաքական իրողությունների պարագայում ճիշտ կողմնորոշվելու հրամայականները:
 6. Անվտանգության և փոխլրացման արտաքին քաղաքականությունը համապատասխանում է տարածաշրջանային և համաշխարհային քաղաքական զարգացումների հիմնական իրողություններին՝ պայմանավորելով Հայաստանի անվտանգության և արտաքին աշխարհի հետ հարաբերման միջակայքը: Փոխլրացման հայկական քաղաքականության վերացարկումը տարածաշրջանային մակարդակ կարող է նվազեցնել լարվածությունը տարածաշրջանում և ուժային հավասարակշռության որոշակի պայմաններ ստեղծել՝ ապահովելով տարածաշրջանային խաղաղության և կայունության որոշակի միջավայրը:
-

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Այվազյան Ա., Հիմնահարցեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի: Մաս Ա, Եր., 2002:
 2. Գևորգյան Հ.Ա., Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ: Հայկական հարցը ժամանակակից քաղաքագիտական տեսությունների լույսի տակ, Եր., 1997:
 3. Հարությունյան Է., Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Մակմիլան-Արմենիա, - Եր., 2004:
 4. Մանասյան Ա. Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելուն: Եր., 2003:
 5. Մանուչարյան Հ.Գ., Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները, Եր., 1988:
 6. Մանուչարյան Հ.Գ., Դրվագներ Հայ քաղաքական մտքի պատմության, Եր., 2002:
 7. Նալչաշյան Ա.Ա., Էթնիկական հոգեբանություն, Եր., 2001:
 8. Նժդեհ Գ., Հավատամք, «Հայ դատ», Եր., 1991:
 9. Շահգեղյան Մ., Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք», Եր. 2003:
 10. Վալեսյան Լ.Հ., «Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն», Եր., 1988թ:
-
1. Аллисон Р., Центральная Азия и Закавказье: Региональное сотрудничество и фактор российской политики., Рабочие материалы, 2004, С. 10:
 2. Антология мировой политической мысли", Т 1., М, 1997:
 3. Армения, Европа, Азия: корридоры и перекрестки., С.Оганесян, Д.Петросян, АЦСиНИ, 2001г.:
 4. Арутюнян Ю.В., Дробижева Л.М., Сусков А.А., Этносоциология, Уч. Пособие, М., 1999.:
 5. А.Бетлер, Национальный интерес, ж-л «Полис», 2003, С.1:
 6. Бжезинский З., Великая шахматная доска. Господство Америки и его геостратегические императивы, М., Меж. Отнош., 1999 г.:
 7. Бородай Ю.М. Этнос, нация, государство. Выступление на «круглом столе» «Национальное государство: теория, история, политическая практика», ж-л «Полис», 1992, С. 5-6.:
 8. Бромлей Ю.В., К Вопросу о выделений этносов среди других общностей

- // Этнос и политика: Хрестоматия, М., 2000.:
9. Быстров Н., Оценка могущества государства, Зарубежное военное обозрение, 1981г., С 9.:
 10. Военный энциклопедический словарь., М., 1983:
 11. Гегель Г., Сочинения, Т. III., М., 1956:
 12. Гельвеций К.А., О человеке, его умственных способностях и его воспитании, М, 1938:
 13. Геополитика каспийского региона., Жильцов С.С., Зонн Н.С., Ушков А.М., М., Меж.отнош., 2003:
 14. Гольбах П., Избранные философские произведения, Т.1, М., 1963:
 15. Государственный интерес или имперская ностальгия ? // Независ. Газ., 26 янв., 2004:
 16. Дейч К., Рост наций // Этнос и политика: Хрестоматия, М., 2000:
 17. Динамика Международной стабильности.- ж-л «Международная жизнь».,1991, С. 2:
 18. Капустин Б.Г., «Национальный интерес», как консервативная утопия, ж-л «Свободная мысль», 1996, С. 3:
 19. Категории политической науки, МГИМО, М., 2002:
 20. Киссинджер Г., Нужна ли Америке внешняя политика? К дипломатии для XXI века. М., 2002..
 21. Киссинджер Г. Дипломатия. М. 1997.
 22. Коппитерс Бруно, Федерализм и конфликты на Кавказе. С 2, Московский центр Карнеги, М., 2002:
 23. Кризис ЕС: последствия и перспективы // 2005. Октябрь - декабрь. - #4., 731с.
 24. Лекарев С.В., Порк В.А., Бизнес и безопасность., М., 1995:
 25. Линклейтер Э. Неореализм в теории и на практике. 359с, М., 2002.:
 26. Мамут Л.С., Народ в правовом государстве., НОРМА, М., 1999:
 27. Маркс К., Энгелс Ф., Сочинения, Т. II., М., 1955.:
 28. Национальная безопасность и национальные интересы РФ, 09.08.06.
http://www.auditorium.ru/aud/p/index.php?a=presdir&c=getForm&r=resDesc&id_res=155:
 29. Нация и национализм / Б. Андерсон, О. Буэр и др. / Пер. с англ. и нем. Праксис. М., 2002:
 30. Най Дж.С.(мл), Взаимозависимость и изменяющаяся международная
-

-
- политика // Мировая экономика и международные отношения, 1989, С.12.:
31. Новая структура командования в рамках преобразования НАТО // Силы реагирования НАТО:
 32. Новости // САТО.ru, www.cato.ru/pages/106?id=106&p=310.
 33. Нулевой результат: Саммит в Риге пока не решил главных проблем НАТО. Надежда Сорокина, Рига, <http://www.rg.ru/2006/11/30/nato-summit.html>.
 34. Ориентиры внешней политики Армении. Под ред.-ей Г.В. Новиковой: Центр стратегического анализа "СПЕКТР", 2002:
 35. Партнеры начинают не понимать друг друга//Независимое военное обозрение. - С. 4. - 8 февр. 2002:
 36. Пресс-релиз НАТО // NATO Official Web site. 2003. # 089.
www.Nato.int/docu/pr/2003/p03-089e.htm.
 37. Поздняков Э.А. Нация, национализм, национальные интересы. М.,1994г.
 38. Прохожев А.А., Человек и общество: законы социального развития и безопасность, М., 2002:
 39. Россия и Закавказье: реалии независимости и новое партнерство. М., 2001:
 40. Россия и Закавказье в современном мире / Под. ред. Р.М.Авакова, А.Г.Лисова / ИМЭМО РАН.- М. ЗАО Финстатинформ, 2002:
 41. Саркисян М., Политические проблемы Кавказа и Армения (Политика Армении в регионе), АЦСиНИ, Ер., 2001:
 42. Современный словарь иностранных слов 2-ое изд., М., 1999:
 43. Современный словарь по политологии, Мельник В.А., Минск., 2004:
 44. Столкновение глобализаций, ж-л, 26.02.2003,
<http://www.globalaffairs.ru/numbers/2/1958.html>:
 45. Справочник НАТО - 1999, Брюссель, 1999г., 586с.
 46. Столкновение глобализаций, ж-л, 26.02.2003,
<http://www.globalaffairs.ru/numbers/2/1958.html>:
 47. Т.Г.Пархалина. НАТО сегодня. 173с., М., ИНИОН РАН, июнь 1997г.
 48. Торкунов А., Современные международные отношения, 897с., М., 2000.:
 49. Троицкий М. А. Военно-политические аспекты трансформации систем коллективной безопасности // Трансатлантический союз (1991-2004). Модернизация систем американо-европейского партнерства после распада биполярности: сб. ст. М.: 437с., Институт США и Канады РАН,
-

- 2004.
50. Торукало В.П., *Нация история и современность*, М., 1996:
 51. Фукидид. «История Пелопонесской войны в восьми книгах», М, 1987:
 52. Халлидей Ф., *Окончание холодной войны и международные отношения: Некоторые аналитические и теоритические выводы.*, 287с., М., 2002.
 53. Шиллер Ф., *История Тринадцатилетней войны.*, Собр. соч. В 7-ми т., т. 5, М., 1957:
 54. *Экономическая Безопасность России: Общий курс: Учебник / Под ред. Сенчагова В.К.- Дело*, М. 2005:
 55. Электронная библиотека Социологического факультет Московского Государственного Университета имени М.В.Ломоносова;
<http://lib.socio.msu.ru/1/library?e=d-000-00---01om on--00-0-0-0prompt-10-4-0-11—1-ru-50---20-help---00031-001-1-0windowsZz-1251-10&cl=CL1&d=HASH011ab150a75e73ae9b004d21.29&gc=0>:
 56. Эмер де Ватель, *Право народов или принципы естественного права, применяемые к поведению и делам наций и суверенов*, М, 1960:
 57. *Японская экономика в преддверии XXI в.*, Наука, М., 1991:
1. *A National Security Strategy for a New Century*, Washington, 1997, 35p.:
 2. *A National Security Strategy for a New Century*, Washington, 1997:
 3. *A Secure Europe in a Better World // European Security Strategy.- Brussels, 2003.*, 349p.
 4. Address by the President of the United States George W. Bush to the participants of the Young Leaders Forum and of the R`ga Conference
<http://www.rigasummit.lv/en/id/speech in/nid/51/>
 5. AFGHANISTAN: NATO SUMMIT STRESSES «PROGRESS» Ahto Lobjakas 12/03/06 <http://www.eurasianet.org/departments/insight/articles/pp120306.shtml>.
 6. Allen M., Gellman B. Preemptive Strikes Part of U.S. Strategic Doctrine // *Washington Post* 2002. December 12..
 7. Allison Roy, «Strategic Security Dilemmas in the Caucasus and Central Asia: The Limits of Multilateralism», *NBR Analysis*, vol. 14, no. 3, (October 2003):
 8. Arnold Wolfers, «National Security, as an Ambiguous Symbol», *Political Science Quarterly*, Vol. 67, No. 4, December 1952., 540p.
 9. Aron Raymond, *Peace and War: A Theory of International Relations*, Garden City, N.Y., 1973:
-

-
10. Aron Raymond, *Peace and War: A Theory of International Relations*, Garden City, N.Y., 1973, 781p.
 11. Ashton B. Carter, William J. Perry, and John D. Steinbrunner, *A New Concept of Cooperative Security*, 748p., Washington, DC: The Brookings Institution Press, 1993.
 12. Bcherl W. *Eine Allianz für Amerika` Die NATO nach Prag // International Politik. 2003. # 3.*
 13. Beard C., *The Idea of National interest.*, N.Y., (1930., red. 1963):
 14. Bell R. G. *The Pursuit of Enhanced Defence Capabilities // Conference on European Defence R&D: Funding the Future*, 24 January 2002. Brussels, 2002, 44p.:
 15. Bill McSweeney, *Security, Identity and Interests, A Sociology of International Relations*, Cambridge: Cambridge University Press, 1999, 662p.:
 16. Brzezinski Z., *The Grand Failure: The Birth and Decay of Communism in the Twentieth Century*, (1989):
 17. Bundesministerium der Verteidigung. 2003. Mai.
http://www.bmvg.de/pic/sicherheit/vp_rbroschuere.pdf.
 18. *Bush's Iraq Calculus*, By David Ignatius,
<http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2003/02/13/AR2008021302786.html>.
 19. Butler N. *NATO's Future: to the Greater Middle East and Beyond` // Disarmament Diplomacy. 2004. January / February., 335p.:*
 20. Buzan B., *From International System to International Society: Structural realism sand Regime Theory.*, IO43, 1993:
 21. Buzan B., *From International System to International Society: Structural realism sand Regime Theory.*, IO43, 1993, 936p.:
 22. *Can NATO transform for the 21st century` From Acronym Consultant Martin Butcher in Riga*, November 27, 2006,
<http://www.acronym.org.uk/nato/riga01.htm>.
 23. *Can NATO transform for the 21st century` From Acronym Consultant Martin Butcher in Riga*, November 27, 2006
<http://www.acronym.org.uk/nato/riga01.htm>
 24. Canadian Department of Foreign Affairs and International Trade, *Human Security: Safety for People in a Changing World*, Ottawa: Canadian Department of Foreign Affairs and International Trade, April, 1998, 112p.:
 25. Carlisk Barracks. *NATO after enlargement. W, 1998., 512p.:*
 26. Carr E., *The Twenty Year's Crisis 1919-39. An Introduction to the Study of International Relation*, NY, 1939:
-

27. Charles Glaser, "The Security Dilemma Revisited", *World Politics*, Vol. 50, No.1, October 1977, 271p.:
 28. Clarke E. Cochran, «The Politics of Interest: Philosophy and the Limitation of the Science of Politics», *American Journal of Political Science*, XVII (November, 1973):
 29. Cline S. Ray. «World Power Trends and U.S. Foreign Policy for the 1980's», Western Press, 1980:
 30. Clinton W. David, *National Interest: Rhetoric, Leadership and Policy*. (Boston: University Press of America), 1988:
 31. Clinton W. David, *The Two Faces of National Interest*, Louisiana State University Press, 1994:
 32. *Common Security and Strategic Reform: A Critical Analysis*, New York: St. Martin's Press, 1997., 331p.:
 33. Communiqué final Réunion ministérielle du Conseil de l'Atlantique Nord Tenue à Madrid le 3 juin 2003 <http://www.nato.int/docu/pr/2003/p03-059f.htm>:
 34. *Comprehensive Political Guidance // NATO Official Website*. 2006. November. www.nato.int/docu/basi_ctxt/b061129e.htm.
 35. *Crisis Management in the CIS: Wither Russia` // Eds. H. - G. Erhart, A. Kreikemeyer, A. V. Zagorski. - Baden - Baden: Nomos, 1995:*
 36. Daniel Vernet. «La France et l'Allemagne». *Politique étrangère*, 1995, N 4., 83p.:
 37. Daume H. *Defence Against Terrorism. Ein Aktionsprogramm der NATO // Europäische Sicherheit*. 2006. #3. März, 193p.:
 38. DAVID A. BALDWIN, "The Concept of Security". *Review of International Studies* (1997), 426p., 23:1:5-26 Cambridge University Press Copyright . 1997 British International Studies Association.,
 39. *Debating NATO's Future in Munich // Deutsche Welle. Germany*. 2005. February 12. www.dw-world.de/dw/article/0,2144,1487513,00.html.
 40. Donnelly J., *Realism and International Relations*, 447p., C.U., 2000:
 41. Donnelly J., *Realism and International Relations*, C.U., 2000:
 42. Ellsworth R.F., Simes P.K., *Imposing our values' by Forcell*, *The Washington Post*, 1999. December 29:
 43. *EU, NATO and Europeanization. The return of Architectural Debate. Redefining Security` The role of the European Union in European Security Structure. Report N 7. Oslo, 2000., 217p.*
 44. *EU-US: Putting Transatlantic Relations to the Test` Article by Karsten D. Voigt; <http://www.ip-global.org/archiv/volumes/2002/fall2002/eu-us-putting-transatlantic-relations-to-the-test-.html>.*
-

-
45. Fisher Guido, «Der Wehrwirtschaftliche Bedarf», zeitschrift fur die Gesamte Staatswissenschaft, XCIX (1939):
 46. Frankel Joseph, Nation Interest, Praeger Publishers, 1970:
 47. Gareth Evans, "Cooperative Security and Intra-State Conflict", Foreign Policy, No. 96, Fall 1994., 316p.:
 48. Georgia outshines Ukraine at recent NATO summit in Riga, Taras Kuzio <http://www.gmfus.org/publications/articles.cfm?id=255&parenttype=P>:
 49. Goldstein Martin E., The Role of National Interest in International Relations, Intellect, November, 1975:
 50. Grant Ch., Leonard M. What New Transatlantic Institutions' // European Affairs.- 2006.- Spring/ Summer., 128p.:
 51. Growing pains Peter van Ham examines the challenges NATO is facing as it takes on an increasingly global role. Peter van Ham is director of the Global Governance Programme at the Netherlands Institute of International Relations "Clingendael" in The Hague, and professor at the College of Europe in Bruges, Belgium. <http://www.nato.int/docu/review/2005/issue3/english/analysis.html#top>.
 52. Growing pains Peter van Ham examines the challenges NATO is facing as it takes on an increasingly global role.:
 53. Gulik L., Administrative Reflection from World War II, University of Alabama Press, 1948:
 54. Huntington S., The Clash of Civilizations and the Remaking of World Order., 641p., N.Y., 1996.,
 55. Harris D. Chauncy, «Industrial Resources», in Abraham Bergson (ed), Soviet Economic Growth, Evanston, 11 Row, Peterson, 1953:
 56. Held D., Central Perspectives on the Modern State, in David Held et al. (eds.), States and Societies, Oxford: Basil Blackwell, 1984:
 57. Held D., Mc Grew A., Goldblat D., Parraton J., Global Transformations. Cambridge: Policy Press, 1999:
 58. <http://www.handelsblatt.com/homepage/suche/p=212,query=superpower%2520policy>
 59. <http://www.welt.de/die-welt/vermischtes/article4760024/Die-Muehen-von-Manchester.html>
 60. <http://www.zeit.de/suche/index?q=Herzinger>
 61. Hulsman J.C. Agenda 2003 // Europe and NATO. Strengthening the Alliance for the Future // The Heritage Foundation. www.heritage.org/agenda.
 62. Hunter R., Maximizing NATO. A Relevant Alliance Knows How to Reach // Foreign Affairs, 1999, N 3., 273p.:
-

63. Immanuel Kant, «Perpetual Peace», 1975, հղում է հասնում ընդ Classics of Modern Political Theory: Machiavelli to Mill, ed., Steven M. Cahn, London/Oxford: Oxford University Press, 1996.
 64. In Brussels, Bush Calls for Unity // Deutsche Welle. Europe. 2005. February 21. www.dw-world.de/dw/article/0,2144,1496284,00.html:
 65. International Affairs», April 1995., 217p.
 66. J.-F.Guilhaudus. Consideration sur l'elargissement de l'OTAN. // «Defense national», novembre 1995, 153p.:
 67. John Borawski. Partnership for Peace and beyond. // «International Affairs», vol. 71, N 2, April 1995, 273p.:
 68. Kamp K.H. Die NATO nach dem Prager Gipfel. Eine Globale und "präventive" Allianz` // Konrad-Adenauer-Siftung //Arbeitspapier / Dokumentation. 2003. Januar. # 97. 2-3
 69. Kaplan Morton., The System Approach to International Politics., Ed. by N.Y., 1968:
 70. Karl Deutsch, Political Community and the North Atlantic Area, 895p., Princeton: Princeton University Press, 1957.
 71. Karp R., Central and Eastern Europe: The Challenge of Transition., 546p., Stockholm, 1993.
 72. Keohane D. EU Defense Policy: Beyond the Balkans, Beyond Peacekeeping`. 512p., London: Centre for European Reform, 2003.
 73. Keohane R., From Alternative Hegemony. Classics International Relations. 479p., Third Edition, Vanderbirth., 1996.
 74. Kissinger H., A New National Partnership., Washington, 1975:
 75. Kissinger H., The White House Years., Boston: Little Bown, 1979:
 76. Koch R. EU verzichtet auf militärische Präventiveschlöße // Financial Times Deutschland. 2003. 24. November.
 77. Kopstein J. The Transatlantic Divide Over Democracy Promotion // The Washington Quarterly. 2006. Spring, 294p.:
 78. Krasner D. Stephan, Defending the National Interest: Raw Materials Investments and U.S. Foreign Policy, Prinseton, 1970:
 79. Latter R. A New Agenda for NATO` // report based on Wilton Park Conference 698 on "Adjusting NATO to Meet the New International Security Agenda", 20-24 January 2003 // Wilton Park Paper. 2003. February, 881p.:
 80. Lipmann Walter, The Phantom Public: A Sequel to «Public Option», N.Y., 1922:
 81. Lipset S. Martin, «Some Social Requisites of Democracy: Economic Development and Political Legitimacy», American Political Science
-

Review, 1959, vol 53/march:

82. Mark Parris, Starting Over: U.S. - Turkish Relation in the Post-Iraq War Era. Turkish Ppolicy Quarterly / April 2003/:
 83. Mearsheimer J. Back to the future: Instability in Europe after the Cold War. // International security, 15, No. 1. Summer 1990., 426p.:
 84. Meier-Walser R. C. Die NATO meldet sich zurüçk // Politische Studien. 2006. Marz / April. Heft, 211p.:
 85. Meineke F., Machiavelism. The Doctrine of Rasion d"Etat and its Place in Modern History., London, 1962:
 86. Metz K.H. The politics of conflict: Heinrich von Treitschke and the idea of Realpolitik // History of Political Thought, 1982, h 2:
 87. Michael Mihalka, "Concepts of Cooperative Security", Germany, June 1998., 471p.:
 88. Miller H.Kynn., Global Order. Values and Power in International Politics., 3rd ed. Boulder - San Francisco - Oxford: Westview, 1994:
 89. Ministerial Meeting of the North Atlantic Council/ North Atlantic Cooperation Council, NATO Headquarters, Brussels, 10-11 January 1994, Partnership for Peace: Invitation, <http://www.nato.int/docu/comm/49-95/c940110a.htm>.
 90. Missing Something ` The Future of NATO. A Moment of Truth // Economist. com. Special report. 2002. May 2. www.economist.com:
 91. Moore R. Europe «Whole and Free». NATO's political Mission for the 21st Century, Moorhead, 2003, 219p.:
 92. Morgenthau H.J., A New Foreign Policy for the United State, Chicago, 1969:
 93. Morgenthau H.J., In Defense of The National Interest, N.Y., 1951:
 94. Morgenthau H.J., Politics Among Nations: The Struggle for Power and Peace. N.Y. Second Edition, 1955:
 95. Morgenthau H.J., Politics in the 20th Century. Chicago., 1962. Vol.1. The decline of democratic politics. 1962, Vol. 2. The impasse of american foreign policy. 1962, Vol. 3. The restoratioan of american politics.1962:
 96. Morgenthau H.J., The Purpose of American Politics, N.Y., 1950;
 97. National Security Strategy of the USA 2006., <http://www.iwar.org.uk/military/resources/nss-2006/index.htm>:
 98. National Security Strategy Report - September 2002, <http://www.common-dreams.org/headlines/02/0920-05.htm>.
 99. Nationale Strategie zur Bekämpfung von Massenvernichtungswaffen // The USA Embassy in Federal Republic of Germany // Amerikadienst. 2002. 11 December. www.usembassy.de/amerikadienst:
-

100. NATO after the Riga Summit - Future Challenges Lecture at Oslo Military Society Monday 22 January 2007 by Ambassador Kim Traavik Norway's Ambassador to NATO, <http://www.norway-nato.org/news/220107.htm>.
 101. NATO and European Energy Security, <http://www.aei.org/docLib/20080402EuONo1g.pdf>.
 102. NATO ENLARGEMENTS: TOWARDS A PAN-EUROPEAN SECURITY SYSTEM`., <http://www.nato.int/acad/fellow/98-00/spinant.pdf>:
 103. NATO military leader says force in Afghanistan is 2,500 troops short - Asia - Pacific - International Herald Tribune, <http://www.iwar.org.uk/news-archive/2003/10-10-2.htm>.
 104. NATO Summit at Riga, Latvia, Posted by Shah Alexander, <http://new-global-america.Blogspot.com/2006/11/nato-summit-at-riga-latvia.html>.
 105. NATO summit continues Afghanistan focus <http://www.number10.gov.uk/Page10498>.
 106. NATO summit in Riga: Sharp conflicts over Afghanistan, By Peter Schwarz 1 December 2006, <http://www.wsws.org/articles/2006/nov2006/nato-d01.shtml>
 107. NATO takes on new missions 04-Jun-2003 <http://www.nato.int/docu/update/2003/06-june/e0603a.htm>.
 108. NATO Transformation beyond Riga - From Crisis Reaction to Long-term Planning` By Marco Overhaus, <http://www.deutsche-aussenpolitik.de/index.php/resources/dossiers/riga06/ressources.php>
 109. Natural Resources Abundance and Economic Growth, Jeffrey D. Sachs, Andrew M. Warner, NBER Working Paper No. 5398, December 1995, <http://www.nber.org/papers/w5398>:
 110. Nuechterli E. Donald, National Interests and Presidential Leadership: The Setting of Priorities, Boulder, 1978:
 111. Overhaus M. Die NATO nach Riga // Internationale Politik. 2007. Januar. # 1., 305p.:
 112. Pentland C.C., European Security After the Cold War. Building a New Global Order:
 113. Pfaff W. A foreign Legion for the Pentagon` // International Herald Tribune. 2002. November 7.
 114. Pflger T. Präventivkriege ab dem Prager NATO - Gipfel auch deutsche und NATO - Politik` Der Gipfel in Prag als "historische Wegmarke" der NATO // IMI-Analyse. 2002. # 086. www.imi-online.de.
 115. POLITICAL PARTIES IN A PARLIAMENTARY DISCOURSE ON THE POLISH RAISON D'ETAT ON THE EVE OF EU MEMBERSHIP,
-

Dr. Grzegorz Po`arlik, European Studies, Jagiellonian University.
www.ces.uj.edu.pl/pozarlik/raisondetat.rtf:

116. *Politique internationale*», ` 68, 1995., 79p.:
 117. Putin Walkes Careful Line on US Antiterror Policy // Jamestown Foundation Monitor. - h. 8 - Iss. 32 - 14 Feb. 2002:
 118. Quille G. A European Response to WMD: Prevention or Pre-emption` // *European Security Review*. 2003. July. # 18., 311p.:
 119. Rasmussen M.V Turbulent Neighborhoods: How to Deploy the EU's Rapid Reaction Force // *Contemporary Security Policy*. 2002. August. Vol. 23. # 2., 274p.:
 120. Robert A.-C. Naissance d'une mjthologie juridgue // *Le Monde diplomatique*. Janvier, 2001:
 121. Robinson R., *International Politics and Foreign Policy*, (Press: New York), 1969:
 122. Rosenau N. James, *The Scientific Study of Foreign Policy*, London: Frances Printer; N. Y., Nichols, 1980:
 123. Ruhle M. Der Leister des Plaunungresrefererats der Poltischen abteilung der NATO. // *Internationale Polotoik*. 2006. January, 118p.:
 124. Russel A. Chirac and Bush Split Over Future of NATO // *NEWS*. telegraph. 2005.
February23.,www.telegraph.co.uk/news/main.jhtml`xml=/news/2005/02/23/weu23.xml&sSheet=/news/2005/02/3/ixnewstop.htm
 125. Schwarzenberger G., *Power Politics. A Study of World Society*, Third Edition, London, 1964:
 126. Smith J.M., *Realist Thought front Weber to Kissinger*, Baton Rouge; London, 1986:
 127. Sorel A., *Europe and the French Revolution: The Political Traditions of the Old Regime / Transleted and edited by Alfred Cobban and J.W.Hurl.*, London; Glasgow, 1969:
 128. Sorensen T., *Rethinking National Security*. - *Foreign Affairs.*, Vol. 69, 1990, Summer:
 129. Spykman J. Nicolas, *America's Strategy in World Politics*, New York, Harcourt, Brace, 1942:
 130. Spykman N., «*Geographiy of the World*», 1944:
 131. Steinmetz S. Rudolf, *Soziologie des Kriedes*, 2-nd., Leipzig, J.A.Barth, 1949:
 132. Teylor P., *Political geography of the 20th century*, 1993:
 133. *The Prince*, by Nicolo Machiavelli, Translated by W. K. Marriott, [http://historymedren.about. Com/library/text/bltxtprincemain.htm](http://historymedren.about.Com/library/text/bltxtprincemain.htm):
-

134. The Second World War: Historical Perspective, 1987. Boston Press:
 135. US, Europe Still Split on NATO's Role // Deutsche Welle. Europe. 2005. February 22. www.dw-world.de/dw/article/0,1564,1496142,00.Html
 136. Vincent A., Theories of State, Oxford: Basil Blackwell, 1987:
 137. Waltz K., A Theoretical Analysis, 1979:
 138. Waltz K., Reading; The Man, the State and War: Theory International Politics, NY, 1975:
 139. Waltz K., Theory of International Relations, 1975 - Greentein F., Polsky N (ds), International Politics. Handbook of Political Science. vol 8. Reading:
 140. Wilbord Thomas, Stability Structures and Policy in East Asia and the Pacific, Strategic Studies Institute. Army War Collage, 1993:
 141. World Policy', New York, 1990, vol. 7, N 2., 316p.:
 142. www.rian.ru/review/20060415/46449467.html.
 143. Zakarya Farid, The Future of Freedom: Nonliberal Democracy in and out of the United State, N.Y., 2003:
-

Պաշտոնական փաստաթղթեր և համաձայնագրեր.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, Նախագիծ, 28.11.2006:

NATO - Armenia's Commitments Under Individual Partnership Action Plan, http://www.armeniaforeignministry.am/fr/nato/ipap_armenian.doc:

Եվրոպական Միություն - ՀԱՅԱՍՏԱՆ «ԵՀՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ,

http://www.armeniaforeignministry.am/perspectives/061114_armenia_enp_ap_final_arm.doc

ՀՀ ԱԳՆ տարեկան զեկուցագրեր (1999, 2000, 2001, 2002, 2003, 2004, 2005):

Կովկասի կայունության պակտ. The establishment of a Stability Pact for the South Caucasus, Recommendation 1771 (2006),

<http://assembly.coe.int/Main.asp`link=/Documents/AdoptedText/ta06/EREC1771.htm>; The establishment of a Stability Pact for the South Cascasu, Resolution 1525 (2006),

<http://assembly.coe.int/Main.asp`link=/Documents/AdoptedText/ta06/ERES1525.htm>; The establishment of a Stability Pact for the South Caucasus: For debate in the Standing Committee - see Rule 15 of the Rules of Procedure, Doc. 11082, Report Political Affairs Committee:Rapporteur: Mr Adrian Severin, Romania, Socialist Group, 18 October 2006,

<http://assembly.coe.int/Main.asp`link=/Documents/WorkingDocs/Doc06/EDOC11082.htm>:

119 Տե՛ս Clinton W. David, The Two Faces of National Interes

Ալեն Ղևոնդյան

**ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԱՌԱՋՆԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ**

Ален ГЕВОНДЯН

.....

Էջադրումը և կազմի ձևավորումը՝ Տ. ՍՈՍՈՅԱՆԻ

Տպարան....